առաջի Աբենելուոյ. և այս այլաբանեաց ով և նաց :

Օքհնեցից զտէր յամենայն ժամ, յա-
մենայն ժամ օքհնութիւն նորա ՚ի բե-
րան իմ. :

Ետէր պարծեսցի անձն իմ. լուիցեն
հեղը, և ուրախ եղիցին :

Մեծ արարէք զտէր ինև. և բարձր
արասցուք զանուն նորա ՚ի միասին. :
Խնդրեցի ՚ի տեառնէ և լուաւ ինձ, յա-
մենայն նեղութենէ իմմէ փրկեաց զիս. :
Մատիք առ տէր՝ և առէք զլոյս. և ե-
րեսք ձեր մի՛ ամաչեսցեն :

Եյս աղքատ կարդաց առ տէր, և տէր

լուաւ սմա . յամենայն նեղութենէ սու-
րա փրկեաց զսա :

Ըանակը հրեշտակաց տեառն շուրջ
են զերկիւղածովք իւրովք , և պահեն
զնոսա :

Ճաշակեցէք և տեսէք , զի քաղցր է
տէր . երանեալ է այր՝ որ յուսայ ՚ի՞նա :
Երկերուք ՚ի տեառնէ ամենայն սուրբք
նորա . զի ոչինչ է պակասութիւն եր-
կիւղածաց նորա :

Մեծամեծք աղքատացան և քաղ-
ցեան . բայց ոյք խնդրեն զտէր , մի՛ պա-
կասեացի ՚ի՞նոցանէ ամենայն բարու-
թիւն :

Նկայք որդեակք իմ լուարոք ինձ .
և զերկիւղ տեառն ուսուցից ձեզ :
Ո՞վ է մարդ՝ որ կամի զկեանս , սիրէ
զաւուրս իւր տեսանել ՚ի բարութեան :
Լոեցո զեղու քո ՚ի չարութենէ . և
շրթունք քո մի՛ խօսեացի զնենպու-
թիւն :

Խոստորեա ՚ի չարէ , և արա զքարի .
խնդրեա զխաղաղութիւն , և երթ ըղ-
հետ նորա :

Եւք տեառն ՚ի վերայ արդարոց , և ա-
կանչք նորա ՚ի վերայ աղօթից նոցա :

Նրեաք տեսառն ՚ի վերայ չարագործաց,
սատակել յերկրէ զյիշատակս նոցա :
Կարդացին արդարքն առ տէր , և տէր
լուաւ նոցա . յամենայն նեղութենէ
նոցա փրկեաց զնոսա :


Մերձ է տէր առ այնոսիկ՝ որք մա-
շեալ են սրտիւք . և զիսնարհս հոգւով
կեցուցանէ :

Ռազում նեղութիւնք են արդարոց .
յամենայնէ փրկէ զնոսա տէր . և պա-
հէ զամենայն ոսկերս նոցա . և մի ՚ի
նոցանէ մի՛ փշրեացի :

Մահ մեղաւորին չար է . բայց որ ատէ
զարդարն , զղջասցի :

Փրկէ տէր ղանձինս ծառայից խրոց ,
մի՛ զղջասցին ամեննեքեան՝ որք յու-
սոցեալ են ՚ինա :

Տառնք ԽԱ : Գորզացս Խ :



ՍԱՎՄՈՍ 1.Դ .

՚Ի Հարաբեծ . Առշնոս Ղառակի :

՚Դատեա տէր զայնոսիկ ոյք զատեն
զիս . մարտիր ընդ այնոսիկ , որք մար-
տընչին ընդ իս :

Եւ զգեն և զասպար քո , և արի յօդ-
նել ինձ . հան զսուր քո ընդդէմ հա-
լածաց իմոց . արգել զնոսա , և ասա
դու ցանձն իմ , թէ փրկութիւն քո
ես եմ :

Եմաչեսցեն և յամօթ լիցին՝ ոյ.ք
ինդրէին զանձն իմ . դարձցին յետո
և ամաչեսցեն , ոյ.ք խորհէին ինձ չար :
Եղիցին նոքա որպէս փոշի առաջի
հօղմոյ . և հրեշտակ տեառն նեղեսցէ
զնոսա :

Եղիցին ճանապարհ.ք նոցա ՚ի խաւար
և ՚ի դայթակղութիւն . և հրեշտակ
աստուծոյ հալածեսցէ զնոսա :
Կ նանիր թագուցին ինձ որոգայթ յա-
պականութեան իւրեանց , և ՚ի նանիր
նախատեցին զանձն իմ :

Հասցէ ՚ի վերայ նոցա որոգայթ , զոր
ոչ զիտացին . և որսն՝ զոր թագուցին ,
առցէ զոտս նոցա . և յորոգայթ ՚ի
նոյն անկցին :

Եյլ անձն իմ ցնծասցէ ՚ի տէր , ու-
րախ եղիցի ՚ի փրկութեան նորա . և
ամենայն ուկեբք իմ ասասցեն , տէր
ո՞նման է քեզ :

Օ ՚ի փրկեաց զաղքատն ՚ի ձեռաց հր-

զօրի , զաղքատն և զտնանկն յայնցա-
նէ՝ որք յափշտակեն զնա :
Յարեան ՚ի վերայ իմ վկայք չա-
րեաց . և զոր ինչ ոչ դիտելի՝ հարցա-
նէին ցիս :

Հաստոցին ինձ չար փոխանակ բնդ
բարւոյ . անժառանգել զանձն իմ խոր-
հեցան յորդւոց ՚ի մարդկանէ :
Ես ՚ի նեղել նոցա քուրձ զգենուի , խո-
նարհ առնելի պահօք զանձն իմ . և ա-
զօթք իմ ՚ի ծոց իմ դարձցին :
Որպէս զեղքայր և զընկեր՝ այսպէս հա-
ճոյ լինէի . որպէս զագաւոր և զարք-
տում , այնպէս խոնարհ առնելի :
Ե վերայ իմ ուրախ եղեն՝ և ժողովե-
ցան . ժողովեցան յիս տանջանք , և
ես ոչ ծանեայ . ցրուեցան , և ոչ զղջա-
ցան :

Փորձեցին զիս՝ և արհամարհեցին ար-
համարհանօք . կրծտեցին ՚ի վերայ իմ
զատամունս խրեանց . տէր ե՞րբ տես-
ցես :

Երաց արազանձն իմ ՚ի խորամանկու-
թենէ նոցա , և յառիւծոց զմիամօ-
րութիւն իմ :

Խոստովան եղէց քեզ տէր՝ յեկեղեցիս

մեծս, և 'ի ժաղովս բազմաց օրհնեցից
զքեզ :

Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ,
ոյք առէին զիս 'ի տարապարտոց ·
ակնարկի առնելին յիս աչօք իւրեանց :
Ընդ իս զիսաղաղութիւն խօսէին . և
ինքեանք բարկութեամբ զնենսութիւն
խորհիւն :

Հացին 'ի վերայ իմ զքերանս իւրեանց,
և ասացին , այո այո տեսին աչք մեր :
Տեսեր տէր՝ և մի՛ լոեր . տէր՝ մի՛ 'ի
բացեայ առնիր յինէն :

Օ արթիր և հայեա տէր՝ յիրաւոնս
իմ · աստուած իմ և տէր իմ 'ի դա-
տաստանս իմ · և իրաւ արա ինձ ըստ
արդարութեան քում , տէր աստուած
իմ :

Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ ·
և մի՛ ասասցեն 'ի սիրտս իւրեանց ,
թէ վաշ վաշ անձանց մերոց , զի ընկ-
լուզաք զնա :

Եմաչեսցեն և յամօթ լիցին՝ ոյք խրն-
դան ընդ չար իմ · զզեցցին զամօթ և
զանարդանս՝ ոյք մեծաբանեն 'ի վե-
րայ իմ :

Ծնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ ա-

մենեքեան , ոյք կամին ընդ արդա-
րութիւն իմ :

Եսացեն յամենայն ժամ , մեծ է աս-
տուած . և ոյք կամին զխաղաղութիւն
ծառայի քո :

Եկու իմ խօսեսցի զարդարութիւնս
քո , զօրհանապալ զդովութիւնս քո :

Յունիք Խ :

ՍԱՆԱՑՈՍ ԸՆ :

Ե յուրաքանչ , ծառայի որեւոն . Սաշաման Դաստիք :

Եսէ անօրէնն ՚ի մեղանչել ընդ միտս
իւր , թէ չիք երկիւղաստուծոյ առաջի
աչաց նորա :

Նենզեաց առաջի նորա , գտանել զա-
նօրէնութիւն , և ատել զնա :

Դանկր բերանոյ նորա անօրէնութիւն
և նենզութիւն են :

Ոչ կամեցաւ նա խմանալ զբարի . զա-
նօրէնութիւն խորհեցաւ յանկողնի
իւրում :

Եկաց նա յամենայն ճանապարհ , որ
ոչ է բարի . և ՚ի չարէ նա ոչ ճանձրա-
ցաւ :

Տէր՝ յերկինս է ողորմութիւն քո .

Ճշմարտութիւն քո մինչև յամպս :
Երդարութիւն քո որպէս լերինք աս-
տուած . իրաւունք քո որպէս խորք
բաղումք . զմարդիկ և զանասուն կե-
ցուցանես դու տէր :

Որպէս զի բաղում արարեր զովորմու-
թիւն քո աստուած . այլ որդիք մարդ-
կան՝ ի հովանի թեւոց քոց յուսացին :
Երբեցին նոքա ՚ի պարարտութենէ
տան քո . և զուղիս փափկութեան քո
տացես ըմպել նոցա :

Ե քէն է տէր աղբիւր կենաց . և լու-
սով երեսաց քոց տեսանեմք զոյս :
Օռագեա զովորմութիւնս քո՝ ոյք ճա-
նաչեն զքեղ , զարդարութիւնս քո՝
ոյք ուղիղ են սրտիւք :

Մի՛ եկեցեն ՚ի վերայ մեր ոտք ամ-
բարտաւանից , և ձեռք մեղաւորաց մի՛
դողացուսցեն զմեղ :

Ըսդ անկցին ամենեքեան՝ ոյք գործեն
զանօրէնութիւն . մերժեցին՝ և այլ
մի՛ կարասցեն հաստատիլ :

Տառնք ԺԴ . Գորդայս Խ :

Կանոնս գործայս ի . Սաղմոս ԺԸ :

Տառնք ՄԴ .



ՕՐԴՆԵՌԻԹԻԿՆ ՄԵՇԻԿՆ ՄՈՒԼՍԻՍԻ
ԱՍՏՈՒԱԾԱՑԵՍ ՄԱՐԳԱՐԵՒ

Բ ՕՐԵՆՆԵՐ ։ ԼԲ ։

Վայեցարուք Երկինք, և խօսեցայց .
Ըստիցէ Երկիր զալատղամն բերանոյ ի-
մոյ :

Ընդունելի լիցի որպէս անձրեւ բարբառ
իմ, և իջցեն որպէս ցող պատղամք
իմ :

Որպէս անձրեւ ՚ի վերայ սիղոյ, որպէս
տարափ ՚ի վերայ խոտոյ . զի զանուն
տեառն կարդասցուք . և տուք օրհնու-
թիւն տեառն աստուծոյ մերոյ :

Եստուած՝ որոյ Ճշմարտութեամբ են
գործքնորա, և ամենայն ճանապարհք
նորա իրաւամբք են :

Եստուած հաւատարիմէ, և ոչ զոյ՚ի
նմա անիրաւութիւն . արդար և ճըշ-
մարիտ է տէր :

Մեղան՝ և ոչ նմա՝ որդիքն արատոյ,
ճնունդք խոտորեալք և թիւրեալք :
Ոչ այդ այն է՝ զոր տեառն հատուցա-
նէիք դուք՝ ժողովուրդք յիմարք և ոչ
իմաստունք :

Ոչ սա ինքն է հայր քո , որ ստացաւ
զքեղ , արար զքեղ , և ստեղծ զքեղ :
Յուշ լիցին քեղ աւուրքն յափառենից .
իմացարուք զամս աղղաց մինչեւ յաղ-
դը :

Հարցնիր դու ցհարս քո , և պատմես-
ցեն քեղ . ցծերս քո , և ասացեն քեղ :
Ի ժամանակի՝ յորժամ բաժանեաց
բարձրեալն զաղգս ամենայն . որպէս
սիռեաց նա զորդիսն աղամայ :
Կացոյց սահմանս հեթանոսաց ըստ
թուոյ հրեշտակաց աստուծոյ :
Եղեւ բաժին տեսան ժողովուրդ խր
յակոր , և վիճակ ժառանգութեան
իւրոյ խօրայէլ :

Հաւական եղեւ նմա յանապատի . ՚ի
ծարաւ տօթոյ յանջրդւոյ պաշտպա-
նեաց զնա :

Խրատեաց զնա , և պահեաց որպէս
բիբ ական . որպէս զարծուի ՚ի թեւս
իւր ընկալաւ զնա . և որպէս ՚ի վերայ
ձագոց իւրոց գթացաւ :

Տարածեաց զթեւս իւր , և ընկալաւ
զնա . և բարձեալ ըերէր զնա ՚ի վերայ
միջնողաց իւրոց :
Տէր միայն ածէր զնոսա . և ոչ զոյր

ընդ նոսա աստուած օտար :
Եած եհան զնոսա՝ ի գորովթիւնս եր-
կրի . և կերակրեաց զնոսա արդեամբք
անդաստանաց :

Դիեցոյց նոցա մեզք ՚ի վիմէ , և իւղ
յապառաժ վիմէ :

Իւղ կովուց և կաթն մաքեաց , ճար-
պով հանդերձ խոյոց որթուց ցլուց և
նոխազաց :

Զպարարտովթիւն Երիկամանց ցո-
րենոյ . և զարիւն խաղողոյ էարբ դիմի :
Եկեր յակովը եւ յաղեցաւ , և ան-
գուշեաց զսիրելին :

Դիրացաւ ստուարացաւ լայնացաւ . եւ
թող զտեր աստուած զարարիչ իւր ,
և յետս եկաց յաստուծոյ փրկչէ իւրմէ :
Բարկացուցին զիս օտարտիւք իւ-
րեանց , և կուովք իւրեանց դառնա-
ցուցին զիս :

Զօհեցին դիւաց՝ և ոչ աստուծոյ .
Դիյն՝ զորս ոչ զիտէին . նորք և առ-
ժամայնք , զորս ընաւ ոչ ճանաշէին
հարք նոցա :


Յողին զտեր՝ որ ծնաւ զնոսա . մոռա-
ցան զաստուած՝ որ կերակրեաց զնոսա:
Ետես տէր և նախանձեցաւ . և սրբա-

մըտեցաւ՝ ի վերայ ուստերաց և դստե-
րաց նոցա, և ասէ :

Դարձուցից զերեսս իմ՝ ի նոցանէ, և
ցուցից նոցա զինչ լինելոց իցէ յապա-
ժամանակի :

Օ, ի ազգ մի թիւր են նոքա՝ և որ-
դիք անհաւանք ։ Նոքա նախանձեցու-
ցին զիս՝ ի չաստուածս իւրեանց, և
դառնացուցին զիս՝ ի կուռս իւրեանց :
Երդ և ես նախանձեցուցից զնոսա
յազգ անպիտան . և անմիտ աղջաւ
զկծեցուցից զնոսա :

Փառք հօր և որդւոյ և :



ՄԱՂԹԱՆՔ

Տուք փառս աստուծոյ, տուք օրհնու-
թիւն մարդասիրին թագաւորին յա-
կիտենից, որ փրկէ զծառայս իւր և
կեցուցանէ :

Մարդասէր տէր, վասն սրբուհւոյ ա-
նարատի մօր քոյ և կուսի, և վասն
խաչի քո պատուականի, ընկալ զա-
դաշանս մեր և կեցո զմեզ :

Վասրան և աղջի՛՝ Երկինք պատմեն և Տէր ապսւեն
խնոնացն :

Վասն ՚ի գիշերի և ՚ի տունջեան և յա-
մենայն ժամու խօսիլ մեղ զբան տեա-
ռըն, զտէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:
Վասն չանկանելոյ մեղ ՚ի փորձու-
թիւն, որում ոչ կարեմք հանդուր-
ժել, զտէր աղաչեսցուք:

Վասն անրիծ և անդատապարտ կալ
մեղ առաջի ահեղ ատենին քրիստո-
սի, զտէր աղա :

Վասն առաջնորդելոյ մեղ ՚ի նաւա-
հանգիստն կենաց անվախճանից, ըդ-
տէր աղաչեսցուք :

Վասն արժանի լինելոյ մեղ վերին կոչ-
մանն և երկինից արքայութեանն, ըդ-
տէր աղաչեսցուք :

Վասն հոգւոցն հանդու: Եւ ևս միա-
բան: Օանձինս մեր: Ողորմեաց :

Վաշի

Ե գիշերի և ՚ի տունջեան և յամենայն
ժամու զքեղ աղաչեմք, և ՚ի քէն
ինդրեմք մարդատէր տէր: Եուր մեղ
աստուած փրկիչ մեր: Խոնարհեսցի

ունկն քո 'ի խնդրուածս մեր, զի մի՛
ունայն լիցին վաստակը ծառայից
քոց. այլ համարեա զաշիստութիւ-
նըս մեր 'ի գործ արդարութեան և 'ի
պատուղ աստուածպաշտութեան: Ըս-
կալ տէր՝ զաղօթս և զերկրպագու-
թիւնս մեր, և հատո մեզ զողորմու-
թիւն քո առաստավէս. ծածկեա ըլ-
մեղ ընդ հովանեաւ ամենազօր աջոյ
քո. զօրացո զմեղ տէր՝ զօրութեամբ
սուրբ հոգւոյդ. պահեա զմեղ որպէս
բիր ական, և արա առ մեղ նշան բարի
'ի գովեստ և 'ի փառարանութիւն ա-
նուանդ քում սրբոյ: Օ, ի 'ի քոյ փառս
կատարի ամենայն արարածոց մշտնջե-
նաւոր փառարանութիւն 'ի բարձունս,
հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Եպուածոյ երիբուժեացուն:

Հովիւ քաջ հովիւ բարի և յաւիտե-
նական, նայեաց և այց արա բանաւոր
հօտի քո, զոր ժողովեցեր առ քեզ
զթութեամբ քով: Օ, ի քո առաջի

կամք տէր , և առ ՚ի քէն ողորմու-
թեանցդ . և զթութեանցդ ակն ու-
նիմք : Օ ամեննեսեան օրհնեա . զամե-
նեսեան իմաստնացո . զամեննեսեան
լուսաւորեա , և ամեննեցուն պարզեւ-
եա զերկնից արքայութիւնդ : Ա ան զի
դու ես տէր կենաց և աստուած ողոր-
մութեանց . և քեզ վայելէ փառք իշ-
խանութիւն և պատիւ , այժմ և միշտ
և յաւխեանս յաւխենից . ամեն :

Մադեան :

Ե գիշերի և ՚ի տունջեան և յամենայն
ժամու անդաղար փառաւորեմք զհայր
և զորդի և զսուրբ հողիոդ , այժմ և
միշտ և յաւխեանս յաւխենից . ամեն :

Օրհնեալ տէր մեր յիսուս քրիստոս .
ամեն :

Հայր մեր որ յերկինս :





ՍԱՂՄՈՅ 1.2.

Առաջնական գործիք :

Մի՞ նախանձիք ընդ չարս , և մի՞
ընդ այնոսիկ՝ ոյք գործեն ղանօ-
րէնութիւն :


Օի որպէս խոտ վաղվաղակի ցամա-
քեսցին . որպէս զդալարի խոտոյ վաղ-
վաղակի անցցեն :

Յուսա'ի տէր , և արա զքաղցրութիւն-
ընակեա յերկրի , և հովուեսցիս 'իմե-
ծութեան նորա :

Ճատեա ՚ի տեառնէ , և նա տացէ քեզ
զինդրուածս սրտի քո . յայտնեա ա-
ռաջի տեառն զճանապարհս քո , և
յուսա'ի նա :

Նա արասցէ և հանցէ որպէս զլոյս
զարդարութիւնս քո , և զիրաւունս քո
որպէս զօր հասարակ :

Հնազանդ լեր տեառն , և ծառայեա
նմա . և մի՞ նախանձիք ընդ այնոսիկ՝
որոց առակեալ իցեն ճանապարհք



Ելանեմ և առ Հայրն իմ և առ Հայր ձեր, և Աստվածն իմ
և Աստված ձեր :

իւրեանց ընդ մարդոյ՝ որ գործէ զա-
նօրէնութիւն:

Լուեա ՚ի բարկութենէ, և հանգիր ՚ի
սրտմտութենէ, և մի՛ նախանձիր ընդ
չարս:

Օ. ՚ի չարք վաղվաղակի սատակեսցին.
բայց ոյք համբերեն տեառն, նորա
ժառանգեսցեն զերկիր:

Փոքք մի և այլ ոչ ևս իցէ ամբարիշան.
ինդրեսցես զաւեղի նորա, և ոչ զտցես:
Եյլ որ հեղքն են՝ նորա ժառանգես-
ցեն զերկիր, և փափկասցին ՚ի բազում
խաղաղութեան իւրեանց:

Սպասէ մեղաւորն արդարոյ, և կրծտէ
՚ի վերայ նորա զատամունս իւր. այլ
տէր ծիծաղեսցի զնովաւ:

Քանզի յառաջադոյն տեսանէ, զի
հասեալ է օր նորա:

Սուր հանին մեղաւորք. և լարեցին
զաղեղունս իւրեանց՝ հարկանել զաղ-
քան և զանանելն, սպանանել զայն
որ խոնարհն է սրտիւ:

Սուրք նոցա մոցեն ՚ի սիրտս նոցա, և
աղեղունք նոցա փշրեսցին:

Լաւ է սակաւիկ ինչ արդարոյ, քան
զբաղում մեծութիւն մեղաւորաց. և

բաղուկք ամբարշտաց խորտակեսցին :
Հաստատէ տէր զարդարս , և ճանաչէ
զաւուրս ամբծից , ժառանգութիւննո-
ցա յաւիտեան եղիցի :

Մի՛ ամաչեսցին նորա ՚ի ժամանակս
չարտթեան . այլ յաւուրս սովու յա-
գեսցին :

Եհա՛ մեզաւորք կորիցեն . այլ թշնա-
միք տեառն ՚ի փառաւորիլ և ՚ի բարձ-
րանալ իւրեանց պակասեսցին որպէս
ծուխ , զի պակասի :

Գոխ առնու մեզաւորն , և ոչ հասու-
ցանէ . այլ որ արդարն է , ողորմի և տայբ:
Այ.ք օրհնեն զտէր , ժառանգեսցին
զերկիր . և ոյ.ք անիծանեն , սատակես-
ցին ՚ի նմանէ :

Դ տեառնէ ուղղին վնացք առն . զճա-
նապարհս նորա նա կամի յոյժ :

Թէպէտ և զայթակղեսցի , նա մի՛ կոր-
ծանեսցի , զի տէր ձեւոնկալու է նորա :
Մանուկ էի ես՝ և ծերացայ . և ոչ տե-
սի զարդարն արհամարհեալ , և ոչ զա-
ւակ նորա՝ թէ մուրանայ հաց :

Օօրհանապաղ ողորմի և տայ փոխ .
զաւակ նորա օրհնեալ եղիցի յաւի-
տեան :

Խոտորեա 'ի չարէ , և արա ղըարի . և
ընակեսցիս յաւիտեանս յաւիտենից
'ի՞նմա :

Տէր սիրէ զիրաւոնս , և ոչ ընդ վայր
հարկանէ զսուրբա իւր . այլ յաւի-
տեան պահէ զնոսա :

Ենօրէնք հալածեսցին 'ի միասին , և
զաւակլք ամբարշտաց սատակեսցին :

Եմլ արդարք ժառանդեսցեն զերկիր
և ընակեսցին յաւիտեանս յաւիտե-
նից 'ի՞նմա :

Ճերան արդարոյ խորհի զիմաստու-
թին , և լեզու նորա խօսեսցի զիրա-
ւոնս :

Օրէնք աստուծոյ իւրոյ են 'ի սրտի իւ-
րում . և մի՛ զայթակղեսցին դնացք
նորա :

Հայի մեղաւորն ընդ արդար , և խնդրէ
սպանաննել զնա . այլ տէր ոչ թողու
զնա 'ի ձեռս նորա , և ոչ զատապար-
տէ զնա յորժամ դատէ զնա :

Համբեր տեառն և պահեա զճանա-
պարհս նորա . և բարձր արասցէ զքեզ
'ի ժառանդել զերկիր , և զատակումն
մեղաւորաց տեսցես :

Տեսի զամբարիշտն վերացեալ և բար-

Ճրացեալ որպէս զմայրսն լիբանանու :
Ենցի , և ահա ոչ էր . ինդրեցի , և ոչ
զտաւ տեղի նորա :

Պահեա զամբծութիւն , և տես զուղ-
ղութիւն . զի զոն մնացուածք առն
խաղաղաբարարի :

Ենօրէնք հալածեսցին 'ի միասին . և
զաւակք ամբարշտաց կորիցեն :
Փրկութիւն արդարոց 'ի տեառնէ է .
վերակացու է նոցա 'ի ժամանակս 'նե-
ղութեան :

Օգնեսցէ նոցա տէր , և փրկեսցէ զնո-
սա . առքեցուսցէ 'ի մեղաւորաց , և
կեցուսցէ զնոսա , զի յուսացան 'ի նա :

Տունք 1.Բ .

—————

ՍԱՂՄՈՍ ՎԵ .

Առաջնա Դիաւնի . այս 'ի յէլաքուի չաբաննու :

Տէր մի՛ սրտմտութեամբ քով յան-
դիմաներ զիս , և մի՛ բարկութեամբ
քով խրատեր զիս :

Օ,ի նետք քո հարան յիս , և յիս
հաստատեցաւ ձեռն քո :

Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յե-
րեսաց բարկութեան քոյ :

Աչ է խաղաղութիւն ոսկերաց իմոցյե-
րեսաց մեղաց իմոց :

Ենօրէնութիւնք իմ բարձրացան քան
զգլուխ իմ . որպէս բեռն ծանր ծան-
րացան 'ի վերայ իմ :

Եեխեցան և փտեցան վերք իմ յերե-
սաց անզգամութեան իմոյ :

Տառապեցայ և խոնարհ եղէ յոյժ .
զօրհանսապաղ տրտում դնայի , զի
անձն իմ լի եղե չարչարանօք . և ոչ
գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ :

Չարչարեցայ և խոնարհ եղէ մինչեւ
յոյժ . մոնչէի առ հեծութեան սրտի
իմոյ :

Տէր առաջի քո է ամենայն ցանկու-
թիւն իմ , և հեծութիւն իմ 'ի քէն
ոչ ծածկեցաւ :

Սիրտ իմ խոռվեցաւ յիս , և եթող
զիս զօրութիւն իմ . լոյս աչաց իմոց ,
և այս ոչ եղեւ ընդ իս :

Բարեկամք իմ և մերձաւորք իմ ա-
ռաջի իմ մերձեցան և կացին , և մեր-
ձաւորք իմ հեռի եղեն յինէն :

Խոնադատէին զիս և խնդրէին զանձն
իմ . ոյք խորհէին չար 'ի վերայ իմ ,
խոսեցան զանօրէնութիւն , և զնեն-

գութիւն զօրհանապազ խորհեցան :
 Եյլ ես որպէս խուլ՝ զի ոչ լսէ . որպէս
 համբ՝ որ ոչ բանայ զբերան իւր :
 Եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ , և ոչ
 գոն խօսք՝ ի բերան նորա :
 Ես՝ ի քեզ տէր յուսացայ , և գուլուի-
 ցես ինձ տէր աստուած իմ :
 Եսացի՝ թէ մի՛ ուրախ եղիցին յիս
 թշնամիք իմ . ՚ի սասանիլ ոտից իմոց՝
 ՚ի վերայ իմ մեծամեծս խօսեցան :
 Ես՝ ի տանջանս պատրաստ եմ , և ցաւք
 իմ առաջի իմ են յամենայն ժամ :
 Օանօրէնութիւնս իմ պատմեցից , և
 հոգացայց վասն մեղաց իմոց :
 Խսկ արդ թշնամիք իմ կենդանի են ,
 և զօրացեալք են քան զիս . և բաղումք
 էին , ոյք ատէին զիս՝ ի տարապար-
 տոց :

Ոյք հատուցին ինձ չար փոխանակ
 ընդ բարւոյ . չարախօսէին զինէն , զի
 ես երթայի զհետ արդարութեան :
 Մի՛ թողուր զիս տէր աստուած իմ ,
 և մի՛՝ ի բացեայ առնիր յինէն . հայեաց
 յօդնել ինձ՝ տէր միրկութեան իմոյ :

ՄԱՂՄՈՍ Հ.Բ.

Ի հոռորո՞ծ յիշեքունայ օբհոս-ընկան . Առաջո՞ւ Դաստի :

Եսացի՝ թէ պահեցից ղճանապարհս
իմ, զի մի՛ մեղայց լեզուաւ իմով :

Եղի պահապան քերանոյ իմոյ՝ 'ի հա-
կառակիլ մեղաւորին առաջի իմ :

Խոռլ եղէ և խոնարհեցայ . լոեցի 'ի
բարութենէ, և ցաւք իմ նորոգեցան
յիս :

Գեռաւ սիրտ իմ՝ 'ի փորի իմում, և
'ի խորհուրդս իմ վառեցաւ հոր :

Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի . ցոյց
ինձ տէր զկատարած իմ, և զթիւ ա-
ռուրց իմոց քանի՞օն է, զի պիտացից
թէ որչափ ինչ պակասեալ է յինէն :

Եհա չափով եղեր զաւորս իմ . և կար
զօրութեան իմոյ որպէս ոչինչ է առա-
ջի իմ, սակայն ամենեւին ընդունայն է,
ամենայն մարդ մսեղի:

Եպաքէն որպէս 'ի պատկերի շրջի
մարդ, սակայն 'ի զուր խոռովի . զանձէ՝
և ոչ պիտէ ում ժողովէ :

Խսկ արդ ո՞վ է համբերութիւն իմ,
թէ ոչ դու տէր . կամ կար զօրութեան
իմոյ, թէ ոչ 'ի քէն:

Յամենայն անօրէնութենէ իմմէ փըր-
կեցեր զիս. նախատինս անզգամաց ա-
բարեր զիս :

Լուռ եղէ և ոչ բացի զբերան իմ , զի
դու արարեր :

Երաց արա յինէն զտանջանս իմ , զի
'ի զօրութենէ ձեռին քո ես պակասե-
ցայ :

Աշտամբութեամբ վասն մեղաց խրա-
տեցեր զմարդ . մաշեցեր որսլէս սար-
դիոստայն զանձն նորա . սակայն ըն-
դունայն է ամենայն մարդ :

Լուր տէր աղօթից իմոց , ունկնդիր
խնդրուածաց իմոց , արտասուաց իմոց
մի՛ լոեր :

Պանդոխտ եմ ես առաջի քո , նժդեհ
և անցաւոր՝ որսլէս ամենայն հարք իմ :
Ծոյլ արա ինձ զի հանդեայց մինչեւ
երթեալ իցեմ , և այլ ոչ եւս զտա-
նիցիմ :

Տառաք ԺԵ :

ՍԵՂՄՈՅ ԼԹ :

Ե ԽԱՐԱՐԱՌ · Առաջն Դաստիլ :

Համբերելով համբերի տեառն , և նայե-
ցաւ առ իս և լուսւ աղօթից իմոց :

Եհան զիս 'ի գրոյ տառապանաց , 'ի
կաւոյ և 'ի տղմոյ :
Հաստատեաց 'ի վերայ վիմի զոտս իմ ,
և ուղղեաց զգնացս իմ :
Էարկ 'ի բերան իմ օրհնութիւն նոր ,
զօրհնութիւն տեառն աստուծոյ մե-

լոյ :

Տեսցեն բազումք և երկիցեն , և յու-
սացին 'ի տէր . երանեալ է այր՝ որոյ
անուն տեառն յոյս է նորա :
Ոչ հայեցաւ նա 'ի նանրութիւն , և
ոչ 'ի մոլութիւն սուտ :
Բազում արարեր դու տէր աստուած
իմ զաքանչելիս քո , և խորհրդոց քոց՝
ոչ ոք է որ նմանիցի քեզ :

Պատմեցի և խօսեցայ , և բազումք
եղեն .քան դթիւս . ընդ զոհս և ընդ
պատարագս ոչ հաճեցար . լսելիս հա-
տատեցեր ինձ . զողջակեզս և զվան
մեղացն ոչ խնդրեցեր :
Յայնժամ ասացի՝ թէ ահաւասիկ
զամես . 'ի գլուխս դրոց զրեալէ վասն
իմ :

Եռնել զկամս քո աստուած իմ կա-
մեցայ , և զօրէնս քո 'ի մէջ որովայնի
իմոյ :

Եւետարանեցից զարդարութիւնս քո
յեկեղեցիս մեծո . ահա զշրթունս իմ
ոչ արդելից՝ ի քէն :

Տէր դու կիտուցեր՝ զի զարդարու-
թիւնս քո ոչ ծածկեցի՝ ի սրտի ի-
մում , զՃշմարտութիւնս քո և զփր-
կութիւնս քո :

Եսացի և ոչ թագուցի զողորմութիւ-
նըս քո , և զՃշմարտութիւնս քո՝ ի
ժողովրդենէ մեծէ :

Եյլ դու տէր մի՛ հետի առներ զզթու-
թիւնս քո յինէն . զի ողորմութիւնքո
և Ճշմարտութիւն քո յամենայն ժամ
ընկալցի զիս :

Շոք եղեն զինեւ չարք՝ որոց ոչ դոյր
թիւ . հասին ինձ անօրէնութիւնք
իմ , և ես ոչ կարացի տեսանել :
Շագում եղեն քան զհեր զլիսոյ իմոյ .
և սիրտ իմ եթող զիս :

Ասմենաց տէր՝ փրկել զիս , և տէր յօդ-
նել ինձ նայեաց :


Ամաչեսցեն և յամօթ լիցին՝ ոյք խրնդ-
րէին զանձն իմ բառնալ զսա . դարձ-
ցին յետս և ամաչեսցեն՝ ոյք խորհէին
ինձ չար :

Արեսցեն զամօթ առ ժամայն վաղվա-

զակի , ոյք ասեին ինձ վաշ վաշ :
Յնծասցեն և ուրախ լիցին՝ ի քեզ ա-
նեքեան , ոյք իննդրեն զքեղ տէր :
Ասացեն յամենայն ժամ՝ մեծ է աս-
տուած , և ոյք սիրեն զիրկութիւնս
քռ :

Ես աղքատ և տնանկ եմ , աստուած
խորհեա զիս . օգնական և պաշտպան
իմ ես , և դու աստուած իմ՝ մի՛ յա-
մենար :

Տունք իմ . Գորզոյս օլ :



ՍԱՂՄՈՍ Խ .

Ի Հայութան . Առշան Դաստիք :

Երանի որ խորհի զաղքատն և զար-
սանկն . յաւուր չարի փրկէ զնա տէր :
Տէր փրկէ զնա և կեցուցանէ . երանե-
լի առնէ զնա՝ ի վերայ երկրի , և ոչ
մատնէ զնա՝ ի ձեռս թշնամեաց խրոց :
Տէր օգնական է նմա՝ ի մահիճս ցաւոց
խրոց . զամենայն անկողինս նորա
գարձուցանէ՝ ի հիւանդութենէ նորա :
Ես ասացի տէր ողորմեա ինձ . բժը-
կեա զանձն իմ , ես մեղայ քեզ :

Թշնամիք իմ ասացին ինձ չար . ե՞րբ
իցէ զի մեռցի , և կորիցէ անուննորա:
Մտանէր տեսանել զնանրութիւն . խօ-
սէր 'ի օրտի խրում , և ժողովէր զա-
նօրէնութիւն յանձն իւր :

Երտաքս ելանէր և զնոյն խօսէր . զի-
նէն շնչէին ամենայն թշնամիք իմ:
Խորհեցան չար 'ի վերայ իմ . բան ա-
նօրէնութեան եղին 'ի վերայ իմ:
Մի թէ որ ննջիցէ , այլ ո՞չ ևս յա-
ւեցի յառնել . քանզի ևս այրն խաղա-
ղութեան իմոյ , յոր ևս եսն յուսացայ :
Որ ուտէր դհաց իմ , յաճախեաց առ-
նել ինձ խարէութիւն :

Եյլ դու տէր ողորմեա ինձ և կանգ-
նեա զիս , և ես հատուցից նոցա :
Չայսմ ծանեայ՝ թէ հաճեցար ընդ
իս . զի մի՛ ուրախ եղիցին յիս թշնա-
միք իմ :

Եյլ զիս յամբծութեան իմում ընկա-
լար , և հաստատեցեր զիս առաջի քո
յաւիտեան :

Օրհնեալ տէր աստուած խրայէլի յա-
փիտեանոյ յաւիտենից . եղիցի եղիցի :

ՍԱՂՄՈՍ ԽԵ.

Ի յադաբո՞ւ . իմաստունիւն որդուացն Ալոքիոյ :

Առաջնու Դաստիկ :

Որպէս փափաքի եղջերու յազբերս
ջուրց , այնպէս փափաքի անձն իմ առ
քեզ աստուած :

Օսարաւի է անձն իմ առ քեզ աս-
տուած , հզօր և կենդանի . ե՞րբ եկից
երեւեցայց երեսացդ աստուածոյ :

Եղեն ինձ արտասուր իմ կերակուր 'ի
տուէ և 'ի գիշերի . և այն զի ասեին
ցիս զօրհանապաղ՝ թէ ուր է աս-
տուած քո :

Օսյս որպէս յիշեի , տառապէր յիս
անձն իմ . քաջալերէի , զի մտից ընդ
յարկաւ սրանչելեաց տանն աստուածոյ :
Ի ձայն ցնծութեան խոստովանու-
թեան , և 'ի ձայն բարեկենդանու-
թեան :

Երդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ , կամ
ընդէ՞ր խոլովես զիս . յուսա առ աս-
տուած , խոստովանեանմա՝ փրկիչ ե-
րեսաց իմոց աստուած է :

Վնձն իմ յոյժ խոլովեցաւ . վասն այ-

առիկ յիշեցի զքեզ յերկրէն յորդա-
նանու , 'ի հերմոնէ լեռնէ փոքուէ :
Խորիք խորոց կարդացին առ քեզ, 'ի
ձայն սահանաց քոց :

Եմենայն դբօսանք քո , և ալիք քո
անցին 'ի վերայ իմ :
Ետուէ պատուիրեաց տէր զողորմու-
թիւն իւր , 'ի գիշերի զօրհնութիւն
նոր . և ազօթք իմ առ աստուած
վասն կենաց իմոց :

Եսացի աստուծոյ՝ ընդունող իմ ես .
ընդէ՞ր մերժեցեր զիս . ընդէ՞ր տրտում
զնամ ես 'ի նեղել թշնամոյ իմոյ :
Եփշրիլ ոսկերաց իմոց նախատեցին
զիս թշնամիք իմ . յասել ցիս զօրհա-
նապազ, թէ ո՞ւր է աստուած քո :
Երդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ,
կամ ընդէ՞ր խռովես զիս . յուսա առ
աստուած, խոստովանեա նմա՝ փրկիչ
երեսաց իմոց աստուած է :

Տունք ԺԳ :

Ա-Ա-Յ-Ա-Ս-Ա-Բ-Ա-:

Դատ արա ինձ աստուած, և իրաւ-
արա ինձ 'ի դատաստանի իմում :

Յաղցէ որ ոչ է սուրբ, ՚ի մարդոյ մեւ
ղաւորէ նենդաւորէ փրկեա զիս :
Դու աստուած հզօրիչ իմ ես . ընդէ՞ր
մոռացար զիս, ընդէ՞ր տրտում դնամ
ես ՚ի նեղել թշնամոյ իմոյ :


Եռաքեա տէր զլոյս քո և զջմարտու
թիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ,
և հանցեն զիս ՚ի լեառն սուրբ ե՞ի յար-
կրս քո :

Մտից առաջի սեղանոյ աստուծոյ առ
աստուած, որ ուրախ առնէ զմանկու
թիւն իմ :

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ
աստուած աստուած իմ :

Երդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ,
կամ ընդէ՞ր խոսվես զիս. յուսա առ
աստուած, խոստովանեա նմա՝ փրկիչ
երեսաց իմոց աստուած է :

Տունք է : Գորդոյս 1.2 :



ԱԱԱԱԱԱԱԱ

՚ի իսուսնած . իմաստանիւնան որդուոցն Ալբիոյ :
Սահման ՚իսունիւն :

Կստուած ականջօք մերովք լուաք .
զոր հարլն մեր պատմեցին մեզ :

Օղործն զոր գործեցեր յաւուրս նո-
ցա , յաւուրսն առաջինս :

Չեռն քո խլեաց դհեթանտսս , և զնո-
սս տնկեցեր . չարչարեցեր դժողովուր-
դըս քո , և հաներ զնոսա :

Օի ոչ թէ սրով խրեանց ժառանգե-
ցին զերկիր , և ոչ բազուկ նոցա փըր-
կեաց զնոսա :

Եյլ աջ քո և բազուկ քո և լոյս ե-
րեսաց քոց , զի հաճեցար դու ընդ
նոսա :

Դու ինքն ես՝ թագաւոր իմ և աստուած
իմ , որ հրամայեցեր զիրկութիւնն
յակորայ :

Քեւ զթշնամիս մեր հարցուք . և ա-
նուամիք քով տրհամարհեցուք զյա-
րուցեալսն ՚ի վերայ մեր :

Ոչ թէ յաղեղն իմ յուսացեալ եմ ,
և ոչ սուր իմ կեցուցանէ զիս :

Եյլ դու փրկեցեր զմեղ ՚ի թշնամեաց
մերոց և զատելիս մեր յամօթ արա-
բեր :

Կստուծով պարծեսցուք զօրհանա-
պազ , և անուան նորա խոստովան ե-
ղեցուք յաւիտեան :

Բայց արդ մերժեցեր և անարդեցեր

զմեղ . և ոչ ելեր աստուած ընդ զօրս
մեր :

Դարձուցեր զմեղ յետս քան զթշնա-
միս մեր . և ատելիք մեր յափշտակե-
ցին զմեղ :

Ետուր զմեղ որպէս զոչխար ՚ի զենու-
մըն , և ընդ հեթանոսս ցրուեցեր
զմեղ :

Վ աճառեցեր զժողովուրդս քո առանց
զնոյ , և ոչ գոյ թիւ աղաղակի մերոյ :
Ըրարեր զմեղ նախատինս դրացեաց
մերոց . ծաղր և այսն կատականաց
այնոցիկ , որք շուրջ էին զմեօք :

Ըրարեր զմեղ յառակս հեթանոսաց
՚ի շարժել զգլուխս ժողովրդոց :
Օօր ամենայն նախատինք իմ առա-
ջե իմ են . և ամօթ երեսաց իմոց
ծածկեաց զիս :

Ե ձայնէ նախատորդին և չարախօսի ,
յերեսաց թշնամոյն և հալածչի :
Եյս ամենայն եկն ՚ի վերայ մեր , և
մեք զքեղ ոչ մոռացաք , և ոչ ստե-
ցաք ովստի քում , և ոչ դարձաք յետս
սրախւք մերովք :

Դարձուցեր զշաւիղս մեր ՚ի ճանապար-
հաց քոց , իսոնարհ արարեր զմեղ ՚ի
9

տեղի չարչարանաց . և ծածկեցին զմեղ
ստուերք մահու :

Թէ մոռացեալ իցէ մեր զանուն աս-
տուծոյ մերոյ , կամ ձղեալ իցէ զձեռս
մեր յաստուածս օտարս :

Սակայն աստուած խնդրէ զայս . զի՞նա
քննէ զգաղտնիս սրտից մերոց :

Վ ամս քո մեռանիմք զօրհանապաղ .
Համարեցաք որսկէս զոշխար'ի զենումնի :
Զ արթիր ընդէ՞ր ննջես տէր . արի և
մի՛ մերժեր զմեղ խապառ :

Օ մէ՞ զարձուցանես զերեսս քո 'ի
մէնջ . մոռանաս զաղքատոթին և
զնեղութինս մեր :

Խոնարհ եղեն մինչև 'ի հող անձինք
մեր , և յերկիր կցեցան մէջք մեր :
Երի տէր օդնեա մեղ , և փրկեա զմեղ
վասն անուան քո :

Տռնկը ԽԵ :

ՍԱՂՄՈՍ ԽԴ.

Խ իսրայէլ . զարդարելոց ժամանակաց , որդուցն Արքայ
իշտորունեան . Առշու օբնունեան վասն ոիրելույն :

Աղխեսցէ սիրտ իմ զպատգամն քո
բարի , և ասացից զգործս իմ թագա-
ւորի :

Եղու իմ որպէս գրիչ արագագիր
դպրի , զեղեցիկ տեսլեամբ քան զա-
մենայն որդւոց մարդկան :

Սփոեցան շնորհք ՚ի շրթանց քոյ .
վան այսորիկ օրհնեաց զքեղ աս-
տուած յաւիտեան :

Եծ զսուք ընդ մէջ քո հզօր , վայել-
չութեան և զեղոյ քոյ :

Լարեա ուղղեա և թագաւորեա վան
ճշմարտութեան հեղութեան և ար-
դարութեան , և առաջնորդեացէ քեղ
սքանչելապէս աջ քո :

Ենտք քո սրեալք են հզօր , և ժողո-
վուրդք ՚ի ներքոյ քո անկցին , ՚ի սիր-
արս թշնամեաց թագաւորի :

Եթու քո աստուած յաւիտեանս յա-
ւիտենից գաւազան ուղղութեան՝ գա-
ւազան արքայութեան քո :

Սիրեցեր զարդարութիւն , և ատեցեր
զանօրէնութիւն :

Վան այսորիկ էօծ զքեղ աստուած
աստուած քո իւղով ուրախութեան ,
առաւել քան զընկերս քո :

Օմուռս և ստաշխն և կասիայ ՚ի ըզ-
դեստէ քումմէ , ՚ի տաճարաց վղոս-
կրէից , ուստի ուրախ արարին զքեղ

դստերք թագաւորաց՝ ի պատիւ :
Կացցէ դշխոյ ընդ աջմե՞քումմե՞՝ ի
հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և
պաճուճեալ :

Լուր դուստր և տես, խոնարհեցո
զունին քո + մոռա զժողովուրդ քո և
զուն հօր քո, զի ցանկացաւ թա-
գաւոր գեղոյ քո :

Սա ինքն է տեր քո՝ երկիրպազցէ սր-
մա. և դուստր ծուրայ երկիրպազցէ
սմա. և պատարագօք զերեսս սորա
պաշտեսցեն մեծամեծք՝ ի ժողովը-
դոց :

Եմենայն փառք դստեր թագաւորի՝ ի
ներքոյ, ՚ի վերջաւորս ոսկեհուռս զար-
դարեալ և պաճուճեալ :

Տարցին թագաւորի կուսանք գհետ
նորա, և զընկերս նորա տարցին նմա :
Եծցին ցնծութեամբ և ուրախու-
թեամբ, և տարցին ՚ի տաճար թա-
գաւորի. և փոխանակ հարց քոց եղի-
ցին որդիք քո :

Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամե-
նայն երկիր. և յիշեսցի անուն քո
ընդ ամենայն աղջս աղջաց :
Վասն այսորիկ ժողովուրդք խոստո-

վան եղիցին առ քեզ յաւիտեան , և
յաւիտեանս յաւիտենից :

ՏԱԿ ԺԼ :

ՍԱՂՄՈՅ ԽԵ :

Խ ՀԱՊՊԵՆ : որդույն Ալոհիոյ է մերայ բաշտնեաց :

Եստուած մեր ապաւէն և զօրութիւն .
օգնական ՚ի մերայ նեղութեանց , որք
դտին զմեղ յոյժ :

Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք ՚ի
խումբիլ երկրի , ՚ի փոփոխիլ լերանց ՚ի
սիրտս ծովու :

Դոչեցին և խումբեցան ջուրը նոցա .
խումբեցան լերինք ՚ի զօրութենէ նորա :
Դնացք զետոց ուրախ առնեն զքա-
ղաքն աստուծոյ . և սուրբ արար ըզ-
յարկս իւր բարձրեախ :

Եստուած ՚ի մեջ նոցա , և նորա մի՛
սասանեսցին . օգնեսցէ նոցա աստուած
՚ի վաղորդայնէ մինչեւ ՚ի վաղորդայն :
Խումբեցան հեթանոսք , և խոնարհե-
ցան թագաւորութիւնք . ետ զձայն իւր
բարձրեախ , և խումբեցաւ երկիր :
Ծեր զօրութեանց ընդ մեղ . ընդունելի
է մեր աստուած յակորայ :

Եկայք և տեսէք զգործու աստուծոյ ,
որ արար զնշանս և զարուեստս՝ ի վե-
րայ երկրի :

Եհար զպատերազմ՝ ի ծագաց . մինչև
’ի ծագս երկրի . զաղեղունս փշթեաց ,
զզէնս խորտակեաց , և զասպարս այ-
րեաց հրով :

Կանխեցէք և ծաներուք , զի ես եմ
աստուած . բարձր եղէց՝ ի հեթանոսս ,
և բարձրացայց՝ ի վերայ երկրի :
Տէր զօրութեանց ընդ մեզ . ընդունելի
է մեր աստուած յակոբայ :

ՏԱՐԱՆՔ ԺԱ : ԳՈՐՂԱԿԱ ԽԶ :

ՍԱՂՄՈՍ ԽԶ :

Ի իսուսքուն . Հան որդուոցն Առինայ . Ապուս Պատուի :

Դափիս հարէք ամենայն հեթանոսք ,
աղաղակեցէք առ աստուած՝ ի ձայն
ցնծութեան :

Տէր բարձրեալ և ահարկու , թաղաւոր
մեծ՝ ի վերայ ամենայն երկրի :
Հնաղանդ արար ղժողովուրդս ընդ
մեզ , և զհեթանոսս՝ ի ներքոյ ստից
մերոց :

Ընտրեաց զմեզ իւր ՚ի ժառանգութիւն, զդեղեցկութիւն յակովբայ՝ զոր և սիրեաց :

Համբարձաւ աստուած օրհնութեամբ,
և տէր մեր ձայնիւ փողոյ :

Սաղմոս ասացէք աստուծոյ մերում .
սաղմոս ասացէք թագաւորին մերում,
սաղմոս ասացէք :

Թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն երկրի աստուած է, սաղմոս ասացէք նմա իմաստութեամբ :

Թագաւորեաց աստուած ՚ի վերայ հեթանոսաց . աստուած նատաւ յաթու սրբութեան իւրոյ :

Եշխանք ժողովրդոց ժողովեցան առ աստուած արքահամու, զի աստուծոյ զօրութիւնք յերկրէ յոյժ համբարձան :

Տունք թ. :

ՍԱՂՄՈՍ ԽԵ :

Սաղմոս օրհնութեան որդուացն կոչեայ . երիբոր շոբանաւ :

Մեծ է տէր և օրհնեալէ յոյժ ՚ի քաղաք աստուծոյ մերոյ, ՚ի լեառն սուրբ նորա :

Հաստարմատ ցնծացէ ցնծութեամբ
ամենայն երկիր . Երինք սիոնի , կող-
մանք հիւսիսոյ՝ քաղաք Թագաւորին
մեծի :

Եստուած՝ ի տաճարի խրում յայտնի,
՚ի ժամանակի որպէս օգնական լինէր
նոցա :

Եհաւասիկ թագաւորութիւնք երկրի
ժողովեցան , և անցին ՚ի միասին :
Խնքեանք տեսին այսպէս և զարմա-
ցան , խոռովեցան սասանեցան , և դո-
ղումն կալաւ զնոսա :

Ենդ երկունք որպէս ՚ի ծննդեան , և
հոգմն սաստիկ փշրեսցէ զնաւս ՚ի
թարսիս :

Որպէս լուաք , սոյնապէս և տեսաք ՚ի
քաղաք տեառն զօրութեանց՝ ՚ի քա-
ղաք աստուծոյ մերոյ :

Եստուած հիմունս էարկ նմա յաւի-
տեան . ընկալաք աստուած զողորմու-
թիւն քո ՚ի մէջ ժողովրդեան քոյ :
Ըստ անուան քում , սոյնապէս և օր-
հնութիւն քո ընդ ամենայն տիեզերս .

և արդարութեամբ լի է աջ քո :

Ուրախ եղիցի լեառն սիոնի . և ցըն-
ծացեն դստեղիք յուղայ վան իրա-

ւանց քոց տէր :

Ը թեցարուք զսիօնիւ, պաշարեցէք լղ-
նա և պատեցէք զաշտարակս նորա :
Դիք զսիրաս ձեր՝ ի վերայ զօրութեանց
նորա. բաժանեցէք զամուրս նորա, զի
պատմել կարասջիք յազգ յայլ :
Սա է աստուած, աստուած մեր յա-
փառեանս յափառենից . և սա հովուեա-
ցէ զմեզ մինչև յափառեան :

ՏԱՐԱՆԴ ԺԳ.

ՍԱԿԱՎՈՍ ԽԸ.

Ի իսուսը որդուացն կորիսայ. Առաջան օրննութեան Շխառնի :
Լուարուք զայս ամենայն աղդք, ուն-
կընդիր լերուք ամենեքեան, ոյք լը-
նակեալ էք յաշխարհի :
Օճունդք երկրի և որդիք մարդկան,
'ի միասին մեծամեծք և տնանկք :
Ոերան իմ խօսեսցի զիմաստութիւն,
և խորհուրդք սրտի իմոյ զհանձար :
Խոնարհեցուցից յառակումն զունին
իմ. բացից առակաւ զբերան իմ, և
խօսեցայց զառակս ՚ի սկզբանէ :
Ընդէ՞ր բնաւ երկնչիմ ևս յառուք չա-
րի. զի անօրէնութիւնք զնացից իմոց
շուրջ եղեն զինե :

Յուսացեալք՝ ՚ի զօրութիւն իւրեանց .
՚ի ըաղմութիւն մեծութեան իւրեանց
պարծեսցին :

Եղբայր ոչ փրկէ՝ և ոչ փրկէ մարդ, և
ոչ տայ աստուծոյ զիրկանս իւր, և ոչ
զգինս փրկանաց անձին իւրոյ :
Ա աստակեա յաւիտեան, և կեցցես
մինչ իսպառ, և ոչ տեսցես զապակա-
նութիւն :

Յորժամ տեսցես՝ թէ իմաստոնք մե-
ռանին՝ ՚ի միասին անզգամք և ան-
միտք կորիցեն, և թողցեն օտարաց
զմեծութիւն իւրեանց :

Գերեզմանք նոցա տունք նոցա եղի-
ցին յաւիտեան, և յարկք նոցա աղզէ-
մինչև յազգ . և կարդասցին անուանք
նոցա ՚ի հողս իւրեանց :

Մարդ ՚ի պատուի եր և ոչ իմացաւ,
հաւասարեցաւ անամնոց անբանից և
նմանեցաւ նոցա :

Եյս ճանապարհէ գայթակղութեան
նոցա նոցին . յետ այսորիկ բերանոք
իւրեանց հաճեսցին :

Որպէս խաշն ՚ի գժոխս մատնեսցին ,
և մահ հովուեսցէ զնոսա . և տիրես-
ցեն նոցա ուղեղք ընդ առաւօտս :

Օղնութիւնք նոցա մաշեսցին 'ի դը-
ժոխս, և 'ի փառաց իւրեանց անկցին :
Ըայց սակայն աստուած փրկեսցէ զան-
ձըն իմ 'ի ձեռաց դժոխոց յորժամ
ընդունին զիս :

Մի՛ երկնչիր յորժամ մեծանայ մարդ,
և յորժամ բազում լինին փառք տան
նորա :

Օ ի ոչ թէ 'ի մեռանին իւրում առ-
ցէ ընդ իւր զամենայն . և ոչ թէ իջ-
ցեն փառք տան նորա ընդ նմա :

Այլ անձն նորա 'ի կեանս իւրում օր-
հնեսցի . և խոստովան եղիցի քեղ՝ յոր-
ժամ բարի արասցես դու նմա :

Մոցէ նա մինչև յազգ հարց իւրոց .
մինչև յաւիտեան զլոյս մի՛ տեսցէ :
Մարդ 'ի պատուի էր և ոչ իմացաւ,
հաւասարեցաւ անասնոց անբանից և
նմանեցաւ նոցա :

Տանք ի : Գարզայս խօս :

ՍԱՂՄՈՍ ԽԹ :

Առաջա Դաս-Բի :

Աստուած աստուծոց տէր խոսեցաւ,
և կոչեաց զերկիր յարկելից մինչև 'ի

մուտս արեւու :

Ես սիօնէ մեծվայելչութիւն փրկու-
թեան գեղոյ նորա :

Սատուած մեր յայտնապէս եկեսցէ ,
և աստուած մեր մի՛ դադարեսցէ :
Հուր առաջի նորա բորբոքեսցի , և
շուրջ զնովաւ մըրիկ յոյժ :

Առչեսցէ զերկինս 'ի վերուստ՝ և զեր-
կիր 'ի դատել զժողովուրդ իւր , ժողո-
վել առ ինքն զսուրբ իւր , և ոյք դը-
նեն զպատարագս ուխտից 'ի վերայ սե-
ղանոյ նորա :

Պատմեսցեն երկինք զարդարութիւն
նորա , զի աստուած դատաւոր է :

Հուր ժողովուրդ իմ և խօսեցաց ընդ-
քեղ , և խրայէլ քեղ վկայեցից . զի
աստուած աստուած քո ես եմ :

Ոչ թէ վասն պատարագաց քոց կըշ-
տամբեմ զքեղ . զի ողջակէղք քո ա-
ռաջի իմ են յամենայն ժամ :

Ոչ ընդունիմ 'ի տանէ քումմէ զուա-
րակս , և ոչ 'ի հօտից քոց նոխազս :
Իմ է ամենայն զազան անտառի , երէ
լերանց և ամենայն անտառն :

Դիտեմ ես զամենայն թոչունս եր-
կնից . զեղեցկութիւն վայրի ընդիս է :

Թաէ քաղցեայց, քեղ ինչ ոչ ասացից,
զլ իմ է աշխարհ լիւ իւրով :

Ոչ ուտեմ ևս զմիս զուարակաց քոց,
և ոչ զարին նոխազաց քոց ըմպեմ:

Մասս աստուծոյ պատարագ օր
հնութեան . կատարեա բարձրելոյն
զուխտու քո :

Կարդասցես առիս յաւուր նեղութեան
քո . ևս փրկեցից զքեղ, և դու փա-
ռաւոր արասցես զիս :

Սակայն մեղաւորին ասէ աստուած .
իսկ դու ընդէ՞ր ընաւ պատմես զար-
դարութիւն իմ, կամ առնուս զուխտ
իմ 'ի բերան քո :

Օ, ի դու ատեցեր զիսրատ իմ . մերժե-
ցեր և յետո ընկեցեր զամենայն բա-
նըս բերանոյ իմոյ :

Թաէ տեսանէիր զզողս՝ ընթանայիր
ընդ նոսա, և ընդ շունս դնէիր զբա-
ժին քո :

Բերան քո յաճախէր զշարութիւն,
և լեզու քո նիւթէր զնենդութիւն :
‘Եստեալ զեղբօրէ քումիշ չարախօ-
սէիր, և ’ի վերայ որդւոյ մօր քո դնէիր
զզայթակղութիւն :

Օ, այս ամենայն արարեր, և լոեցի քեղ.

կարծեցեր անօրէնդ՝ ի մոխ քում, թէ
և ես քեզ նմանիցեմ:

Երդ յանդիմանեցից և կացուցից զայս
սմենայն առաջի քո. իմացարուք ա-
մենելեան՝ որոց մոռացեալ իցէ զա-
տուած :

Գուցէ երբէք յափշտակիցիք, և ոչ ոք
իցէ՝ որ փրկիցէ :

Պատարագ օրհնութեան փառաւոր ա-
րացէ զիս. և անդ է ճանապարհ, որ
ցուցից նմա զփրկութիւն աստուծոյ :

Տառնը 19:

ՍԱՂՄՈՍ Ռ.

Ի վաղարած. Առշնու Պատակէ. ՚ի ժամանակից զի են առ Նա
Կոմիոն մորդարէ, իբրև զի մործու եր Նա առ Անդրանիկէ:

Աղորմեա ինձ աստուած ըստ մեծի ո-
ղորմութեան քում. ըստ բազում գր-
թութեան քում քաւեա զանօրէնու-
թիւնա իմ :

Ըռաւելլուա զիս յանօրէնութենէ իմ-
մէ և ՚ի մեղաց իմոց սուրբ արա զիս :
Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գի-
տեմ. և մեղք իմ առաջի իմ են յա-
մենայն ժամ :

Քեզ միայն մեղաց տէր և չար առաջի
քո արարի :

Արպէս արդար եղիցիս՝ ի բանս քո, և
յաղթող՝ ի դատել գաս :
Անօրէնութեամբ յղացաւ, և ՚ի մեղս
ծնաւ զիս մայր իմ :

Դու տէր զշշմարտութիւն սիրեցեր
զանցայտս և զծածկեալս իմաստու-
թեամբ քով յայտնեցեր ինձ :

Յօղեա յիս մշտկաւ, և սուրբ եղեց.
լուա, և քան զձիւն սպիտակ եղեց :
Լսելի արա ինձ զցնծութիւն և զու-
րախութիւն, և ցնծացեն ոսկերք իմ
տառապեալք :

Դարձո զերեսս քո ՚ի մեղաց իմոց, և
զամենայն անօրէնութիւնս իմ քա-
մաւ յինէն :

Սիրտ սուրբ հաստատեա յիս աս-
տուած, և հոգի ուղիղ նորոգեա ՚ի փո-
րի իմում :

Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց քոց
և զհողի քո սուրբ մի՛ հաներ յինէն:
Տուր ինձ ցնծութիւն փրկութեան
քոյ, և հոգւով պետութեան քոյ հաս-
տատեա զիս :

Ուսուցից անօրինաց զճանապարհո քո.

և ամբարիշոք առ քեզ դարձցին :
Փրկեա զիս յարենէ աստուած՝ աս-
տուած վրկութեան իմոյ . յնծացէ,
լեզու իմ յարդարութեան քում :
Տէր , եթէ զըթունս իմ բանաս , բե-
րան իմ երդեսցէ զօրհնութիւնս քո :
Թէ կամեցեալ էիր , պատարագս մա-
տուցանէաք . բայց դու ընդ ողջակե-
զըս իսկ ոչ հաճեցար :

Պատարագ աստուծոյ հոգի խոնարհ .
զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ աս-
տուած ոչ արհամարհէ :

Ըարի արա տէր կամօք քովք սիօնի .
և շինեսցին պարխապքն երուսաղէմի :
Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս
արդարութեան . յորժամ ուխտից
պատարագս հանցեն ՚ի սեղան քո զը-
ւարակս :

Տունք 1 :

ՍԱԼՄՈՍ ՚ԹԱ .

Ի խորարած ինսուսունեան , Այս ՚Վասիլի . ՚ի ժամանակ
Նի ՚Վասիլի Շորովոյ , պատմեաց Աստուածաց նե ահասա-
մի ՚Վասիլի ՚ի ոռան Ավետիքոյ է :

Օ ՚ի պարծի ՚ի չարութեան հզօր՝ զա-
նօրէնութիւն . զօրհանապաղ զանիրա-
ւութիւն խորհեցաւ ՚ի լեզուի իւրում :

Որպէս զածելի սուր՝ սրեաց զնենգութիւն, սիրեաց զչարութիւն քան ըղբարութիւն, զանօրէնութիւն քան ըղբառա արդարութեան :

Սիրեաց նա զամենայն խօսս կործանման, և զլեզուս նենդաւորս :

Վասն այսորիկ աստուած կործանեսցէ զնա խապառ խլեսցէ և հանցէ զնայարկաց խրոց, և զարմատս նորայերկրէն կենդանեաց :

Տեսցեն արդարք և երկիցեն զնովաւծիծաղեսցին և ասասցեն :

Եյս այրէ, որ ոչ արար զաստուած իւր օգնական այլ յուսացաւ սա ՚ի բազում մեծութիւն իւր, և զօրացաւ ՚ի նանրութեան իւրում :

Եյլ ես որպէս ձիթենի պտղալից ՚ի տան աստուծոյ յուսացայ յողորմութիւն աստուծոյ յաւիտեան և յավուեան յաւիտենից :

Խոստովան եղէց քեզ տէր յաւիտեան, զի արարեր և համբերից անուան քում, զի քաղցր ես առաջի սրբոց քոց :

Ի հոգուած , Համա Ո՞ւշողէնոյ . իմաստունիւն ՚Եռունիք :

Վաց անզգամն ՚ի սրտի իւրում թէ
ոչ զոյ աստուած . ապականեցան և
պղծեցան յանօրէնութեան իւրեանց .
և ոչ ոք է որ առնէ զքաղցրութիւն :
Վստուած յերկնից նայեցաւ յամե-
նայն որդիս մարդկան , տեսանել թէ
իցէ՞ ոք իմաստուն՝ որ խնդրիցէ զա-
տուած :

Վմենեքեան խոտօրեցան ՚ի միասին , և
անպիտանացան :

Ոչ ոք է որ առնէ զքարի , և չէ ոք
մինչև ՚ի մի :

Որպէս ոչ ծանիցեն ամենեքեան , ոյք
գործեն զանօրէնութիւն :

Ոյք ուտէին զժողովորդ իմ որպէս
կերակուր հացի , և առ աստուած ոչ
կարդացին :

Վնդ երկիցեն զերկիւդ՝ որոչ իցէ եր-
կիւդ . զի աստուած ցրուեցէ զոսկերս
մարդահաճոյից :

Վմաշեսցեն և յամօթ լիցին , զի աս-
տուած անարդեաց զնոսա :

Ո՞ տացէ, 'ի սիօնէ զվրկութիւն իւ-
րայէլի . 'ի դարձուցանել տեառն զգե-
րութիւն ժողովրդեան իւրոյ , ցնծա-
ցէ յակոր , և ուրախ եղիցի իսրայէլ :

Տառիք թ. 1

ՍԱՂՄՈՍ ԾԳ.

Ի հոռորո՞ն . ընդ օրհնութեան իմաստութիւն դիտենի . 'ի
ժոհանապի շի եին Օքիացիւն , և այն շլուսուն , ահա-
մանակ Շատրվան նորէ առ ժոհ:

Սատուած յանուան քում կեցողիս , և
'ի զօրութեան քում իրաւ արա ինձ :
Սատուած լուր աղօթից իմոց . ունկն-
դիր բանից բերանոյ իմոյ :

Օտարք յարեան 'ի վերայ իմ , և հր-
զորք իննդրեցին զանձն իմ , և ոչ հա-
մարեցան զքեղ աստուած առաջի իւր-
եանց :

Եհա աստուած օդնական իմ , և տէր
ընդունող հոգւոյ իմոյ :

Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս իմ ,
Ճշմարտութեամբ քով սատակեա ըլ-
նոսա :

Ես կամօք իմովք պատարազս մատո-
ցից քեղ . և խոստովան եղից անուան
քում տէր , զի բարի է :

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր
զիս. և 'ի թշնամիս իմ ետես ակն իմ:

Տառնք կ:

ՍԱՂՄՈՍ ԾԴ.

Ե հարաբած . ընդ օբնութիւնս իմաստութեան . Առաջա-
գաւունի :

Ունկնդիր աստուած աղօթից իմոց ,
և մի՛ անտես առներ զինդրուածս իմ:
Կայեա առիս և լուր ինձ . զի տրտմե-
ցայ ես 'ի ձանձրանալ իմում , և խր-
ռովեցայ :

Ե ձայսէ թշնամոյն և 'ի նեղել մեղա-
ւորին խոտորեցան յիս անիրաւու-
թեամբ , բարկութեամբ ոխս պահեին
ինձ :

Սիրտ իմ խոռվեցաւ յիս , և երկիւղ
մահու անկառ 'ի վերայ իմ:
Եհ և դողումն եկն 'ի վերայ իմ , և
ծածկեաց զիս խաւար :

Եսացի տայր ոք ինձ զթեւո որպէս զա-
ղաւուոյ . զի թռչէի վերանայի , և հե-
ռացեալ դադարէի յանապատի:

Եկն ունէի աստուծոյ՝ ոք փրկէր զիս
'ի կարճմոտութենէ , 'ի զայրանալոյ , և

՚ի մըրկեալ նեղարտութենէ :
Ըսկը տէր և բաժանեա զեզուսնոցա .
զի տեսի զանօրէնութիւն և զհակա-
ռակութիւն ՚ի քաղաքի :

Ե տուէ և ՚ի գիշերի շուրջ եղեն զպա-
րսալօք նորա անօրէնութիւնք . չարիք
և մեղք են ՚ի մէջ նոցա . և ոչ պա-
կասեաց ՚ի հրապարակաց նոցա վաշխ
և նենդութիւն :

Օք թէ թշնամոյն նախատեալ էր ,
համբերէի արդեօք . կամ ատելոյն մե-
ծարանեալ էր ՚ի վերայ իմ , թագչէի
արդեօք ՚ի նմանէ :

Եսկ դու մարդ հաւասար իմ , առաջ-
նորդ իմ և ծանօթ իմ :

Եպաքէն ՚ի նոյն քաղցրացուցեր ինձ
և քեզ կերակուր . զի գնացաք միաբա-
նութեամբ ՚ի տան աստուծոյ :

Եկեսցէ մահ ՚ի վերայ նոցա , և կեն-
դանւոյն իջուն ՚ի դժոխս . զի չարու-
թիւն է ՚ի ընակութեան նոցա և ՚ի
մէջ նոցա :

Ես առ աստուած կարդացի . և նա լը-
ւաւ ինձ յերեկոյս , ՚ի վաղորդայն և
՚ի հասարակ առոր :

Պատմեցի և ասացի , և լոիցէ ձայնի

իմում. վրկեսցէ խաղաղութեամբ զանձըն իմ՝ ի մերձաւորաց իմոց. զի կարեօք հասին՝ ի վերայ իմ:

Լուիցէ աստուած և խոնարհ արասցէ զնոսա. որ յառաջնէ քան զյաւիտեանս :

Օք ոչ զոյր նոցա փոխանակ. և ոչ երկեան յաստուծոյ :

Չգեաց զձեռն իւր՝ ի հասուցանել նոցա. և նոքա պղծեցին զօրէնս նորա : Բաժանեցան՝ ի սրտմտութենէ երեսաց նորա. և եհաս՝ ի սիրտս նոցա : Աակուղ էին բանք նոցա քան զձեթ, և ինքեանք որպէս սլաք :

Ընկեա ՚ի տէր զհողս քո, և նա կերակրէ զքեզ . և ոչ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ :

Դու աստուած իջուսցես զնոսա՝ ի դուք ապականութեան . արք արիւնահեղք և նենգաւորք մի՛ հասարակեսցեն զաւորս իւրեանց . այլ ևս՝ ՚ի քեզ տէր յուսացայ :

Տունք ի՞ն: Գոբզայս 1.Բ:

Եանոնս գոբզայս և . Սաղմնս Ժ.Թ:

Տունք Յի :

ՕՐԴՆԱՌԵԹԻՒՆ ՄԵԾԻՆ ՄՈՎՍԵՅԻ
ԱՅՏՈՒԱԾԱՑԵՍ ՄԱՐԴԱՐԵՒ

Բ ՕՀԻ-Ե · ԼԲ :

Օ կ հուր բորբոքեցաւ ՚ի բարկութենէ
իմմէ . այրեսցէ և իջցէ մինչ ՚ի դժու
խըս ներքինս :

Կերիցէ զերկիր և զամենայն բոյսս եր-
կրի նոցա . վառեսցին հրով . և բորբ-
քեսցին հիմունք լերանց նոցա :
Կուտեցից զշարիս ամենայն ՚ի վերայ
նոցա , և նետիւք իմովք սպառեցից
զնոսա :

Մաշեալք և հիւծեալք ՚ի սովոյ , զա-
զանաբեկ դեշ անկեալ ամենայն թըրոշ
նոց երկնից :

Լարս առանց բժշկութեան արձակե-
ցից ՚ի վերայ նոցա՝ զգազանս անապա-
տի , որք այսր և անդք քարշեսցեն ըզ-
նոսա ընդ երկիր :

Երտաքուստ մանկակոտորս արասցէ
զնոսա սուր , և ՚ի ներքուստ շտեմա-
րանաց նոցա անտի արհաւիրք տհից :
Օ երիտասարդս նոցա կուսանոք հան-
դերձ , և զտղայս հաստատելովք ծե-
րովք հանդերձ :

Եսացի թէ ցրեցից վնոսա . և դադարեցուցից զյիշատակս նոցա յաղգաց : Թէ ոչ վասն բարկութեան սրտմտութեան թշնամոյն . զի մի՛ երկայնակեացք եղիցին , և մի՛ բարձրացին հրպարտացեալ թշնամիքն , և ասասցեն : Թէ ձեռն մեր բարձրէ , և բազուկ մեր հզօր . և ոչ տէր աստուած արար զայս ամենայն :

Օի աղջ մի խորհրդակորոյսք են նոքա . և ոչ դոյ ՚ի նոսա խմաստութիւն , և ոչ խորհեցան ՚ի միտ առնուլ զայս ամենայն , և արդ ընկալցին զամօթյանձինս խրեանց :

Օ արմանիք մի մեծ այս են , զիարդ մին զհաղարս հալածեսցէ , կամ երկուք զբիւրս շարժեսցեն :

Թէ ոչ տեառն աստուծոյ մատնեալ էր վնոսա , և տուեալ իցէ վնոսա ՚ի ձեռս թշնամեաց նոցա :

Օի ոչ են դիք նոցա որպէս զաստուած մեր . այլ թշնամիք մեր վատախորհուրդք :

Յայգւոյն սոդոմայ էր որթ նոցա , և տունկ նոցա ՚ի զոմորայ : Խաղող նոցա խաղող դառնութեան ,

և ողկոյզ նոցա՝ի գառնութեան լեզ-
ւոյ :

Արտմտութիւն բարկութեան վիշա-
պաց դինի նոցա . սրտմտութիւն ի-
ժից՝ անհնարին առանց բժշկու-
թեան :

Ո՞չ այս ամենայն ժողովեալ է առ իս .
և կնքեալ պահի՝ի գանձի իմում :
Յաւուր վրիժուց հատուցման հատու-
ցից նոցա ,՝ի ժամանակի յորում հար-
ցի դքարի ոտն նոցա :

Մերձ է օր կորստեան նոցա . հասեալ
է պատրաստութեամբ տէր՝ 'ի վերայ
նոցա :

Դատէ տէր զժողովուրդ իւր , և 'ի
ծառայս իւր մխիթարի :

Օի ետես զնոսա լքեալս , լուծեալս և
մատնեալս 'ի զերութիւն :

Եւ ասիցէ տէր , ո՞ւր են դիրն ձեր՝ յո-
րը յուսացեալ էիք դուք 'ի նոսա .
Պորոց զճարպս սպանդիցն ուտէիք , և
ըմպէիք զգինի զոհիցն :

Երդ յարիցեն օդնեսցեն , և եղիցին
ձեզ թիկունք :

ՆՈՐԻՆ ՄՈՎՍԵՍԻ

Օաներուք և տեսէք՝ զի ես եմ, և ոչ
դոյ այլ աստուած բաց յինէն։
Ես սպանանեմ, և ես կեցուցանեմ։
Հարկանեմ, և ես բժշկեմ. և ոչ ոք ի-
ցէ՝ որ հանիցէ զձեղ ՚ի ձեռաց իմոց։
Համբարձի յերկինս զձեռս իմ։ Եր-
դուսյ աջով իմով և ասացի՝ թէ կեն-
դանի եմ ես յաւիտեան։

Արեցից որպէս փայլակն զսուսեր իմ,
և ՚ի խնդիր վըիմուց արձակեցից զաջ
իմ։


Հատուցից զհատուցումն թշնամեաց
իմոց։ և ատելեաց իմոց հատուցից
զհատուցումն նոցա նոցին։

Երբեցուցից զնետս իմ յարենէ նոցա.
և սուր իմ կերիցէ միտ, յարենէ վե-
րաւորելոց գերելոց պլաց իշխանաց՝
թշնամեաց նոցա։

Ուրախ եղիցին երկինք նովաւ. և եր-
կիրապաղցէն նմա ամենայն որդիք աս-
տուծոյ։

Ուրախ եղերուք հեթանոսք ընդ ժո-
ղովրդեան նորա. և զօրացուացեն զնա
ամենայն հրեշտակք աստուծոյ։

Խնդրելով խնդրեցաւ վրէժ արեան
որդւոց նոցա . և հատուցումն թշնա-
մեաց նոցա հատուցաւ նոցա :
Հատուցումն ատելեաց նոցա հատու-
ցաւ նոցա . և սրբեսցէ տէր զերկիր
Ժողովրդեան իւրոյ :
Փառք հօր և որդւոյ և :



ՄԱՂԹԱՆՔ

Դու ես տէր մեր . դու ես քրիստոս
փրկիչ մեր , զքեզ օրհնեն անձինք մեր:
Մարդասէր տէր , վասն սրբուհւոյ ա-
նարատի մօր քոյ և կուսի , և վասն
խաչի քո պատուականի , ընկալ զա-
դաչանս մեր և կեցո դմեզ:

Ք առաջ և առջնորդ Մի՛ նախանձիր և խոստովան խնդացն :

Վ ասն ուղղելոյ զգնացս մեր 'ի ճանա-
պարհս խաղաղութեան , զտէր աղա-
չեսցուք : Տէր ողորմեա :
Վ ասն ցրելոյ 'ի մէնջ զամենայն խոր-
հուրդս չարին , զտէր աղա :
Վ ասն պարգեւելոյ մեզ առողջ խոր-

Հուրդս և առաքինի վարս , զտէր աղա :
 Ա ամս պահելոյ զմեզ ընդ հովանեաւ
 ամենազօր աջոյն խրոյ , զտէր աղա :
 Ա ամս խորտակելոյ զհակառակորդն
 վաղվաղակի ընդ ոտիւք մերովք , զտէր :
 Ա ամս հոգւոցն հան : Եւ եւս միաբան :
 • Օ անձինս : Ողորմեաց :

Վ. շ. Բ.

Տէր երկնի և երկրի՝ արարիչ ամե-
 նայն արարածոց երեւելեաց և անե-
 րեւութից : Առ քեզ կարդամք յամե-
 նայն ժամ . զի ընդ ամենայն տեղիս է
 տէրութիւն քո , և արքայութիւն քո
 ամենեցուն տիրէ : Հնորհեա մեզ եր-
 կիւղիւ 'ի պաշտօն քո կանխել հանա-
 պաղ . սիրել զ.քեզ 'ի բոլոր սրտէ և 'ի
 բովանդակ մտաց , և յամենայն զօրու-
 թենէ մերմէ պահել զպատուիրանս
 քո : Համբառնալ առ քեզ զձեռս մեր
 'ի սրբութիւն առանց բարկութեան և
 երկմտութեան . և զտանել 'ի քէն ըզ-
 նորհս և զողորմութիւն , և զառա-
 քինսասէր գործոցն յաջողութիւն : Ա ա-
 սըն զի դու ևս տէր կենաց և աս-
 տուած ողորմութեանց . և քեզ վայելէ

փառք իշխանութիւն և պատիւ այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից .
ամէն :

Խոստութիւն ամենեցուն :
Երբունից երիբունիցուն :

Քում ամենազօր և յաղթող տէրու-
թեանդ կրկնի ամենայն ծունը յեր-
կրպագութիւն, և փառաւորի յամե-
նեցունց թաղաւորութիւն քո : Նայ-
եա՛ յերկրպագութիւնս մեր, և ուսո
մեղ առնել զարդարութիւն ճշմար-
տութեան : Ա ամս զի դու ես աստուած
խաղաղութեան, որ բարձեր զթշնա-
մութիւն ՚ի միջոյ, և արարեր զիսաղա-
ղութիւն յերկինս և յերկրի . հեռաւո-
րաց և մերձաւորաց աւետարանեցեր
զնոր պարզեւս քոյին բարեացդ :

Որում և զմեղ մեծի շնորհացդ ար-
ժանաւորս արասցես՝ դասելով ընդ
ճշմարիտ երկրպագուս քո, աստուած
մեր և տէր մեր և փրկիչ յիսուս քը-
րիստոս : Որ ես օրհնեալ ընդ հօր և
ընդ սուրբ հոգւոյդ այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Մատենակ :

Յերգս օրհնութեան և 'ի ճայն սաղ-
մուաց անդադար փառաւորեմք զհայր
և զորդի և զսուրբ հոգիդ այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Օրհնեալ տէր մեր յիսուս քրիստոս ·
ամէն :

Հայր մեր որ յերկինս :





Ըստ Ասմառնաց և յըռուեցած ամենույն թշնամիք
նորս :

ՍԱՂՄՈՍ ՚ՕԵ ·

Ե ի սուրբած . զան ժաշկը բան , որ ՚ի որդոյն հետացեալ
էն . ՚ի ժամանակի զի ի ուն զնու այլունքն ՚ի գել : ՀԱՅԱ-
ՆԱՀԻՅ : Այսին ՚ի չափ :

Ողորմեա ինձ աստուած , զի կոխեաց
զիս մարդ . զօրհանապաղ պատե-
րազմաւնք նեղեցին զիս :

Կոխեցին զիս թշնամիք իմ զօրհանա-
պաղ . բազումք էին՝ ոյք մարտնչէին
ընդիս ՚ի բարձանց :

Ե տուէ ես ոչ երկեայց , զի ՚ի տէր
յուսացայ . աստուծով գովեցից զբանս
իմ . յաստուած յուսացայ՝ և ոչ եր-
կեայց . զի արասցէ ինձ մարդ :

Զօրհանապաղ զբանս իմ անարդե-
ցին . զինէն էին խորհուրդք նոցա ՚ի
չարութեան :

Պանդուխուք եղիցին , և թաքթաքուք
շնջեսցին . նոքա դարշապարի իմում
սպասեսցեն , որպէս և սպասէին անձին
իմոյ :

Որպէս առ ոչնչէ մերժեսցես զնոսա

բարկութեամբ զժողովուրդս հնազան-
դեցուսցես :

Եստուած զկեանս իմ պատմեցից քեզ.
եղից զարտասու իմ առաջի քո, որ-
պէս խոստացար դու ինձ :
Դարձցին թշնամիք իմ յետո իւ-
րեանց, յաւուրյորում կարդացից առ
քեզ :

Եհա ծանեայ զի աստուած իմ ես դու .
զաստուած օրհնեցից 'ի ըանս իմ, և
զտէր դովիեցից 'ի խօսս իմ. յաստուած
յուսացայ և ոչ երկեայց, զի՞ արաս-
ցէ ինձ մարդ :

Յինէն են ուխտք իմ, զոր տաց քեզ
օրհնութեամբ աստուած աստուած իմ:
Փրկեցեր զանձն իմ 'ի մահուանէ. զա-
չըս իմ յարտասուաց, և զոտս իմ 'ի
գայթակղութենէ. հաճոյ եղէց առա-
ջի տեառն յերկրին կենդանեաց :

ՏԱԿ ԺԱ :

ՍԵՂՄՈՍ ԾԶ.

Ի վարուած մէ ապահովէր . Ալուսոս 'կաւուէ յուշանադէր .
'ի ժամանակի ոչի խոհուցեալ և ըստուցեալ եր հա յերեսոց
Աստաղոյ յոյրէ անդ :

Աղորմեա ինձ աստուած՝ ողորմեա ինձ,
զի 'ի քեզ յուսացաւ անձն իմ:

Ի հովանի թեւոց քոց յուսացայց ,
մինչև անցցէ անօրէնութիւն :

Եղաղակեցի առ աստուած բարձրեալ ,
առ աստուած բարերար իմ :

Եռաքեաց յերկնից, և կեցոյց զիս . եղ
՚ինախատինս , որք կոխէին զիս :

Եռաքեաց աստուած զողորմութիւն և
զջմարտութիւն իւր . և փրկեաց զան-
ձըն իմ ՚ի միջոյ դաղանաց , զի ննջէի
ես խոռվեալ :

Որդւոց մարդկան ատամունք իւրեանց
զէն և նետք են , և լեզուք նոցա որ-
պէս զառւր սուսերի :

Ռարձրեալ ես դու յերկինս աստուած ,
և յամենայն երկրի են փառք քո :

Արոգայթ պատրաստեցին ոտից իմոց .
Խոնարհ արարին զանձն իմ . վորեցին
առաջի իմ խորխորատ , և անկան ին-
քեանք ՚ի նոյն :

Պատրաստէ սիրտ իմ աստուած ,
պատրաստէ սիրտ իմ օրհնել և սաղմոս
ասել քեզ փառօք իմովք :

Զարթիք փառք իմ , զարթիք սաղ-
մոսիք և օրհնութեամբ . և ես զար-
թեայց առաւօտոց :

Խոստովան եղեց քեզ ՚ի ժողովուրդս

տէր, և սաղմոս ասացից քեզ յազինս։
Մեծ եղեւ մինչեւ յերկինս ողորմու-
թիւն քո, մինչեւ յամպս ճշմարտու-
թիւն քո։

Բարձրեալ ես դու յերկինս աստուած,
և յամենայն երկրի են փառք քո։

Տունք Ժ. 1.

ՍԵՂՄՈՍ ԾԷ.

Խ էստորն + մ' ապահներ + յարչահնահներ + Առշան Կասեն +

Յաէ արդարեւ զարդարութիւն խօսէիք, և ուղիղս գատէիք որդիք մարդկան։ Քանզի և արդ իսկ ՚ի սրտի ձերում զանօրէնութիւն գործէք յերկրի. զա- նիրաւութիւն ձեռք ձեր նիւթեն։ Օտար եղեն մեղաւորք ՚ի մօրէ. խարե- ցան յարդանդէ, և խօսեցան զսուտ։ Սրտմտութիւն նոցա բառ նմանու- թեան օձի. որպէս իժի և քարրի, զի խցեալ է զականջս իւր։ Օի մի՛ լուիցէնա զձայն թովչի ճար- տարի. և մի՛ առցէ զգեղ ՚ի զեղատուէ իմաստնոյ։

Եստուած վշտեսցէ զատամունս նոցա ՚ի բերանս իւրեանց. և զժանիս առիւ-

ծուց խորտակեաց տէր :
 Անարդ եղիցին նոքա որպէս ջուր՝ զի
 հեղանի . ՚ի լարել աղեղան նորա տկա-
 բացին որպէս մոմ զի հալի , և սպա-
 ռեսցին :

Անկաւ հուր՝ և ոչ տեսին զարեւ . մինչ-
 եւ ՚ի միտ առեալ էր զփուշ իւրեանց .
 որպէս դժնիկ բարկութեամբ կենդան-
 ւոյն կիզցէ զնոսա :

Ուրախ եղիցի արդարն՝ յորժամ տես-
 ցէ զհատոցումն . և զձեռու իւր լու-
 ացէ յարեան մեղաւորի :

Եւ աստոցէ մարդ . թէ արդարև դո-
 ցէ պտուղ արդարոյ , և է աստուած
 որ դասի զնոսա յերկրի :

Տառնք Փ : Գարշայք Լ.Դ.

— ՀՕԽՈՅԻ ՀԱՅԻ ՀԱՅԻ ՀԱՅԻ —

ՍԱՂՄՈՍ ԾԲ.

Ի հարաբոծ . մէ սուխաներ . յայնապիր . Ասընա Պատամի .
 ՚ի ժումանակի ոչ սոսուեաց Ասուուլ . և ուղարկեաց զուան
 նորս . ոչ սովորէ զն :

Փրկեա զիս ՚ի թշնամեաց խմոց աս-
 տ ած , յայնցանէ ոյք յարուցեալ են
 ՚ի վերայ իմ , ապրեցո զիս :

Փրկեա զիս յայնցանէ , ոյք գործեն

ղանօրէնութիւն . յարանց արիւնա-
հեղաց ապրեցո զիս :
Որսալ զանձն իմ կամեցան , և հասին
'ի վերայ իմ հզօրք :
Ոչ մեղք իմ և ոչ յանցանք . առանց
մեղաց ընթացայ և ուղիղ եղէ :
Օ արթիր ընդ առաջ իմ , և տես դու
տէր զօրութեանց աստուած խրայէլի :
Նայեաց և այց արա ամենայն հեթա-
նուաց . մի՛ ողորմիր ամենեցուն , ոյք
գործեն զանօրէնութիւն :

Դարձցին ընդ երեկոյս . սովեսցին որ-
պէս շունք , և շրջեսցին դքաղաքաւ :
Նոքա զօղանջեսցեն բերանօք իւրեանց ,
և սուր է՝ 'ի շրթունս նոցա :

Խսկ արդ ովլուաւ զայս . զի դու տէր
ծիծաղեսցիս զնոքօք , և արհամարհես-
ցես զամենայն հեթանոս :

Օ զօրութիւն իմ առ քեզ պահեցից ,
զի աստուած օգնական իմ է :
Եստուած իմ , ողորմութիւն նորա
կանխեսցէ առ իս . և աստուած իմ
ցուցցէ ինձ 'ի թշնամիս իմ :

Մի՛ սպանաներ զնոսա , զի մի՛ մոռա-
ցին զժողովուրդս քո :
Յրուեա զնոսա զօրութեամբ քով , և

ընկճեա զնոսա , զի դու ես պաշտպան
իմ տէր :

Մեղք բերանոյ նոցա և բանք շրթանց
նոցա , ընկլցին նոքա յամբարտաւա-
նութեան իւրեանց :

Յանէծս և 'ի ստութիւնս մատնեսցին .
'ի կատարածի բարկութեան սպա-
ռեսցին . և մի՛ գտցին :

Դիտացեն՝ զի աստուած տիրէ յակո-
րայ և ամենայն ծաղաց երկրի :
Դարձցին ընդ երեկոյս . սովեսցին որ-
պէս շունք , և շրջեացին զքաղաքաւ :
Նոքա սիուեսցին յուտել . ապա թէ
ոչ յաղեսցին , տրտնջեսցեն :

Ես օրհնեցից զօրհնութիւնս տեառն ,
և ցնծացայց առաւօտոց յողորմու-
թեան քում :

Օք եղեր իմ պաշտպան և տուն ա-
պաւինի , յաւուր նեղութեան իմոյօդ-
նական իմ :

Քեզ սաղմոս ասացից՝ աստուած ա-
պաւէն իմ . աստուած ողորմութեան
իմոյ :

ՍԱԴՄՈՍ ԾԹ.

Առաջն Պատուի . այսուհետեւ . 'ի հարաբան , շահանցելոց
ժամանակաց առ առաջնեւ . 'ի ժամանակի վէ հըմիտ արոր ն-
ու Արքաքերու և Արքաքեսանն Արքազ , և 'ի դարձն հայ-
կանեւ Յանձն պարն աղքից յերիսորուսն հաղողու :

Եստուած մերժեցեր և աւերեցեր բղ-
մեղ . բարկացար , և գթասցիս 'ի մեղ :
Հարժեցեր զերկիր , և խովվեցուցեր
զսա . բժշկեա զհարուածս սորա , զի
սասանեցաւ :

Յուցեր ժողովրդեան քում խստու-
թիւն . և ետուր ըմպել մեղ զինի յի-
մարտութեան :

Ետուր երկիւլածաց քոց նշան , զի ապ-
րեսցին յերեսաց աղեղան :

Որպէս փրկեցան սիրելիք քո . կեցո ա-
ջով քով , և լուր մեղ :

Եստուած խօսեցաւ 'ի սրբութենէ իւր-
մէ . ցնծացայց բարձր եղէց , բաժա-
նեցից զսիւքէմ , և զհովիտսն յարկաց
չափեցից :

Իմ է գաղայադ , և իմ է մանասէ .
Եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ :
Յուդայ թագաւոր իմ . մովաք աւազան
յուսոյ իմոյ :

Յեղովմէ ուղղեցից զգնացս իմ . և ինձ
այլազգիք հնազանդ եղեն :

Ո տարցէ զիս 'ի քաղաք ամուր , կամ
ով առաջնորդեսցէ ինձ մինչև ցեղոմ :
Եթէ ոչ դու աստուած , որ մերժեցեր
զմեղ , և ոչ ելեր աստուած ընդ զօրս
մեր :

Տուր մեղ օդնութիւն 'ի նեղութեան ,
զի ընդունայն է փրկութիւն մարդոյ :
Հստուծով արանցուք զօրութիւն . և
նա արհամարհեսցէ զայնոսիկ՝ ոյք նե-
ղեն զմեղ :

Տունք Ժ.Գ. :

ՍԱՂՄՈՍ Կ.

Ի հորոշուն . ընդ օրհնուանիւն . Առշնու կառանել :

Լուր աստուած աղօթից իմոց , և
նայեա տէր յաղօթս իմ :
Ի ծագաց երկրի կարդացի առ քեզ ,
մինչ 'ի վաստակիլ սրտի իմոյ :
Ի վիմէ բարձր արարեր զիս . առաջնոր-
դեցեր ինձ , և իմ եղեր յոյս , և աշ-
տարակ հզօր եղեր ինձ յերեսաց թրշ-
նամոյն :

Ռնակեցայց ես 'ի յարկսքո յաւխեան ,

և ծածկեցայց ընդ հովանեաւ թեսոց
քոց :

Դու աստուած լուար աղօթից իմոց . ե-
տուր ժառանգութիւն , ոյք երկնչին
յանուանէ քումմէ :

Եւուրս յաւուրս յաւելեր թաղաւորի
ամաց նորա , աւուրս աղջաց մինչեւ
յազգս :

Կայ և մնայ յաւիտեան առաջի աս-
տուծոյ ողորմութիւն և ճշմարտու-
թիւն , ոյք խնդրեն 'ինմանէ :

Եյսպէս սաղմոս ասացից անուան
քում յաւիտեանս յաւիտենից , և տաց
քեզ զաղօթս իմ օր ըստ օրէ :

Տունք ը . Գորդայս ԽՅ :



ՍԱՂՄՈՍ ԿԸ .

Ե իսուսք . 'Ե ՔԵՐԵ , ԵՐԵՄԵՆԵ , ԱՌԵՎԱ 'ԵՎԵՆԻ :

Հայց միայն աստուծոյ հնապանող լեր
անձն իմ , զի 'ինմանէ է ինձ փրկու-
թիւն :

Եա է աստուած իմ և փրկիչ իմ ապա-
մէն իմ , զի մի' սասանեցայց առաւել :
Ոինչեւ յերբ յառնէք 'ի վերայ մար-

դոյ՝ սպանանել ամենեքեան, որպէս
յորմոյ թիւքելոյ և 'ի ցանկոյ մերժելոյ:
Ըայց միայն զպատիւ իմ խորհեցան
մերժել յինէն, և ընթացան ՚ի ծառ
բաւս խրեանց :

Աերանոք խրեանց օրհնեին, և սըր-
տիւք անիծանեին :

Ըայց սակայն աստուծոյ հնաղանդ լեր
անձն իմ, զի ՚ի նմանէ է ինձ համբե-
րութիւն:

Կա է աստուած իմ և փրկիչ իմ, ա-
պաւէն իմ զի մի՛ սասանեցայց :

Յաստուծոյ է զօրութիւն իմ և փառք
իմ. աստուած օդնութեան իմոյ, յոյս
իմ առ աստուած է:

Յուսացարուք ՚ի նա ամենայն ժողովք
ժողովրդոց · սփոեցէք առաջի նորա
զսիրտս ձեր, զի աստուած օդնական
է մեր յաւիտեանս ժամանակաց :

Սակայն ընդունայն են որդիք մարդ-
կան · սուտ են որդիք մարդկան · ՚ի կր-
շիոս խրեանց մեղանչեն, և ինքեանք
յունայնութեան են ՚ի միասին :

Մի՛ յուսայք յանիրաւութիւն, յա-
փրշտակութեան մի՛ ցանկայք · և մե-
ծութիւն թէ առուիւ գայցէ, մի՛ յօ-

Ժարեսցին սիրտք ձեր :
 Արիանդամ խօսեցաւ աստուած, և եր-
 կուս զւյս լուաք :
 Յաստուծոյ է զօրութիւն . և քո
 տէր ողորմութիւն . և զու հաստու-
 ցանես իւրաքանչիւր ըստ գործոց
 'նոցա :

Տառնք ԺԳ. :

ՍԱՂՄՈՍ ԿԲ. :

Առաջնու Շատրվան . Բնաշխեր նսորէր նա յանողադիմ անդ
 հրեասաբանէ :

Եստուած աստուած իմ, ես առ քեզ
 առաւօտ առնեմ . ծարաւեաց առ քեզ
 հոգի իմ . քանի պատիկ եւս և մար-
 մին իմ :

Որպէս երկիր անապատ և անջուր . որ
 ոչ զոյ ՚ի նմա Ճանապարհ :

Եյսպէս ՚ի սուրբս երեւեցայց քեզ,
 տեսանել ինձ զզօրութիւն քո և զփա-
 ռըս քո :

Վասն զի լաւ է ինձ ողորմութիւն քո
 քան զկեանս իմ . և շրթունք իմզո-
 վեսցեն զքեզ :

Եյսպէս օրհնեցից զքեզ ՚ի կեանս իմ,

և յանուն .քո համբարձից զձեռս իմ:
Որպէս 'ի ճարապոյ պարարտութենէ,
լցցի անձն իմ, շրթ-ամբք ցնծութեան
օրհնեացէ դքեղ բերան իմ:

Օի թէ յիշէի դքեղ յանկողնի իմում,
ընդ առաւոտա կանխեալ խօսէի ընդ
քեզ :

Օի եղեր իմ օգնական, 'ի հովանի
թեւոց քոց ցնծացայց:
Եկն զինի քո անձն իմ, և զիս ընկա-
լու աջ քո. և նոքա 'ի նանիր խնդրե-
ցին զանձն իմ :

Մտցեն 'ի ներքոյ անդնդոց երկրի,
մատնեսցին 'ի ձեռս սրոյ, և բաժինք
աղուխուց եղիցին :

Թաղաւոր յուսացաւ 'ի տէր. գովես-
ցին ամենեքեան՝ ոյ.ք երդնուն նովաւ.
Խցցին բերանք այնոցիկ՝ ոյ.ք խօսէին
զանիրաւութիւն :

Տառապ ԺԱ.

ՍԱՂՄՈՍ ԿՊ.

Ե ՀԱՊԱՐԱՆ · ԱՎԱՐԱՆ 'Ի ԱՆԻՇ :

Լուր աստուած աղօթից իմոց յաղա-
չել ինձ առ քեզ, յերկիւղէ թշնամ-

ւոյն փրկեա զանձն իմ :

Օտածկեսցես զիս 'ի ժողովոց չարաց ,
'ի բազմութենէ՝ ոյք դործեն զանօրէ,
նութիւն :

Ոյք սրեցին որպէս սուսեր զլեղուս իւ-
րեանց . լարեցին զաղեղունս իւրեանց
յիրս դառնութեան :

Զգել 'ի զաղտնիս այնոցիկ՝ ոյք ուղեղ
են սրտիւք . յանկարծակի ձգեսցեն 'ի
նոսա , և մի՛ երկիցեն :

Ոյք զօրացուցին յանձինս իւրեանց
զբանս չարութեան . խորհեցան թա-
զոցանել ինձ որոդայթ , և ասացին
ոչ տեսանէ զայս տէր :

Քննեցին զանօրէնութիւն , պատրաս-
տեցան 'ի քննել զքննութիւն :

Մատիցէ այր 'ի խորութիւն սրտի իւ-
րոյ , և բարձր եղիցի աստուած :

Եետք տղայոց եղեն վերք նոցա . տկա-
րացան 'ի նոսա լեզուք նոցա , և խոռ-
վեցան ամենեքեան՝ ոյք հայէին ընդ
նոսա :

Երկեաւ ամենայն մարդ , 'ի պատմել
զգործս աստուծոյ . և զարարածս նորա
'ի միտ առին :

Ուրախ եղիցի արդար 'ի տէր , և յու-

սասցի ՚ի նա . նովաւ գովեսցին ամենե-
քեան , ոյք ուղիղ են սրտիւք :

Տառնք Ժ : Գորդայս ԼԳ :

ՍԱԿՄՈՍ ԿԴ :

Ի հորուշ . Առաջ Պատրիք : Օքնութիւն Երեմոյէ
Եւնիւն և ժամկերեան , յորդայ ՚ի ուներեածութիւննեն
իսկըն եւնել :

Քեզ վայելէ օրհնութիւն աստուած ՚ի
սիօն . և քեզ տացին աղօթք յերու-
սաղէմ :

Լուր աղօթից խմոց , զի առ քեզ ամե-
նայն մարմին եկեսցէ :

Բանքը անօրինաց զօրացան ՚ի վերայ
մեր . և զամբարշտութիւնս մեր դո-
քաւեսցես :

Երանի զոր ընտրեցեր և ընկալար , և
ընակեսցին ՚ի գաւիթս քո :

Եցուք մեք ՚ի բարութենէտ տան քո-
սուրը է տաճար քո սքանչելի արդա-
րութեամբ :

Լուր մեզ աստուած փրկիչ մեր , յոյս
ամենայն ծագաց երկրի , և որ ՚ի ծով
հեռի :

Ո պատրաստէ զլերինս զօրութեամբ

իւրով. և զգեցեալ է զօրովթիւն :
 Ո խռովեցուցանէ զմեծութիւն ծովու,
 և զձայն ալեաց նորա ցածուցանէ :
 Խռովեսցին հեթանոսք , և երկիցեն
 ընակիչք երկրի ՚ի նշանաց քոյ :
 Յելս առաւօտու և ընդ երեկոյս զուար-
 ճասցին . հայեցար յերկիր արբեցու-
 ցեր զնա , և բազում արարեր զմեծու-
 թիւն նորա :

Գետն աստուծոյ լի եղեւ ջուրը . պատ-
 րասն արարեր զկերակուր նորա , զի
 այսպէս է պատրաստութիւն :

Օ ակօս նորա արբեցուցեր , և բազում
 արարեր զարմտիս նորա :

Խ ցօղել նորա զուարթ եղիցի բոյս նո-
 րա . օրհնեսցի պատկ տարւոյ քաղ-
 ցրութեան քոյ :

Դաշտք քո լցոցին պարարտութեամք .
 պարարտասցին զեղեցկութիւնք ա-
 նապատի :

Ելուրք զցնծութիւն զգեցցին , և զգեց-
 ցին խոյք մաքեաց :

Հովիտք բազում արասցեն զցորեան ,
 ազաղակեսցեն և օրհնեսցեն :

ՍԱՂՄՈՍ ԿԵ ·

Ի ՀՅՈՒՐԵՆ · ԱԽԱՎՈՒ ԴԱՎԻՇԻ · ՀԵՂԱՇԵՆԻՆ ·

Եղաղակեցէք առ աստուած ամենայն
Երկիր · սաղմոս ասացէք անուան նո-
րա, և տոք զիառս օրհնութեան նո-
րա :

Եսացէք աստուծոյ, ո՞րպէս զի ահեղ
են գործք քո · ՚ի բաղում զօրութեան
քում ստեցին քեզ թշնամիք քո ·
Եմենայն Երկիր Երկիրապագցեն քեզ ·
սաղմոս ասացեն քեզ, և սաղմոս ա-
սացեն անուան քում :

Եկայք և տեսէք զգործս աստուծոյ ·
ո՞րպէս զի ահեղ են խորհրդով քան
զամենայն որդւոց մարդկան :

Ո գարձոյց զծովս ՚ի ցամաք · և ընդ
գետս անցին ոտանաւորք :

Ենդ ուրախ եղիցուք մեք ՚ինա, որ
տիրէն զօրութեամք իւրով յաւիտե-
նից :

Եչք նորա ՚ի հեթանոսս հային · ոյք
դառնացուցին զնա, մի՛ բարձրասցին
յանձինս իւրեանց :

Օրհնեցէք հեթանոսք զաստուած մեր ·

լսելի արարէք զձայն օրհնութեաննու-
րա :

Եյն որ ետ զանձն իմ ՚ի կեանս , և
ոչ ետ դողութիւն ոտից իմոց :
Փորձեցեր զմեղ աստուած և քննե-
ցեր, որպէս և քննի արծաթ :
Խջուցեր զմեղ յորոգայթ , եղեր զնե-
ղութիւն ՚ի թիկունս մեր . և անցու-
ցեր զմարդիկ ՚ի վերայ գլխոց մերոց :
Ենցաք մեք ընդ հուր և ընդ ջուր , և
հաներ զմեղ ՚ի հանգիստ :

Մտից ՚ի տուն քո պատարադօք . տայ
քեղ զուխտ իմ , զոր խոստացան քեղ
շրթունք իմ , զոր բերան իմ խօսեցաւ
՚ի նեղութեան :

Օողջակէզս ուղղալիցս մատուցից քեղ
խոյովք և խնկովք , և քեղ մատու-
ցից զուարակս և նոխազս :

Եկայք լուարովք ինձ և պատմեցից
ձեղ ամեննեքեան՝ ոյք երկնջեք յաս-
տուծոյ , զոր ինչ արար անձին իմոյ :

Առ նա բերանով իմով կարդացի . և
բարձք արարի զնա լեզուաւ իմով :

Օմեղս թէ տեսանէի ՚ի սրտի իմում
միթէ լսէ՞ր ինձ տէր :

Վասն այսորիկ լուաւ ինձ աստուած ,

և նայեցաւ՝ ի ձայն խնդրուածաց իմոց։
Օրհնեալ է աստուած՝ որ ոչ ՚ի բացեայ
արար զաղօթս իմ, և ոչ զողորմու-
թիւն իւր յինէն։

ՏԱՐԱՆԴԻ Ժ. Բ.

ՍԱՂՄՈՍ Կ. Զ.

Ի իւրաքանչ . ընդ օրինակնեան . Առաջ երես :

Աստուած ողորմեա մեղ և օրհնեա
զմեղ. երեւեցո զերեսս քո ՚ի մեղ, և ո-
ղորմեա մեղ։

Ճանաչել յերկրի զճանապարհս քո,
յաղինս ամենայն զփրկութիւնս քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժողո-
վուրդք աստուած, խոստովան եղիցին
առ քեզ ժողովուրդք ամենայն։

Ուրախ եղիցին և ցնծասցեն աղինք,
զի դու գատես զժողովուրդս ուղղու-
թեամբ. և աղքաց երկրի դու առաջ-
նորդես։

Խոստովան եղիցին առ քեզ ժողո-
վուրդք աստուած. գոհասցին զքէն
ժողովուրդք ամենայն։

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց
զմեղ աստուած աստուած մեր։

Աստուած մեր օրհնեսցէ զմեղ. և 'ի
նմանէ երկիցեն ամենայն ծաղք երկրի:

Տունք Ե : Գորդոյս ԽԲ :

ՍԱՂՄՈՍ ԿԵ :

Ե Խորաբռ : Առշան Դասնէ :

Յարիցէ աստուած՝ և ցրուեսցին ա-
մենայն թշնամիքնորա, փախիցեն ա-
տելիք նորա յերեսաց նորա :
Որպէս պակասի ծուխ՝ պակասեսցին .
որպէս հայի մոմառաջի հրոյ, այնպէս
կորիցեն մեղաւորք յերեսաց աստո-
ծոյ :

Երդարք ուրախ եղիցցին՝ և ջնծասցեն
առաջի նորա, և զուարձասցին յուրա-
խութեան խրեանց :

Օրհնեցէք զաստուած մեր և սաղմոս
ասացէք անուան նորա . ճանապարհ
արարէք այնմիկ՝ որ նստի ընդ արև-
մուտս, և տէրէ անուն նորա :

Ջնծասցեն առաջի նորա, և խութես-
ցին յերեսաց նորա :

Որ հայրն է որբոց և դատաւոր այ-
րեաց, աստուած 'ի տեղւոջ սրբու-
թեան խրոյ :

Սատուած ընակեցուցանէ զմիակրօնս
՚ի տան , և հանէ զկապեալս քաջու-
թեամբ խրով . սոյնավէս և զդառնացո-
զըս՝ որբ ընակեալ են ՚ի գերեզմանս :
Սատուած ընդ ելանսեն քո առաջի ժո-
ղովրդեան քո , ընդ անցանսեն քո ընդ
անապատ՝ երկիր շարժեցաւ :

Քանզի և երկինք ցողեսցին յերեսաց
աստուծոյ ՚ի սինայէ առաջի աստուծոյ
խրացէլի:

Ենձրե կամաց պատրաստեցեր աս-
տուած ժառանգութեան քում . թէ-
պէտ և հիւանդացաւ , սակայն դու
հաստատեցեր զնա , և զաղանք քո
ընակեսցին ՚ի նմա :

Պատրաստ արարեր քաղցրութեամբ
քով աղքատի աստուած . տէր տացէ-
զրան , ոյք աւետարաննեն զօրութեամբ
բաղմաւ :

Թաղաւոր զօրութեանց սիրելոյ , գե-
ղեցկութիւն տան քո բաժաննեալ յա-
ւարի . թէպէտ և ննջեսջիր ՚ի մեջ վե-
ճակաց :

Թէեւք աղաւնոյ արծաթապատ , և
թիկնամեջ նորա ՚ի դոյն ոսկւոյ :
Եգումարել երկնաւորին զթաղաւորս

՚ի վերայ նորա, ձիւնասցին ՚ի սաղմոն :
Լեառն աստուծոյ լեառն պարարտ,
լեառն մածեալ, լեառն պարարտ. և
զե՞նչ կարծէք լերինք հպարտացեալք:
Լեառն, ընդ որ հաճեցաւ աստուած
բնակիլ ՚ի նմա, քանզի և տէր խկրը-
նակեսցի ՚ի նմա խսպառ :

Ասոք աստուծոյ բիւրապատիկ.ք, հա-
զարք ուղղիչ.ք, և տէր ՚ի նոսա ՚ի սի-
նէ սրբութեան իւրոյ :

Ել ՚ի բարձունս և գերեաց զգերու-
թիւն. էառ աւար՝ բաշխեաց պարզես
և ետ որդւոց մարդկան. քանզի թե-
րեհաւատից եւս բնակեալ եղիցին ՚ի
նմա :

Տէր աստուած օրհնեալ՝ օրհնեալ տէր
զօրհանապազ. առաջնորդեսցէ մեղ
աստուած փրկիչ մեր :

Վստուած մեր աստուած կենարար, և
՚ի տեառնէ են ելք մահու :

Հայց սակայն աստուած փշրեսցէ զգը-
լուսս թշնամեաց մերոց. և զհերն
կարձնովին, ոյք գնան յանօրէնու-
թեան իւրեանց :

Վսաց տէր՝ ՚ի խորոց անդնդոց դար-
ձուցից, և ՚ի միջոյ ժանեաց զայն ՚ի

ղուրս կորզեցից :

Որպէս թացցի ոտն քո յարեան , և լեզուք շանց քոց յարենէ թշնամեաց քոց :

Երեւեցան գնացք քո աստուած . դընացք աստուծոյ թագաւորին մերոյ սրբոյ :

Կանխեցին իշխանք հանել զօրհնութիւն՝ ի մէջ գուսանաց և գովչաց : Յեկեղեցիս օրհնեցէք զաստուած , և զտէր յաղբերացն խրայէլի :

Ենդ ըենիամին՝ ի տղայութեան զարմանալի , իշխանք յուդայ առաջնորդքնորա՝ իշխանք զարուդոնի , և իշխանք նեփիթաղիմայ:

Հրամայեա աստուած զօրութեամք քով . զօրացո զայս , զոր հաստատեցեր ի մեզ :

Ետաձարէ քումմէ յերուսաղեմէ քեզ մատուցեն թագաւորք զպատարազո : Աստեա՝ ի գազան եղեգան , ի ժողովս զուարակաց և ի դասս երնջոց : Խոտեսցին այնոքիկ՝ ոյք ընտրեալ են արծաթով . ցրուեա զհեթանոս , ոյք կամին ընդ պատերազմ :

Եկեսցեն հրեշտակք յեղիպտոսէ . հըն-

Դիկը յառաջադոյն ձեռնտու լիցին առաստուած :

Թագաւորութիւնք երկրի օրհնեցէք
զաստուած, և սաղմոս ասացէք տեառն:
Ճանապարհ արարէք այնմիկ, որ նստի
յերկինս երկնից ընդ արեւելո :

Եհա տացէ զձայն իւր ’ի ձայն զօրու-
թեան, և տուք դիառս աստուծոյ:
Լվերայ խրայէլի մեծվայելչութիւն
նորա. և զօրութիւննորա մինչև յամ-
պրա երկնից :

Արանչելի է աստուած ’ի լվերայ սրբոց
իւրոց, աստուած խրայէլի:
Նա տացէ զօրութիւն հաստատու-
թեան ժողովրդեան իւրոյ. օրհնեալ է
աստուած :

Տառնք ԻԱ :

ՍԱԴՄՈՍ ԿԸ .

Ե խորարած. Առջևս Դասենք. Համ զարանցելցն :

Վեցո զիս աստուած, զի հասին ջուրք
յանձնիմ. ընկլայ ես ’ի խորս անդըն-
դոց, ուր ոչ զոյ ինձ հանդիսոտ :
Նկի ես ’ի խորս ծովու, և շրջանք ըն-
կրզմեցին զիս :

Աստակեցայ ես առ աղաղակել, և
կերկերեցաւ կոկորդ իմ :
Նուաղեցան աչք իմ առ յուսալ ինձ
առ տէր աստուած իմ :
Ըաղումք եղեն քան զհեր զիսոյ ի-
մոյ, ոյք ատէին զիս 'ի տարապար-
տուց :

Օօրացան յիս թշնամիք իմ և տոե-
լիք իմ 'ի նանիր . ինչ զոր ոչ յափրշ-
տակեալ էի, տուժէի 'նոցա :
Եստուած դու ծանեար զանդգամու-
թիւն իմ, և յանցանք իմ 'ի քէն ոչ
ծածկեցան :

Մի ամաչեսցեն վասն իմ, ոյք համ-
բերեն քեզ տէր տէր զօրութեանց . մի՛
պատկառեսցին վասն իմ, ոյք խընդ-
րեն զքեզ աստուած խրայէլի :

Վասն քո համբերի 'նախատանաց . և
ծածկեաց ամօթ զերեսս իմ :

Օտար եղէ ես յեղբարց իմոց, և հիւր
որդւոց մօր իմոյ :

Նախանձ տան քո եկեր զիս . և 'նա-
խատինք 'նախատչաց քոց սնկան 'ի
վերայ իմ :

Խոնարհեցուցի սլահօք զանձն իմ, և
եղեն ինձ այս 'նախատինք, արարի ըղ-

Հանդերձս իմ քուրձ, և եղէ յառակ
նոցա:

Օ ինէն խորհէին, ոյք նստէին առ դը-
րունս. զիս այսն առնէին, ոյք ըմպէ-
ին զգինի:

Ես յազօթս կայի առ քեզ տէր՝ ի ժա-
մանակ ընդունելի:

Եստուած՝ ի բազում ողորմութեան
քում լուր ինձ,՝ ի ճշմարտութիւն
փրկութեան քո:

Եպրեցո զիս՝ ի կաւոյ, զի մի՛ ընկլայց.
ապրեցայց ես յատելեաց իմոց, և ՚ի
խորոց ջուրց բազմաց:

Մ՚ի՛ ընկլցեն զիս պտոյտք ջուրց, և մի՛
ընկղմեսցեն զիս անդունդք խորոց.
և ջրհոր մի՛ կափուսցէ զքերան իւր
՚ի վերայ իմ:

Լուր ինձ տէր, զի քաղցր է ողորմու-
թիւն քո. ըստ բազում գթութեան
քում հայեա յիս, և մի՛ դարձուցա-
ներ զերեսս քո՝ ի ծառայէ քումմէ. զի
նեղեալ եմ ես, վաղվաղակի լուր ինձ:
Հայեա յանձն իմ և փրկեա զիս և վա-
սըն թշնամեաց իմոց ապրեցո զիս:
Օ ի դու զիտես զնախատինս իմ, զա-
մօթ իմ և զպատկառանս իմ:

Վռաջի քո են ամենայն նեղիչք անձին իմոյ . նախատանաց համբեր սիրտ
իմ և թշուառութեան :

Եկն ունէի՝ թէ ոք սրտմեսցի ընդ իս .
և ոչ ոք էր . և միսիթարիչ ինձ ոք ոչ
գտաւ :

Ետուն ՚ի կերակուր ինձ լեզի , և ՚ի ծա-
րաւ իմ արբուցին ինձ քացախ :
Եղիցին սեղանք նոցա առաջի նոցա
յորոգայթ ՚ի հատուցումն և ՚ի գայ-
թակղութիւն :

Խաւարեսցին աչք նոցա , զի մի՛ տես-
ցեն . և զթիկունս նոցա հանապաղ կո-
րացո :

Երկցես ՚ի վերայ նոցա զբարկութիւն
քո . և սրտմտութիւն բարկութեան
քո հասցէ ՚ի վերայ նոցա :

Եղիցին ընակութիւնք նոցա աւերակ .
և ՚ի յարկս նոցա մի՛ ոք իցէ՝ որ բը-
նակիցէ :

Օք զոր դու հարեր՝ հալածեցին , և ՚ի
վերս ցաւոց իմոց յաւելին :

Դիր զմեղս ՚ի վերայ մեղաց նոցա , զի
մի՛ մնոցեն յարդարութիւն քո :

Զնջեսցին նոքա ՚ի դպրութենէ քում
մէ կենաց , և ընդ արդարս քո մի՛ զը-

բեսցին :

Եղբատ և ցաւած եմ՝ ես. փրկութիւն
քո աստուած ընկալցի զիս :
Օրհնեցից զանուն աստուծոյ իմոյ օր-
հնութեամբ, և բարձր արարից զնա
գովութեամբ :

Հաճոյ եղիցի աստուծոյ քան զորթ
մատաղ, որ բերէ զեղջիւրս և զկճղակս :
Տեսցեն աղբատը և ուրախ եղիցին .
ինդրեցէք զաստուած, և կեցցեն ան-
ձինք ձեր :

Օի լուաւ տէր տնանկաց, և զկա-
պեալս իւր ոչ արհամարհեաց :
Օրհնեսցեն զնա երկինք և երկիր, ծով
և ամենայն որ զեռայ ՚ի նոսա :

Եստուած փրկէ զախոն. և շինեսցին
քաղաքք հրէաստանի. շինեսցեն ընա-
կեսցեն՝ և ժառանգեսցեն ՚ի նմա :

Օ աւակ ծառայից քոց հաստատեսցի
անդ. և ոյք սիրեն զանուն քո, ընա-
կեսցեն ՚ի նմա :

ՍԱՂՄՈՍ ԿԹ.

Ի Հարաբերած . Առջևու Գնաութիւ առ ՚է միշտուի քրիելոյ զնու
որեան : :

Սատուած յօգնել ինձ նայեաց , և տէր
յընկերել ինձ փութա :

Եմաչեսցեն և յամօթ լիցին , ոյք
խնդրէին զանձն իմ . դարձցին յետս
և ամաչեսցեն , ոյք խորհէին ինձ չար :

Դարձցին առժամայն ամաչեցեալք ,
ոյք ասէին ինձ վաշ վաշ :

Յնծասցեն և ուրախ լիցին ՚իքեղ ա-
մենեքեան , ոյք խնդրեն զքեղ տէր :

Սաասցեն յամենայն ժամ՝ մեծ է աս-
տուած , և ոյք սիրեն զփրկութիւնս
քո :

Ես աղքատ և տնանկ եմ , սատուած
օգնեա ինձ . օգնական և փրկիչ իմ
ես , և դու տէր իմ՝ մի՛ յամենար :

Տունք Զ . Գորդայս ԽԴ :

ՍԱՂՄՈՍ Հ .

Ի Հարաբերած . որդւոցն Յովանդաբայ . յեղ ուրավոյ քե-
րունեանն . Առջևու Գնաութիւ :

Ի քեղ տէր յուսացայ , մի՛ ամաչեցից
յաւիտեան . յարդարութեան քում

փրկեա և ապրեցո զիս :
Խոնարհեցո առիս զունկն քո , և կե-
ցո զիս :

Եթ իմ աստուած ապաւէն , և տեղի
ամուր կեցուցանել զիս . զի հաստա-
տութիւն իմ և ապաւէն իմ դու ես :
Աստուած իմ , փրկեա զիս 'ի ձեռաց
մեղաւորի , 'ի ձեռաց անօրինի և անի-
րաւի :

Դու ես համբերութիւն իմ տէր , տէր
յոյս իմ 'ի մանկութենէ իմմէ :

Եքեղ հաստատեցայ ես յարդանդէ ,
յորովայնէ մօր իմոյ դու ես ապաւէն
իմ , և առ 'ի քէն է օգնութիւն իմ
յամենայն ժամ :

Որպէս զինշաւակ եղէ ես բաղմաց . և
դու օգնական իմ և հզօրիչ իմ :

Լցցի բերան իմ գովութեամբ . որպէս
օրհնեցից զիառս քո , զօրհանապազ
զմեծվայելչութիւնս քո :

Մի՛ ընկենուր զիս տէր 'ի ժամանակս
ծերութեան . 'ի պակասիլ զօրութեան
իմոյ մի՛ թողուր զիս :

Ասացին թշնամիք իմ ինձ , և որք
պաշարեցին զանձն իմ , խորհեցան 'ի
միասին և ասացին :

Սստուած եթող զնա, հալածեսցուք
և հասցուք նմա, զի ոչ ոք է որ փրկի
դնա:

Սստուած իմ, մի՛ հեռի առնիր յի-
նէն. և աստուած յօդնել ինձ նայեաց:
Սմաշեսցեն և պակասեսցին՝ ոյք չա-
րախօս կային զանձնէ իմմէ. զգեցցին
զամօթ և զպատկառանս՝ ոյք իննդրէ-
ին ինձ չար:

Ես յամենայն ժամ յուսացայց, և
յաւելից յօրհնութիւնս քո:
Ըերան իմ պատմեսցէ զարդարու-
թիւնս քո, զօրհանապաղ զգովու-
թիւնս քո:

Որպէս ոչ թէ խարդախութիւն ինչ
գիտէի դպրութեան. այլ մտից 'ի զօ-
րութիւնս տեառն. և տէր յիշեցի զար-
դարութիւնս քո միայն:

Սստուած իմ, ուսուցեր զիս 'ի ման-
կութենէ իմմէ. և ցարդ ևս պատմե-
ցից զարդարութիւնս քո:

Մինչեւ յալեւորիլ և 'ի ծերանալ, աս-
տուած իմ մի՛ թողուր զիս:

Մինչեւ պատմեսցի բազուկ քո ազգի
ամենայնի որ դալոցն է:

Զզօրութիւնս քո և զարդարութիւնս

քո մինչև 'ի բարձունս զոր արարեր մեծամեծս, աստուած ո՞նման է քեզ:

Որչափ ցուցեր ինձնեղութիւն բազում և չարչարանս, դարձեալ միսիթարեցեր զիս, և 'ի խորոց անդնդոց երկրի հաներ զիս:

Յաճախեցեր զզօրութիւնս քո, դարձար և միսիթարեցեր զիս, և 'ի խորոց երկրի միւսանգամ հաներ զիս:

Երդ և ես խոստովան եղէց քեզ 'ի պատրաստութիւն սաղմոսաց Ճշմարիտ աստուած, սաղմոս ասացից քեզ օրհնութեամբ սուրբդ խրայէլի:

Յնձասցեն շրթունքիմ յորժամ սաղմոս ասիցեմ քեզ, և անձն իմ զոր փրկեցեր:

Եւս և լեզու իմ զօրհանապաղ խօսեացի դարդարութիւնս քո:

Հժամանակի որպէս յամօթ լիցին և ամաչեսցեն, ոյք խնդրէին ինձ չար:

ՄԱՂՄՈՍ ՀԱ.

Ի Առաջնան Ապահով :

Եստուած զիրաւունս քո արքայի տուր,
և զարդարութիւնս քո որդւոյ թա-
գաւորի :

Դատել զժողովուրդս քո արդարու-
թեամբ, և զաղքատս քո իրաւամբք :
Ըսցեն լերինք զխաղաղութիւն ժողո-
վողեան, և բլուրք զարդարութիւն :
Խրաւ արասցէ աղքատաց ժողովք-
դեան եւ կեցուսցէ զորդիս տնանկաց,
և խոնարհեցուսցէ զամբարտաւանս :
Կացցէ և մնասցէ ընդ արեւու յառաջ
քան զլուսին ազգէ մինչև յազգ :
Խջցէ որպէս զանձրև ՚ի վերայ գեղ-
ման, որպէս ցօղ զե ցօղէ յերկիր :
Ծագեսցի յաւուրս նորա արդարու-
թիւն, բագում խաղաղութիւն՝ մին-
չև կատարեսցի լուսին :

Տիրեսցէ նա ՚ի ծովէ մինչև ՚ի ծով, ՚ի
գետոց մինչև ՚ի ծագս աշխարհի :
Ըռաջի նորա նախ հնդիկը անկցին, և
թշնամիք նորա հող կերիցեն :
Ծագաւորք թարսսի և կղզեաց պա-

տարագս մատուցեն նմա . թագաւորք արաբայ և սաբայ պատարագս բերցեն նմա :

Երկիրպագցեն նմա ամենայն թագաւորք երկրի , և ամենայն աղղք ծառայեսցեն նմա :

Օի փրկեաց զաղքատն 'ի ձեռաց հըզօրի . զաղքատն և զտնանկն , որոյ ոչ է իւր օգնական :

Ենխայեսցէ նա յաղքատն և 'ի տընանկն և զանձինս տնանկաց կեցուցէ . 'ի վաշխից չարաց փրկեսցէ զանձինս նոցա :

Պատուական է անուն նորա առաջի նոցա . կեցցէ , և տացի նմա յուկլոյն արաբացւոց :

Յաղօթս կացցեն առ նա յամենայն ժամ , և զօրհանապազօրհնեսցեն զնա:

Եղեցի հաստատութիւն ընդ ամենայն երկիր . և 'ի վերայ գլխոց լերանց :

Բարձրասցի քան զլիբանան պտուղ նորա և ծաղկեսցի 'ի քաղաքի տեառն որպէս խոտ երկրի :

Եղեցի անուն տեառն օրհնեալ յափիտեան , զի յառաջ քան զարև է անուն նորա :

Ի՞նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի, և ամենայնաղինք երանիցեն նման։
Օրհնեալ տէր աստուած խրայէլի որ
առնէ սքանչելիս միայն . և օրհնեալ է
անուն սուրբ փառաց նորա յաւի-
տեան. լցցի փառօք նորա ամենայն եր-
կիր . եղիցի եղիցի :

Տունք ի : Գորդայս ԽԶ :

Կանոնս Գորդայս ի : Աաղմաս Ժի :

Տունք Մ2 :

ԱԴՅԹՔ ԱՆՆԱՅԻ ՄՈՐՆ ՍԱՄՈՒԵԼԻ

Ա ԹՎԱՔ . Բ.:

Հաստատեցաւ սիրտ իմ ՚ի տէր, և
բարձրացաւ եղջեւը իմ յաստուած
փրկիչ իմ :

Ինդարձակեցաւ բերան իմ ՚ի վերայ
թշնամեաց իմոց . ուրախ եղէց ՚ի փըր-
կութեան քում :

Օի ոչ գոյ սուրբ որպէս զտէր, և ոչ
արդար որպէս զաստուած մեր, և չիք
սուրբ բաց յաստուծոյ մերմէ :

Ոի՛ պարծիք և մի՛ խօսիք զամբար-

տաւանս , և մի՛ ելցէ ընդ բերանս ձեր
 բան հպարտ մեծաբանութեան :
 Աստուած գիտութեանց՝ տէր աս-
 տուած պատրաստէ իւրով իմաստու-
 թեամբ զգիտութիւն յարարածս իւր :
 Հզօրաց հաստ աղեղունք թուլացան ,
 և տկարք վառեցան զօրութեամբ :
 Յագք և լիք հացիւ նուաղեցան , և
 քաղցեալք լոին զերկիր :
 Եմուն ծնաւ եօթն , և բազմածինն նը-
 ւաղեաց 'ի ծննդոց :
 Տէր մեռուցանէ և տէր կեցուցանէ ,
 իջուցանէ 'ի դժոխս և հանէ :
 Տէր աղքատացուցանէ և տէր մեծա-
 ցուցանէ . խոնարհ առնէ զամբարտա-
 ւանս մինչեւ յերկիր , և բարձր առնէ
 զտառապեալս յաղըևաց :
 Կոտուցանէ զնոսա իշխանս ընդ իշ-
 խանս ժողովրդեան , և զաթոռ փա-
 ռաց ժառանգեցուցանէ նոցա :
 Կատարէ զուխոս ուխտաւորաց , և
 օրհնեաց զամս արդարոց :
 Օի ոչ թէ իւրով զօրութեամբ զօ-
 րանայ հզօր . այլ տէր տկար առնէ
 զհակառակորդս իւր . տէր սուրբ է :
 Մի՛ պարծեսցի խորհրդականն իխոր-

Հուրդս իւր . և մի' պարծեսցի հզօրն
'ի զօրութիւն իւր . և մի' պարծեսցի
մեծն 'ի մեծութեան իւրում :

Եյլ որ պարծին , 'ի տէր պարծեսցի .
'ի խորհուրդս գիտութեան զտէր ճա-
նաչել :

Եռնել զիրաւոնս և գործել զարդա-
րութիւն 'ի վերայ երեսաց երկրի :

Տէր ել յերկինս և որոտաց , և ինքն
դատէ առանց բարբառելոյ :

Տայ զօրութիւն թագաւորաց մերոց .
և բարձր առնէ զեղջիւր օծելոյ իւրոյ :

Փառք հօր և որդւոյ և :



ՄԱՆՅԱՆՔ

Բարձրացաւ եղջիւր իմ յաստուած
փրկիչ իմ . հաստատեցաւ սիրտ իմ 'ի
տէր տէրամբ և հաւատով :

Մարդասէր տէր , վասն սրբուհւոյ
անարատի մօր քոյ և կուսի , և վասն
խաչի քո պատուականի , ընկալ զա-
զաշանս մեր , և կեցո զմեզ :

Վարող և աղօնե՛ւ՝ Ողորմեա և ի նեղութեան կանոնացն:

Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զո-
ղորմութիւն՝ ի բարերար տեառնէ մեր-
մէ, զտէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:
Վասն փրկելոյ զմեզ՝ ի զրպարտութե-
նէ մարդկան և յորոգայթից սատա-
նայի, զտէր աղա:

Վասն ամենայն անձանց քրիստոնէից
և տանց հաւատացելոց, զտէր աղա:
Վասն որք՝ ի լերինս յայրս և ՚ի փա-
պարս ընակեալ են սուրբ հարքն մեր,
զտէր աղա:

Վասն որք սաղմոսիւք և օրհնու-
թեամբ կատարեն զամենայն ժամա-
նակս կենաց իւրեանց, զտէր աղա:
Վասն հոգւոցն հան: Եւ ևս միաբան:
Օանձինս: Ողորմեաց:

Եւթե

Գոհանամբ զքէնտէր աստուած մեր,
որ զարթուցերզմեզ՝ ի հանգստենէ քր-
նոյ շնորհիւ ողորմութեան քո: Օարթո
զմիտս մեր արդարութեամբ առ քեզ
տէր աստուած մեր, զի տեսցեն աչք

մեր զփրկութիւն քո : Եկեսցէ և ըր-
նակեսցէ առ մեզ աստուածութիւն
քո, և ողորմութիւն քո հովանի և
պահապան լիցի ՚ի վերայ պաշտօնէից
քոց : Եւ զմեզ զծառայքո քո արժա-
նի արա ՚ի տուէ և ՚ի գիշերի և յամե-
նայն ժամու միշտ խորհիլ ՚ի ոէր պա-
տուիրանաց քոց : Եւ գոհանալով փա-
ռաւորել զհայր և զորդի և զսուրբ հո-
գիդ այժմ և միշտ և յաւիտեանս յա-
ւիտենից . ամէն :

Խոսուն-Ռիւն ամէնեցուն :

Վարուծոյ երիբուժեցուն :

Կենդանարար զօրութիւն և աղբիւր
անմահութեան, դու ես քրիստոս աս-
տուած փրկիչ մեր : Որ շնորհեցեր մեզ
՚ի մէջ գիշերի յառնել և խոստովան
լինել առ քեզ վասն իրաւանց և ար-
դարութեան քո : Եւ այժմ աղաչեմք
զքեզ տէր աստուած մեր, արա զմեզ
արթունս և պատրաստ ՚ի ժամ՝ ա-
ռաւօտու ընդ սուրբս քո : Եւ ընդ
նոսին գոհանալով փառաւորել զքեզ
ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ այժմ


և միշտ և յաւիտեանս յաւիտենից .
ամէն :


Առաջնորդ :

Գոհութեամբ և ծշմարիտ խոսառվա-
նութեամբ անդադար փառաւորեմք
զհայր և զորդի և զսուրբ հոգիդ այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից .
ամէն :

Օքհնեալ տէր մեր յիսուս քրիստոս .
ամէն :

Հայր մեր որ յերկինս :







Աւազ եղեցին աղօթք իմ ուրախ խռնի առաջի քո Տեր՝
Համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի :

ՍԱՂՄՈՍ 48.

Սաղմոս յԱստիք . օրհնութեան :

Ազըե զի բարի է խարայէլի աստուած,
և ոյք ուղիղ են սրտիւք :
Խայց զի իմ փոքր մի ևս սասանեալ
էին ոտք . սակաւիկ մի և գայթակղեալ
էին գնացք իմ :

Նախանձեցայ ես ընդ անօրէնս . զխա-
ղաղութիւն մեղաւորաց որպէս տեսա-
նէի , զի ոչ զոյր վրէպ մահու նոցա :
Հաստատուն են տանջանք նոցա . 'ի
վաստակս մարդկան չեն նոքա , և ըստ
մարդկան ոչ տանջեսցին :

Վասն այսորիկ կալաւ զնոսա ամբար-
տաւանտթիւն . արկին զիւրեամբք
զամբարշտութիւն և զանիրաւութիւն
իւրեանց :

Նլոյէ որպէս 'իճարպոյ անիրաւութիւն
նոցա . զի գնացին նոքա ըստ խորհըր-
դոց սրտից իւրեանց :
Խորհեցան և խօսեցան չարտթեամբ ,

և զավիրատութիւն՝ ի բարձունս խորհեցան :

Եղին յերկինս զքերանս իւրեանց , և զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ : Ա ասն այսորիկ ժողովուրդ իմ դարձի այսրէն . և աւուրք իմ լի կատարեալ գտցին՝ ի նոսա :

Սսացին զիա՞րդ գիտաց աստուած . կամ գուցէ՞ արդեօք գիտութիւն առ՝ ի բարձրելոյն :

Եհա մեղաւորք են և յաջողեալ է նոցա . կան և ունին զմեծութիւն աշխարհի :

Սսացի՝ ՚ի զուր ուրեմն արդարացուցի զսիրտ իմ , լուացից սրբութեամբ ըզձեռս իմ . և եղէ ես խոշտանկեալ զօրհանապաղ , և կշտամբանք իմ ընդառաւուս :

Թէալէտ և ասէի՝ թէ այսպէս պատմեցից . ահաւասիկ յազդ որդւոց քոց որոց և ուխտեցից :

Ի մտի եղի , թէ սակայն և այս ջան է առաջի իմ , մինչև մտից ՚ի սրբութիւնն աստուծոյ և ՚ի միտ առից ըզկատարած նոցա :

Սակայն վասն նենդութեան նոցա տա-

բագիր արասցես զնոսա , և կործա-
նեսցես զնոսա յամբարտաւանութեան
իւրեանց :

Խակ զիա՞րդ եղեն յաւեր յանկարծա-
կի . սատակեցան պակասեցան կորեան
վասն անօրէնութեան իւրեանց , և ե-
ղեն որպէս երազք զարթուցելոց :
Տէր՝ ի քաղաքի քում զպատկերս նո-
ցա անարգեսցես . զի հուր բորբոքե-
ցաւ՝ ի սրտի իմում , և երիկամունք
իմ այլազունեցան :

Ես արհամարհեալ եղէ , և ոչ զիտացի .
որպէս զանասուն համարեցայ առաջի
քո , և ես յամենայն ժամ ընդ քեզեմ :
Կալար զաջոյ ձեռանէ իմմէ , ՚ի խոր-
հուրդս քո առաջնորդեցեր ինձ , և
փառօք ընկալար զիս :

Օ, ի՞նչ կայ իմ ընաւ յերկինս , կամ
՚ի քէն զի՞նչ ևս խնդրեցից յերկրի :
Նուազեցաւ սիրտ իմ և մարմին իմ .
աստուած սրտի իմոյ , քաժին իմ աս-
տուած յաւիտեան :

Եհաւասիկ ոյք հեռի արարին զանձի-
նըս իւրեանց՝ ի քէն , կորիցեն . սատա-
կեցես զամենեսեան՝ ոյք ապստամբ ե-
ղեն՝ ի քէն :

Դնձ մերձեալ առ աստուած բարի է .
և դնել առ տէր զյոյս իմ :
Պատմել զամենայն օրհնութիւնս քո ,
'ի դրունս դստեր սիօնի :

Տունք Իդ :

ԱՆԴՄՈՍ ՀԳ .

Խմառութեան ալլագի :

Ծնդէ՞ր մերժեցեր աստուած իսպառ .
բարկացաւ սրտմոռութիւն քո 'ի վերայ
խաշին արօտի քո :
Յիշեա զժողովուրդ քո , զոր ստացար
'ի սկզբանէ . փրկեցեր զվեճակ ժառան-
գութեան քո :

Եեառն սիօն այս՝ ուր բնակեցար դու
'ի սմա . համբարձ զձեռն քո 'ի վերայ
ամբարտաւանութեան նոցա իսպառ :
Որ ինչ անիրաւեցաւ թշնամին 'ի սրր-
բութեան քում . պարձեցան ատելիք
քո 'ի մէջ բարեկենդանութեան իւ-
րեանց :

Նդին զնշանս իւրեանց 'ի նշանս , և
ինքեանք ոչ ծանեան զելս 'ի վերուստ:
Որպէս յանտառի փայտատօք կոտո-
րեցին զդրունս նորա , 'ի միասին փայ-

տատօք և մրծօք կործանեցին զնա:
 Ելրեցին՝ի հուր զսրբութիւն քո յեր-
 կրի. պղծեցին զխորան անուտն քո :
 Եսացին՝ի սիրտս իւրեանց աղդք նո-
 ցա ՚ի միասին, եկայք լոեցուցուք
 զամենայն տօնս աստուծոյ յերկրէ:
 Նշանս մեք ինչ ոչ տեսաք, և ոչ ևս
 դուցէ մարդարէ. և զմեզ ինչ ոք ոչ
 ճանաչիցէ :

Մինչև յե՞րբ աստուած՝ նախատէ-
 թշնամին, բարկացուցանէ հակառա-
 կորդն զանուն սուրբ քո :
 Ըսդէ՞ր դարձուցանես զձեռն քո, և
 զաջ քո ՚ի միջոյ ծոցոյ քումմէ ի-
 սպառ :

Եստուած թագաւոր մեր յառաջ քան
 զյաւիտեանս, որ արարեր զփրկու-
 թիւն ՚ի մէջ երկրի :


Դու հաստատեցեր զօրութեամբ քով
 զծով, դու խորտակեցեր զգլուխ վիշա-
 պին ՚ի վերայ ջուրց :

Դու փշրեցեր զգլուխ վիշապին, և ե-
 տուր զնա կերակուր զօրացն հնդկաց:
 Դու բղխեցուցեր զաղբիւրս և զվտա-
 կրս. դու ցամաքեցուցեր զգետս սաս-
 տիկս :

Վո՞ է տիւ և քո՞ է զիշեր . զլոյս և զա-
 րեւ դու արարեր . և դու հաստատե-
 ցեր զամենայն սահմանս երկրի . զգա-
 րուն և զամառն դու ստեղծեր :
 Եյս յուշ լիցի քեզ՝ զի թշնամին նա-
 խատեաց զտէրդ . ժողովուրդ անզգամ
 բարկացոյց զանուն սուրբ քո :
 Մի՛ մատներ գազանաց զանձն՝ որ խոս-
 տովան առնի առ քեզ . և զանձինս
 տնանկաց քոց մի՛ մոռանար խպառ :
 Հայեաց յուխտ քո , զի լցան տունք
 ապշելոց յերկրի անիրաւութեամք :
 Մի՛ դարձցի տնանկն ամաչեցեալ . այլ
 աղքատք և տնանկ օրհնեսցեն զա-
 նուն սուրբ քո :

Երի աստուած և դատեա զգատաս-
 տանս քո՝ յիշեա զնախատինս՝ որ
 յանզգամին զօրհանապաղ :
 Մի՛ մոռանար զձայն պաշտօնէից քոց .
 ամբարտաւանութիւն ատելեաց քոց
 վերասցի հանապաղ :

Ցունք ԻԲ : Գորդայս ԽԶ :



ՍԱՂՄՈՍ ՀԴ.

Ի հարաբոծ . մ' աղախանէք . ընդ օրհնութիւնս : Ապաս
յլշատ . երբ առ առը եսդանեայս :

Խոստովան եղիցուք առ քեզ աս-
տուած , խոստովան եղիցուք և կար-
դասցուք զանուն սուրբ քո :
Պատմեցից զամենայն սքանչելիս քո .
յորժամ ժամ առից , ես ուղիղ դա-
տեցից :

Մաշեցաւ երկիր և ամենայն բնակիչք
նորա , ես հաստատեցի զսիւնս նորա :
Եսացի անօրինաց , թէ մի' անօրինիք .
և մեղաւորաց , թէ մի' բարձրացու-
ցանէք զեղջիւրս ձեր :

Մի' համբառնայք ՚ի բարձունս զեղջիւ-
րըս ձեր , և մի' խօսիք զաստուծոյ ա-
նիրաւոթիւն :

Օք ոչ յարեւելից և ոչ յարեւմտից
և ոչ յանապատէ լերանց . այլ աս-
տուած դատաւորէ :

Օայս խոնարհ առնէ , և զսոյն բար-
ձրացուցանէ . բաժակ ՚ի ձեռին տեառն
գինի լի անապակ արկեալ . և խոնար-
հեցուցանէ յայսմանէ յայս :

Աակայն մրուր նորա ոչ սպառեսցի . և

արբցեն զնա ամենայն մեղաւորք երկրի։
Ես ցնծացայց յաւիտեան։ սաղմոս ա-
սացից աստուծոյ յակոբայ։
Օ ամենայն եղջեւրս մեղաւորաց փրշ-
րեսցես։ և բարձր եղիցի եղջեւր ար-
դարոյ։

Տունք Փ։

ՍԱՂՄՈՍ ՀԵ.

Խ հարաբաժ։ ընդ օրհնութեան։ մի՛ ապականեր։ Ապա-
յլատի։ երէ առ ասորիւսորանեայս։

Յայտնի է ՚ի հրէաստանի աստուած։
և յիսրայէլ մեծ է անուննորա։
Եղեւ ՚ի խաղաղութեան տեղի նորա։
և բնակութիւն նորա ՚ի սիօն։
Ենդ խորտակեաց տէր զզօրութիւն ա-
ղեղան, զզէն զսուր և զճակատամարտ։
Լուսատու ես դու սքանչելապէս լե-
րանցն յաւիտենից։ խոռվեսցին ամե-
նեքեան որք անմիտք են սրտիւք. նըն-
ջեցին զքունս իւրեանց, և ինչ ոչ զը-
տին։

Եմենայն արք ՚ի մեծութեան ձեռաց
իւրեանց, ՚ի սաստէ քումմէ աստուած
յակոբայ ննջեցին, և ոյք հեծեալ էին
՚ի ձիս։

Դու ահաւոր ես, և ով կարէ կալ առաջի քո · որպէս երեւեցար դու յերկնից · յայտնի եղեւ բարկութիւն քո : Երկիր երկեաւ և սարսեցաւ ընդ յառնեն աստուծոյ ՚ի դատաստան, ընդ ապրեցուցանել զամենայն հեզս երկրի : Խորհուրդ մարդկան խոստովան առնին առ քեզ · և ծածկեալք իմաստու-

թեամբ օրհնեսցեն զքեզ :

Ուխտս դիք՝ և կատարեցէք տեառն աստուծոյ մերոյ, ամենեքեան որք շուրջ էք զնովաւ :

Մատուցէք պատարագս ահաւորին . ո քաղէ զհողիս իշխանաց, ահաւոր է նա քան զամենայն թագաւորս երկրի :

ՏԱՐԱՆՔ Ժ.:

ՍԱՂՄՈՍ ՀԶ.

Ի հարաբաժ · Հասն Խոբենքայ · Առաջան ՅԱՌԱՔ :

Չայնիւ իմով ես առ տէր կարդացի · Ճայնիւ իմով առ աստուած, և նայեցաւ առիս :

Յաւուր նեղութեան իմոյ զաստուած խնդրեցի ձեռօք իմովք · և ՚ի զիշերի

առաջինորա ոչ խաբեցայ :
 Ոչ կամէր մսիթարել անձն իմ . յի-
 շեցի զաստուած՝ և ուրախ եղէ . հոգա-
 յի , և նուաղիւր յիս հոգի իմ :
 Ժամանեսցին պահուց աչք իմ . խոռ-
 վեցայ և ոչ խօսեցայ . խորհեցայ զա-
 տուրսն զառաջինս , և զամն յաւիտե-
 նից յիշեցի :

Խօսեցայ ’ի գիշերի ընդ սրտի իմում .
 Հոգայի՝ և տառապէր յիս հոգի իմ :
 Վիթէ յաւիտենից մերժեսցէ՝ զիս տէր .
 և ոչ եւս յաւելցի ’ի հաճիլ և եւս :
 Կամ խսպառ արգելցէ՝ զողորմութիւն
 իւր յինէն . կամ կատարեաց զբան
 իւր ազգէ մինչև յազգ :

Կամ մոռասցի՝ գթալ աստուած իմ
 և եւս . կամ արգելցէ՝ զգթութիւն
 իւր բարկութեամբ իւրով :

Եսացի՝ թէ այժմ սկսայ . այս է նո-
 րոգումն աջոյն բարձրելոյ :
 Յիշեցի զգործս տեառն ’ի սկզբանէ .
 յիշեցի զաքանչելիս նորա :
 Խորհեցայ յամենայն գործս քո , և
 ’ի ձեռագործս քո խորհեցայ :
 Եստուած , ’ի սրբութեամն են ճանա-
 պարհք քո . ո՞վ է աստուած մեծ՝ որ-

պէս զաստուած մեր . դու ես աստու-
ած , որ առնես զաքանչելիս :
Յուցեր ժողովրդեան քում զզօրու-
թիւն քո . փրկեցեր բաղկաւ քով ըզ-
ժողովուրդս քո , զորդիւն յակոբայ և
յովսէփու :

Տեսին զքեզ ջուրք աստուած , տեսին
զքեզ ջուրք և երկեան . և խորք խը-
ռովեցան ՚ի ձայնէ ջուրց բաղմաց :
Չայն ետուն ամալք . քանզի և նետք
քո գնան ՚ի ձայնէ որոտալոյ քոանուի :
Երեւեցան փայլատակունք քո տիե-
զերաց . խոռվեցաւ և դողաց երկիր :
Ե ծովու են ճանապարհք քո , և շա-
փկալք քո ՚ի ջուրս բազումն . և հետք
քո ոչ երեւին :

Եռաջնորդեցեր որպէս խաշին ժողո-
վրդեան քո ՚ի ձեռն մովսէսի և ահա-
րոնի :

Տունք ԺԷ : Գորդայս ԼՅ :

—————
ՄԱՂՄՈՍ ՀԵ :

Խմապունիւն յԱստ :

Կայեցարուք ժողովուրդք յօրէնս իմ .
խոնարհեցուցէք զունին ձեր ՚ի բանս
բերանոյ իմոյ :

Հացից առակաւ զբերան իմ , և խօսեցայց զառակս՝ ի սկզբանէ :
Որպէս լուաք՝ և ծանեաք զայս , և հարքն մեր պատմեցին մեղ :
Աչինչ ծածկեցաւ յորդւոցնոցա յազգ յայլ , պատմել զօրհնութիւնս տեառն , զզօրութիւն և զսքանչելիս իւր զորար :

Հաստատեաց զվկայութիւն իւր առ յակոր , և օրէնս եղ՝ ի վերայ խօրայէլի :
Որ ինչ միանդամ պատուիրեաց հարցըն մերոց , ցուցանել զայս որդւոց իւրեանց , զի ծանիցեն յազգ յայլ :
Որդիք որք ծնանին , յարիցեն և պատմեսցեն զայս որդւոց իւրեանց . զի դիցեն առ աստուած զյոյսս իւրեանց , և մի՛ մոռասցին զգործս աստուծոյ :

Օ պատուիրանս նորա խնդրելով խնդրեսցեն . և մի՛ եղիցին որպէս և հարքըն իւրեանց :

Եզդ չար և դառնացող . ազգ որ ոչ ուղղեաց զսիրտ իւր , և ոչ հաստատեաց առ աստուած զհոգի իւր :
Որդիք եփրեմի լիաձիգք և պնդաձիգք . յաւուր պատերազմի կապարձը դարձուցին :

Աչ կացին նորա յուխտի տեառն . և
ըստ իրաւանց նորա ոչ կամեցան գնալ :
Սուացան զերախտիս նորա և զաքան -

չելիսն՝ զոր եցոյց նոցա :

Եռաջի հարց նոցա զոր արար զաքան .
չելիս իւր յերկրին եղիպտացւոց՝ և 'ի
դաշտին տայանու :

Եհերձ զծոմն՝ և անցոյց գնոսա . և
կացոյց զջուրան որպէս 'ի տիկս :

Եռաջնորդեաց նոցա ամպով 'ի տուէ ,
և զամենայն գիշեր 'ի լոյս հրոյ :

Եհերձ զվէմն յանապատին , և ետ ըմ-
պել նոցա որպէս 'ի խորոյ մեծէ :

Եհան զջուրան 'ի վիմեն , և հոսեաց որ-
պէս զգետս զջուրան :

Սակայն յաւելին 'ի մեղանչել . և եւս
բարկացուցին զբարձրեալն յանջրդի :
Փորձեցին զաստուած 'ի սիրտս իւ-
րեանց , 'ի խնդրել զկերակուր անձանց
իւրեանց :

Տրտնջեցին զաստուծոյ և ասացին .
միթէ կարո՞ղ իցէ աստուած պատ-
րաստել սեղան յանապատի :

Քանզի հարկանէր զվէմն՝ և հոսէին
ջուրք , և վտակք խաղային 'ի նմանէ :
Եղէ հա՞ց ևս կարասցէ տալ նա մեղ .

կամ պատրաստեցէ սեղան ժողովը -
դեան իւրոյ :

Ա ասն այսորիկ լուաւ զայս տէր , և յա-
պաղեաց . հուր բորբոքեցաւ 'ի յա-
կովը , և բարկութիւն ել 'ի վերայ իս-
րայէլի :

Օ ի ոչ հաւատացին յաստուած , և
ոչ յուսացան 'ի փրկութիւն նորա :
Հրաման ետ ամպոց 'ի վերուստ , և
զգրունս երկնից երաց , և տեղեաց 'ի
նոսա զմանանայ 'ի կերակուր :

Օ հաց երկնից ետ նոցա , զհաց հրեշ-
տակաց կերան մարդիկ . և իջոյց 'ի նո-
սա կերակուր 'ի լիութիւն :

Եհան զհողմն հարաւոյ , և էած զօ-
րութեամբ իւրով զհիւսիսիւ :
Տեղեաց 'ի նոսա միս որպէս զհող . որ-
պէս զաւազ ծովու զթռչունս թեւա-
ւորս :

Եարկ 'ի մէջ բանակի նոցա , և շուրջ
զվրանօք նոցա :

Կերան և յագեցան յոյժ . և զցանկու-
թիւն նոցա ետ նոցա . և ոչինչ կարօտ
եղեն 'ի ցանկութենէ իւրեանց :

Մինչդեռ կերակուրք 'ի բերանս իւ-
րեանց էին , բարկութիւն յաստուծոյ

Ել՝ ի վերայ նոցա :

Սպան զբազումն ՚ի նոցանէ , և զընտիր
ընտիրս խրայէլի սատակեաց :

Յայսմ ամենայնի մեղան և եւս . և ոչ
հաւատացին սքանչելեաց նորա :
Պակասեցան յունայնութեան աւուրք
նոցա , և ամք նոցա փութապէս ան-
ցին :

Յորժամ սպանանէր զնոսա , խնդրէին
զնա . դառնային և առաւօտ առնէին
առ աստուած :

Յիշեցին՝ զի աստուած օդնական էր
նոցա . աստուած բարձրեալ փրկիչ էր
նոցա :

Միրեցին զնա բերանօք իւրեանց , և
լեզուօք իւրեանց ստեցին նմա . և սիրտք
նոցա ոչ էին ուղիղք ընդ նմա , և ոչ
հաւատացին ուխտի նորա :

Եյլ նա ինքն գթած էր . քաւէր զմե-
զըս նոցա , և ոչ ապականէր :

Յաճախէր դարձուցանել զբարկութիւն
իւր . և ոչ բորբոքէր զամենայն սըրտ-
մառութիւն իւր :

Յիշեաց՝ թէ մարմին են նոքա . հողի
որ ելանէ , այլ ոչ եւս դառնայ :

Քանիցս անդամ դառնացուցին զնա
16

յանապատի . և բարկացուցին զբար-
ձրեան յանջրդի :

Դարձան և փորձեցին զաստուած , և
զսուրբն խրայէլի զայրացուցին :
Ոչ յիշեցին զձեռն նորա , յաւուր յո-
րում փրկեաց զնոսա 'ի ձեռաց նեղաց
նոցա :

Որպէս արար զնշանս և զարուեստո իւր
յերկրին եղիպատացւոց և 'ի դաշտին
տայանու :

Դարձոյց յարին զգետս նոցա . և
զանձրես նոցա զի մի արբցեն :
Եռաքեաց 'ի նոսա շանաձանճ և եկեր
զնոսա . և զորտիւ ապականեաց զնո-
սա :

Ետ ժանկոյ զպտուղս նոցա , և զվա-
տակս նոցա մարախոյ :

Եհարկարկտիւ զայդիս նոցա , և զթը-
զենիս նոցա եղեմամբ :

Մատնեաց 'ի կարկուտ զանասունս նո-
ցա . և զստացուածս նոցա հրով դա-
տեաց :

Եռաքեաց 'ի նոսա զսրտմտութիւն
բարկութեան իւրոյ , զսրտմտութիւն
զբարկութիւն և զնեղութիւն :

Եռաքեաց 'ի նոսա տանջանս ՚ի ձեռն

Հրեշտակի չարի . և դիմեցոյց 'ի նուս
սա զսրտմտութիւն բարկութեան իւ-

րոյ :

Ոչ անխայեաց 'ի մահուանէ զանձինս
նոցա . և զանասունս նոցա 'ի մահ
մատնեաց :

Եհար զամենայն անդրանիկս եղիպ-
տացոց , զսկիզբն ամենայն վաստա-
կոց նոցա 'ի յարկս քամայ :

Հորդան ետ որպէս խաշին ժողովը-
դեան իւրոյ . և եհան զնոսա որպէս
զհօտ յանապատ :

Ըլաջնորդեաց նոցա յուսով , և ոչ
երկեան . և զթշնամիս նոցա ծով ծած-
կեաց :

Եհան զնոսա 'ի լեառն սրբութեան իւ-
րոյ , 'ի լեառն այն զոր ստացաւ աջ նո-
րա :

Մերժեաց յերեսաց նոցա զհեթա-
նոսս . և վիճակեցոյց 'ի նոսա զվիճակ
ժառանգութեան իւրոյ , և ընակեցոյց
'ի յարկս նոցա զաղգն խրայէլի :

Փորձեցին դառնացուցին զաստուած-
բարձրեալն , և զվկայութիւն նորա ոչ
պահեցին :

Դարձան խոտորեցան որպէս և հարքն

իւրեանց . դարձան և եղեն որպէս զա-
ղեղն թիւր :

Դարձեալ բարկացուցին զնա 'ի բագինս
իւրեանց , և դրօշելովք իւրեանց նա-
խանձ արկին նմա :

Լուս աստուած , և արհամարհեաց
զնոսա , և անարգեաց յոյժ զիսրայէլ :
Մերժեաց յիւրմէ զխորանն 'ի սելով ,
զխորանն՝ զոր բնակեցոյց 'ի մէջ մարդ-
կան :

Մասնեաց 'ի զերութիւն զզօրութիւնս
նոցա և զգեղս նոցա 'ի ձեռս թշնա-
մեաց նոցա :

Երգել 'ի սուր զժողովուրդ իւր . և ըզ-
ժառանգութիւն իւր անտես արար :
Օերիտասարդս նոցա եկեր հուր . և
վասն կուսանաց նոցա ոչ ոք սդացաւ :
Վահանայք նոցա անկան 'ի սուր . և
զայրիս նոցա ոչ ոք էր՝ որ լայր :
Օարժեաւ որպէս 'ի քնոյ տէր , որ-
պէս հզօր զի թափէ զզինի :

Եհար յետս զթշնամիս իւր , և նա-
խատինս յաւիտենից արար զնոսա :
Մերժեաց նա զխորանն յովսէփու , և
զազգն եփրեմի նա ոչ ընտրեաց :
ԵԱԼ ընտրեաց նա զազգն յուդայ . ԸՂ-

լեառն սիօն , զոր և սիրեաց :
Ը ինեաց որպէս միեղջերուի զսրբու-
թիւննորա . յերկրի հաստատեաց զնա-
յաւիտեան :

Ենտրեաց զդաւիթ ծառայ իւր , և ըն-
կալաւ զնա 'ի հօտէ խաշանց . 'ի վերջին
ծնելոցն ընկալաւ զնա :
Հովուել զյակոր ծառայ իւր , և զիս-
րայէլ ժառանգութիւն իւր :
Երածէր զնոսա խմաստութեամբ սրտի
իւրոյ . յանմեղութիւն ձեռաց իւրոց
առաջնորդէր նոցա :

Տունք ՀԴ :

ՍԱՂՄՈՍ ՀԸ .

Առաջնորդ ՀՅ. :

Եստուած մտին հեթանոսք 'ի ժառան-
գութիւն քո . պղծեցին զտաճար սուրբ
քո :

Երարին զերուսաղէմ որպէս զհիւզս
մրգապահաց . արկին զդիակունս ծա-
ռայից քոց գէլ թունոց երկնից , և
զմարմինս սրբոց քոց գաղանաց եր-
կրի :

Հեղին զարիւն նոցա որպէս ջուր շուրջ

զերուսաղէմաւ . և ոչ ոք էր՝ որ թա-
ղէր զնոսա :

Եղաք մեք նախատինք դրացեաց մե-
րոց . ծաղը և այսին կատականաց այ-
նոցիկ , որք շուրջ էին զմեօք :

Մինչեւ յե՞րբ տէր՝ բարկանաս դու ի-
սպառ . բորբոքեսցի որպէս հուր նա-
խանձ քո :

Հեղ զբարկութիւն քո՝ ի վերայ աղ-
դաց՝ որք զքեղ ոչ ճանաչեցին . ՚ի
վերայ թագաւորաց՝ որք զանուն քո
ոչ կարդացին . զի կերին զյակոք և ըզ-
տեղի նորա աւերեցին :

Մի՛ յիշեր զմեզս մեր զառաջինս , վաղ-
վաղ եկեսցէ առ մեղ ողորմութիւն քո
տէր , զի աղքատացաք յոյժ :

Օգնեա մեղ աստուած փրկիչ մեր
վասն փառաց անուան քոյ :

Տէր փրկեա զմեզ և քաւեա զմեզս
մեր վասն անուան քոյ :

Մի՛ երբէք ասասցեն ՚ի հեթանոսս ,
թէ ուրէ աստուած նոցա :

Ե. յլ յայտնի ինչ լիցի ՚ի վերայ հեթա-
նոսաց առաջի աչաց մերոց , առ ՚ի
իննդրել զվրէժ արեան ծառայից՝ որ և
հեղաւ :

Մացէ առաջի քո հեծութիւն կապեւ
լոց ։ ըստ մեծութեան բազկի քո շա-
հեա դու զորդիս սպանելոց ։

Հատո դրացեաց մերոց եօթնապատիկ
՚ի ծոց նոցա , զնախատինս իւրեանց
զոր նախատեցին զքեզ տէր ։
Մեք ժողովուրդք և խաչն արօտի քոյ ,
խոստովան եղիցուք առ քեզ յաւի-
տեան . ազգէ յազգ պատմեսցուք զօր-
հնութիւնս քո ։

ՏՊԱՆՔ ԺԴ. ։

ՍԱՂՄՈՍ ՀԹ. ։

Ի իսուսորդ . 'Ե վերայ զարանցելոցն վեայուանիւնս . Առաջնո
Աստիա . 'Ե վերայ ենովոցոցն ։

Որ հովուեադ խրայէլի՝ նայեաց , որ ա-
ռաջնորդես որպէս խաշին յովսէփու :
Որ նստիս ՚ի քրովքէս՝ յայտնեաց ա-
ռաջի եփրեմի , բենիամինի և մանա-
սէի :

Զարթո զզօրութիւնս քո , և եկ ՚ի
կեցուցանել զմեզ :

Եստուած զօրութեանց , զարձո զմեզ .
Երեւեցո զերեսս քո ՚ի մեզ , և կեցցուք :
Տէր աստուած զօրութեանց , մինչեւ

յերբ բարկանաս յաղօթս ծառայից
քոց :

Զամբեցեր մեզ հաց արտասուաց, և
արբուցեր մեզ արտասուս չափով:
Երարեր զմեզ նախատինս դրացեաց
մերոց, այսին կատականաց թշնա-
մեաց մերոց :

Սստուած զօրութեանց, դարձո զմեզ,
երեւեցո զերեսս քո 'ի մեզ, և կեցցուք:
Եյզի յեղիպտոսէ փոխեցեր. հաներ
զհեթանոս՝ և զնոսա տնկեցեր, և առ-
ուաջնորդեցեր նմա :

Հաստատեցեր զարմատս նորա՝ և ելից
զերկիր. ծածկեաց զերինս հովանի նո-
րա, և բարունակ նորա զմայրս աս-
տուծոյ :

Զգեաց զորթ իւր մինչև 'իծով. մին-
չեւ 'ի գետս են շառաւիղք նորա :
Ընդէ՞ր քակեցեր զցանկ նորա, և կը-
թեն զնա անցաւորք ճանապարհի :
Եպականեաց զնա խոզ անտառի, և
երէ վայրի արածեցաւ 'ինմա :

Սստուած զօրութեանց, դարձ հայեաց
յերկնից և տես. այց արա այգւոյս այս-
միկ. և դարման տար սմա, զոր տըն-
կեաց աջ քո :

Եվերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրացուցեր զնա ՚ի քեզ. այրեցեալ ՚ի հուր և աւերեալ, ՚ի սաստէ քումմէ կորիցէ : Եղիցի ձեռն քո ՚ի վերայ առն, աչ քո ՚ի վերայ որդւոյ մարդոյ, զոր զօրացուցեր զնա ՚ի քեզ :

Ոչ եւս ՚ի բացեայ եղիցուք մեք ՚ի քէն. կեցուսցես դու զմեզ, և զանոն քո տէր կարդասցուք :

Սստուած զօրութեանց, դարձո զմեզ. երեւեցո զերեսս քո ՚ի մեզ, և կեցցուք :

Տունք ԺԼ :

ՍԱՂՄՈՍ 2.

Ի հարաբած. Հասն հնիշանց, Ապահու յլաստ. հինգերորդ շբանց :

Ծնծացէք առ աստուած, օդնական է մեր. աղաղակեցէք առ աստուած յակորայ :

Եռէք սաղմոս, և տուք օրհնութիւն. սաղմոս ասացէք նմա ՚ի ձայն քաղցրութեան :

Փող հարէք ՚ի դլուխս ամսոց, յաւոր նշանաւորի տարեկանաց մերոց :

Հրամանէ այս իսրայէլի, և իրաւոնք
են աստուծոյ յակոբայ:

Ա կայութիւնն յովսէփու զոր եղ ընդ
նմա որպէս ելանէրնա յերկրէն եղիպ-
տացւոց, լեզու զոր ոչ զիտէր՝ լուաւ:
Խ բաց արար ՚ի բեռանց զթիկունսնո-
րա, և զձեռս նորա յորթ և ՚ի թի
ծառայելոյ:

Խնեղութեան կարդացեր առխօն և
փրկեցի զքեզ լուայ քեզ ՚ի գաղտ-
նութենէ մրրկին, և փորձեցի զքեզ
՚ի վերայ ջուրցն հակառակութեան:
Լուր ժողովուրդ իմ և վկայեմ քեզ
և իսրայէլ՝ թէ լուիցես ինձ:

Մի՛ եւս եղեցին քեզ աստուածք առ
ժամանք և մի՛ երկիրպագանիցես
դու աստուծոյ օտարի:

Ես եմ տէր աստուած քո՛ որ հանի
զքեզ յերկրէն եղիպտացւոց բաց ըզ-
բերան քո՛ և լցից զդա:

Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում,
և իսրայէլ յիս ինչ ոչ նայեցաւ:
Շարձի թողի զնոսա երթալ զհետ
կամաց սրտից իւրեանց զի զնացին
նորա ըստ կամս անձանց իւրեանց:
Օք թէ ժողովրդեան իմոյ լուեալ էլ

ինձ, կամ խրայէլի զՃանապարհո իմ
գնացեալ էր :

Արալէս զոչինչ խոնարհ արարեալ էր
իմ զթշնամիս նորա, և 'ի վեռայ
նեղչաց նորա արկեալ էր զՃեռն իմ :
Թաշնամիք տեառն ստեցին նմա, և ե-
զիցին ժամանակը նոցա յաշխարհի :
Կերակրեաց զնոսա 'ի պարարտութե-
նէ ցորենոյ, և 'ի վիմէ մեղը յաղեցոյց
նոցա :

Տունք ԺԶ :

ԽԱՂՄՈՍ ՀԱ :


ԱՊՈՒՅԱ ԵՎ ԱՐԻ :

Եստուած եկաց 'ի ժողովս աստուծոց,
և 'ի միջի նոցա դատէր զնոսա :
Մինչեւ յե՞րբ դատէք անիրաւու-
թեամբ, և ակն առնուք մեղաւորաց :
Դատ արարէք որբոյն և այրւոյ՝ իրա-
ւունս արարէք տնանկին և խոնարհի :
Եպրեցուցէք զաղքատն և զտնանկն,
'ի ձեռաց մեղաւորի փրկեցէք զնոսա :
Ոչ իմացան և ոչ 'ի միտ առին, 'ի խա-
ւարի գնացին, և շարժեցան ամենայն
հիմունք երկրի :

Ես ասացի՝ թէ աստուածք իցեք, կամ
որդիք բարձրելոյն ամենեքեան։
Դուք ահաւաղիկ որպէս զմարդիկ մե-
ռանիք, և որպէս զմի յիշւանաց ան-
կանիք։

Երի աստուած, և դատեա զերկիր ։ զի
դու ժառանդեսցես զամենայն հեթա-
նոսս։

Տունք Է. Գորշայս ԾԲ.



ՍԱՀՄՈՍ 2Բ.

ՕՇԱՆՆ-ԲԻՆ ։ Ա-Պ-Յ-Ա-Վ-Ա-Կ-:

Աստուած ո՞քեզ նմանիցի ։ մի՛ լոեր
և մի՛ դադարիր աստուած։
Զի ահա թշնամիք քո գոչեցին, և
ատելիք քո համբարձին զգլուխս իւ-
րեանց։

Ե վերայ ժողովրդեան քո խորաման-
կեցին զգիտութիւն ։ խորհեցան ՚ի վե-
րայ սրբոց քոց և ասացին։

Եկայք սատակեսցուք զնոսա յազգաց,
և մի՛ յիշեսցի անուն խրայէլի և եւս։
Խորհեցան միաբանութեամբ ՚ի միա-
սին ։ և վասն քո ուխտ արարին։

Բանակը եղովմայեցւոց և խմայելացիք, մովաք և հաղարացիք :

Դեբաղ՝ ամօն՝ ամաղեկ, և այլաղգիքն ամենայն ընակչօքն հանդերձ ծուրայ :

Կաեւ ասուր եկեալ էր ընդ նոսա • ամենեքին սոքա զօրավիզն էին որդւոյն զովտայ :

Երա զնոսա որպէս զմաղիամ, որպէս զսիսարայ, և որպէս զարին ՚իծործորսն կիսօնի :

Սատակեցան նոքա յականս դոփրայ, և եղեն որպէս զաղը երկրի :

Երա զիշխանս նոցա որպէս զօրէքն, զէքն, զզերէէ, և զսաղմանսա, և զամենայն իշխանս նոցա :

Ոյք ասացին՝ ժառանգեսցուք ՚ի մեղ զարբութիւն աստուծոյ :

Եսուուած իմ՝ արա զնոսա որպէս զանիւ, և որպէս զեղէզն առաջի հողմոյ : Որպէս հուր՝ զի այրէ զանտառս, որպէս բոյ՝ զի կիզու զերինս :

Եյսպէս հաղածեսցես զնոսա մրրկաւքով, և բարկութեամբ քով խոռվեցուսցես զնոսա :

Վեց զերեսս նոցա անարդանօք • և խնդրեսցեն զանուն քո տէր :

Եմաչեսցեն և խռովեսցին յաւիտեանս
յաւիտենից, և ամօթալից կորիցեն:
Ծանիցեն զի անուն քո տէր է, և զու
միայն բարձրեալ ես՝ ի վերայ ամենայն
երկրի :

Տունք Ժը:

ՄԱՂԱՊ 24.

Ի հարուրած . Հան հնյանացն , որդուոյն Առիսոյ :
Սաղմոս Դատ-Եի :

ԱՌպէս սիրելիք են յարկք քո տէր
զօրութեանց . ցանկայ և փափաքի ան-
ձըն իմ՝ ի գաւիթս քո :
Սիրտ իմ և մարմին իմ ցնծասցեն առ
աստուած կենդանի :

Քանզի Ճնճղուկ եղիտ իւր առն . և
տատրակ զբոյն՝ ուր դիցէ զձագս իւր :
Սեղան քո տէր զօրութեանց , թագա-
ւոր իմ և աստուած իմ :

Երանի ամենեցուն՝ որ բնակեալ են՝ ի
առն տեառն , յաւիտեանս յաւիտենից
օրհնեսցեն զքեզ :

Երանեալ է այր՝ որոյ օգնութիւն իւր
՚ի քէն է . ելս եղ՝ ի մտի իւրում՝ ի հով-
տէս տրտմութեան ՚ի տեղոջ՝ յորում
ուխտեաց :

Օօրհնութիւն ստացի՝ որ զօրէնս
դնէ . զնացէ նա ՚ի զօրութենէ ՚ի զօ-
րութիւն , և երեւեցի աստուած հրեշ-
տակաց ՚ի սիօն :

Տէր աստուած զօրութեանց՝ լուր աղօ-
թից իմոց . ունկնդիր աստուած յա-
կոբայ :

Ընդունող ես դու մեր . տես աստուած
և նայեաց յերեսս օծելոյ քոյ :

Վասն զի լաւ է ինձ մի օր ՚ի գաւիթս
քո , քան զհաղարս :

Ըստրեցի ես ընդ աղք գալ ՚ի տան աս-
տուծոյ առաւել , քան ընականալ ՚ի
յարկս մեղաւորաց :

Օողորմութիւն և զջմարտութիւն սի-
րէ տէր աստուած մեր . զնորհս և ըզ-
փառս տացէ :

Տէր ոչ պակաս առնէ զողորմութիւն
իւր յայնցանէ , որ զնան յանբծու-
թեան :

Տէր աստուած զօրութեանց , երա-
նեալ է այր՝ որ յուսայ ՚ի քեզ :

ՍԱՂՄՈՍ 2Դ .

Ի Հայութած . որդուոցն կորիսայ . Ասպէս Դռւ-նի :

Հաճեցար տէր ընդ երկիր քո , և դարձուցեր զգերութիւն յակոբայ :
Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան
քոյ . և ծածկեցեր զամենայն մեղսնոցա :

Լուցուցեր զամենայն սրտմտութիւնս
քո . և դարձար ՚ի բարկութենէ սրտմը-
տութեան քո :

Դարձ առ մեղ աստուած փրկիչ մեր ,
և դարձո զսրտմտութիւնս քո ՚ի մէնջ :
Մի՛ յաւխտեան բարկանար մեղ տէր ,
և մի՛ ձգեր զբարկութիւն քո աղզէ
մինչեւ յազգ :

Եստուած դու դարձեալ կեցուացես
զմեղ . և ժողովուրդ քո ուրախ եղեցի
՚ի քեզ :

Յոյց մեղ տէր զողորմութիւնս քո , և
զփրկութիւնս քո տուր մեղ :

Լուաքզի՞նչ խօսի տէր աստուած մեր .
Խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան
իւրոյ առ սուրբս իւր , և առ այնոսիկ՝
ոյք դարձեալ են առ նա սրտիւք :

Սակայն մերձ է առ երկիւղածս իւր
փրկութիւն նորա . ընակիլ փառաց
նորա յերկրի մերում :

Ողորմութիւն և ճշմարտութիւն պա-
տահեսցին . արդարութիւն և խաղա-
ղութիւն համբուրեսցին :

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ . ար-
դարութիւն յերկնից երեւեցաւ :
Տէր տացէ զքաղցրութիւն , և երկիր
մեր տացէ զպտուղ իւր . արդարութիւն
առաջի նորա դնասցէ . զիցէ 'ի ճանա-
պարհի զգնացս իւր :

Տանք ԺԲ : Գորզայս ԽԴ :

ՍԱՂՄՈՍ 2Ե.

Առաջու Դաստի . Երժն+ Երեկոյէ :

Խոնարհեցո տէր զունկնքո և լուր ինձ,
զի աղքատ և տնանկ եմ ես :
Պահեա զանձն իմ սուրբ տէր . և
փրկեա զծառայս քո աստուած իմ ,
որ 'ի քեզ յուսացայ :

Ողորմեա ինձ տէր , զի առ քեզ աղա-
ղակեցի զօրհանապաղ . ուրախ արա
զանձն ծառայի քո , զի առ քեզ տէր

Համբարձի զանձն իմ :

Օ Ե դու տէր քաղցր և ուղիղ ես .
բազումողորմ առ ամենեսեան , որք
կարդան առ քեզ :

Ունկնդիր տէր ազօթից իմոց , և նայ-
եա ՚ի ճայն խնդրուածաց իմոց :

Յաւուր նեղութեան իմոյ կարդացի
առ քեզ , և լուար ինձ :

Աչ ոք է նման քեզ յաստուածս տէր ,
և ոչ ոք է որպէս զգործս քո :

Օ ամենայն ազգս զոր արարեր՝ եկես-
ցեն և երկիրսպազցեն առաջի քո , և
փառաւոր արասցեն զանուն քո յա-
փուեան :

Մեծ ես դու տէր , և առնես սքանչե-
լիս , և դու միայն ես աստուած :

Եռաջնորդեա ինձ ՚ի ճանապարհի
քում , և գնացից ՚ի ճշմարտութեան
քում , և ուրախ եղիցի սիրտ իմ յեր-
կընչիլ յանուանէ քումմէ :

Խոստովան եղէց առ քեզ տէր աս-
տուած իմ բոլորով սրտիւ իմով . փա-
ռաւոր արարից զանուն քո յաւի-
տեան :

Մեծ եղեւ ՚ի վերայ իմ ողորմութիւն
քո տէր . և փրկեցեր զանձն իմ ՚ի դը-

ԺՈԽՈԾ ՆԵՐՔՆՈց :

Եստուած , անօրէնք յարեան ՚ի վերայ
իմ , և ժողովք հզօրաց խնդրեցին
զանձն իմ , և ոչ համարեցան զքեզ
աստուած առաջի իւրեանց :

Եյլ դու տէր աստուած իմ , զթած ես
և ողորմած , երկայնամիտ բազումու-
ղորմ և ճշմարիտ . նայեա առիս և ո-
գորմեա ինձ :

Տուր զօրութիւն ծառայի քո . կեցո
զորդի աղախնոյ քո , և արա առիս նը-
շան բարութեան :

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն . զի
դու տէր օպնեցեր ինձ , և մսիթարե-
ցեր զիս :

ՏԵՇԱԲԴ ԺԶ.

ՍԱՂՄՈՍ 29.

Ասդուս օքանուանեան . որդուոցն կորիսոյ :

Հիմունք նորա ՚ի լեառն սուրբ նորա .
սիրէ տէր զդրունս սիօնի առաւել քան
զամենայն յարկսն յակորայ :

Փառաւորեալն խօսեցաւ վասն քո , ա-
հաւադիկ քաղաքդ աստուծոյ :

Յիշեցի զռահար և զբարիլոն՝ ոյք ճա-

նաշեն զիս . ահա այլազգիք և ծուր և
ժողովուրդք հնդկաց, սոքա եղեն անդ:
Սիօնի ասի մայր, և մարդ ծնաւ 'ի նը-
մա, և ինքն հիմունս էարկ'ի նմա բար-
ձրեալն :

Տէր պատմեսցէ զրովք ժողովրդեան,
իշխանացս այսոցիկ՝ ոյք եղեն անդ:
Որպէս զի ուրախ լիցին 'ի քեզ ամե-
նեքեան, որոց բնակութիւն 'ի քէն է :

Տունք 2:

ՄԱՂՄՈՍ 2Է .

Ե հարաբաժ . Հան ԱՌազմէնայ իմաստութիւն . ոչ ետ
ուտառասիւնի Եման իմաստութեամբ Խորայէլք :

Տէր աստուած փրկութեան իմոյ, 'ի
տուէ կարդացի և զիշերի առաջի քո:
Աշոցեն աղօթք իմ առաջի քո տէր,
խոնարհեսցի ունկն քո 'ի խնդրուածս
իմ:

Օի լցաւ չարչարանօք անձն իմ, և
կեանք իմ 'իդժոխս մերձեցան . և հա-
մարեցայ ես ընդ այնոսիկ, որք իջանեն
'ի գուրք :

Եղէ ես որպէս մարդ առանց օդնա-
կանի, և 'ի մեռեալս աղատ :

Որպէս զվիրաւորս, որք ննջեն ՚ի գե-
րեզմանս :

Զորս դու ոչ յիշեցեր, նոքա ՚ի ձե-
ռանէ քումնէ մերժեցան :

Եղին զիս ՚ի գըի ներքնումն՝ ՚ի խաւա-
րի և ՚ի ստուերս մահու :

Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո.
զամենայն զքօսանս քո ածեր ՚ի վերայ
իմ :

Հեռի արարեր յինէն զծանօթս իմ .
և եղին զիս նշաւակ իւրեանց :

Մատնեցայ և ոչ ելանէի . աչք իմ տը-
կարացան յաղքատութենէ :

Եղաղակեցի առ տէր զօրհանապաղ, և
համբարձի առ քեզ զձեռս իմ :

Միթէ մեռելոց առնիցե՞ս զքանչելիս
քո . կամ բժիշկք յարուցեա՞լ՝ խոս-
տովան առնիցին առ քեզ :

Միթէ պատմեսցէ՞ ոք երբէք ՚ի գե-
րեզմանի զողորմութիւնս քո կամ
զծշմարտութիւնս քո ՚ի կորստեան :
Միթէ ճանաչիցին ՚ի խաւարի սքան-
չելիք քո, կամ արդարութիւն քո
յերկիր մոռացեալ :

Ես առ քեզ տէր աղաղակեցի . առաւօ-
տու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ :

Ընդէ՞ր տէր մերժես զանձն իմ , կամ
դարձուցանես զերեսս քո յինէն :
Տնանկ և վաստակաւոր եմ ես 'ի ման-
կութենէ իմմէ . 'ի բարձրութենէ խո-
նարհեցայ և ապշեցայ :

Յիս հաստատեցաւ բարկութիւն քո .
արհաւիրք քո խոռվեցուցին զիս :
Ծքնեցան զինեւ որպէս ջուր , զոր ամե-
նայն պաշարեցին զիս 'ի միասին :
Հեռի արարեր յինէն զքարեկամս իմ
և զծանօթս իմ վասն թշուառութեան
իմոյ :

Տունք Ի : Գորդայս ԽԲ :



ՍԱՂՄՈՍ 22.

Ինսպրունիւն Եմանայ աԵւրոպէլացուց :

Օղորմութիւնս քո տէր յաւիտեան
օրհնեցից . աղգէ յազգ պատմեցից ըզ
Ճշմարտութիւնս քո բերանով իմով :
Սացեր՝ թէ աշխարհս ողորմութեամբ
շնեսցի . յերկինս պատրաստ եղեցի
Ճշմարտութիւն քո :

Կոդի ուխտ ընտրելոց իմոց . երդուայ
դաւթի ծառայի իմոյ :

Յաւիտեան հաստատեցից զգաւակքու,
և շնորհից ազգէ յազգ զաթոռ քո :
Խոստովան եղիցին երկինք սքանչելեաց
քոց տէր, և ճշմարտոթիւն քո յեկե-
ղեցիս սրբոց :

Ո՞վ է յամպս որ հաւասարի քեղ . կամ
ո՞վ նմանիցի տեառն յորդիս աստու-
ծոյ :

Եստուած փառաւորեալ է 'ի խորհուր-
դըս սրբոց իւրոց . մեծ և ահաւոր 'ի
վերայ այնոցիկ որք շուրջ են զնովաւ :
Տէր աստուած զօրութեանց , ո՞նմա-
նի քեղ , հզօր ես դու տէր , և ճշմար-
տութիւն քո շուրջ է զքեւ :

Դու տիրես զօրութեանց ծովու , և ըզ-
խովութիւն ալեաց նորա դու ցածու-
ցանես :

Դու խոնարհեցուցանես որպէս վիրա-
ւորս զամբարտաւանս . 'ի զօրութիւն
բաղկի քո ցրուեցեր զթշնամիս քո :
Քո են երկինք և քո է երկիր . զաշ-
խարհս լրիւ իւրով դու հաստատեցեր .
զհիւսիս և զհարաւ դու արարեր . թա-
բօր և հերմօն յանուն քո ցնծասցեն :
Քո է բազուկ և քո է զօրութիւն . զօ-
րասցի աջքո , և բարձր եղիցի ձեռն քո :

Յարդարութիւն և յիրաւունս հաս-
տատեալ է աթոռ քո · ողորմութիւն
և ճշմարտութիւն զնացեն առաջի ե-
րեսաց քոց :

Երանի ժողովրդեան , որ զիտեն զօր-
հնութիւնս քո տէր · 'ի լոյս երեսաց քոց
զնացեն , և յանուն քո ցնծացեն
զօրհանապազ , և յարդարութեան
քում բարձր եղիցին :

Պարծանք զօրութեանց մերոց դու ես
տէր · և 'ի կամս քո բարձր եղիցի եղ-
ջեւը մեր :

Ի տեառնէ է օգնութիւն սրբոյն իսրա-
յէլի թագաւորին մերոյ :

Յայնժամ խօսեցար տեսլեամբ ընդ
որդիս քո և ասացեր · եղից զօդնու-
թիւն իմ 'ի վերայ հզօրին , և բարձր
արարից զընտրեալն 'ի ժողովրդենէ
իմմէ :

Դտի զդաւիթ ծառայ իմ , և իւղով
սրբով իմով օծի զնա :

Չեռն իմ ընկալցի զնա , և բազուկ իմ
զօրացուսցէ զնա :

Մի՛ մեղիցէ նմա թշնամի , և որդի
անօրէնութեան մի՛ չարչարեսցէ զնա :
Ճարից առաջի նորա զթշնամիս նորա ,

և զատելիս նորա 'ի պարտութիւն
մատնեցից :

Ճշմարտութիւն իմ և ողորմութիւն
իմ ընդ նմա, և յանուն իմ բարձր ե-
ղեցի եղջեւը նորա :

Եղից 'ի ծովու զձեռն նորա, և 'ի վե-
րայ գետոց զաջ նորա :

Նա կարդասցէ առիս՝ հայր իմ ես
դու, աստուած ընդունող փրկութեան
իմոյ :

Ես անդրանիկ արարից զնա, և բարձր
քան զամենայն թագաւորս երկրի :
Յաւիտեան պահեցից նմա զողորմու-
թիւն իմ, և ովստ իմ հաւատարիմ
ընդ նմա :

Հաստատեցից յաւիտեանս յաւիտե-
սից զզաւակ նորա, և զաթու նորա
որպէս զաւուրս երկնից :

Թէ թողցեն որդիք նորա զօրէնս իմ,
և յիրաւունս իմ ոչ կամեսցին զնալ :
Թէ զարդարութիւնս իմ անարդեսցեն,
և զպատուիրանս իմ ոչ պահեսցեն :
Հարից գաւազանաւ զանօրէնութիւնս
նոցա, և տանջանօք զանիրաւութիւնս
նոցա :

Իայց զողորմութիւնս իմ ոչ արդելից

՚ի նոցանէ , և ոչ նենգեցից Ճշմարտութեան իմում , և ոչ անարդեցից զուխտ իմ . և ինչ որ ելանէ ընդ շրթունս իմ ,

զայն ոչ արհամարհեցից :

Միանգամ երդուայ ՚ի սրբութիւն իմ ,

թէ դաւթի ես ոչ ստեցից :

Օ աւակ նորա յաւիտեան կացցէ . և ամթունորա որպէս զարեգակն առաջի իմ , և որպէս զլուսին զի հաստատեալ է յաւիտեան վկայ հաւատարիմ յերկինս :

Խակ արդ դու մերժեցեր և անարդեցեր ,
և ընդ վայր հարեր զօծեալ քո :

Դարձուցեր զուխտ ՚ի ծառայէ քումին .
պղծեցեր յերկրի զսրբութիւն նորա :

Վակեցեր զամենայն պարիսպս նորա ,

և եղեր զամուրս նորա ՚ի դողումն :

Յափշտակեցին զնա անցաւորք ճանապարհի . և եղեւ նա նախատ դրացեաց իւրոց :

Բարձր արարեր զաջ նեղչաց նորա . և
ուրախ արարեր զամենայն թշնամիս
նորա :

Դարձուցեր զօգնութիւն ՚ի սրոյ նորա ,
և ոչ ընկալար զնա ՚ի պատերազմի :
Վնարդեցեր զսրբութիւն նորա , և զա-

Թոռ նորա յերկիր կործանեցեր :
 Նուազ արարեր զաւուրս ժամանակաց
 նորա , և հեղեր զնովիաւ զամօթ :
 Մինչեւ յե՞րբ դարձուցանես զերեսս
 քո խապառ . բորբոքեսցի որպէս հուր
 բարկութիւն քո :

Խոկ արդ յիշեա և տես՝ թէ ո՞վ է իմ
 հանգիստ . միթէ ՚ի զո՞ւր ինչ ստեղ-
 ծեր զամենայն որդիս մարդկան :
 Ո՞վ է մարդ՝ որ կեցցէ և ոչ տեսցէ ըզ-
 մահ , կամ փրկեսցէ զանձն իւր ՚ի ձեւ-
 ուաց դժոխոց :


Ո՞ւր են ողորմութիւնք քո տէր առա-
 ջինք , զոր երդուար դաւթի ճշմար-
 տութեամք քով :

Յիշեա զնախատինս ծառայի քո , զոր
 ընկալայ ՚ի ծոց իմ յազգաց բազմաց :
 Զոր նախատեցին թշնամիք քո տէր ,
 նախատեցին փոխանակ օծելոյ քոյ :
 Օրհնեալ տէր աստուած յաւիտեանս
 յաւիտենից . եղիցի եղիցի :

Տունք ԽԸ :

Կանոնս Գորդայս է : Սաղմօս Ժ.:

Տունք ՅԸ :



ԱՐԴՆՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ ՈՐԴԻՈՅՆ ԱՄՈԼՍԱՅ

Եպոյեա . Իշխան

Ե զիշերաց կանխէ հողի իմ առաւոտ առնել առ քեզ աստուած :
Վ ասն զի լոյս են հրամանք քո՞ի վերայ երկրի . ուսարուք զարդարութիւն բնակիչք երկրի :
Կարկեսցի ամբարիշտն , և այլ ոչ եւս ուսցի առնել յերկրի զարդարութիւն ճշմարտութեան :
Բարձցի ամբարիշտն յերկրէ , և մի' տեսցէ զիառս աստուծոյ :
Տէր բարձր ես և բազուկ քո հզօր , և նոքա ոչ զիտացին :
Շաանիցեն՝ ամաչեսցեն , և նախանձ անկցի անխրատ ժողովրդեան . և արդ հուր զթշնամիս քո կերիցէ :
Տէր աստուած մեր՝ տուր մեզ զիսաղաղութիւն քո . զի ըստ ամենայն գործոց մերոց հատուցաւ մեզ :
Տէր աստուած մեր՝ ստացիր զմեզ . զի բաց ՚իքէն զայլ ոք ոչ զիտեմք , և զանուն քո անուանեմք զօրհանապաղ :

Խսկ արդ մեռեալք զկենդանութիւն
այլ ոչ տեսանիցեն . և ոչ բժիշկք յա-
րուցանիցեն :

Վ ասն այսորիկ ածեր հարեր սատակե-
ցեր և ջնջեցեր զամենայն արու մա-
նուկ նոցա :

Յաւել տէր զչար ՚ի վերայ չարի նոցա .
և ած զչար ՚ի վերայ անօրինաց երկրի :
Տէր ՚ի նեղութեան յիշեցաք զքեզ . զի
փոքր մի նեղութիւն է խրատքո ՚ի վե-
րայ մեր :

Որպէս երկունք յղւոյ՝ զի հասեալ իցէ-
ժամանակ ծննդեան , և առ ցաւս իւր-
ձիցէ :


Ե յնպէս եղաք սիրելոյ քում տէր .
յահ և յերկիւղ քո յղացեալ երկնե-
ցաք , և ծնաք զհոդի փրկութեան քու :
Ոչ եւս կործանեսցուք մեք , այլ կոր-
ծանեսցին անօրէնք երկրի :

Յարիցեն մեռեալք և կենդանասցին
ամենելքեան , ոքք եղեալ են ՚ի զերեղ-
մանս :

Օ արթիցեն ցնծասցեն , և ուրախ ե-
ղեցին դադարեալք յերկրի :

Վ ասն զի ցողդ որ ցողէ ՚ի քէն , այդ
բժշկութիւն է նոցա . բայց երկիրն ամ-


բարշտեալ սատակեսցի :
 Խոյս տուր ժողովուրդ իմ . գնա մուտ
 'ի շտեմարանս քո . և փակեա զդրունս
 քո առաջի երեսաց քոց :
 Փախիր և թաղիր առ ժամանակ մի ,
 մինչեւ անցցէ բարկութիւն տեառն :
 Փառք հօր և որդւոյ և :



ՄԱՂԹԱՆՔ

Խաղաղութեանց տուող քրիստոս, ըղ-
 խաղաղութիւն և զերկնային ողորմու-
 թիւն քո պարզեեա յարարածո քո :
 Մարդասէր տէր, վասն սրբուհւոյ ա-
 նարատի մօր քոյ և կուսի, և վասն խա-
 չի քո պատուականի, ընկալզաղաչանս
 մեր, և կեցո զմեղ :

Օ, +աբովն և զարգես 'ի վերջն Երանեալ իանոնին
 գործես յ34 երեսն :





Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր, և հանեք զմեղ
ի հանգիստ :



ՍԱՂՄՈՍ 2Թ.

Աշխարհ Առաջնորդութեան Աստվածութայ :

Sէր ապաւէն եղեր մեր ազգէ մինչեւ յազգ . մինչեւ լերինք հաստատեալ էին , և մինչեւ ստեղծեալ էիր զերկիր և զամենայն տիեզերս : Յաւիտենից մինչեւ յաւիտեանս դուես . մի՛ դարձուցաներ զմարդ ՚ի տառապանս . և ասացեր , դարձարուք առ իս որդիք մարդկան :

Հազար ամ յաչս տեառն որպէս օրերեկի՝ զի էանց . որպէս պահ մի զիշերոյ . և ամք նոցա անարդութեամբ եղիցին :

Ընդ առաւօտս որպէս դալարի բուցին . ընդ առաւօտս որպէս դալարի զուարձասցին և ծաղկեսցին . ընդ երեկոյս թարշամեսցին՝ չորասցին և անկցին :

Կուաղեցաք մեք ՚ի բարկութենէ քումմէ , և ՚ի սրտմոռութենէ քումմէ խոռվեցաք :

Եղեր զմեղս մեր առաջի քո, և զկեանս
մեր՝ ի լոյս երեսաց քոց :

Եմենայն աւուրք մեր նուաղեցան։ և
՚ի բարկութենէ քումմէ խոռվեցաք :
Ճամանակ ամաց մերոց անդադար որ-
պէս սարդի . և թիւ աւուրց ամաց մե-
րոց ՚ի նոսա եօթանասուն ամ :

Եպա թէ առաւել եւս՝ ութսուն ամ .
և որ ինչ աւելի է քան զայն, ցաւօք
և հեծութեամբ :

Եկն՚ի վերայ մեր հեծութիւն, և խրա-
սեցաք . իսկ արդ ո՞ գիտասցէ զզօրու-
թիւն բարկութեան քո, և կամ յա-
հէ քումմէ զսրտմտութիւն քո համա-
րեսցի :

Եյսպէս ցոյց ինձ զաջ քո. և որ խոնարհ
են սրտիւք, զիմաստութիւնս քո :
Դարձ տէր՝ մինչեւ յե՞րբ . միսիթա-
րեաց ՚ի ծառայս քո :

Եցաք առաւօտու ողորմութեամբ քով.
ցնծացաք և ուրախ եղաք զամենայն
աւուրս կենաց մերոց :

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն, յորս
խոնարհ արարեր զմեղ, և ամացն՝ յորս
տեսաք զչարչարանս :
Հայեա տէր՝ ՚ի ծառայս քո և ՚ի զործս

ձեռաց քոց, և առաջնորդեա որդւոց
նոցա. եղիցի լոյս տեառն աստուծոյ ՚ի
վերայ մեր :

Օգործս ձեռաց մերոց ուղիղ արա ՚ի
մեզ աէր. և զգործս ձեռաց մերոց
յաջողեա մեզ :

Տունք Ժ. 2.

ՍԱՂՄՈՍ Ղ.

ՕՐԻՆՈՒՆԻՆ ՀԱՀԱՐԵԼԵԱՆ ՊԱՍՏԻՆ :

Որ բնակեալն է յօպնութիւն բարձրե-
լոյն, ընդ հովանեաւ աստուծոյ յեր-
կինս հանգիցէ :

Սասցէ տեառն՝ ընդունող իմ ես, ա-
պաւէն իմ աստուած, և ես յուսամ
՚ինա :

Կա փրկեսցէ զիս յորոգայթէ որսո-
ղին, և ՚ի բանիցն ՚ի խոռվութենէ :
Եթիկսամէջս իւր ընկալցի զքեզ. ՚ի
հովանի թեւոց նորա յուսացիս :
Որպէս զէն շուրջ եղիցի զքեւ ճշմար-
տութիւն նորա :

Ոչ երկիցես դու յերկիւղէ դիշերի, և
ոչ ՚ի նետէ՝ որ թռչի ՚ի տուէ :

Յիրէ որ շրջի ՚ի խաւարի, ՚ի գայթակ-
ղութենէ դիւին ՚ի հասարակ աւուր :

Անկցին ՚ի կողմանէ քումմէ հաղարք ,
և բիւրք ընդ աջմէ քումմէ , և առ քեզ
ինչ ոչ մերձեսցին :

Տայց միայն աչօք քովք հայեսցիս
դու , և զհատուցումն մեղաւորաց տես-
ցես , զի դու տեր յոյս իմ ես :
Օքարձրեալն արարեր քեզ ասպաւէն ,
զի ոչ հասցեն առ քեզ չարք , և տան-
ջանք մի' մերձեսցին ՚ի յարկս քո :
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է
վասն քո ՚ի պահել զքեզ յամենայն
Ճանապարհս քո :

Դ բազուկս խրեանց ընկալցին զքեզ ,
զի մի' երբէք հարցես զքարի զոտն քո :
Դ վերայ իժից և քարբից զնացես
դու , և առ ոտն կոխեսցես զառիւծն և
զվիշապն :

Քանզի յիս յուսացաւ , և փրկեցից
զնա . հովանի եղէց նմա , զի ծանեաւ
զանուն իմ :

Կարդասցէ առիս և ես լուայց նմա . և
առ նմա եղէց ՚ինեղութեան :

Փրկեցից և փառաւոր արարից զնա ,
երկայն աւուրբք լցուցից , և ցուցից նը-
մա զփրկութիւն իմ :

ՍԱՂՄՈՍ ԴԱ.

Առաջնորդութեան առողջութեաց Շնորհուց ՚ի Դաստիլ :

Ըարի է խոստովան լինել տեառն և
սաղմոս ասել անուան քում բարձրեալ:
Պատմել առաւօտու զողորմութիւնս
քո, և զՃշմարտութիւնս քո ՚ի դիշե-
րի :

Տանաղեաւ սաղմոսարանաւ, ՚ի ճայն
օրհնութեան դովել :

Ուրախ արարեր զիս տէր յարարածս
քո, և ՚ի գործս ձեռաց քոց ցնծացայց:
Որպէս զի մեծ են գործք քո տէր, և
յոյժ խոր են խորհուրդք քո :

Եյր անզգամ զայս ոչ ծանիցէ, և ան-
միտն զայս ոչ առնու ՚ի միտ:
Երու սանիլ մեղաւորաց որպէս խոտ, ՚ի
ծաղկիլ այնոցիկ՝ ոյք գործեն զանօ-
րէնութիւն :

Սատակեսցին յաւիտեանս յաւիտե-
նից . և դու բարձրեալ ես յաւիտեանս
տէր :


Զի ահա թշնամիք քո տէր, զի ահա
թշնամիք քո կորիցեն . ցրուեսցին ա-
մենեքեան՝ ոյք գործեն զանօրէնու-
թիւն :

Բարձր եղիցի որպէս միեղջերուի եղջիւր իմ, և ծերութիւն իմ 'ի ձեթպարարտութեան :

Ետես ակն իմ 'ի թշնամիս իմ, ոյք յարուցեալ են 'ի վերայ իմ չարութեամք, 'ինոսա լուիցէ ունկն իմ : Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին . որպէս զմայրսն լիբանսանուրազումք եղիցին :

Տնկեալք եղիցին 'ի տանտեառն, և 'ի գաւիթս աստուծոյ մերոյ ծաղկեսցին : Եւս և բազումք եղիցին 'ի ծերութիւն պարարտութեան . զիրդք և փափուկք եղիցին 'ի պատմել . ուղիղ է տէր աստուած մեր . և ոչ գոյ 'ի նմանիրաւութիւն :

Տունք ԺԴ : Գորզայս ԽԶ :



ՍԱՂՄՈՍ ՂԲ.

Յառաւըն առաջին շաբանու, յոր հաստադեցաւ երիւր . օրհնութեան ժողովեան Պատմել :

Տէր թագաւորեաց վայելչութիւն ըզդեցաւ . զգեցաւ տէր զօրութիւն ընդմէջ իւր էած : Հաստատեաց զաշխարհ՝ զի մի՛ սասա-

նեսցի . պատրաստ է աթոռ քո , 'ի
 սկզբանէ յախտեանս դու ես :
 Ամբարձան գետք տէր , և ամբարձին
 գետք զձայնս իւրեանց . և յարիցեն
 գետք 'ի գնացո իւրեանց :
 Խձայնէ Ըուրց բաղմաց , սքանչելի ե-
 ղեն զքօսանք ծովու :
 Սքանչելի ես դու տէր 'ի բարձունս .
 Վկայութեանց քոց մեք յոյժ հաւա-
 տացաք :
 Տան քում վայելէ սրբութիւն տէր
 ընդ երկայն աւուրս :

Տունք 9.

ՍԱՂՄՈՍ Պ.Գ.

Ապշես Գրաւնն . Հարեւնյան :

Եստուած վրէժինդիր , տէր աստուած
 վրէժինդիր յայտնեցար :
 Բարձր լեր որ դատես զերկիր . հա-
 տո զհատուցումն ամբարտաւանից :
 Մինչեւ յե՞րբ մեղաւորք տէր , մին-
 չեւ յե՞րբ մեղաւորք պարծեսցին :
 Բարբառեալ խօսէին զանիրաւութիւն !
 Խօսեսցին ամենեքեան՝ ոյք դործեն
 զանօրէնութիւն :

Օժողովուրդս քո տէր խոնարհ ա-
րարին, և զժառանգութիւն քո չար-
չարեցին :

Օայրին և զպանդուխտն սպանին,
զորբսն կոտորեցին և ասացին . ոչ տե-
սանէ զայս տէր, և ոչ 'ի միտ առնու
աստուած յակոբայ :

Խմացարուք անզգամք ժողովրդոց, և
անմիտք՝ մինչեւ յե՞րբ ոչ առնուք 'ի
միտ :

Որպէս զի թէ որ տնկեաց զունկն՝
ինքն ո՞չ լուիցէ, կամ որ ստեղծ զակն՝
ինքն ո՞չ տեսանիցէ :

Որ խրատէ զաղինս, որպէս թէ ոչ
յանդիմանեսցէ . որ ուսուցանէ մար-
դոյ զգիտութիւն . տէր ճանաչէ զխոր-
հուրդս մարդկան, զի են ընդունայնք :
Երանի մարդոյ՝ զոր խրատես դու տէր,
և յօրինաց քոց ուսուցանես դու նմա :
Յածուցանես դու նմա զաւորս չա-
րութեան, մինչեւ փորեսցի խորիսո-
րատ մեղաւորի :

Ոչ մերժէ տէր զժողովուրդ իւր, և
զժառանգութիւն իւր ոչ առնէ ան-
տես :

Մինչև դարձցին իրաւունք յարդա-

ըութիւն. ընկալցին զնա ամենեքեան

ոյք ուղիղ են սրտիւք :

Ով յարիցէ ընդ իս 'ի վերայ չարաց. կամ ով հաւասարեսցի ինձ 'ի վերայ այնոցիկ, ոյք գործեն զանօրէնութիւն. Եթէ ոչ տեառն օգնեալ էր ինձ, փոքր մի եւս ընակեալ էր անձն իմ 'ի դը- ժոխս :

Յէ ասէի՛ թէ ահա սասանեցան ոտք իմ, ողորմութիւն քո տէր օգնէր ինձ: Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ միսի- թարութիւն քո ուրախ առնէր զան- ձըն իմ :

Մի՛ հաւասարեսցի քեզ աթոռ անօ- րէնութեան, ո պատճառէ զվաստակս ընդդէմ հրամանի :

Որսացին զանձն արդարոյ, և զարիւն անբիծ պարտաւոր առնէին : Եղեւ տէր ապաւէն իմ. աստուած օդ- նական յուսոյ իմոյ :

Հատուսցէ նոցա տէր ըստ անօրէնու- թեան նոցա. և ըստ չարութեան նո- ցա կործանեսցէ զնոսա տէր աս- տուած մեր :

ՍԱՂՄՈԽ ԴՐ.

ՕՐԻՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԵԱՆ ՊՐԱՎԻ :

Եկայք ցնծասցուք ՚ի տէր . աղաղակեսցուք առ աստուած Փրկիչ մեր : Կանխեսցուք առաջի նորա խոստովանութեամբ . և սաղմոսիք աղաղակեսցուք առ նա :

Աստուած մեծ է, տէր թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն երկրի : Ի ձեռս նորա են ամենայն տիեզերք երկրի, և բարձրութիւնք լերանց նորա են :

Նորա է ծով և նա արար զնա, և ըգցամաք ձեռք նորա ստեղծին : Եկայք երկիրպաղցուք նմա . անկցուք և լացցուք առաջի տեառն արարչին մերոյ :

Կա ինքն է տէր աստուած մեր, մեք ժողովուրդք ձեռին նորա, և խաշնարօտի նորա :


Եյսօր եթէ ձայնի նորա լսիցէք, մի խստացուցանէք զսիրտս ձեր որպէս ՚ի դառնութեան :

Յաւուն փորձութեան յանապատին

ուր փորձեցին զիս հարքն ձեր , քըն-
նեցին զիս , և տեսին զգործս իմ ըզ-
քառասուն ամ :

Զանացի ընդ ազգին ընդ այնմիկ և
ասացի՝ միշտ մոլորեալ են սրտիւք .
և նոքա ոչ ծանեան զՃանապարհս իմ :
Որպէս երդուայ ՚ի բարկութեան ի-
մում , թէ մոցեն ՚ի հանգիստ իմ :

Տունք ԺԱ : Գորդայս Լ.Բ.



ՍԱՂՄՈՍ ԴԵ .

Առաջու Դաւ-Ին . ՚ի ժամանակի վէ դաճարն շնչեցաւ :

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր .
օրհնեցէք զտէր ամենայն երկիր :
Օրհնեցէք զտէր և օրհնեցէք զանուն
նորա . աւետարանեցէք օր ըստ օրէ
զիրկութիւն նորա :
Պատմեցէք ՚ի հեթանոսս զիառս նո-
րա , յամենայն ժողովուրդս զսքան-
չելիս նորա :

Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ . ա-
հարկու է նա ՚ի վերայ ամենայն կոոց :
Եմենայն կոոցք հեթանոսաց դեւք
են . այլ տէր զերկինս արար :

Խոստովանութիւն և վայելչութիւն է
առաջի նորա . սրբութիւն և մեծվա-
յելչութիւն ՚ի սրբութեան նորա :
Մատուցէք տեառն տոհմք ազանց .
մատուցէք տեառն դիմառ և զպա-
տիւ . մատուցէք տեառն դիմառ ա-
նուան նորա :

Եռէք պատարագս և մտէք ՚ի սրահս
նորա . երկիրպագէք տեառն ՚ի գա-
վիթս սրբութեան նորա , և խռովես-
ցի յերեսաց նորա ամենայն երկիր :
Եսացէք ՚ի հեթանոսա՝ թէ տէր թա-
գաւորեաց . հաստատեաց զաշխարհ
զի մի՛ սասանեցի . և դատէ զժողո-
վուրդս իւր ուղղութեամբ :

Ուրախ եղիցին երկինք , և ցնծասցէ
երկիր . զուարձասցի ծով լրիւ իւրով .
ցնծասցեն դաշտք , և ամենայն որ է
՚ի նոսա :

Յայնժամ ցնծասցեն ամենայն ծառք
անտառի յերեսաց տեառն՝ զի դայ ,
և դայ նա ՚ի դատել զերկիր :
Դատէ զտիեղերս իրաւամբք . և զժո-
ղովուրդս ամենայն ճշմարտութեամբ
իւրով :

ՍԱՂՄՈՍ ԴԶ.

Առաջնորդ Պատմենք . ի ժամանակի շէ Երիբն հաստատեցաւ :

Տէր թագաւորեաց՝ ցնծասցէ Երկիր .
ուրախ եղիցին կղզիք բազումք :
Վճպ և մէգ շուրջ են զնովաւ . յիրա-
ւունս և յարդարութիւն ուղղեալ է
աթոռ նորա :

Հուր առաջինորա գնասցէ , և այրես-
ցէ շուրջ զթշնամիս նորա :
Երեւեցան փայլաւոակունք նորա տիե-
զերաց . ետես՝ և սասանեցաւ Երկիր :
Երինք որպէս մոմ հալեսցին յերե-
սաց տեառն . յերեսաց տեառն ամե-
նայն Երկիր :

Պատմեսցեն Երկինք զարդարութիւն
նորա . և տեսցեն ամենայն ժողո-
վուրդք զիառս նորա :

Ամաչեսցեն ամենեքեան ոյք Երկիրպա-
գանեն կուոց , և ոյք պարծին ՚ի դրօ-
շեալս իւրեանց :

Երկիրպագցեն նմա ամենայն հրեշ-
տակք նորա , զի լուաւ և ուրախ եղեւ
սիօն . և ցնծասցեն դստերք յուղայ
վասն իրաւանց քոց տէր :

Օ ի դու բարձրեալ ես 'ի վերայ ամե-
նայն երկրի . յոյժ բարձրացար 'ի վե-
րայ ամենայն կոոց :

Ո յը սիրելք զտէր , ատեցէք զշարու-
թիւն . պահէ տէր զանձինս սրբոց իւ-
րոց , 'ի ձեռաց մեղաւորի փրկեացէ ըզ-
նոսա :

Լ ոյս ծաղեաց արդարոց . ուղղոց սրտից
եղեւ ուրախութիւն :

Ուրախ եղերուք արդարք 'ի տէր . և
խոստովան եղերուք յիշատակի սրբու-
թեան նորա :

Տ ու ն ք Ժ բ :

Ս Ա Ղ Մ Ո Ս Դ է :

Ա ս ո ւ ն ո ս Դ ա ս ո ւ ն ի օ բ հ ն ո ւ ն ե ա ն :

Օ րհնեցէք զտէր յօրհնութիւն նոր ,
զի սրանչելիս արար :
Փրկեաց զնա աջ իւր , և բազուկ սուրբ
իւր :

Եցոյց տէր զփրկութիւն իւր , առաջի
ազգաց յայտնեաց զարդարութիւն իւր :
Յիշեաց ողորմութեամբ իւրով զյա-
կոր . ճշմարտութեամբ իւրով զտունն
իսրայէլ . և տեսին ամենայն ծաղք

Երկրի զմբկութիւն աստուծոյ մերոյ։
Սղաղակեցէք առ տէր ամենայն եր-
կիր։ օրհնեցէք ցնծացէք և սաղմոս
ասացէք։


Սաղմոս ասացէք աստուծոյ մերոյ օր-
հնութեամբ, օրհնութեամբ և 'ի ձայն
սաղմոսաց։

Ի ձայն օրհնութեան կուածոյ փողոյ,
օրհնութեամբ ցնծութեամբ և 'ի ձայն
եղջեր փողոյ, աղաղակեցէք առաջի
թագաւորին տեառն։

Խոռվեսցի ծով լոխ իւրով։ տիեզերք
և ամենայն բնակիչք նորա։ և զետք
ծափս հարցեն 'ի միասին ձեռամբ։
Լերինք ցնծասցեն առաջի տեառն, զի
զայ զի հասեալ է տէր 'ի դատել զեր-
կիր։

Դատէ զաշխարհս արդարութեամբ և
զժողովուրդս իւր ուղղութեամբ։

Տունք ժա Գորդայս լ. Դ. :



ՄԱՂՄՈՍ Դ.:

Ապահով Դատ-Բ.:

Տէր թագաւորեաց, բարկացան ժո-
ղովուրդք. որ նստիս 'ի քրովքէս, սա-

սանեցաւ երկիր :

Տէր՝ ի սիօն մեծ է, և բարձր է ՚ի վերայ ամենայն ժողովրդոց :
Խոստովան եղիցուք անուան քում
մեծի, զի ահաւոր և սուրբ է . և պատիւ թագաւորի վերաւոնս սիրէ :
Դու պատրաստեցեր զուղղութիւն,
վերաւոնս և զարդարութիւն յակոբայ
դու արարեր :

Բարձր արարէք զտէր աստուած մեր .
Երկիրպաղէք պատուանդանի ոտից
նորա զի սուրբ է :

Մովսէս և ահարօն երիցունք նորա .
սամուէլ ընդ այնոսիկ, ոյք կարդան
զանուն նորա :

Կարդային առ տէր և նա լսէր նոցա ,
և ՚ի սիւն ամպոյ խօսէր ընդ նոսա :
Պահէին զվկայութիւնս նորա և զհը-
րամանս զոր ետ նոցա :

Տէր աստուած մեր՝ դու լսէիր նոցա ,
աստուած՝ դու քաւիչ լինէիր նոցա, և
վրէժիննդիր ՚ի վերայ ամենայն զոր-
ծոց նոցա :

Բարձր արարէք զտէր աստուած մեր .
Երկիրպաղէք ՚ի լեառն սուրբ նորա, զի
սուրբ է տէր աստուած մեր :
Տունք Փ :

ՍԱՂՄՈՍ ԴԹ.

Առաջնորդական գլուխիք :

Եղաղակեցէք առ տէր ամենայն երկիր . ծառայեցէք տեառն ուրախութեամբ :

Մտէք առաջի նորա ցնծութեամբ . ծաներուք զի նաէ տէր աստուած մեր : Նա արար զմեղ , և ոչ մեք էաք . մեք ժողովուրդք և խաչն արօտի նորա : Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ , և օրհնութեամբ 'ի յարկը նորա :

Խոստովան եղերուք տեառն , և օրհնեցէք զանուն նորա : Քաղցր է տէր , յաւիտեան է ողորմութիւն նորա . ազգէ մինչեւ յազդ է Ճշմարտութիւն նորա :

Տռւնք Զ :

ՍԱՂՄՈՍ Ձ.

Առաջնորդական գլուխիք :

Յողորմութիւն և յիրաւունս օրհնեցից զքեղ տէր . սաղմոս ասացից , և 'ի միտ առից :

Ճանապարհ ամբիծ մինչեւ եկեսցէ առ
իս . զի գնայի ես յանբժութեան սրտի
իմոյ 'ի մէջ տան իմոյ :

Ոչ եղի առաջի աչաց իմոց զիրս անփա-
րաւութեան . ոյք առնեին զանօրէնու-
թիւն , առեցի :

Ոչ մերձեցաւ առ իս որ թիւրն էր
սրտիւ . խոտորեալ յինէն անդգամին ,
և ես ինչ ոչ փոյթ առնեի :

Որ խօսէր զաղտ զընկերէ իւրմէ , զնա
բացէ 'ի բաց հալածէի :

Որ ամբարտաւան էր աչօք և ադահ
սրտիւ , ընդ նմա և հաց ոչ ուտէի :
Եչք իմ 'ի հաւատացեալս երկրի , զի
նստցին նոքա ընդիս :

Որ գնայր 'ի ճանապարհ ամբիծ , նա
պաշտէր զիս :

Ոչ բնակէր 'ի մէջ տան իմոյ՝ որ առ-
նէր զամբարտաւանութիւն . որ խօսէր
զանիրաւութիւն , չէր յաջողեալ նմա
առաջի աչաց իմոց :

Ծնդ առաւօտս սպանանէի զամենայն
մեղաւորս երկրի . զի սատակեցից 'ի
քաղաքի տեառն զամենեսեան՝ ոյք
գործեն զանօրէնութիւն :

ՍԱՂՄՈՍ ՃԱ.

Եւանդրութեան մատուցած առաջիկ պատահ աղոթութեան մատուցած է :

Տեր՝ լուր աղօթից իմոց, աղաղակ իմ
առ քեզ եկեսցէ, և մի՛ դարձուցաներ
զերեսս քո յինէն :

Յաւուր նեղութեան իմոյ խոնարհեցո
առ իս զունկն քո · յորում աւուր կար-
դամ առ քեզ, վաղվաղակի լուր ինձ ·
Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ,
և ոսկերք իմ որպէս խուր չորացան :
Հարայ ես որպէս խոտ՝ և ցամաքեցաւ
սիրտ իմ · մոռացայ ուտել զհաց իմ
՚ի ճայնէ հեծութեան իմոյ :

Ացեցաւ ոսկը իմ ՚ի մարմին իմ · նմա-
նեցայ ես հաւալասան անսապատի ·
Եղէ ես որպէս բու յաւերակի · տքնե-
ցայ և եղէ ես որպէս Ճնճղուկ միայն
՚ի տանիս :

Կախատեցին զիս թշնամիք իմ զօր-
հանսապաղ, և զովիչք իմ ինեւ երդ-
նուին :

Օմոխիր որպէս զհաց կերի, և զըմ-
պելին իմ արտասուօք խառնեցի :

Յերեսաց բարկութեան սրտմտութեան
քո . զի դու բարձրացուցեր և խոնար-
հեցուցեր զիս :

Եւուրք իմ որպէս հովանի անցին . և
ես որպէս խոտ ցամաքեցայ :

Դու տէր յաւիտեան կաս , և յիշա-
տակ քոյ ազգէ մինչեւ յաղդ :

Դու յարուցեալ զթասցիս ՚ի վերայ
սիօնի , ժամանակ զթալոյ նորա հա-
սեալ է ժամ :

Հաճեցան ծառայք քո ընդ քարինս
նորա , և ՚ի հողս նորա զթասցին :
Երկիցեն հեթանոսք յանուանէ քում-
մէ , և ամենայն թագաւորք երկրի ՚ի
փառաց քոց :

Շինէ տէր զսիօն , և երեւեսցի փառօք
իւրովք ՚ի նմա :

Հայեցաւ նա յաղօթս խոնարհաց , և
ոչ արհամարհեաց զիսնդրուածսնոցա :

Դրեսցի այս յաղդ յայլ . ժողովուրդ
զոր ստացեալ է , օրհնեսցէ զտէր :

Հայեցաւ նա ՚ի բարձանց ՚ի սրբութե-
նէ իւրմէ . տէր յերկնից յերկիր հա-
յեցաւ :

Ասել զհեծութիւն կապելոց . և արձա-
կել զորդիս մահապարտաց :

Պատմել՝ ի սիօն զանուն տեառն, և
զօրհնութիւնս նորա յերուսաղէմ։
Ժողովիլ ժողովրդոց ՚ի միասին, և թա-
գաւորաց ծառայել տեառն։

Պատասխանի ետ նմա ՚ի ճանապարհի
զօրութեան իւրոյ ։ զնուազութիւն ա-
ւուրց իմոց սսա ինձ, և մի՛ հաներ զիս
՚ի կէս աւուրց իմոց ։ զի ազգէ յազգ
են ամք քո։

Ե սկզբանէ տէր զհիմունս երկրի հաս-
տատեցեր ։ և դործք ձեռաց քոց եր-
կինք են։

Նորա անցանեն, և դու կաս և մնաս
յափիտեան։

Եմենեքեան որպէս զձորձս մաշեսցին .
և որպէս զվերարկուս փոխեսցես զնո-
սա և փոխեսցին։

Բայց դու նոյն ինքն ես, և ամք քո ոչ
անցանեն . որդիք ծառայից քոց բնա-
կեսցին ՚ինմա . և զաւակի նոցա յափի-
տեան յաջողեսցի։

Տունք ԻԶ։

ՍԱՂՄՈՍ ՃԲՆ.

Առաջնորդ ԴԱՎԻԴԻ։

Օրհնեա անձն իմ զտէր, և ամենայն

ոսկերք իմ զանուն սուրբ նորա :
 Օքչնեա անձն իմ զտէր , և մի՛ մոռա-
 նար զամենայն տուրս նորա :
 Ո քաւէ զմեղս քո , բժշկէ զամենայն
 հիւանդութիւնս քո :
 Ո փրկէ յապականութենէ զկեանս քո ,
 պսակէ զքեզ ողորմութեամբ և գթու-
 թեամբ :
 Ո նու ՚ի բարութենէ զցանկութիւն քո .
 նորոգեսցի որպէս արծուոյ մանկու-
 թիւն քո :
 Եռնէ ողորմութիւնս տէր , և իրաւու-
 նըս ամենայն զրկելոց :
 Եցոյց տէր զջանապարհս իւր մովսէ-
 սի , և որդւոցն իսրայէլի զկամս իւր :
 Գթած ողորմած է տէր , երկայնամիտ
 և բազումողորմ :
 Ոչ իսպառ բարկանայ մեզ տէր , և ոչ
 յաւիտեան պահէ ոխս :
 Ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ տէր ,
 և ոչ ըստ անօրէնութեան մերում հա-
 տոյց մեզ :
 Եյլ որպէս բարձր են երկինք յերկրէ ,
 այնպէս զօրացոյց տէր զողորմութիւն
 իւր ՚ի վերայ երկիւղածաց իւրոց :
 Որչափ հեռի են արեւելք յարեւմտից ,

այնչափ հեռի արար ՚ի մէնջ զանօրէ .
նութիւնս մեր :

Որպէս գթայ հայր ՚ի վերայ որդւոց
իւրոց, այնպէս գթասցի տէր յերկիւ .
ղածս իւր :

Օի նա գիտաց զստեղծուածս մեր, և
յիշեաց թէ հող եմք :

Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր .
որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղիկ :
Ընչէ ՚ի նմա հողմ, և ոչ է և ոչ եւա
երեւի տեղի նորա :

Հայց ողորմութիւն տեառն մնայ յա .
վիտեանս յաւիտենից ՚ի վերայ երկիւղա .
ծաց իւրոց, և արդարութիւն նորա
յորդւոց մինչեւ յորդիս :

Ոյք պահեն զուխտս նորա, յիշեն ըլք .
պատուիրանս նորա և առնեն զնա :
Տէր յերկինս պատրաստեաց զաթու
իւր . արքայութիւն նորա ամենեցուն
տիրէ :


Օրհնեցէք զտէր ամենայն հրեշտակը
նորա՝ հզօրք զօրութեամբ, ոյք առ .
նէք զբան նորա ՚ի լսել ձայնի պատ .
ղամաց նորա :

Օրհնեցէք զտէր ամենայն զօրութիւնք
նորա, պաշտօնեայք և արարողք կա .

մաց նորա :

Օրհնեցէք զտէր ամենայն գործքնոր-
րա . զի ընդ ամենայն տեղիս է տէրու-
թիւն նորա , օրհնեա անձն իմ զտէր :

Տառնք ԻԲ : Գոբզայս ԽԸ :



ՍԱՂՄՈՍ ՃԳ .

Ասուլու Դաստի . ՚ի Հերայ աշխարհաբնութ արարածոց :

Օրհնեա անձն իմ զտէր . տէր աս-
տուած իմ մեծ եղեր յոյժ :
Խոստովանութիւն և մեծվայելչութիւն
զգեցար , արկեալ զլոյս որպէս զօթոց .
Ճգեցեր զերկինս որպէս զխորան , և
արկեր ՚ի վերայ Հուրց զվերնայարկս
նորա :

Ո դնէ յամպս զգնացս իւր , և շրջնա
՚ի վերայ թեւոց հողմոց :
Ո արար զհրեշտակս իւր հոգիս , և ըզ-
պաշտօնեայս իւր ՚ի հուր կիզելոյ :
Հաստատեաց զերկիր ՚ի վերայ հաս-
տատութեան իւրոյ . զի մի՛ սասանես-
ցի յաւիտեան :

Խորք որպէս զգեստ վերարկու է նո-
րա , ՚ի վերայ լերանց կացցեն Հուրք :

Իսաստէ քումմէ փախիցեն, և 'ի ձայ-
 նէ որոտալոյ քումմէ սարսիցեն :
 Երանեն լեռնանսան՝ և իշանան դաշտա-
 նան, 'ի տեղի յոր հաստատեցեր զնոսա :
 Սահման եղեր՝ և ոչ անցանեն, և ոչ
 եւս դառնան 'ի ծածկել զերկիր :
 Եռաքեցեր զաղբիւրս ընդ ծործորս, 'ի
 միջոց լերանց զնասցեն ջուրք :
 Երբուցանել զամենայն գաղանս վայ-
 րի . յագեսցին ցիոք 'ի ծարաւս իւ-
 րեանց :
 Ենդ թռչունք երկնից բոյնս դիցեն .
 և 'ի միջոց վիմաց տացեն զճայնս իւ-
 րեանց :
 Երբուցանէ զերինս 'ի շտեմարանաց իւ-
 րոց . 'ի պտղոյ գործոց իւրոց լցցի եր-
 կիր :
 Շուտուցեր զխոտ 'ի լերինս, զդալարի
 'ի ծառայութիւն մարդկան :
 Հաներ զհաց յերկրէ . զինի ուրախ
 առնէ, իւղ զուարթ, և հաց հաստա-
 տէ զսիրտ մարդոյ :
 Յագեսցին ծառքն անտառի, և մայր-
 քըն լիրանանու՝ զորս դու տնկեցեր :
 Ենդ թռչունք երկնից ձագս հանցեն .
 և բոյն արագի ապաւէն է նոցա :

Երինք բարձունք են եղջերուաց, և
վէմք ապաւէնք նապաստակաց:
Երարեր զլուսին վասն ժամանակի. ա-
րեգակն ծանեաւ զժամ մտանելոյ իւ-
լոյ:

Երարեր զիսաւար՝ և եղեւ զիշեր. 'ի
նմա գնան ամենայն գաղանք անտառի:
Կորիւնք առիւծուց մոնչեն և յափրշ-
տակեն, և խնդրեն յաստուծոյ զկերա-
կուրս իւրեանց:

Ի ծագել արեւու ժողովին, և 'ի մորիս
իւրեանց դադարին:
Ելանէ մարդ 'ի գործս իւր, և 'ի վաս-
տակս ձեռաց իւրոց մինչեւ յերեկոյ:
Ո՞րպէս զի մեծ են գործք քո տէր.
զամենայն ինչ իմաստութեամք արա-
րեր. և լցաւ երկիր ստեղծուածովք
քովք:

Եյս ծով մեծ և անդորր. 'ի սմա են
սողունք, որոց ոչ զոյ թիւ. զաղանք
մեծամեծք և մանունք. 'ի սմա և նաւք
գնան, վիշապն զոր ստեղծեր խաղալ
նովաւ:

Եմենեքեան քեզ սպասեն. և դու տաս
զկերակուր նոցա 'ի ժամու:
Տաս դու նոցա՝ և կերակրին. բանաս

զձեռն քո, և կերակրես զամենեսեան
կամք քովք :

Դարձուցանես զերեսս քո ՚ինոցանէ՝
և խոռվին, հանես զողի ՚ինոցանէ,
պակասին և ՚ի հող դառնան :

Եռաքես զողի քո և ստանաս զնոսա,
և նորողես զերեսս երկրի :

Եղիցին փառք տեառն յաւիտեան, և
տէր ուրախ եղիցի յարարածս իւր :

Ո հայի յերկիր, և տայ դողալ սմա.
մերձեսցի ՚ի լերինս, և ծխեսցին :

Օրհնեցից զտէր ՚ի կեանս իմ . սաղմոս
ասացից աստուծոյ իմոյ մինչեւ եմ ես:
Քաղցր եղիցի նմա օրհնութիւն իմ .

և ես ուրախ եղէց ՚ի տէր :
Պակասեսցին մեղաւորք յերկրէ, և ամ-
բարիշտք մի՛ եւս գտցին ՚ի նմա . օր-
հնեա անձն իմ զտէր :

Տունք ԼԿ :

ԽԱՂՄՈՍ ՁԹ .

Վ.ՀԵՂ-Դ. :

Խոստովան եղերուք տեառն և կար-
դացէք զանուն նորա, և պատմեցէք ՚ի
հեթանոսս զգործս նորա ;

Օրհնեցէք և սազմոս ասացէք նմա .
պատմեցէք զամենայն սքանչելիս նորա .
և գովեցարուք յանուն սուրբ նորա :
Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ՝ ոյք
ինսդրեն զտէր . ինսդրեցէք զտէր՝ և հը-
զօքք եղերուք . և ինսդրեցէք զերեսս
նորա յամենայն ժամ :

Յիշեցէք զաքանչելիս նորա զորս արար ,
զարուեստու և զիրաւունս բերանոյ նորա :
Օտաւակք աբրահամեան ծառայք նո-
րա , որդիք յակոբայ ընտրեալք նորա :
Նա ինքն է տէր աստուած մեր . յա-
մենայն երկրի են իրաւունք նորա :
Յիշեաց յաւիտենից զուխտ իւր , և ըզ-
բանն՝ զոր պատուիրեաց մինչ ՚ի հա-
զար ամ :

Օուխտն զոր եղ ընդ աբրահամու . և
զերդումն իւր ընդ սահակայ :
Հաստատեաց առ յակոբ զհրաման իւր .
և առ խօրայէլ զուխտ իւր յաւիտենից :
Եսէ ձեզ տաց զերկիրն քանանու , զվե-
ճակ ժառանգութեան ձերոյ :

Օի էին նոքա թուովսակաւք , նուազք
և պանդոխտք ՚ի նմա :
Ենկցին նոքա ազգէ յազգ , ՚ի թագա-
ւորութենէ ՚ի ժողովուրդ յայլ :

Աչ եթող մարդկան մեղանչել նոցա .
և կշտամբեաց զթագաւորս վամն նոցա :
Մի՛ մերձենայք ասէ՝ յօծեալս իմ . և
'ի մարդարէս իմ մի՛ մեղանչէք :
Կոչեաց սով յերկիր նոցա . և զամենայն
զօրութիւն հացի երեկ :

Ըռաքեաց առաջի նոցա այր . 'ի ծա-
ռայութիւն վաճառեցաւ յովսէփի :
Խոնարհ արարին 'ի կապանս զոտս նո-
րա . և էանց ընդ երկաթ անձն նորա :
Մինչեւ եկեսցէ բան նորա . և բան
տեսոն փորձեաց զնա :

Ըռաքեաց թագաւորն և ելոյծ զնա .
իշխան ժողովրդեան եթող զնա :
Կացոյց զնա տէր տան իւրոյ . իշխան 'ի
վերայ ամենայն ստացուածոց իւրոց :
Խրատել զիշխանս նոցա որպէս զինքն .
և զծերս նոցա իմաստունս արասցէ :
Եմուտ իսրայէլ յեզիստոս . և յակոբ
պանդխտեցաւ յերկիր քամայ :

Եճեցոյց զժողովուրդ իւր յոյժ , և զօ-
րացոյց զնոսա քան զթշնամիս իւր :
Դարձոյց զսիրտս նոցա ատել զժողո-
վուրդ իւր , և 'ի նենդել զծառայս իւր :
Ըռաքեաց զմովսէս ծառայ իւր . և զա-
հարօն ընտրեալ իւր :

Ետ նոցա զբան նշանաց իւրոց, և զա-
րուեստոս իւր յերկիր քամայ:
Եռաքեաց զիսաւար և խաւարեցոյց
զնոսա, զի դառնացուցին զբան նորա:
Դարձոյց յարիւն զգետս նոցա, և սպան
զամենայն ձկունս նոցա:

Եռաց յերկիր նոցա գորտ, և 'ի շտե-
մարանս թագաւորաց նոցա:
Եսաց՝ և եկն շանաձանձ և մժեխ ընդ
ամենայն սահմանս նոցա:

Դարձոյց զանձրեւս նոցա 'ի կարկուտ.
և հուր յերկիր նոցա բորբոքեցաւ:
Եհար զայդիս և զթզենիս նոցա, և
փշրեաց զամենայն ծառս սահմանաց
նոցա:

Եսաց՝ և եկն մարախ, և խառնիճ՝ զի
ոչ գոյր նոցա թիւ:
Եկեր զամենայն խոտ երկրի նոցա. և
սպառեաց զամենայն պտուղ անդոյ
նոցա:

Եհար զամենայն անդրանիկս եղիպ-
տացւոց. զտկիզքն ամենայն վաստակոց
նոցա:

Եհան զնոսա ոսկւով և արծաթով.
և ոչ գոյր յազգի նոցա հիւանդ:
Ուրախ եղեւ եղիպտոս ընդ ելանել նո-

ցա . զի անկաւ ահ տեառն ՚ի վերայ
նոցա :

Սփուեաց ամալ՝ հովանի առնել նոցա՚ի
տուէ , և հրով լոյս տայր նոցա ՚ի գի-
շերի :

Խնդրեցին՝ և եկն լորամարգի . և հա-
ցիւ երկնից լոյց զնոսա :

Եհար զվեմն՝ և բղխեցին չուրք , և գը-
նացին գետք ընդ անջրդիս :


Յիշեաց զբան իւր սուրբ , որ ընդ աբ-
րահամու ծառայի իւրոյ :

Եհան զժողովուրդ իւր ցնծութեամբ ,
և զընտրեալս իւր ուրախութեամբ :

Ետ նոցա զգաւառս հեթանոսաց . ՚ի
վաստակս ժողովրդոց ժառանգեցոց
զնոսա :

Օ, պահեսցեն զվկայութիւնս նորա ,
և զօրէնս նորա խնդրեսցեն :

Տունք ԽԴ : Գոբղոյս ՀԸ :



ՍԱՂՄՈՍ ՃԵ .

ԵԼԵՅՆԻ :

Խոստովան եղերուք տեառն՝ զի քաղ-
ցըր է . զի յաւիտեան է ողորմութիւն
նորա :

Ո խօսեսցի զզօրութիւնս տեառն . լը-
սելի արասցէ զամենայն օրհնութիւնս
նորա :

Երանի ոյք պահեն զբրաւունս , և առ-
նեն զարդարութիւն յամենայն ժամ :
Յիշեա զմեզ տէր ընդ հաճոյս ժողովը-
դեան քոյ , և այց արա մեզ ’ի փրկու-
թեան քում :

Տեսցուք մեք զքաղցրութիւն ընտրե-
լոց քոյ , ուրախ եղիցուք մեք յուրա-
խութիւն ազգի քոյ . և գովեսցուք
մեք ’ի ժառանգութեան քում :
Մեղաք մեք ընդ հարսն մեր , անօրի-
նեցաք և յանցեաք :

Հարքն մեր յեգիպտոս ոչ իմացան
զսքանչելիս քո , և ոչ յիշեցին զքա-
զում ողորմութիւնս քո :

Հարկացուցին զքեզ յանցանելն իւ-
րեանց ընդ ծով կարմիր . փրկեաց ըլ-
նոսա վասն անուան իւրոյ , զի ծանի-
ցեն զզօրութիւնս նորա :

Սաստեաց ’ի ծով կարմիր՝ և ցամա-
քեցաւ . առաջնորդեաց նոցա ընդ ան-
դունդս որպէս ընդ անապատս :
Կեցոյց զնոսա ’ի ձեռաց ատելեաց նո-
ցա , և փրկեաց զնոսա ’ի ձեռաց թըւ-

Նամեաց նոցա :

Օածկեաց ծով զնեղիչս նոցա . և մի
'ի նոցանէ ոչ ապրեցաւ :

Հաւատացին բանի նորա , և օրհնեցին
զօրհնութիւնս նորա :

Ա աղվաղեցին և մոռացան զգործս նո-
րա , և ոչ անսացին խորհրդոց նորա :
Յանկացան զցանկութիւն յանապա-
տի , և փորձեցին զաստուած յանջրդի :
Ետ նոցա զլմնդրուածս նոցա . առա-
քեաց զլեութիւն յանձինս նոցա :

Բարկացուցին զմովսէս 'ի բանակի , և
զահարօն սուրբ տեառն :

Բացաւ երկիր և եկուլ զգաղան , և
ծածկեաց զբանակսն զարիգօնի :

Հուր վառեցաւ 'ի ժողովս նոցա , և բոց
մաշեաց զմեղաւորս :

Երարին զորթն 'ի քորեք . և երկիր-
պագին պատկերի , և փոխեցին զիառս
իւրեանց 'ի նմանութիւն որթու խո-
տակերի :

Մոռացան զաստուած կենարան իւ-
րեանց , որ արար զմեծամեծս իւր յե-
ղիպտոս , և զսքանչելիս իւր յերկիր
քամայ . և զահ իւր ՚ի վերայ կարմիր
ծովուն :

Եսաց սատակել զնոսա, եթէ ոչ մով-
սէս ընտրեալն կայր առաջի նոցա :
Դարձաւ առ տէր և անցոյց զբարկու-
թիւն նորա, զի մի՛ սատակեսցին նոքա :
Ենարդեցին զերկիրն ցանկալի, և ոչ
հաւատացին բանի նորա :

Տրտնչեցին ՚ի բանակս խրեանց, և ոչ
լուան ձայնի տեառն :

Համբարձ զձեռն խր ՚ի վերայ նոցա,
Հարկանել զնոսա յանապատի :
Յրուեսցի զաւակ նոցա ընդ հեթանո-
սրս, ցրուեսցի զաւակ նոցա ընդ դա-
ւառս :

Պղծեցան նոքա ՚ի բէլփեգովը, զի կե-
րին զզոհեալ և զմեռելոտի :
Բարկացուցին զնա ՚ի գործս խրեանց.
և յաճախեաց ՚ի վերայ նոցա բեկումն :
Եպա եկաց ՚ի մէջ փենեհէս . քաւեաց
և արդելաւ մահ . համարեցաւ նմա
յարդարութիւն ազգէ յազգ մինչեւ
յաւիտեան :

Բարկացուցին զնա ՚ի վերայ ջուրցն
հակառակութեան . չարչարեցաւ մով-
սէս վասն նոցա, զի դառնացուցին ըլ-
հոդի նորա :

Հրամայեաց շրթամբք խրովը, և ոչ

սատակեցին զազգն՝ զոր ասաց նոցա
տէր :

Խառնակեցան ընդ հեթանոսս, և ու-
սան զգործս նոցա . ծառայեցին կոոց
նոցա, և եղեւ նոցա 'ի զայթակղու-
թիւն :

Օռհեցին զուստերս և զգստերս իւ-
րեանց դիւաց , և հեղին զարիւն ամբիծ :
Երիւն ուստերաց և դստերաց իւրեանց՝
զոր զոհեցին կոոցն քանանու :

Հաղախեցաւ երկիր յարենէ նոցա , և
պղծեցաւ 'ի դործոց նոցա , զի պոուըն-
կեցան 'ի զնացս իւրեանց :

Բարկացաւ սրտմտութեամբ տէր 'ի վե-
րայ ժողովրդեան իւրոյ , և գարշեցոյց
զժառանգութիւն իւր յոյժ :


Մատնեաց զնոսա 'ի ձեռս հեթանո-
սաց , տիրեցին նոցա ատելիք իւրեանց ,
և թշնամիք իւրեանց նեղեցին զնոսա .
և խոնարհ եղեն 'ի ներքոյ ձեռաց նոցա:
Բազում անգամ փրկեաց զնոսա , և
նոքա դառնացուցին զնա 'ի խորհուրդս
իւրեանց , և կորացան յանօրէնութեան
իւրեանց :

Հայեցաւ տէր 'ի նեղութիւնս նոցա , 'ի
լսել ձայնի աղօթից նոցա :

Յիշեաց զուխտ իւր , և զղջացաւ ըստ
բազում ողորմութեան իւրում . և ետ
զնոսա 'ի գլխութիւնս առաջի ամենայն
գերչաց նոցա :

Փրկեա զմեզ տէր աստուած մեր . և
ժողովեա զմեզ 'ի հեթանոսաց :
Խոստովան եղիցուք անուան քում սրբ-
բոյ , և պարծեսցուք յօրհնութիւնս քու :
Օրհնեալ տէր աստուած իսրայէլի
յաւիտեանս յաւիտենից :
Եւ ասացի ամենայն ժողովուրդն . և
զիցի եղիցի :

Տունք ԽԳ :
Կանոնս Գորշայս է : Սաղմոս ԺԷ :
Տունք ՅԺ.Դ :



[ԱԴՈԹՔ ԵԶԵԿԻԱՅԻ ԱՐՔԱՅԻ ՀԻՒԱՏԱՆԻ :
'Ի ԺԵՄԱՆԱԿԻ ՅՈՐՈՒՄ ՀԻՒԱՆԴԱՑԱԿ : ԵՒ
ՅԱՐԵԱԿ 'Ի ՀԻՒԱՆԴՈՒԹԵՆԷ : ԻՄՄԻ :

Եսայէայ Լ.:

Ես ասացի 'ի վերանալ յինէն աւորց
իմոց , թէ զնացի ես 'ի դրունս գժու-
խոց :

Օսղի զամենայն յետին իմ , և ասա-
ցի 'թէ այլ ոչ եւս տեսից զիրկութիւն
տեառն յերկրին կենդանեաց , և ոչ

եւս տեսից զմարդ բնակչօք իւրովք
հանգերձ :

Պակասեցայ ես յազգատոհմէ իմմէ .
այսուհետեւ թողի լքի զամենայն ըզ-
կեանս իմ :

Ել գնաց մեկնեցաւ յինէն հոգի իմ ,
որպէս զայն՝ որ քակէ զտաղաւար . և
եղէ ես որպէս զոստայն սատարաց մերձ
'ի հատանիլ :

Յաւուր յայնմիկ մատնեցայ ես յառա-
ւտէ որպէս 'ի ձեռոս առխւծու . այնպէս
խորտակեաց մանրեաց զոսկերս իմ , զի
յառաւօտէ մինչ 'ի գիշեր մատնեցայ :
Որպէս ծիծառն՝ այնպէս ճչեցի , որպէս
զաղաւնի՝ այնպէս մնչեցի , զի նուաղե-
ցան աչք իմ 'ի տեսանելոյ :


Հայեցայ 'ի բարձունս առ տէր աս-
տուած իմ՝ որ փրկեաց զիս , և փարա-
տեցոյց յինէն զցաւս անձին իմոյ :

Տէր , վասն այսորիկ պատմեցաւ քեզ .
զարթուցեր զանձն իմ , դարձուցեր
զհոգի իմ . մխիթարեցայ և կեցի :
Եհա 'ի խաղաղութիւն դարձաւ դառ-
նութիւն իմ . փրկեցեր զանձն իմ , զի
մի՛ կորեայց . և ընկեցեր յետոյ զամե-
նայն զմեղս իմ :

Օկ ոչ թէ որք 'ի դժոխս են, խոստովան առնին առ քեզ. և ոչ մեռեալք օրհնեսցեն զքեզ. և ոչ յուսացին 'ի ճշմարտութիւնս քո ամենեքեան, ոյք իջանեն 'ի դժոխս :

Եյլկենդանիքս օրհնեսցուք զքեղտէր. որպէս և ես այսուհետև մանկունս ծընայց, որք պատմեսցեն զարդարութիւնս քո՝ տէր փրկութեան իմոյ : Ես ոչ ևս դադարեցից օրհնել զքեզ յօրհնութիւն նոր զամենայն աւուրս կենաց իմոց յանդիման տաճարիդ աստուծոյ :

Փառք հօր և որդւոյ և :



ՄԱՂԹԱՆՔ

Յոյս կենդանութեան, յոյս և ապաւէն փրկութեան տէր յիսուս փրկիչ. փրկեա և փարատեցո զցաւս անձին իմոյ : Մարդասէր տէր, վասն սրբուհւոյ անարատի մօր քոյ և կուսի, և վասն իաշի քո պատուականի, ընկալ զաղաշանը մեր, և կեցո զմեղ :

Օւարողն և զաղըն 'ի վերջն Երկիրք պատմեն կանոնէն
Հուշես յ77 եւեսն :



Ակցո Տէր զժողովուրդո քո , և օրհնեա զժառանգութիւնս քո !

ՍԱՂՄՈՍ ՀԶ.

ԵԼԵՅԻՆ :

Սպստովան եղերուք տեառն զի
քաղցր է, զի յաւիտեան է ո-
ղորմութիւն նորա :

Եսասցեն փրկեալք տեառն, զորս
փրկեաց ՚ի ձեռաց թշնամոյն :
Յամենայն գաւառաց ժաղովեաց զնո-
սա, յարևելից և յարևմտից, ՚ի հիւ-
սիսոյ և ՚ի ծովիք :

Մոլորեցան նորա յանապատի յան-
չըրդի ճանապարհի, և քաղաք ընա-
կութեան ո՛չ զտին :

Քաղցեան և ծարաւեցան, և անձինք
նոցա ՚ի նոսին նուաղեցան :

Եղաղակեցին առ տէր ՚ի նեղութեան
խրեանց . և ՚ի վշտաց նոցա փրկեաց
զնոսա ,

Եռաջնորդեաց նոցա ՚ի ճանապարհ
ուղիղ, վե երթիցեն ՚ի քաղաք ընա-

կութեան իւրեանց :
Խոստովան եղիցին տեառն ողորմու-
թեանց նորա, և սքանչելեաց նորա
որդիք մարդկան :

Օի յագեցոյց զանձինս քաղցեալս,
և զանձինս կարօտեալս լի արար բա-
րութեամբ :

Այ.ք նստէին ՚իխաւարի և ՚ի ստուե-
րլս մահու, կապեալ էին յաղքա-
տութեան որպէս յերկաթս :

Օի դառնացուցին զբանն աստուծոյ,
և զխորհուրդս բարձրելոյն բարկա-
ցուցին :

Խոնարհ եղեն ՚իցաւոց սիրտք նոցա ·
տկարացան, և ոչ ոք էր՝ որ օփնէր
նոցա :

Եղաղակեցին առ տէր ՚ի նեղութեան
իւրեանց . ՚ի վշտաց նոցա եհան ըզ-
նոսա :

Փրկեաց զնոսա ՚ի խաւարէ և ՚ի ըս-
տուերաց մահու, և խղեաց զկապանս
նոցա :

Խոստովան եղիցին տեառն ողորմու-
թեանց նորա, և սքանչելեաց նորա
որդիք մարդկան :

Օի վշրեաց զդրունս պղնձիս, և ըզ-

Նիդս երկաթիս խորտակեաց։
Օգնեաց նոցա ՚ի ճանապարհի անօ-
րէնութեան իւրեանց։ զի վասն մե-
ղաց իւրեանց խոնարհ եղեն յոյժ։
Յամենայն կերակրոց գարշէին սիրտք
նոցա։ մերձեցան մինչև ՚ի դրունս մա-
հու։

Եղաղակեցին առ տէր ՚ի նեղութեան
իւրեանց, ՚ի վշտաց նոցա ապրեցոց
զնոսա։

Եռաքեաց զբան իւր և բժշկեաց զնո-
սա, և փրկեաց զնոսա յապականու-
թենէ իւրեանց։

Խոստովան եղիցին տեառն ողորմու-
թեանց նորա, և սքանչելեաց նորա
որդիք մարդկան։

Մատուցեն նմա պատարագ օր-
հնութեան, և պատմեսցեն զգործս նո-
րա ցնծութեամք։

Ոյք իջանէին ՚ի ծով նաւուք, և առ-
նէին զգործս ՚ի ջուրս բազումս։

Կոքա տեսին զգործս տեառն, և զըս-
քանչելիս նորա ՚ի խորս անդնդոց։
Եսաց և յարեաւ հողմ և մրրիկ, և

բարձրացան ալիք նորա։
Ելանէին յերկինս և իջանէին յան-

դունդս. և անձինք նոցա յանձինս
իւրեանց մաշեցան :

Խռովեցան սասանեցան որպէս ար-
բեալք, և ամենայն իմաստութիւննո-
ցա ընկլաւ :

Եղաղակեցին առ տէր՝ ի նեղութեան
իւրեանց. ի վշտացնոցակեցոյց զնոսա:
Դարձոյց զմբրիկն յօդս՝ և դադարե-
ցան աֆք նորա. ուրախ եղեն զի դա-
դարեցան. և առաջնորդեաց նոցա ի
նաւահանգիստ կամաց իւրեանց :
Խոստովան եղեցին տեառն ողորմու-
թեանց նորա, և սքանչելեաց նորա
որդիք մարդկան :

Բարձր արասցեն զնա ՚ի ժողովս ժո-
ղովրդոց, և յաթոռս ծերոց օրհնես-
ցեն զնա :

Օ ի դարձոյց զգետն ՚ի ցամաք, և ըզ-
գնացս ջուրց յերկիր ծարաւուտ :
Երար զերկիրն պտղաբեր՝ յաղտաղ-
տուկս վասն չարութեան բնակչաց
նոցա :


Երար զանապատն ՚ի ճահիճս ջուրց, և
զերկիրն ծարաւուտ ՚ի գնացս ջուրց :
Բնակեցոյց ՚ի նմա քաղցեալս. և շե-
նեցին քաղաք բնակութեան իւրեանց :

Վարեցին արտս և տնկեցին այգիս, և
 արարին պտուղ արմտեաց իւրեանց :
 Օրհնեաց զնոսա՝ և բազմացան յոյժ .
 և անասունքնոցա ոչ նուազեցան :
 Նուազեցան նոքա և չարչարեցան 'ի
 նեղութենէ չարեաց և 'ի վշտաց :
 Եկն անարդութիւն 'ի վերայ իշխանաց
 նոցա . մոլորեցոյց զնոսա յանապատի
 և ոչ 'ի ճանապարհի :

Օգնեաց տնանկին յաղքատութեան .
 և առաջնորդեաց որպէս խաշին աղ-
 գի նոցա :

Տեսցեն ուղիղք և ուրախ եղիցին . և
 ամենայն անօրէն խցցէ զբերան իւր +
 Ո՞վ է իմաստուն՝ որ պահեսցէ զայս . և
 'ի միտ առցէ զողորմութիւնս տեառն :

ՏԱԿ ԽԲ .



ՍԱՂՄՈՍ ՃԵ .

ՕՐԻՆԱԿԱՆ ԱԿԱԾԱԿԱԳ ԴԱԿԱՆ :

Պատրաստէ սիրտ իմ աստուած, պատ-
 րաստէ սիրտ իմ օրհնել և սաղմոս ա-
 սել քեզ փառօք իմովք :
 Զարթիք փառք իմ, զարթիք սաղ-

մոսիւք և օրհնութեամբ, և ես զար-
թեայց առաւթոտոց :

Խոստովան եղէց քեզ՝ ի ժողովուրդս
տէր, և սաղմոս ասացից քեզ յագինս:
Մեծ եղեւ մինչեւ յերկինս ողորմու-
թիւն քո :

Հարձրեալ ես դու յերկինս աստուած,
և յամենայն երկրի են փառք քո :

Որպէս փրկեցան սիրելիք քո. կեցո
աջով քով և լուր մեզ :

Եստուած խօսեցաւ՝ ի սրբութենէ իւր-
մէ, բարձր եղէց՝ բաժանեցից զսիւ-
քէմ, և զհովիտսն յարկաց չափեցից:
Իմ է զաղայադ և իմ է մանասէ.
Եփրեմ հզօրիչ գլխոյ իմոյ :

Յուղայ թագաւոր իմ՝ մովաք աւա-
զան յուսոյ իմոյ :

Եեղովմէ ուղղեցից զգնացս իմ. և
ինձ այլազգիք հնազանդ եղեն:
Ո՞ տարցէ զիս՝ ի քաղաք ամուր, կամ
ո՞ առաջնորդեսցէ ինձ մինչեւ յեղով-
մէ :

Եթէ ոչ դու աստուած, որ մերժե-
ցեր զմեզ. և ոչ ելեր աստուած ընդ
զօրս մեր :

Տուր մեզ օգնութիւն ՚ինեղութեան,

զի սուտ է փրկութիւն մարդոյ:
Եստուծով արասցուք զօրութիւն. և
նա յամօթ արասցէ զթշնամիս մեր:

Տունք ՓԴ:

ՍԱՂՄՈՍ ՃԸ.

Ի հարաբո՞ծ : Աաշխա գառակի :

Եստուած օրհնութեան իմոյ մի՛ լոեր,
զի բերան մեղաւորի՝ բերան նենդա-
տորի բացաւ ՚ի վերայ իմ :

Խօսեցան զինէն լեզուաւ նենդաւորաւ,
և բանիւ ատելութեան պաշարեցին զիս:
Մարտեան ընդիս ՚ի տարապարտուց .
փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս,
այլ ես յաղօթս կայի:

Հատուցին ինձ չար փոխանակ ընդ-
բարւոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ
իմոյ:

Կացո ՚ի վերայ նորա մեղաւոր. սա-
տանայ կացցէ ընդ անմէ նորա:
Ի դատաստանէ իւրմէ ելցէ դատա-
պարտեալ, և աղօթք նորա ՚ի մեղս
դարձցին:

Եղիցին աւուրք նորա նուազ, և զայ-
ցելութիւն նորա զայն այլ տարցէ:
Եղիցին որդիք նորա որբ, և կին նո-

բա այրի . սահեսցին փոփոխեսցին . որդիք նորա մուրողք եղեցին , և ելցեն
՚ի բնակութենէ խրեանց :
Վհննեսցէ փոխատու զամենայն ինչս
նորա . և յափշտակեսցեն օտարք ըզ-
վաստակս նորա :

ՄԵ' գտցի օգնական նմա . և մի' ոք
ողորմեսցի ՚ի վերայ որբոց նորա :
Եղեցին որդիք նորա ՚ի սատակումն ,
և յազգէ Ծնծեսցի անուն նորա :
Յիշեսցին մեղք հօր նորա առաջի
տեառն . և մեղք մօր նորա մի' Ծնծե-
սցին , և եղեցին առաջի տեառն յամե-
նայն ժամ :

Սատակեսցի յերկրէ յիշատակ նորա ,
փոխանակ զի ոչ յիշեաց առնել զո-
ղորմութիւն :

Հալածեաց զայր աղքատ և զտնանկ .
սպանանել զայն , որ խոնարհ է սրտիւ :
Միրեաց զանէծո՝ և ելցէ նմա . ոչ կա-
մեցաւ զօրհնութիւն , հեռի եղեցի ՚ի
նմանէ :

Օգեցաւ զանէծո որպէս հանդերձ .
մտցէ որպէս ջուր ՚ի փոր նորա . և որ-
պէս ձեթ ընդ ոսկերս նորա :
Եղեցի նմա որպէս հանդերձ զի ա-

գանի, որպէս գօտի՝ որ ածի հանաւ
պլազ ընդ մէջ :

Եյս գործ է այնոցիկ, ոյք չարախօս
կային զինէն առ տէր, և ոյք խօսէին
չար զանձնէ իմմէ :

Եյլ դու տէր տէր՝ արա ընդ իս ըստ
անուան քում, զի քաղցր է ողորմու-
թիւն քո. և փրկեա զիս, զի աղքատ
և տնանկ եմ ես :

Սիրտ իմ խոռվեցաւ ՚ի փորի իմում .
և ես որպէս ստուեր ՚ի խուսափիլ ի-
մում պակասեցայ, և թօթափիեցայ
որպէս մարախ :

Ծառնկք իմ տկարացան ՚ի պահոց, և
մարմին իմ այլագունեցաւ յիւղոյ :

Եղէ ես նախատ նոցա. տեսին զիս՝ և
շարժեցին զգլուխո իւրեանց :

Օգնեա ինձ տէր աստուած իմ, և
փրկեա զիս ըստ ողորմութեան քում :

Ծանիցեն զի ձեռն քո այս է, և դու
տէր արարեր զայս :

Եռքա անիծանեն, և դու օրհնեսցես.
ոյք յարուցեալ են ՚ի վերայ իմ, զա-
մօթ կրեսցեն. այլ ծառայ քո ուրախ
եղիցի ՚ի քեզ :

Օգեցցին զամօթ՝ ոյք չարախօս կա-

յին զանձնէ իմմէ . և արկցեն որպէս
կրկնոց զամօթ իւրեանց զիւրեամբ.ը :
Այլ ես խոստովան եղէց առ տէր յոյժ
բերանով իմով . և 'ի մէջ բազմաց օր-
հնեցից զքեզ :

Օ Ե եկաց նա ընդ աչմէ տնանկին , 'ի
փրկել զիս յայնցանէ՝ ոյք հալածեն
զանձն իմ :

Տունք Իւ :

ՍԱՂՄՈՍ ՃԹ :

Ի էաբարած . Աառնոս Դաս-Նէ :


Եսաց տէր ցտէր իմ , նիստ ընդ աչ-
մէ իմմէ , մինչեւ եղից զթշնամիս քո
պատուանդան ոտից քոց :
Գաւազան զօրութեան առաքեսցէ
քեզ տէր 'ի սիօնէ , և տիրեսցես դու-
'ի մէջ թշնամեաց քոց :

Ծնդ.քեզ է սկիզբն աւուրցզօրութեան
'ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ
յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ :
Երդուաւ տէր և ոչ եւս զզջասցի , թէ
դու ես քահանայ յաւիտեան ըստ կար-
դին մելքիսեղեկի , և տէր ընդ աչմէ
քումմէ :

Խորտակեսցէ յաւուր բարկութեան

զԹագաւորս . դատէ զհեթանոսս , և
բազում առնէ զհարուածս , և խոր-
տակեսցէ զգլուխս բազմաց յերկրի :
Զուղիս 'ի ճանապարհի արբուսցէ .
վասն այսորիկ և բարձր արասցէ զգը-
լուխս :

ՏԱՆՅՑ Զ : ԳՐՈՂԱՎԱ ԽԸ :



ՍԱԿՄՈՍ ՃՒ :

ԵՒՀԵՆԻ :

Խոստովան եղէց քեզ տէր բոլորով
սրտիւ խմով , 'ի խորհուրդս ուղղոց 'ի
ժողովուրդս մեծ են գործք տեառն , և
քննեալ են յառենայնի կամք նորա :
Խոստովանութիւն և վայելչութիւն են
գործք նորա . արդարութիւն նորա մը-
նայ յաւիտեանս յաւիտենից :

Յիշատակ արար սրանչելեաց իւրոց
ուղղոց . ողորմած գթած է տէր , կե-
րակուր տայ երկիւղածաց իւրոց :
Յիշեաց յաւիտենից զուխտ իւր . զզօ-
րութիւն գործոց իւրոց պատուիրեաց
ժողովրդեան իւրում :

Տալ նոցա զժառանգութիւն հեթա-

նոսաց. և գործք ձեռաց նորա արդա-
րութիւն և իրաւունք են :

Հաւատարիմ են յամենայնի պատուի-
րանք նորա . հաստատեալ են յաւի-
տեանս յաւիտենից . արարեալ են Ճըշ-
մարտութեամբ և ուղղութեամբ :
Փրկութիւն առաքեաց տէր ժողովը-
դեան իւրում . պատուիրեաց յաւիտե-
նից զուխտ իւր . սուրբ և ահեղ է ա-
նուն նորա :

Ակիզեն զգօնութեան երկիւղ տեառն .
իմաստութիւն բարի ամենեցուն՝ ոյք
առնեն զնա . և օրհնութիւն նորա մը-
նայ յաւիտեանս յաւիտենից :

Տառնք 2.

ՍԱՂՄՈՍ ՃՒԱ :

Եւելուիս . ՚ի վերայ ապաշխարութեան լոնիւայ
և օչատորքեայ :

Երանեալ է այր՝ որ երկնչի ՚ի տեառ-
նէ , զպատուիրանս նորա նա կամի
յոյժ :

Հզօր եղիցի յերկրի զաւակ նորա , և
ազգ ուղղոց օրհնեսցի :
Փառք և մեծութիւն են ՚ի տան նո-

րա . արդարութիւն նորա մնայ յաւի-
տեանս յաւիտենից :

Օագեաց՝ ի խաւարի լոյս ուղղոց . ո-
ղորմած զթած և արդար է տէր :

Քաղցր այր ողորմի և տայ փոխ . յօ-
րինէ զբան իւր՝ ի դատաստանի , զի
յաւիտեան նա մի՛ սասանեսցի :

Յիշատակ յաւիտենից եղիցի արդարն .
'ի համբաւէ չարէ նա մի՛ երկիցէ :

Պատրաստ է սիրտ նորա յուսալ առ-
աստուած :

Հաստատեալ է սիրտնորա . և նա մի՛
երկիցէ մինչև տեսցէ՝ ի թշնամիս իւր :
Սփուեաց՝ և ետ աղքատաց . արդա-
րութիւն նորա մնայ յաւիտեանս յա-
ւիտենից . և եղջիւր նորա բարձր եղի-
ցի փառօք :

Մեղաւորն տեսցէ և բարկասցի , զա-
ամունս իւր կրծտեսցէ և հալեսցի .
և ցանկութիւն մեղաւորաց կորիցէ :

Տունք Ժ :

ԱՆԴՐՈՍ Ճ.Բ. :

Ա.Հ.Յ.:

Օրհնեցէք մանկունք զտէր . և օրհնե-
ցէք զանուն տեառն :

Եղեցի անուն տեառն օրհնեալ յայսմ-
հետէ մինչև յաւիտեան :

Յարեւեից մինչև՝ ՚ի մուտս արեւու
օրհնեալ է անուն տեառն :

Բարձր է ՚ի վերայ ամենայն ազգաց
տէր, և յերկինս են փառք նորա :
Ո՞վ է որպէս տէր աստուած մեր ՚ի
բարձունս ընակեալ, և զխոնարհս տե-
սանէ յերկինս և յերկրի :

Յարուցանէ զաղքատս յերկրէ, և
բարձր առնէ զտառապեալս յաղբեւաց:
Նստուցանէ զնոսա իշխանս ընդ իշ-
խանս ժողովրդեան իւրոյ :
Ծնակեցուցանէ զամուլն ՚ի տան ուրա-
խամիտ, որպէս մայր որդւովք բեր-
կրեալ :

ՏԱՐԱՆՔ Է :

ՍԱՂՄՈՍ ՃԵԳ :

ԵՐԵՒԵԼ :

Յելանելն իսրայէի յեզիպտոսէ
տանն յակոբայ ՚ի ժողովրդենէ այլազ-
գեաց :

Եղեւ հրէաստան սրբութիւն նորա, և
իսրայէլ իշխանութիւն նորա :

‘Օսվ ետես և փախեաւ և յորդա-
նան անդրէն դարձաւ :

Երինք ցնծասցեն որպէս խոյք , և
բլուրք որպէս գառինք մաքեաց :
Օֆէ քեղ ծով, զո՞ տեսեր և փա-
խեար . կամ դու յորդանան՝ զի՞ դար-
ձար անդրէն :

Երինք ցնծացէք որպէս խոյք , և բլ-
լուրք որպէս գառինք մաքեաց :

Յերեսաց տեսոն սասանեցաւ երկիր ,
յերեսաց աստուծոյ յակորայ :

Ո դարձոյց զվեմն ’ի վտակս ջուրց , և
զապառաժն յաղըերակոնս :

Մի՛ մեզ տէր՝ մի՛ մեզ, այլ անուան
քում տուր զիառս վասն ողորմու-
թեան և Ճշմարտութեան քոյ :

Մի՛ երրէք ասասցեն ’ի հեթանոսս, թէ
ուր է աստուած նոցա :

Սստուած մեր յերկինս և յերկրի, զա-
մենայն զոր ինչ կամեցաւ՝ և արար .
Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ-
են, ձեռագործ են որդւոց մարդկան :
Յերան ունին, և ոչ խօսին . աչս ու-
նին, և ոչ տեսանեն :

Եկանջս ունին, և ոչ լսեն . ունչս ու-
նին, և ոչ հոտոտեն :

Զեռս ունին, և ոչ շօշափին . ուստ ու-
նին, և ոչ գնան . և ոչ գոյ բարբառ-
՝ի կոկորդս նոցա :

Կման նոցա եղիցին՝ ոյք արարին ըզ-
նոսա, ամենեքեան ոյք յուսացեալ են
՝ի նոսա :

Տունն խրայէլի յուսացաւ՝ի տէր . օդ-
նական և ընդունող է նոցա :

Տունն ահարօնի յուսացաւ՝ի տէր .
օդնական և ընկերող է նոցա :

Երկիւղածք տեառն յուսացան՝ի տէր,
օդնական և ֆրկիչ է նոցա :

Յիշեաց զմեզ տէր և օրհնեաց զմեզ .
օրհնեաց տէր զտունն խրայէլի . օր-
հնեաց տէր զտունն ահարօնի :

Օրհնեաց տէր զերկիւղածս իւր, ըզ-
փոքրկունս և զմեծամեծս :

Յաւելցէ՝ի ձեզ տէր,՝ի ձեզ և յորդիս
ձեր :

Օրհնեալ էք դուք՝ի տեառնէ, որ ա-
րար զերկինս և զերկիր :

Երկինք երկնից տեառն են . և զերկիրս
ետ որդւոց մարդկան :

Ոչ թէ մեռեալք օրհնեացեն զքեզ
տէր, և ոչ ամենեքեան՝ ոյք իջանեն
՝ի դժոխս :

Այլ կենդանիքս օրհնեսցուք զքեզ
տէր յայսմհետէ մինչեւ յաւիտեան :

Տունք 19. : Գորդայս ԾԲ :

ՍԱՎՄՈՍ ՃԵՒ :

ԵԼԵՒ-Է :

Ոիրեցի զի լուիցէ տէր զձայն աղօթից
իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ
իս, և ես յաւուրս իմ կարդացի առ
նա:

Եքջեցան զինեւ երկունք մահու, և
վիշտք դժոխոց գտին զիս:

Օնեղութիւն և զանձկութիւն գտի,
և զանուն տեառն կարդացի:

Ո տէր փրկեա զանձն իմ. ողորմած
աստուած մեր ողորմի և պահէ զոր-
ղայս տէր:

Ես խոնարհ եղէ և տէր կեցոյց զիս.
զարձ անձն իմ 'ի հանգիստ քո, զի
տէր օդնեաց քեզ:

Փրկեաց զանձն իմ 'ի մահուանէ, զաշս
իմ յարտասուաց, և զոտս իմ 'ի զայ-
թակղութենէ, հաճոյ եղէց առաջի
տեառն յերկրին կենդանեաց:

Տունք Զ:

ՍԱԴՄՈՍ ՃԺԵ.

Վ.Լ.Է.Լ.:

Հաւատացի զոր և խօսեցայ, և ես խոսնարհ եղէ յոյժ :

Ես ասացի 'ի զարմանալ իմում, թէ ամենայն մարդ սուտ է :

Օ ի՞նչ տաց տրիտուր տեառն ընդ ամենայնի՝ զոր և ետ ինձ :

Օ բաժակ փրկութեան ընկալայց, և զանուն տեառն կարդացից :

Օ աղօթս իմ տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեան նորա :

Պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց . ո՞ տէր ես ծառայ քո եմ, ծառայ և որդի աղախնոյ քո :

Հատեր զկապանս իմ . քեզ մատուցից պատարագ օրհնութեան, և զանուն տեառն կարդացից :

Օ աղօթս իմ տեառն տաց առաջի ամենայն ժողովրդեան նորա, 'ի գաւիթս տան տեառն, և 'ի մէջ քո երուսաղէմ :

ՍԱՂՄՈՍ ՃԺ. •

ԱԼԵԼՅ-Է- :

Օրհնեցէք զտէր ամենայն աղինք . դո-
վեցէք զնա ամենայն ժողովուրդք :
Զօրասցի ողորմութիւն նորա ՚ի վերայ
մեր . և Ճշմարտութիւն տեառն մնաս-
ցէ յաւիտեան :

ՏՊՆՔ Բ :

ՍԱՂՄՈՍ ՃԺ. •

ԱԼԵԼՅ-Է- :

Խոստովան եղերուք տեառն , զի բարի
է , զի յաւիտեան է ողորմութիւն նորա :
Եսասցէ տունն խրայէլի՝ զի յաւիտեան
է ողորմութիւն նորա :

Եսասցէ տունն ահարօնի՝ զի յաւի-
տեան է ողորմութիւն նորա :

Եսասցեն երկիւղածք տեառն՝ զի յա-
վիտեան է ողորմութիւն նորա :

Ենեղութեան խմում ես առ տէր կար-
դացի , և լուաւ ինձ յանդորր :

Տէր է իմ օգնական , և ես ոչ եր-
կեայց , զի՝ արասցէ ինձ մարդ :

Տէր է իմ օգնական , և ես տեսից ՚ի
թշնամիս իմ :

Բարի է յուսալ՝ ի տէր՝ քան յուսալ՝
՚ի մարդիկ. բարի է յուսալ՝ ի տէր՝
քան յուսալ յիշխանս:

Եմենայն աղինք շընեցան զինեւ, և ա-
նուամբ տեառն յաղթեցի նոցա:

Եթելով շընեցան զինեւ, և պաշարե-
ցին զիս՝ ի միասին. և անուամբ տեառն
վանեցի զնոսա:

Շուրջ եղեն զինեւ որպէս մեղուք,
վառեցան բորբոքեցան որպէս փուշք
՚ի հուք. և անուամբ տեառն մերժեցի
զնոսա:

Դմերժեն դրդուեցայ, և եղէ մերձ՝ ի
գլորիլ. և տէր ընկալաւ զիս:

Զօրութիւն իմ և օդնութիւն իմ
տէր, և եղեւ ինձ՝ ի փրկութիւն:

Չայն ցնծութեան փրկութեան՝ ի
յարկս արդարոց:

Եջ տեառն արար զօրութիւն, աջ
տեառն բարձր արար զիս, և աջ տեառն
արար զօրութիւն:

Ոչ մեռայց, այլ կեցից և պատմեցից
զդորձս տեառն:

Խրատելով խրատեաց զիս տէր, և՝ ՚ի
մահ ոչ մատնեաց:

Բացէք ինձ զդորձնս արդարութեան,

զի մտից ընդ այն, և խոստովան եղէց
տեառն :

Եյս գուռն տեառն է, և արդարք մը-
տանեն ընդ սա :

Խոստովան եղէց քեզ տէր, զի լուար
ինձ, և եղեր ինձ՝ ի փրկութիւն :

Ա էմն զոր անարդեցին շինողքն, նա
եղեւ գլուխ անկեան :

Ի տեառնէ եղեւ այս, և է սքանչելի
առաջի աշաց մերոց :

Եյսօր է զոր արար տէր. եկայք ցըն-
ծասցուք և ուրախ եղիցուք՝ ի սմա :

Ո տէր փրկեա, ո տէր առաջնորդեա.
օրհնեալ որ դալոց ես յանուն տեառն,

և օրհնեցաք զքեզ՝ ի տանէ տեառն :

Տէր աստուած մեր երեւեցաւ մեզ. ա-
րարէք տօնս ուրախութեան կանխաւ,
մինչեւ յանկիւնս սեղանոյ :

Սստուած իմ ես դու՝ և խոստովան
եղէց քեզ. աստուած իմ ես դու՝ և
բարձր արարից զքեզ :

Խոստովան եղէց քեզ տէր՝ զի լուար
ինձ, և եղեր ինձ՝ ի փրկութիւն :

Խոստովան եղերուք տեառն զի բարի
է, զի յաւիտեանէ ողորմութիւն նորա :

ՍԱՂՄՈՍ ՃԺԷ.

Եւելուն:

Երանեալ են անբիծք ՚ի ճանապարհի, և ոյք գնան յօրէնս տեառն :
Երանի ոյք քննեն զվկայութիւնս նորա, բոլորով սրտիւ իւրեանց խնդրեսցեն զնա :

Ոչ թէ ոյք գործեն զանօրէնութիւն,
՚ի ճանապարհս նորա զնասցեն :

Դու պատուիրեցեր զպատուիրանս քո
՚ի պահել ինձ յոյժ :
Երանի թէ յաջողեալ էին ինձ ճանապարհը իմ՝ ՚ի պահել ինձ զարդաթիւնս քո :

Խոստովանեղէց քեղտէր յուղղութիւն
սրտի իմոյ, որպէս ուսաց զերաւունս
արդարութեան քո :

Օ իրաւունս քո պահեցի, մի՛ թողուք
զիս մինչ իսպառ :

Ի՞ւ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր, այլ ՚ի պահել զբանս քո :
Խոլորով սրտիւ իմով իննդրեցի զքեզ,
մի՛ մերժեր զիս ՚ի պատուիրանաց քոց :
Ի սրտի իմում թագուցի զբանս քո,

որպէս զի մի՛ մեղայց քեզ :
Օրհնեալ ես դու տէր, ուսո ինձ զար-
դարութիւնս քո :

Եթամբք իմովք պատմեցից զամե-
նայն իրաւունս բերանոյ քո :

Ե Ճանապարհս վկայութեանց քոց
զուարծացայ, որպէս յամենայն ՚ի մե-
ծութեան :

Ե պատուիրանս քո հոգացայ . և զգու-
շացայ ՚ի Ճանապարհս քո :

Օ իրաւունս քո խօսեցայ, և ոչ մոռա-
ցայ զբանս քո :

Հասո ծառայի քում, զի կեցից և
պահեցից զբանս քո :

Օ արթո զաչս իմ, և նայեցայց ՚ի ըս-
քանչելիս օրինաց քոց :

Պանդուխտ եմ ես յերկրի, մի՛ թա-
գուցաներ յինէն զպատուիրանս քո :

Փափաքեաց անձն իմ ՚ի ցանկալ ինձ
յիրաւունս քո յամենայն ժամ :

Սաստեցեր ամբարտաւանից . անիծեալ
ոյք խոտորեցան ՚ի պատուիրանաց քոց:
Ե բաց արա յինէն զնախատինս և զար-
համարհանս, զի զվկայութիւնս քո
իննդրեցի :

Քանզինստան իշխանք և չարախօսէին

զինէն . այլ ծառայ քո խորհէր յիրաւ-
տունս քո :

Օ ի վկայութիւնք քո խօսք իմ էին ,
և խորհուրդք իմ արդարութիւն քո :
Մերձեցաւ անձն իմ 'ի հող , տէր կե-
ցո զիս ըստ բանի քում :

Օ ճանապարհս քո պատմեցի քեզ՝ և
լուար ինձ , ուսո ինձ զարդարութիւնս
քո :

Ի ճանապարհս արդարութեանց քոց
իմաստուն արա զիս , և քննեցից զըս-
քանչելիս քո :

Տքնեցաւ անձն իմ առ 'ի ճանձրանալ .
Հաստատեա զիս 'ի բանս քո :

Օ ճանապարհս մեղաց 'ի բաց արա
յինէն , և յօրէնս քո ողորմեա ինձ :
Օ ճանապարհս ճշմարտութեան քո
ընտրեցի , և զիրաւունս քո ես ոչ մո-
ռացայ :

Մերձեցայ ես 'ի վկայութիւնս քո , տէր
մի' յամօթ առներ զիս :

Ի ճանապարհս պատուիրանաց քոց
ընթացայ , զի անդորր արարեր սրտի
իմոյ :

Օրէնսգէտ արա զիս տէր 'ի ճանա-
պարհս իրաւանց քոց , և ինդրեցից

զնա յամենայն ժամ։
 Խմաստուն արա զիս . և քննեցից զօ-
 րէնս քո , և պահեցից զնա բոլորով
 սրտիւ իմով։
 Եռաջնորդեա ինձ ՚ի շատիզ պատուի-
 րանաց քոց , զի ընդ նոսա հաճեցայ։
 Խոնարհեցո զսիրտ իմ ՚ի վկայութիւնս
 քո , և մի՛ յագահութիւն։
 Դարձո զաշս իմ , զի մի՛ տեսից ըդ-
 նանրութիւն . ՚ի ճանապարհս քո կե-
 ցո զիս։
 Հաստատեա ծառայի քում զբան քո
 յերկիւղ քո։
 Հան յինէն զնախատինս , զոր և կար-
 ծեցի . զի դատաստանը քո քաղցր էն։
 Եհա ցանկացայ պատուիրանաց քոց .
 յարդարութեան քում կեցո զիս։
 Եկեցէ ՚ի վերայ իմ ողորմութիւն քո
 տէր , և փրկութիւն քո ըստ բանի
 քում։
 Տաց պատասխանի ոյք նախատեն զիս
 բանիւք . զի ես ՚ի բանս քո յուսացայ։
 Մի՛ ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ իմ-
 մե , զբան ճշմարտութեան մինչեւ յոյժ ,
 զի յիրաւունս քո յուսացայ։
 Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ ,

յաւիտեան և յաւիտեանս յաւիտե-
նից :

Գնայի ես յանդորրու, զի պատուի-
րանս քո խնդրեցի :

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թա-
գաւորաց, և ոչ ամաչէի :

Խորհէի ՚ի պատուիրանս քո, զոր սի-
րեցի :

Համբարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս
քո զոր սիրեցի, և խորհէի յարդա-
րութեան քում :

Յիշեա ղըան ծառայի քո, յոր և յու-
սացուցեր զիս :

Սա մխիթարեացէ զիս ՚ի խոնարհու-
թեան իմում. զի բան քո կեցոյց զիս :
Եմբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ-
այլ յօրինաց քոց ես ոչ խոտորե-
ցայ :

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից
տէր, և մխիթարեցայ :

Տրտմութիւն կալաւ զիս ՚ի մեղաւո-
րաց, և ոյք թողին զօրէնս քո :
Գովելի են ինձ իրաւունք քո ՚ի տեղ-
ւոջ պանդիտութեան իմոյ :

Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո տէր, և
պահեցի զօրէնս քո :

Սա եղեւ ինձ ճանապարհ՝ ի կեանս,
զի զարդարութիւնս քո խնդրեցի :

Ցունք ԾԶ :



ԱՆԴՐԵՅ :

Բաժին իմ ես դու տէր, ասացի պա-
հել ինձ զօրէնս քո :

Եղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ ի-
մով . ողորմեա ինձ ըստ բանի քում :
Խորհեցայ ՚ի ճանապարհս իմ, և դար-
ձուցի զոտս իմ ՚ի վկայութիւնս քո :
Պատրաստեցայ և ոչ խռովեցայ, զի
պահեցի զպատուիրանս քո :

Տոռունք մեղաց պատեցան զինեւ, այլ
զօրէնս քո ես ոչ մոռացայ :

Ե մէջ զիշերի յառնէի խոստովան
լինիլ առ քեզ, վասն իրաւանց և ար-
դարութեան քո :

Հաղորդ էի ես ամենայն երկիւղածաց
քոց . որոց պահեալ էին զպատուի-
րանս քո :

Ողորմութեամբ տեառն լի եղեւ եր-
կիր . զարդարութիւնս քո ուսո ինձ :
Քաղցրութիւն արարեր ընդ ծառայի

քում տէր ըստ ըանի քում։
Օքաղցրութիւն, զիրատ և զգիտու-
թիւն ուստինձ, զի ՚ի պատուիրանս
քո ես հաւատացի։

Մինչեւ խոնարհեալ էի ես՝ մեղայ։
վասն այսորիկ զբանս քո պահեցի յոյժ։
Քաղցր ես դու տէր, և քաղցրու-
թեամբ քով ուստինձ զարդարու-
թիւնս քո։

Ըաղմացան յիս անիրաւութիւնք ամ-
բարտաւանից. այլ ես բոլորով սրտիւ-
իմով քննեցի զպատուիրանս քո։
Մածան որպէս կաթն սիրով նոցա։

այլ ես զօրէնս քո խօսեցայ։
Բարի է ինձ զի խոնարհ արարեր զիս,
որպէս ուսայց զարդարութիւնս քո։
Բարի են ինձ օրէնք բերանոյ քո, քան
զհազարս ոսկոյ և արծաթոյ։
Չեռք քո արարին և ստեղծին զիս,
խմաստուն արա զիս, և ուսայց զպա-
տուիրանս քո։

Երկիւղածք քո տեսցեն զիս և ուրախ
եղիցին, զի ես ՚ի բանս քո յուսացայ։
Օանեայ տէր զի արդարութեամբ են
դատաստանք քո. յիրաւի խոնարհեա-
ցուցեր զիս։

Եղիցի ողորմութիւն քո 'ի մխիթա-
 րել զիս, ըստ բանի քում զծառայս քո :
 Եկեսցեն յիս դժութիւնք քո՝ և կե-
 ցից, զի օրէնք քո խօսք իմ էին :
 Սմաչեսցեն ամբարտաւանք՝ որք 'ի
 տարապարտուց անիրաւեցան յիս . այլ
 ես հոգացայ 'ի պատուիրանս քո :
 Խրատեսցեն զիս երկիւղաձք քո, և
 ոյք ճանաչեն զվկայութիւնս քո :
 Եղիցի սիրտ իմ անրիծ յարդարու-
 թեան քում, զի մի՛ ամաչեցից :
 Կարօտացաւ անձն իմ 'ի փրկութիւնս
 քո, զի ես 'ի բանս քո յուսացայ :
 Սպասեցին աչք իմ բանի քում . ա-
 սացի՝ ե՞րբ մխիթարեսցէ զիս :
 Եղէ ես որպէս տիկ 'ի պարզի, զի զար-
 դարութիւնս քո ես ոչ մոռացայ :
 Բանի՝ ինչ են աւուրք ծառայի քո .
 Ե՞րբ արասցես ինձ իրաւունս 'ի հալած-
 չաց իմոց :
 Պատմեցին ինձ անօրէնք զխորհուր-
 դըս, այլ ոչ որպէս զօրէնս քո :
 Սմենայն պատուիրանք քո ճշմարիտ
 են . 'ի նանիր հալածեցին զիս, օդնեա
 ինձ .
 Փոքր մի եւս և կորուսանէին զիս

յերկրի . այլ ես ոչ թողի ղպատուի-
րանս քո :

Ըստ ողորմութեան քում կեցո զիս , և
պահեցից զվկայութիւնս բերանոյ քոյ :
Յաւիտեան տէր բան քո կայ յերկի-
նըս , ազգէ մինչև յազգէ ծշմարտու-
թիւն քո :

Հաստատեցեր զերկիր և կայ :
Հրամանի քում մնայ տիւ , զի ամե-
նեքեան ծառայք քո են :
Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին , կան-
խաւ եւս արդեօք կորուսեալ էի ՚ի խո-
նարհութեան իմում :

Յաւիտեան ոչ մոռացայց զարդարու-
թիւնս քո , զի նոքօք կեցուցեր զիս :
Քո եմ ես և կեցո զիս , զի զարդա-
րութիւնս քո խնդրեցի ,
Ինձ սպասեցին մեղաւորք ՚ի կորուսա-
նել , զի զվկայութիւնս քո ես ՚ի միտ
առի :

Յամենայն կատարածի տեսի զվախ-
ճան . յոյժ անդորր էին ինձ սպատուի-
րանք քո :

Արակէս սիրեցի զօրէնս քո , զօրհանա-
պաղ խօսք իմ էին :
Քան զթշնամիս իմ իմաստուն արա-

ըեր զիս՝ ՚ի պատուիրանս քո, զի յա-
փտեան իմ էին :

Քան զամենայն ուսուցիչս իմ իմաս-
տուն եղէ, զի վկայութիւնք քո խօսք
իմ էին :

Քան զծերսն իմաստուն եղէ, զի ըզ-
պատուիրանս քո քննեցի :

Յամենայն ճանապարհաց չարաց ար-
դելի զոտս իմ, որպէս զի պահեցից ըզ-
բանս քո :

Ծիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ, զի
դու օրէնսգէտ արարեր զիս :

Որպէս զի քաղցր են ՚ի քիմն իմ բանք
քո՝ քան զմեղը բերանոյ իմոյ :

՚ պատուիրանաց քոց իմացեալ ատե-
ցի զամենայն ճանապարհս չարաց, զի
դու օրէնսգէտ արարեր զիս :

Շրագ են բանք քո ոտից իմոց, և լոյս
տան շաւղաց իմոց :

Երդուայ և հաստատեցի, զի պահե-
ցից զամենայն իրաւունս արդարու-
թեան քո :

Խոնարհ եղէ մինչև յոյժ տէր կեցո
զիս ըստ բանի քում :

Ըսդ կամս բերանոյ իմոյ հաճեա տէր,
և զիրաւունս քո ուսո ինձ :

Ենձն իմ՝ ի ձեռս քո է յամենայն ժամ,
և զօրէնս քո ես ոչ մոռացայ:
Եղին ինձ մեղաւորք որոգայթ.՝ ի պա-
տուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ:
Ժառանգեցի զվկայութիւնս քո յա-
ւիտեան, զի ցնծութիւն է սրտի իմոյ:
Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զար-
դարութիւնս քո յաւիտեան վասն հա-
տուցման,

Օանօրէնս ատեցի, և զօրէնս քո սի-
րեցի:

Օգնական և փրկիչ իմ ես դու, և ես
՚ի բանս քո յուսացայ:
Երաց եղերուք յինէն չարք, և քննե-
ցից զպատուիրանս աստուծոյ իմոյ:
Օգնեա ինձ ըստ բանի քում և կեցո
զիս, և մի՛ յամօթ առներ զիս՝ ի յու-
սոյ իմմէ:

Օգնեա ինձ և ապրեցո զիս, և խոր-
հեցայց յիրաւունս քո յամենայն ժամ:
Ենարգեցեր զամենեսեան՝ որք ապլու-
տամբք եղեն յարդարութեանց քոց.
զի անիրաւութեամբ էին խորհուրդք
նոցա:

Յանցաւորս համարեցայ զամենայն մե-
ղաւորս երկրի. վասն այսորիկ սիրեցի

զպատուիրանս քո :

Ըսեռեա ընդ երկիւղ քո զմարմին իմ,
զի՞ դատաստանաց քոց երկեայց յոյժ,

Տունք ԿԴ :

Ավելուկ :

Երարի իրաւունս և արդարութիւն. մի՛
մատներ զիս 'ի ձեռս նեղչաց իմոց:
Ընկալ զծառայս քո 'իրարի, զի մի՛ ամ-
բարտաւանք զզուեսցեն զիս :

Սպասեցին աչք իմ փրկութեան քում
տէր, և բանից արդարութեան քո :
Երա ընդ ծառայի քում տէր ըստ ո-
ղորմութեան քում . զարդարութիւնս
քո ուսո ինձ :

Ծառայ քո եմ ես, իմաստուն արա
զիս, և ծանեայց զվկայութիւնս քո :
Ժամ է պաշտել զտէր . խախանեցին
զօրէնս քո :

Վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս
քո քան զամենայն ոսկի և զտպաղիոն :
Եմենայն սպատուիրանք քո յաջողե-
ցան ինձ, զի ատեցի ես զճանապարհս

չարաց :

Սքանչելի են վկայութիւնք քո, վասն

այսորիկ սիրեաց զնոսա անձն իմ։
Յայտնութիւն բանից քոց լուսաւոր և
իմաստուն առնէ զտղայս։
Կայեա առիս և ողորմեա ինձ ըստ ի-
րաւունս սիրողաց անուան քո։
Օչանապարհս իմ ուղիղ արա ինձ
ըստ բանի քում, և մի՛ տիրեսցեն ինձ
ամենայն մեղք։

Փրկեա զիս 'ի զրպարտութենէ մարդ-
կան, և պահեցից զպատուիրանս քո։
Երեւեցո զերեսս քո 'ի ծառայս քո, և
ուսո ինձ զարդարութիւնս քո։
Վտակք չուրց իջեն յաշաց իմոց, զի
ոչ պահեցին զօրէնս քո։
Երդար ես դու տէր, և ուղիղ են դա-
տաստանք քո։

Պատուիրեցեր զարդարութիւն վկա-
յութեանց քոց, և ծշմարիտ են յոյժ։
Մաշեաց զիս նախանձ քո, զի մոռա-
ցան զբանս քո թշնամիք իմ։
Հնարեալ է բան քո յոյժ, և ծառայ
քո սիրեաց զսա։

Մանուկ եմ ես և արհամարհեալ, և
զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։
Երդարութիւն քո արդարութիւն յա-
ւիտենից, և օրէնք քո ծշմարիտ են։

‘Սեղութիւնք և վիշտիք գտին զիս, և
պատուիրանք քո խօսք իմ էին։
Երդարութեամբ են վկայութիւնք քո
յաւիտեան. իմաստուն արա և կեցո
զիս։’

Արդացի առ քեզ բոլորով սրտիւ ի-
մով. լուր ինձ տէր, զի զարդարու-
թիւնս քո խնդրեցի։

Եղաղակեցի առ քեզ՝ և փրկեա զիս, և
պահեցից զվկայութիւնս քո։

Կանխեցի տարաժամու, աղաղակեցի,
և ես ’ի բանս քո յուսացայ։
Կանխեցին աչք իմ առաւօտու ’ի խօ-
սիլ ինձ զբանս քո։

Զայնի իմում լուր տէր ըստ ողորմու-
թեան քում. և յիրաւունս քո կեցո
զիս։’

Մերձեցուցին յիս հալածիչք իմ զա-
նօրէնութիւն, զի յօրինաց քոց հեռի
եղեն։

Մերձ ես դու տէր, և ամենայն պա-
տուիրանք քո ճշմարիտ են։
Եսկզբանէ ծանեայ ’ի վկայութեանց
քոց, զի յաւիտեան հաստատեցեր ըլ-
նոսա։’

Տես զիսոնարհութիւն իմ և փրկեա

զիս, զի զօրէնս քո ես ոչ մոռացայ: Դատեա զդատաստանս իմ և փրկեա
 զիս, և բատ բանի քում կեցո զիս: Հեռի է ՚ի մեղաւորաց փրկութիւն, զի
 զիրաւունս քո ոչ պահեցին: Գթոթիւնք քո բազում են տէր, և
 բատ իրաւանց քոց կեցո զիս: Բազում են, որք հալածեն և նեղեն
 զիս. ՚ի վկայութեանց քոց ես ոչ խո-
 տորեցայ: Հայէի յանագորոյնս և մաշէի, զի ըդ-
 պատուիրանս քո ոչ պահեցին: Տես՝ զի զպատուիրանս քո սիրեցի.
 տէր՝ ողորմութեամք քո կեցո զիս: Սկիզբն բանից քոց ճշմարտութիւն է.
 յաւիտեան են ամենայն իրաւունք ար-
 դարութեան քո: Եշխանք հալածեցին զիս ՚ինանիր, և
 ՚ի բանից քոց երկեաւ սիրտ իմ:
 Յնծացայ ես ՚ի բանս քո, որպէս այն
 որ գտանէ աւար բազում:
 Օմեղս ատեցի և անարգեցի, և զօ-
 րէնս քո սիրեցի:
 Եթէն անգամ յաւուր օրհնեցից ըդ-
 քեզ վասն իրաւանց և արդարութեան
 քո:

Խաղաղութիւն բազում է այնոցիկ ոյք
սիրեն զօրէնս քո, և ոչ գոյ ՚ինոսա
գայթակղութիւն :

Սպասեցի փրկութեան քում տէր, և
զպատուիրանս քո սիրեցի :

Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո,
և սիրեաց զնոսա յոյժ :

Պահեցից զպատուիրանս և զվկայու-
թիւնս քո, զի ամենայն ճանապարհք
իմ առաջի քո են :

Մերձեսցին ինդրուածք իմ առաջի քո
տէր, ըստ բանի քում իմաստուն ա-
րա զիս :

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր, և
բանիւ քով փրկեա զիս :

Ըղխեսցեն շրթունք իմ զօրհնու-
թիւնս քո, յորժամ ուսուցես ինձ
զարդարութիւնս քո :

Խօսեսցի լեզու իմ զբանս քո, զի ամե-
նայն պատուիրանք քո արդարու-
թեամք են :

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս,
զի զպատուիրանս քո ընտրեցի :

Յանկացայ փրկութեան քում տէր, և
օրէնք քո խօսք իմ էին :

Աեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ. և ի-

բաւունք քո օգնեսցեն ինձ :
 Մոլորեցայ ես որպէս զոշխար կորու-
 սեալ . խնդրեա զծառայս քո , զի ըզ-
 պատուիրանս քո ես ոչ մոռացայ :

Տունք ԾԶ :

Կանոնս Գորդայս է : Սաղմոս ԺԴ :

Տունք ՅԿԲ :



ՕՐ ՀՆՈՒԹԵՒՆ ԵՍԱՑԵԱՑ

ԿԱՅԺԱԿԱՆԱՄԱՔՈՒՐ ՍՈՒՐԲ ՄԱՐԴԱՐԵՒՆ

ԵՐԱԿԵՐ ԽԲ :

Օրհնեցէք զաստուած յօրհնութիւն
 նոր , զի իշխանութիւն նորա ՚իրար-
 ջունս փառաւորի :

Եւ անուն նորա փառաւորեալ է ՚ի ծա-
 գաց մինչև ՚ի ծագս երկրի :

Ոյք իջանեին ՚ի ծովնաւուք , կղզիք և
 ամենայն ընակիչք նոցա ընդ նոսա :


Ուրախ եղիցի անապատն և ամենայն
 ընակիչք իւր . ուրախ եղիցին բանակք
 և բակք կեղարու , և ուրախ եղիցին
 ընակիչք վիմին :

Ես պէսոց լերանց գոշեսցեն , տացեն ըզ-

փառս աստուծոյ . և զքաջութիւննորա կղզիք պատմեսցեն :

Տէր աստուած զօրութեանց դիմեալ գայ զարթուցանել զպատերազմ , յարուցանել զնախանձ , փող հարկանել և գոչել 'ի վերայ թշնամեաց իւրոց զօրութեամբ բազմաւ :

Ուրախ եղիցին երկինք 'ի վերուստ , և ամպք ցողեսցեն զարդարութիւն : Բ զիսեսցէ երկիր զողորմութիւն և զարդարութիւն առ հասարակ բղիսեսցէ :



ԱՆՕԹՔ ՅՈՎԱՆԱՆՈՒ ՄԱՐԳԱՐԵՒՆ

Ի նեղութեան իմում ես առ տէր կարդացի . և լուաւ աստուած յանդնդոց դժոխոց աղաղակի իմում :

Լուր տէր ձայնի իմում , զի ընկեցեր զիս 'ի խորս ծովու , և շրջանք գետոց պաշարեցին զիս :

Եմենայն զքօսանք քո և ալիք քո անցին 'ի վերայ իմ . և ասացի , թէ մերժեցայ ուրեմն յերեսաց աչաց քոց :

Երդ իցէ թէ յաւելից հայիլ 'ի տաճար սուրբ քո . զի հեղան զինեւ ջուրք

մինչեւ յանձն իմ, և անդունդք ան-
հնարինք պաշարեցին զիս :

Եմուտ գլուխ իմ ընդ փապարս լերանց .
իջի ես 'ի խորս երկրի, և տեսի զնիգս
նորա, զի էին որպէս աղիսք յաւիտե-
նից . և ելցեն յապականութենէ կեանք
իմ :

Եռ քեզ տէր աստուած իմ 'ինուաղիլ
անձին իմոյ կարդացի, և զքեզ տէր
յիշեցի . և մտցեն աղօթք իմ 'ի տա-
ճար սուրբ քո :

Օի ոյք պահէին զունայնութիւն և
զստութիւն, յողորմութենէ իւրեանց
մերժեցան :

Եյլ ես 'ի ճայն օրհնութեան խոստո-
վան եղէց քեզ, մատուցից պատարա-
գըս տեառն, և կատարեցից զուխտ իմ
'ի փրկութեան :

Փառք հօր և որդւոյ և :


ՄԱՂԹԱՆՔ

Եկեսցեն աղօթք մեր 'ի տաճար սուրբ
քո . խոնարհեսցի ունկն քո 'ի խըն-
դրուածս մեր :

Մարդասէր տէր, վասն սրբուհւոյ աշ
նարատի մօր քոյ և կուսի, և վասն
խաչի քո պատուականի, ընկալ զա-
ղաչանս մեր, և կեցո զմեզ:

Օքտոսոն և շաբաթն է Աւրու Արեւ Նախանձիր Հանոնին
Քառշես է 123 Երեսն:





ՍԱՂՄՈՍ ՃՒԹ.

(Օբինութեան ասունաց :

Ի նեղութեան իմում ես առ տէր կարդացի, և լուաւ ինձ տէր ։ Փրկեաց զանձըն իմ ՚ի շրթանց նենդաւորաց և ՚ի

լեզուէ չարէ :

Օ ի՞ տացի քեզ՝ կամ զի՞նչ յաւելցի,
լեզու նենդաւոր :

Որպէս նետք հզօրի, զի միսեալ են կայծակամբք կաղնւոյ :

Վայ ինձ զի ընդ երկար եղեւ պանդըստութիւն իմ. և ընակեցայ ես ՚ի
վրանս կեղարու :

Բազում անդամ ընակեցաւ անձն իմ
ընդ այնոսիկ, ոյք ատէին զող ջոյն :
Ես էի խաղաղարար. յորժամ խօսէի,
մարտնչէին ընդ իս :



Աայ ինձ , զի ընդ երկար եղև պանդխտութիւն իմ :

ՍԱՂՄՈՍ ՃՒ.

Օբնութեան ասովինաց :

Համբարձի զաշս իմ՝ ՚ի լերինս, ուստի
եկեսցէ ինձ օգնութիւն :

Օգնութիւն ինձ՝ ՚ի տեառնէ եկեսցէ,
որ արար զերկինս և զերկիր :

Մի՛ տար ՚ի սասանութիւն զոտն քո,
և մի՛ ննջեսցէ պահապան քո :

Արպէս ոչ ննջէ և ոչ ՚ի քուն երթայ
պահապանն իսրայէլի :

Տէր պահեսցէ զքեզ, և տէր ընկալցի
աջոյ ձեռամբն իւրով :

Երեգակն ՚ի տուէ քեզ մի՛ մեղիցէ, և
մի՛ լուսին ՚ի գիշերի :

Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ,
պահեսցէ տէր զանձն քո :

Տէր պահեսցէ զմուտ և զել քո յայ-
սըմշետէ մինչև յաւիտեան :

Տունք ը:

ՍԱՂՄՈՍ ՃՒԱ.

Օբնութեան ասովինաց :

Աւրախ եղէ ես՝ ոյք ասէին ցիս, ՚ի տուն
տեառն երթիցուք մեք :

Հասեալ կային ոտք մեր առ դրունս
քո՝ երուսաղէմ:

Օ երուսաղէմ շինեալ որպէս քաղաք,
և բնակութիւն իւր շուրջ զնովաւ:
Անդ ելանէին ազգք ազգք տեառն. 'ի
վկայութիւն իսրայէլի խոստովան լի-
նիլ անուան տեառն:

Անդ արկեալ են աթոռք դատաստա-
նի, աթոռս արկեալ են 'ի տան
դաւթի:

Հարցէք զող չունէ երուսաղէմի, և ըզ-
շինութենէ՝ ոյք սիրէք զտէր:
Եղեցի խաղաղութիւն 'ի զօրութեան
քում, և շինութիւն յաշտարակս
յամուրս քո:

Ա ամ եղբարց և բնկերաց իմոց խօ-
սեցայ զխաղաղութիւն. վասն քոյ
և վասն տան տեառն աստուծոյ մերոյ
խնդրեցաք զբարութիւն 'ի քէն:

Տունք Ը:

ԽԵՂՄՈՍ ՃԻԲ.

ՕՐԻՆԱԿԻՒՆԻ+ ասոքի ճանապարհ :

Առ քեզ տէր համբարձի զաշս իմ,
որ բնակեալդ ես 'ի յերկինս:

Որպէս աչք ծառայի ՚ի ձեռն տեառն
իւրոյ, և որպէս աչք աղախնոյ ՚ի ձեռ-
որն տիկնոջ իւրոյ:

Եյնպէս են աչք մեր առ քեզ տէր
աստուած մեր, մինչեւ ողորմեացիս ՚ի
վերայ մեր:

Ողորմեա մեզ տէր ողորմեա մեզ, զե
բազում լցաք արհամարհանօք:
Եւս առաւել լցան անձինք մեր նա-
խատանօք, որք նախատէին զմեզ, և
արհամարհանօք ամբարտաւանից:

Տունք Ե :

ՍԱՂՄՈՍ ՃԻԴ.

ՕՇՀԱՆՈՒՅԻՆ + ասոքինաց :

Եթէ ոչ տէր էր առ մեզ, ասասցէ իս-
րայէլ, եթէ ոչ տէր էր առ մեզ:
Ընդ յառնել մարդկան ՚ի վերայ մեր,
կենդանւոյն կամեցան կլանել զմեզ:
Երարկանալ սրտմտութեամբ նոցա
՚ի վերայ մեր, ապա և չուրք ուրեմն ըն-
կրղմեցին զմեզ:

Ընդ ուղիսս անցին անձինք մեր. ան-
ցին անձինք մեր ընդ ուղիսս անդա-
դարս:

Օրհնեալ է տէր, որ ոչ ետ զմեզ յորս
ատամանց նոցա :

Ենձինք մեր ապրեցան որպէս Ճնձ-
դուկք՝ յորոգայթէ որսողաց :
Որոգայթք նոցա վշրեցան, և մեք ապ-
րեցաք :

Օգնութիւն է մեզ յանուանէ տեա-
ռըն, որ արար զերկինս և զերկիր :

Տ Ա Հ Մ Ո Ս Ճ Ի Դ :

ՍԱՂՄՈՍ ՃԻԴ :

Օրհնութիւնք սսոյինաց :

Ո յուսայ ՚ի տէր, որպէս լեառն սի-
օն, մի՛ սասանեսցի յաւիտեան՝ որ բը-
նակեալն է յերուսաղէմ :

Երինք շուրջ են զնովաւ. տէր շուրջ
է զժողովրդեամբ իւրով յայսմհետէ
մինչեւ յաւիտեան :


Աչ թողու տէր զգաւաղան մեղաւո-
րաց ՚ի վիճակս արդարոց. և արդարք
մի՛ ձգեսցեն զձեռս իւրեանց յանօրէ-
նութիւն :

Բարի առնէ տէր բարեաց, և այնոցիկ՝
ոյք ուղիղ են որտիւք :

Իսկ զթիւրեալսն ՚ի յափշտակութիւն,

տանի զնոսա տէր ընդ այնոսիկ ոյք
գործեն զանօրէնութիւն . խաղաղու-
թիւն 'ի վերայ խրայէլի :

Տունք Ե . Գորշայս Խ :



ՍԱՂՄՈՍ ՃԻԵ .

Օբնունիւն + առաջնոնաց :

Ի դարձուցանել տեառն զգերութիւն
սիօնի , և եղաք մեք մխիթարեալք :
Յայնժամ լցան բերանք մեր ինդու-
թեամբ և լեզուք մեր ցնծութեամբ :
Յայնժամ ասասցեն ՚ի հեթանոս ,
մեծ արար տէր զառնելն իւր ընդ նո-
սա , մեծ արար տէր զառնելն իւր ընդ
մեզ . և մեք եղաք բերկրեալք :
Դարձու տէր զգերութիւնս մեր որպէս
զուղիս ՚ի հարաւոյ . ոյք վարէին ար-
տասուօք , ցնծութեամբ հնձեսցեն :
Երթալով երթային և լային , ոյք
բարձեալ տանէին զսերմանսիս խրեանց :
Դալով եկեսցեն և ցնծասցեն , ոյք
առեալ բերիցեն զորայս խրեանց :

Տունք Զ :

ՍԱՂՄՈՍ ՃԻԶ .

(Օբնութեան + աստիճանաց :

Եթէ ոչ տէր շինէ զտունն, ՚ի նանիր
վաստակին շինողք նորա :
Եթէ ոչ տէր պահէ զքաղաքն, ըն-
դունայն տքնին պահապանք նորա :
Դնանիր է ձեզ յառնելն կանխաւ. արդ-
արիք մինչև էք ննջեցեալք, ոյք ու-
տէք զհաց ցաւոց :

Դժամանակի որպէս տացի քուն սի-
րելեաց իւրոց . ժառանգութիւն առն
որդիք են, որոյ վարձք իւր են, այն է
պտուղ որովայնի իւրոյ :

Որպէս նետք ՚ի ձեռոս հզօրի, այնովէս
են և որդիքն թօթափելոց :

Նըրանի որ ելից զցանկութիւն իւր ՚ի
նոցանէ . մի՛ ամաչեացեն յորժամ խօ-
սեսցին թշնամիք նոցա ընդ նոսա առ-
դրանն :

Տառնք 9 :

ՍԱՂՄՈՍ ՃԻԷ .

(Օբնութեան + աստիճանաց :

Նըրանի ամենեցուն՝ ոյք երկնչին ՚ի
տեառնէ, և զնան ՚ի ճանապարհունորա:

Օվաստակս ձեռաց քոց կերիցես . Ե-
րանի է քեզ, և բարի եղիցի:
Այս քո որպէս այգի վայելուչ յանկիւ-
նըս տան քո . որդիք քո որպէս նորա-
տունկ ձիթենւոյ շուրջ զսեղանով քով:
Եյսպէս օրհնեսցի ամենայն մարդ, որ
երկնել ՚ի տեառնէ . օրհնեսցէ զքեզ
տէր ՚ի սիօնէ:

Եւ տեսցես դու զբարութիւն երուսա-
ղէմի զամենայն աւուրս կենաց քոց:
Տեսցես դու զորդիս որդւոց քոց, խա-
ղաղութիւն ՚ի վերայ խրայէլի:

Տունք Զ :

Օրհնութիւն + աստիճանաց :

Խաղում անդամ մարտեան ընդ իս ՚ի
մանկութենէ խմմէ, աստացէ խրայէլ:
Խաղում անդամ մարտեան ընդ իս ՚ի
մանկութենէ խմմէ, և ինձ ոչ յաղ-
թեցին :

Օթիկունս իմ հարին մեղաւորք . ընդ
երկար արարին զանօրէնութիւնս իւ-
րեանց :

Տէր արդար է, և խորտակէ զուն մեւ
զաւորաց :

Եմաչեսցեն և յետո դարձցին ամենեւ-
քեան՝ ոյք ատեն զսիօն :

Եղեցին նոքա որպէս խոտ տանեաց,
որ մինչեւ ՚ի բուռն եկեալ չորացաւ :
Ուստի ոչ ելից զբուռն խը հնձողն, և
ոչ զգիրկո խը՝ որ զորայն ժողովէր :
Աչ ասացին ամենեքեան՝ ոյք անցա-
նէին առ նոքօք, թէ օրհնութիւն
տեառն ընդ ձեզ, և օրհնեցաք դձեզ
յանուանէ տեառն :

Տառնք Բ :

ՍԱՂՄՈՍ ՃԻԹ :

(Օրհնութիւն + ասովիճակաց :

Ի խորոց կարդացի առ քեզ տէր, տէր՝
լուր ձայնի իմում :

Եղեցին ականջք քո ՚ի լսել զձայն ա-
ղօթից իմոց :

Թէ զանօրէնութիւնս իմ քննես տէր
տէր, իսկ ո՞ կարէ կալ առաջի քո. զի
՚ի քէնէ քաւութիւն :

Վ ասն անուան քո համբերի տէր, համ-
բեր անձն իմ բանի քում. յուսացաւ
անձն իմ ՚ի տէր :

Ի սլահէ առաւօտու մինչեւ յերեկոյ,

՚ի պահէ առաւօտու յուսացաւ իսրա-
յէլ ՚ի տէր :

՚տեառնէ է ողորմութիւն բազում, ՚ի
նմանէ է փրկութիւն . և նա փրկեաց
զիսրայէլ յամենայն նեղութեանց
նորա :

ՏԵՂԻԿ Զ.

ՍԱՂՄՈՍ ՁԼ :

ՕՐԱԿԱՆԱՌԻ ԱՆԴԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ :

Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ, և ոչ
գրօսան աչք իմ :

Ոչ գնացի ես ընդ մեծամեծս, և ոչ ընդ
այնոսիկ ոյք սքանչելի եղեն քան զիս :
Ըսց թէ խոնարհեցայ ես որպէս մա-
սուկ սարտուցեալ ՚ի ստենէ մօր իւրոյ,
և դարձ նորա անգրէն ՚ի նոյն :

ԵՅԼ թէ հալարտացուցի արդեօք զանձն
իմ, այսպէս եղիցի հատուցումն անձին
իմոյ. յուսացաւ իսրայէլ ՚ի տէր յայսմ-
հետէ մինչև յաւիտեան :

ՏԵՂԻԿ Դ : ԳՐԴԱՅԱ ԽՊ :

ՍԱՂՄՈՍ ՃԼԱ.

ԵՐԵՒ ՀԱՅԻ :

**ՅԵՂԵԿԱ ՄԵՐ ՊՊԱՎԻԺԾ , և զամենայն
ՀԵՂՈՒԺԻՒՆՆՈՐԱ :**

**ՈՐԱՎԵՍ ԵՐԴՈՒԱԼ ՄԵԿԱՌՆ , և ուխտս եղ
աստուծոյ յակոբայ :**

**ԹԵ ոչ մտից 'ի յարկս տան իմոյ , թէ
ելից յանկողինս մահճաց իմոց :**

**ԹԵ տաց քուն աշաց իմոց , կամ՞նինջ
արտևանաց իմոց . կամ հանգիստ ի-
րանաց իմոց . մինչև դտից զտեղի յար-
կի տեառն աստուծոյ յակոբայ :**

**ԵՀԱ ԼՈՒԱՔ զնմանէ յեփրաթայ , և
դտաք զնա 'ի դաշտս մայրեաց :**

**ՄՄԴՈՒՔ 'ի յարկս նորա , երկիրպագ-
ցուք 'ի տեղւո՞չ ուր կացեալ են ոտք
նորա :**

**ԵՐԻ ՄԵՐ 'ի հանգիստ քո.դու և տա-
պանակ կտակի սրբութեան քո :
ՎՐԱՀԱՆԱՅՔ քո զգեցցին զարդարու-
թիւն , և սուրբք քո ցնծալով ցըն-
ծասցեն :**

**Վ ասն դաւթի սիրելոյ քո , մի՛ դար-
ձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ :**

Նրդուաւ տէր զաւթի ճշմարտութեամբ՝ և ոչ ստեաց նմա. ՚ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթունորա :

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ, և զվկայութիւնս իմզոր ուսուցից նոցա :

Արդիք նոցա նստցին յաւխտեանս յաւխտենից յաթու քո :

Հաճեցաւ տէր ընդ սիօն, և ընարեաց ընակիլ ՚ի նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւխտեանս յաւխտենից, ՚ի սմա ընակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա:

Օայրիս սորա օրհնեցից, և զաղքասս սորա լցուցից հացիւ :

Երիցանց սորա զգեցուցից զիրկութիւն, և սուրբք սորա ցնծալով ցընծացեն :

Ընդ ծագեցից զեղջիւր՝ ՚ի դաւիթ պարաստ արարից զճրագ օծելոյ իմոյ : Թանամեաց նորա զգեցուցից զամօթ այլ ՚ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ :

ՍԱՂՄՈՍ ՁԼԲ .

ԵՐԵՒ ՀԱՅԻ :

Օ, ի՞ բարի կամ զի՞ վայելուչ, զի բնա-
կին եղբարք՝ ի միասին։
Որպէս խղ զի իջանէ՝ ի գլուխ և՝ ի մօ-
րուսն ահարօնի. և՝ ի մօրուացն իջա-
նէ՝ ի գրապանս զգեստու նորա։
Որպէս ցող զի ցողէ՝ ի հերմոնէ՝ ի վե-
րայ լերին սիօնի։

Տէր անդ պատրաստեաց օրհնու-
թիւն և զկեանս յաւիտենից։

ՏՈՒՆՔ Դ։

ՍԱՂՄՈՍ ՁԼԳ .

ԵՐԵՒ ՀԱՅԻ :

Եսո օրհնեցէք ամենայն ծառայք
տեառն զտէր, ո կայք՝ ի տուն տեառն
և՝ ի գաւիթս աստուծոյ մերոյ։
Ե զիշերի համբարձէք զձեռս ձեր՝ ի
սրբութիւն, և օրհնեցէք զտէր։
Օրհնեսցէ զմեղ տէր՝ ի սիօնէ, որ ա-
րար զերկինս և զերկիր։

ՏՈՒՆՔ Գ։

ՍԱՎՄՈՍ ՁԼԴ ·

ԵԼԵՒ-Ի :

Օրհնեցէք զանուն տեառն . օրհնեցէք
ծառայք տեառն զտէր , ո կայք ՚ի
տուն տեառն , և ՚ի գաւիթս աստուծոյ
մերոյ :

Օրհնեցէք զտէր , զի բարի է . սաղմոս
ասացէք անուանն նորա , զի քաղցր է :

Օյակոր ընտրեաց իւր տէր , և զիս-
րայէլ ժառանգութիւն իւր :

Ես ծանեայ՝ զի մեծ է տէր , և տէր մեծ
է քան զամենայն կուռս :

Զամենայն զոր ինչ կամեցաւ և արար
տէր , յերկինս և յերկրի , ՚ի ծով և
յամենայն խորս :

Հանէ զամաս ՚ի ծաղաց երկրի . զփայ-
լատակունս իւր յանձրեւս արար . և
հանէ զհողմ ՚ի շտեմարանաց իւրոց :

Եհար զամենայն անդրանիկս եղիպ-
տացւոց , ՚ի մարդոյ մինչև ցանասուն :

Եռաքեաց զնշանս և զարուեստս իւր
՚ի մեջ քո եղիպտոս , ՚ի փարաւոն և
յամենայն զօրս իւր :

Եհար զազգս բազումն , և սպան զթա-
դաւորս հզօրս :

Օսեհօն թագաւոր ամօրհացւոց ,
զովդ թագաւոր բասանու, և ղամե-
նայն թագաւորութիւնս .քանանացւոց :
Ետ զերկիր նոցա 'ի ժառանգութիւն ,
ժառանգութիւն խրայէլի ժողովրդեան
իւրոյ :

Տէր անուն քո յաւիտեան , տէր յիշա-
տակ քո ազգէ մինչև յազդ :
Դատէ տէր զժողովրդս իւր . և 'ի
ծառայս իւր մխիթարի :
Կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ
են , ձեռագործ են որդւոց մարդկան :
Բերան գոյ և ոչ խօսին , աչք են՝ և
ոչ տեսանեն :

Եկանչք են՝ և ոչ լեն , և ոչ գոյ շունչ
'ի բերանս նոցա :

Նման նոցա եղիցին ոյք արարին զնո-
սա . ամենեքեան ոյք յուսացեալ են
'ի նոսա :

Տուն խրայէլի օրհնեցէք զտէր . տուն
ահարօնի օրհնեցէք զտէր :

Տուն զեւեայ օրհնեցէք զտէր . երկիւ-
ղածք տեառն օրհնեցէք զտէր :

Օրհնեալ տէր 'ի սիօնէ , որ ընակեա-
լըն է յերուսաղէմ :

ՍԱՂՄՈՍ ՃԼԵ.

ԵԼԵԼ-Է-:

Խոստովան եղերուք տեառն, զի բարի
է զի յաւիտեան է ողորմութիւննորա:
Խոստովան եղերուք աստուծոյն աս-
տուծոց. զի յաւիտեան է ողորմութիւն
նորա:

Խոստովան եղերուք տեառն տերանց.
զի յաւիտեան է ողորմութիւն նորա:
Երար պքանչելիս մեծամեծս միայն. զի
յաւիտեան է ողոր:

Օերկիրս արար իմաստութեամբ իւ-
րով. զի յաւիտեան է ողոր:
Հաստատեաց զերկիր ՚ի վերայ ջուրց.
զի յաւիտեան է ողոր:
Երար զլուսաւորս մեծամեծս միայն.
զի յաւիտեան է ողոր:

Օարեգակն արար իշխանական տուն-
չեան զի յաւիտեան է ողոր:
Օտւսին և զաստեղս իշխանական դի-
շերոյ. զի յաւիտեան է ողոր:
Եհար զերկիրն եղիպտացւոց անդրան-
կաք իւրովք հանդերձ, զի յաւիտեան
է ողոր:

Եւ եհան զիսրայէլ՝ ՚ի միջոյ նորա. զի
 յաւիտեան է ողոր :
 Խձեռն բարձր և ՚ի բազուկ հզօր. զի
 յաւիտեան է ողոր :
 Եհերձ զծովն մեծ, և բաժանեաց յեր-
 կուս մասունս . զի յաւիտեան է ողոր :
 Եւ անցոյց զիսրայէլ ընդ մէջ նորա.
 զի յաւիտեան է ողոր :
 Ընկղմեաց զփարաւօն և զզօրս իւր ՚ի
 ծով կարմիր . զի յաւիտեան է ողոր :
 Եւ եհան զժողովուրդ իւր յանապատ,
 զի յաւիտեան է ողոր :
 Եհար զազգս մեծամեծս միայն, զի
 յաւիտեան է ողոր :
 Եւ սպան զթագաւորս հզօրս . զի յա-
 վիտեան է ողոր :
 Զսեհօն թագաւոր ամօրհացւոց . զի
 յաւիտեան է ողոր :
 Զովդ թագաւոր բասանու . զի յա-
 վիտեան է ողոր :
 Ետ զերկիր նոցա ՚ի ժառանգութիւն .
 զի յաւիտեան է ողոր :
 Ժառանգութիւն իսրայէլի ծառայի
 իւրոյ . զի յաւիտեան է ողոր :
 Յիշեաց զմեղ տէր ՚ի խոնարհութեան
 մերում . զի յաւիտեան է ողոր :

Ո տայ կերակուր ամենայն կենդա-
նեաց . զի յաւիտեան է ողոր :
Խոստովան եղերուք աստուծոյն եր-
կնաւորի . զի յաւիտեան է ողոր :

Տառը 19.

ՍԱԴՄՈՍ ՃԼԶ.

Ասում գալունք . չ յեւն լշումայի . աննշան յեխոյեցոց :

Եռ գետս բարելացւոց անդ նստէաք
և լայաք . որպէս յիշեցաք մեք անդ
զսիօն :

Ի մէջ ուռեաց նոցա կախեցաք զիը-
տակարանս մեր :

Ենդ հարցանէին գերիչք մեր զքանս
օրհնութեան . գերեվարք մեր ստիպէ-
ին զմեզ և ասէին :

Օրհնեցէք մեզ յօրհնութենէն սիօնի-
խկ զիա՞րդ օրհնեսցուք զօրհնութիւնս
տեառն յերկիր օտար :

Թէ մոռացայց զքեզ երուսաղէմ , մո-
ռասցի զիս աչ իմ :

Կցեսցի լեզու իմ ՚ի քիմս իմ , թէ ոչ
յիշեցից զքեզ , թէ ոչ նախ նուազե-
ցից զքեզ երուսաղէմ , սկիզբն ուրա-
խութեան իմոյ :

Յիշեա տէր զորդիսն եղովմայ յա-
ւուրսն երուսաղէմի :

Ոյք ասէին, քակեցէք քակեցէք,
մինչև ՚ի հիմն հասուցէք :

Դուստր բարելացւոց թշուառական,
երանի որ հատոյց զհատուցումն քո,
զոր դու մեզ հատուցեր :

Երանի որ կալաւ զմանկունս քո, և
եհար զքարի :

Տունք Փ :

ՍԱՂՄՈՍ ՃԼԷ :

Առաջնոր Դաստի :

Խոստովան եղէց քեզ տէր բոլորով
սրտիւ իմով, առաջն հրեշտակաց սաղ-
մոս ասացից քեզ :

Օի լուար զբանս բերանոյ իմոյ. եր-
կիբապագից ՚ի տաճար սուրբ քո, և
խոստովան եղէց անուան քում վասն
ողորմութեան և ճշմարտութեան քոյ :

Մեծ արարեր յամենայնի զանուն սուրբ
քո, յորում աւուր կարդամ առ քեզ,
վաղվաղակի լուր ինձ, և բաղում ա-
րասցես զօրութիւնս յանձն իմ :

Խոստովան եղիցին առ քեզ ամենայն
թագաւորը երկրի. զի լուան զբանս

բերանոյ քո . և օրհնեսցեն զճանապարհս քո :

Մեծ են փառք տեառն . բարձր է տէր ,
զիսնարհս տեսանէ , և դըարձունս
՚ի հեռաստանէ ճանաչէ :

Յէ զնացից ես ՚ի մէջ նեղութեանց ,
կեցուսցես զիս ՚ի բարկութենէ թըշ-
նամւոյն :

Զգեցեր զձեռն քո , և փրկեաց զիս աջ
քո . և տէր հասուսցէ ընդ իմ :

Տէր ողորմութիւն քո յաւխտեան . ըզ-
գործս ձեռաց քոց մի՛ անտես առներ :

Տաւնք Է : Գորդայս ԽԴ :



ՍԱՂՄՈՍ ՃՎՀ .

Ի Հայութած . Ասլուս Գյուղին :

Տէր փորձեցեր զիս և ծանեար զիս .
դու ծանեար զնստել իմ և զյառնել իմ :
Ե միտ առեր զխորհուրդս իմ ՚ի հեռաս-
տանէ . զշաւիզս իմ և զվիճակս իմ դու
քննեցեր , և զամենայն ճանապարհս
իմ յառաջադոյն տեսեր , զի ոչ զոյ
նենդութիւն ՚ի լեզուի իմում :

Եհա դու տէր՝ ծանեար զյետին իմ և
զառաջին իմ . դու ստեղծեր զիս , և ե-

դեր զձեռն քո ՚ի վերայ իմ :
 Սքանչելի եղեւ զխտութիւն քո յինէն ,
 զօրացաւ , և ոչ հանդարտեմ սմա :
 Յո՞ երթայց ես յոգւոյ քումմե , կամ
 յերեսաց քոց ես յո՞ փախեայց :
 Թէ ելանեմ յերկինս , դու անդ ես . և
 թէ իջանեմ ՚ի դժոխս , և անդ մօտ ես :
 Թէ առից զթեւս իմ ընդ առաւօտս ,
 և ընակեցայց յեզերս ծովու :
 Սակայն և անդ ձեռն քո առաջնոր-
 դեսցէ ինձ , և աչ քո ընկալցի փս :
 Սացի՝ խաւար ուրեմն արդեօք ծած-
 կեաց զիս , կամ դիշեր փոխանակ լու-
 սոյ փափկութեան իմոյ :
 Խաւարն ՚ի քեզ ոչ խաւարեսցի , և զի-
 շերն որպէս տիւ լուսաւոր եղիցի . և
 խաւար նորա որպէս զլոյս նորա :
 Դու ստացար զերիկամունս իմ , և ըն-
 կալար զիս յորովայնէ մօր իմոյ :
 Խոստովան եղեց քեզ տէր , զի ահեղ
 և սքանչելի ես՝ սքանչելի են գործք քո ,
 և անձն իմ սիրեաց յոյժ :
 Ոչ թագեաւ ուկը իմ ՚ի քէն զոր ա-
 րարեր ՚ի ծածուկ . և կար զօրութեան
 իմոյ ընդ ստորինս երկրի :
 Օանդործս իմ տեսին աչք քո , և ՚ի

գիրս քո ամենեքեան դրեցան :
 Կ տուէ մոլորեցան , և ոչ ոք էր որ ա-
 ռաջնորդէր նոցա :
 Ինձ յոյժ մեծարու եղեն բարեկամք
 քո աստուած , և յոյժ զօրացան իշ-
 խանք նոցա :
 Թռուեցի զնոսա , և քան զաւազ բազ-
 մացան . զարթեայ , և արդ ընդ քեզեմ :
 Թռէ սպանանես զմեղաւորս աստուած ,
 արք արեան ՚իրաց եղերուք յինէն :
 Կ հակառակութիւն և ՚ի նախանձ , առ-
 ցեն ՚ի նանիր զքաղաքս քո :
 Օ ատելիս քո տէր ատեցի , և ՚ի վերայ
 թշնամեաց քոց մաշեցայ :
 Յատելութիւն կատարեալ ատեցի ըլ-
 նոսա , և եղեն ինձ թշնամիք :
 Փորձեա զիս աստուած և ծանիր ըլ-
 սիրտ իմ , քննեա զիս և ծանիր զշա-
 վողս իմ . և տես թէ իցե՞ն անօրէ-
 նութիւնք ՚ի ճանապարհս իմ , և ա-
 ռաջնորդեա ինձ ՚ի ճանապարհս քո
 յաւիտենից :

Ե Խորաբռն . Առաջնա Պատմի :

Եպրեցողիս տէր 'ի մարդոյ չարէ, յառ-
նէ անիրաւէ փրկեա զիս :
Խորհեցան զանօրէնութիւն 'ի սիրտս
խրեանց . զօր ամենայն պատրաստե-
ցան 'ի պատերազմ :

Արեցին զլեզուս խրեանց որպէս զօձի,
և թոյնք իժից 'ի ներքոյ շրթանց նոցա :
Պահեա զիս տէր 'ի ձեռաց մեղաւորի ,
և 'ի մարդոյ չարէ փրկեա զիս :
Խորհեցան խափանել զգնացս իմ .
թաղուցին ամբարտաւանք որոգայթ
ինձ :

Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց ,
շուրջ զշաւղօք խմովք եղին ինձ զգայ-
թակղութիւն :

Եսացի՝ տէր աստուած իմ ես դու ,
ունկն զիր տէր ձայնի աղօթից իմոց :
Տէր տէր զօրութիւն փրկութեան ի-
մոյ , հովանի գլխոյ իմոյ յաւուր պա-
տերազմի :

Մի՛ մատներ զիս տէր 'ի ցանկութիւն
մեղաւորաց , ոյք խորհեցան վասն իմ .

մի՛ ընդ վայր հարկաներ զիս :
 օք մի՛ երբէք բարձրասցին, և խոր-
 հուրդը նոցա մի՛ կատարեսցին. վախ-
 ճան կատարածի նոցա վաստակ շըր-
 թանց իւրեանց ծածկեսցէ զնոսա :
 Արկցես ՚ի վերայ նոցա զկայծակունս
 հրոյ, և կործանեսցես զնոսա . ՚ի տա-
 ռապանաց մի՛ կարասցեն կեալ :
 Մարդոյ լեզուանւոյ մի՛ յաջողեսցի ՚ի
 վերայ երկրի . զայր մեղաւոր չարիք իւր
 որսասցեն ՚ի կորուստ :

՞Օանեայ զի առնես տէր դատաստան
 աղքատի և իրաւունս տնանկի :

Արդարք գոհասցին զանուանէ քում-
 մե, և ընակեսցին ուղեղք առաջի ե-
 րեսաց քոց :

Տունք Ժ.Դ :

ՍԱՆՄՈՍ ՃԽ .

| Առաջնա Դասենի :

Տէր կարդացի առ քեզ՝ և լուր ինձ,
 նայեա ՚ի ձայն աղօթից իմոց ՚ի կար-
 դալ իմում առ քեզ :

Ուղիղ եղեցին աղօթք իմ որպէս խունկ
 առաջի քո տէր . համբարձումն ձեռաց

իմոց պատարագ երեկոյի :
 Դիր տէր պահապան բերանոյ իմոյ ,
 և դուռն ամուր շրթանց իմոց , զի մի՝
 խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարու-
 թեան :

Խ պատճառել զպատճառս մեղաց ընդ
 մարդս , ոյք գործեն զանօրէնութիւն .
 և ոչ եղեց կցորդ ընտրելոց նոցա :
 Խրատեսցէ զիս արդարն ողորմու-
 թեամբ և յանդիման արասցէ . իւղ
 մեղաւորի մի' օծցէ զպլուխ իմ , այլ
 աղօթք իմ 'ի կամս նորա :

Երգելան մերձ առ վիմին դատաւորք
 նոցա . լուկցեն բանից իմոց , և քաղ-
 ցրասցին :

Որպէս թանձրութիւն հողոյ զի սրփ-
 ուեալ է 'ի վերայ երկրի . ցրուեսցին ու-
 կերք նոցա մերձ 'ի դժոխս :

Եռ քեզ տէր տէր են աչք իմ . 'ի քեզ
 յուսացայ , մի' հաներ զհողի յինէն :
 Պահեա զիս յորոգայթէ որ թաղու-
 ցաւ ինձ , 'ի գայթակղութենէ դորձու-
 ղին զանօրէնութիւն :

Ենկցին 'ի ցանցս նորա մեղաւորք ,
 միայն եմ ես մինչև անցից :

ՍԱՂՄՈՍ ՃԽԱՆ.

Խմասունական Պատմութեան . Աղօթու , 'ի ժամանակին զի եւ հայութ անդ :

Զայնիւ իմով ես առ տէր կարդացի ,
ձայնիւ իմով զտէր աղաչեցի :
Սփուեցից առաջի տեառն զաղօթս իմ ,
և զնեղութիւնս իմ առաջի նորա
պատմեցից :

Ենուաղիլ յինէն հոգւոյ իմոյ , դու
տէր ծանեար զշաւիղս իմ . 'ի ծանա-
պարհ յոր և գնայի , թագուցաւ ինձ
որոգայթ :


Հայէի յաջմէ՝ տեսանէի , և ոչ ոք
ծանաչէր զիս . կորեաւ յինէն փախուստ
իմ , և ոչ գտաւ ինողը անձին իմոյ :
Եղաղակեցի առ քեզ տէր և ասացի ,
դու ես յոյս և բաժին իմ յերկրին կեն-
դանեաց :

Կայեա տէր յաղօթս իմ . զի ես խո-
նարհ եղէ յոյժ . ապրեցո զիս 'ի հա-
լածաց իմոց , զի հզօրք եղեն քան
զիս :

Տէր հան 'ի բանտէ զանձն իմ . գոհա-
նամ զանուանէ քումմէ :

Եւ քեզ սպասեն արդարք մինչև հա-
տուսցես :

Տունք Է : Գործայս ՞՞ :



ՍԱՂՄՈՍ ՃԽԲ :

Առաջու Պատենք . ՚ է ժամանակի զի հալածեր զնու Աբեսում
որդի նորու :

**Տէր լուր աղօթից իմոց , ունկն դիր
խնդրուածաց իմոց ճշմարտոթեամբ**
Քով :

Լուր ինձ արդարութեամբ քով , և մի՛
մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի
քում . զի ոչ արդարանայ առաջի քո
ամենայն կենդանի :

**Ճալածեաց թշնամին զանձն իմ , խո-
նարհ արար յերկիր զկեանս իմ . և
նստոյց դիս ՚ի խաւարի որպէս մեռեալ
յաւիտենից :**

**Զանձրացաւ յիս հոգի իմ , և սիրո
իմ խոռվեցաւ յիս :**

**Յիշեցի զաւորսն զառաջինս , խորհե-
ցայ յամենայն գործս քո . յարարածս
ձեռաց քոց խորհեցայ , և համբարձի
առ քեզ զձեռս իմ :**

Ենձն իմ որպէս երկիր ծարաւի է առ
քեզ . վաղվաղակի լուր ինձ տէր , զի
նուաղեցաւ յինէն հոգի իմ :
Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն .
նմանիցիմ այնոցիկ , ոյք իշանեն 'ի
դուք :

Խսելի արա ինձ առաւօտու զողորմու-
թիւնս քո , զի ես 'ի քեզ տէր յուսա-
ցայ :

Յոյց ինձ ճանապարհ յոր և զնացից ,
զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ :
Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց տէր ,
զի զքեզ ապաւէն ինձ արարի :
Ուսո ինձ առնել զկամս քո , զի դու
ես աստուած իմ :

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի
յերկիր ուղիղ :

Վասն անուան քո տէր կեցուսցես
զիս , արդարութեամբ քով հանցես 'ի
նեղութենէ զանձն իմ :

Աղորմութեամբ քով սատակեա զթըշ-
նամիս իմ , և կորո զամենայն նեղիչս
անձին իմոյ , զի ես ծառայ քո եմ :

ՍԱՂՄՈՍ ՃԽԳ. •

Ապահով Դաստիք . առ Դաստիք :

Օրհնեալ տէր աստուած իմ , որ ու-
սոյց զձեռս իմ 'ի պատերազմ , և ըգ-
մատունս իմ 'ի ճակատամարտ :

Ողորմութիւն իմ և ապաւէն իմ , օդ-
նական իմ և փրկիչ իմ . ապաւէն իմ ,
և ես յուսամ 'ինա . ո' հնազանդ առ-
նէ զժողովուրդս ընդ ինեւ :

Տէր՝ ո'վ է մարդ զի յայտնեցար դու-
նմա , կամ որդի մարդոյ թէ համա-
րիս ինչ զնա :

Մարդ նանրոյ նմանեցաւ , և աւուրջ
նորա որպէս հովանի անցին :
Տէր խոնարհեցո զերկինս և էջ , մեր-
ձեա 'ի լերինս և ծխեսցին :
Փայլեա զփայլատակունս քո , և խոռ-
վեա զնոսա , առաքեա զնետս քո և
ցրուեա զնոսա :

Եռաքեա զձեռն քո 'ի բարձանց , և
փրկեա զիս 'ի ջուրց բաղմաց , և 'ի ձե-
ռաց որդւոց օտարաց :

Որոց բերանք իւրեանց խօսեցան ըզ-
նանքութիւն , և աջնոցա աջ է մեղաց :

Եստուած յօրհնութիւն նոր օրհնեցից զքեղ, տամնաղեաւ սաղմոսարանաւ սաղմոս ասացից քեղ :

Ո տացէ զիրկութիւն թագաւորաց մերոց, որ փրկելոց իցէ զդաւիթ ծառայ իւր 'ի սրոյ չարէ :
Փրկեա զիս և ապրեցո զիս 'ի ձեռաց որդւոց օտարաց :

Որոց բերանք իւրեանց խօսեցան զնանրութիւն . և աջ նոցա աջ է մեղաց :

Որոց ուստերք իւրեանց որպէս նորատունկ հաստատուն են 'ի մանկութենէ իւրեանց, դստերք նոցա զարդարեալ և պաճուճեալ 'ի նմանութիւն տաճարի :

Ըտեմարանք նոցա լի են և բղխեն 'ի միմեանց . խաշինք նոցա բաղմածինք են, և բաղմանան 'ի զնացս իւրեանց . և անդեայք նոցա պարարտք են,

Ոչ զոյ խրամատութիւն ցանկոյնոցա, և ոչ աղաղակ 'ի հրապարակս նոցա :
Երդ երանեցից ժողովրդեան, որոյ այս այսպէս է . նա երանի ժողովրդեան, որոյ տէր աստուած է նոցա :

ՍԱՂՄՈՍ ՁԽԴ :

ՕՐՀԱՆԻՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՅ ԴԱՅ-ԻՆ :

Ըարձր առնեմ զքեզ աստուած իմ
և թագաւոր իմ, և օրհնեմ զանուն
քո յաւիտեան և յաւիտեանս յաւի-
տենից :

Օ օրհանապաղ օրհնեցից զքեզ, և
զովեցից զանուն քո յաւիտեան և
յաւիտեանս յաւիտենից :

Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ, և մե-
ծոթեան նորա ոչ զոյ չափ :

Եզզք և աղզք զովեսցեն զգործս քո,
և զ զօրութիւնս քո պատմեսցեն :

Օ մեծվայելշութիւն փառաց սրբու-
թեան քո խօսեսցին, և զպանչելիս
քո պատմեսցեն :

Օ զօրութիւն ահի քո ասասցեն, և
զմեծութիւնս քո պատմեսցեն :

Օ յիշատակ բազում քաղցրութեան
քո բղխեսցեն, և արդարութեամբ քո
ցնծասցեն :

Գ թած ողորմած է տէր . երկայնա-
միտ և բազումողորմ :

Քաղցր է տէր առ ամենեսեան, և զը-

Թութիւն սորա ՚ի վերայ ամենայն ա-
րարածոց իւրոց :

Խոստովան եղիցին առ քեզ տէր ամե-
նայն գործք քո, և սուրբք քո օրհնես-
ցեն զ քեզ :

Օ փառս արքայութեան քո ասասցեն,
և զգօրութիւնս քո պատմեսցեն :
Ճանաչել որդւոց մարդկան զգօրու-
թիւնս քո, և զփառս մեծվայելչու-
թեան արքայութեան քո :

Երքայութիւն քո արքայութիւն ամե-
նայն յաւիտենից, և տէրութիւն քո
ազգէ մինչեւ յազգ :

Հաւատարիմ է տէր յամենայն բանս
իւր, և արդար է յամենայն գործս
իւր :

Հաստատէ տէր զամենայն գայթակ-
ղեալս, և կանգնէ զամենայն գլորեալս:
Աչք ամենեցուն ՚ի քեզ յուսան, և դու-
տաս կերակուք նոցա ՚ի ժամու :

Տաս դու նոցա և կերակրին . բանաս
զձեռն քո, և լցուցանես զամենեսեան
քաղցրութեամբ կամօք քովք :

Երդար է տէր յամենայն ճանապար-
հըս իւր, և սուրբ է յամենայն գործս
իւր :

Մերձէ տէր առ ամենեսեան ոյք կարդան առ նա, առ ամենեսեան ոյք կարդան առ նա Ճշմարտութեամբ։ Օկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր աղօթից նոցա լսէ, և կեցուցանէ ըզնոսա։

Պահէ տէր զամենեսեան ոյք սիրեն ըզնա, և զամենայն մեղաւորս սատակէ տէր։

Օօրհնութիւնս տեառն խօսեցի բերան իմ · օրհնեսցէ ամենայն կենդանի զանուն սուրբնորա յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։

Տունք ԻԲ · Գորդայս ԾԲ ·



ՍԱՂՄՈՍ ՃԽԵ ·

Ալեքսակու · Անդրեայ և Զարեւ

Օրհնեա անձն իմ զտէր · օրհնեցից զտէր ՚ի կեանս իմ, սաղմոս ասացից աստուծոյ իմոյ մինչեւ եմ ես։

Մի՛ յուսայք յիշեանս, յորդիս մարդկան, զի ոչ գոյ փրկութիւն ՚ի նոսա · Նլու հողի ՚ի նոցանէ՝ և դարձցին անդրէն ՚ի հող, և յայնմ աւուր կորիցեն

ամենայն խորհուրդը նոցա։
Երանի ազգի՝ որոյ տէր աստուած յա-
կորայ օվնական է նմա, և յոյս նորա
՚ի տէր աստուած է։

Որ արար զերկինս և զերկիր, զծով
և զամենայն որ ՚ի նոսա։

Ապահէ զՃշմարտութիւն յաւիտեան,
և առնէ իրաւունս զբկելոց։

Տայ հաց քաղցելոց, և արձակէ զկա-
պեալս տէր։

Տէր բանայ զաչս կուրաց, և կանգնէ
զգլորեալս տէր։

Տէր սիրէ զարդարս, տէր պահէ ըզ-
պանդուխտս. զորբս և զայրիս ընդունի
տէր, և զՃանապարհս ամբարշտաց
կորուսանէ։

Թագաւորեացէ տէր յաւիտեան, աս-
տուած քո սիօն ազգէ մինչեւ յազգ։

Տունք ժ։

ՍԱՂՄՈՍ ՃԽԶ.

Աւելուսէս. Անդեայ և Օստարէայ։

Օրհնեցէք զտէր՝ զի բարի է սաղմոս.
աստուծոյ մերում քաղցր եղիցի օր-
հնութիւն։

Ե ինէ զերուսաղէմ տէր, և զյրուեալ
սըն խրայէլի ժողովէ :

Բժշկէ զքեկեալ սիրտս, և պատէ զա-
մենայն վէրս նոցա :

Ո թուէ զքազմութիւն աստեղաց, և
զամենեսեան զնոսա յանուանէ կոչէ :
Մեծ է տէր և մեծ է զօրութիւն նո-
րա, իմաստութեան նորա ոչ գոյբաւ :
Ընդունի զհեզս տէր, և խոնարհ առ-
նէ զամբարտաւանս մինչեւ յերկիր :
Օրհնեցէք զաստուած խոստովանու-
թեամբ, սազմոս ասացէք նմա օրհնու-
թեամբ :

Ո զգեցոյց զերկինս ամպովք, և պատ-
րաստ արար զանձրեւ իւր յերկիր :
Բուսոյց զխոտ իւրինս, և զդալարի
՚ի ծառայութիւն մարդկան :

Ո տայ անասնոց կերակուր, ձագուց
ագուաւոց՝ ոյք կարդան առնա :
Ոչ թէ ընդ զօրութիւնս ձիոյ կամե-
ցաւ տէր, և ոչ ընդ իրանս առն հըս-
կայի հաճեցաւ :

Ե յէ հաճեցաւ տէր ընդ երկիւղածս
իւր, և ընդ այնոսիկ՝ ոյք յուսան յո-
ղորմութիւն նորա :

ՍԱՂՄՈՍ ՃԽԵ •

Եւ լուսավետ է առաջ և օրինակ է առաջ :

Գովեա երուսաղէմ զտէր :
Եւ օրհնեա զաստուած քո սիօն :
Օխ զօրացոյց զնիգս դրանց քոց , և
օրհնեաց զորդիս քո 'ի քեզ :
Ո եղ զսահմանս քո 'ի խաղաղութիւն .
պարարտութեամբ ցորենոյ լցոյց ըդ-
քեզ :

Եռաքէ զքան իւր յերկիր . վաղվաղ
ընթանան պատղամք նորա :
Դնէ զձիւն որպէս զասր . և զմէզ որ-
պէս փոշի ցանեաց :

Երկանէ զսառն որպէս պատառս . ա-
ռաջ ցրտոյ նորա ո' կարէ կեալ :
Եռաքէ զքան իւր և հալէ զնոսա . շըն-
չեսցեն հողմք , և զնասցեն ջուրք :
Պատմէ զքան իւր յակոբայ , զարդա-
րութիւն և զերաւունս խրայէլի ,
Ոչ այսպէս արար ամենայն աղդաց
տէր , և զդատաստանս իւր ոչ յայտ-
նեաց նոցա :

Տունք Ժ : Գորդայս ԼԲ : |

Ա Դ Օ Թ Ք Ա Մ Բ Ա Կ Ո Ւ Մ Ա Յ Մ Ա Ր Գ Ա Ր Ե Ւ

Ա մ բ ա կ ։ Դ ։

Տէր, զլուր քո լուսյ և երկեայ ։ տէր՝
նայեցայ ՚ի գործս քո և զարհուրեցայ ։
Ի մէջ երկուց կենդաննեացն ծանիցիս
դու, ՚ի մերձենալ ամացն յայտնեա-
ցիս, և ՚ի հասանիլ ժամանակին ե-
րեւեսցիս :

Ի խոռվել անձին իմոյ ՚ի ժամանակի
բարկութեան զողորմութիւն յիշես-
ցես :

Վստուած ՚ի հարաւոյ եկեսցէ, և սուր-
բին ՚ի փառան լեռնէ :

Յայտնեսցեն երկինք զվայելչութիւն
փառաց նորա . և օրհնութեամբ նորա
լցան տիեզերք :

Ճառագայթք որպէս ՚ի լուսոյ հատան
՚ի նմանէ, և եղջիւրք ՚ի ձեռին նորա
գտան . և անդ հաստատեցաւ զօրու-
թիւն փառաց նորա :

Յերեսաց նորա ելցեն հարուածք . և
զհետ շաւղաց նորա երթիցեն մեծա-
մեծք ՚ի թոշնոց :

Եկաց և չափեաց զերկիր . հայեցաւ և
դիտեաց զհեթանոսս :

Երինք հալեսցին և անտառք վատ-
նեսցին . Ճանապարհք՝ որք ՚ի սկզբա-
նէն էին , կուրասցին . և ՚ինմանէ դո-
ղասցի ամենայն երկիր :

Տեսի զբանակս քուշացւոց . խոռվե-
ցան ընակիչք վրանացն մաղիամու :
Միթէ ՚ի վերայ գետոց բարկասցի՞ս
դու տէր . կամ սրտմտութիւն քո ՚ի
վերայ գետոց , կամ բարկութիւն քո
՚ի վերայ ծովու :

Ելեր դու ՚ի կառա քո . հեծելութիւ-
նրդ քո փրկութիւն եղեւ յելանելն.քո :
Զարթեաւ աղեղն քո . զնետս կա-
պարձից քոց արբուցեր , զգետս ցը-
րուեցեր , զերկիր դողացուցեր՝ ՚ի սաստ-
կութենէն անձրեւի , որք անցանեն
ընդ սա :

Անդունդք աղաղակեցին մեծապէս ,
լոյս փայլման արեգականն արդելաւ ,
և ծագումն լուսնին գաղարեցաւ :
Որպէս ՚ի նշոյլս սլաքաց քոց գնասցես ,
և որսլէս ՚ի լոյս փայլատակման սրոյ
քո :

Բարկութեամբ զարթիցես ՚ի վերայ

երկրի, և դողութեամբ կասցես զհե-
թանոսս :

Երեւեցար՝ ի փրկութիւն ժողովրդեան
քո,՝ ի փրկել զընտրեալս քո:
‘Նետածիդ եղեր՝ ի գլուխս մարդկան
ամբարտաւանից . մինչեւ յանդունդս
ծովու ընկղմեցան :

Խնդրեցեր զվոէժ զօրութեամբ քով
՝ ի զօրագլխացն մեղաւորաց, որք յու-
սացեալ էին յանդգնութիւնս իւ-
րեանց. զի կերին զաղքատն՝ ի դադու-
նիս :

Եռաքեցեր՝ ի վերայ ծովու զերիվարս
քո և խոռվեցան յաղթ ջուրք անդըն-
դոց :

Կացի ես՝ և գելան աղիք իմ՝ ի ձայնէ
բերանոյ իմոյ . եմուտ դողումն յու-
կերս իմ, և ես յանձն իմ խոռվեցայ:
‘Օ այս պահեսցես յաւոր նեղու-
թեան, ածել՝ ի վերայ ազգի ամենայ-
նի՝ որք մարտնչին ընդ ժողովրդեան
քում :

Թաղենի ոչ տացէ զալտուղ իւր, և յայդ-
ւոջ բեր մի՛ գտցի. ձիթենիք սնաս-
ցին, և երկիր մի՛ բուսուցէ զդալարի:
Պակասեսցին հօտք ՚ի ճարակաց, և


Եղինք մի՛ գտցին առ մնուրս :
 Ես 'ի տէր յուսացայ , ցնծացայց և
 ուրախ եղէց յաստուած փրկիչ իմ :
 Տէր տէր ետ ինձ զօրութիւն , և կա-
 ցոյց զոտս իմ 'ի հաստատութեան . 'ի
 վերայ պարանոցի թշնամոյն կացոյց
 զիս և հանգոյց զիս երագ երագ :
 Փառք հօր և որդւոյ և :


ՅԵՐԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԱՂԹԱՆՔ

Լուր մեղ տէր լուր մեղ , աստուա-
 ծային ողորմութեամբ և զթութեամբ
 քո իննայեա յարարածս քո :
 Մարդասէր տէր , վասն սրբուհւոյ ա-
 նարատի մօր քո և կուսի , և վասն
 խաչի քո պատուականի , ընկալ զա-
 ղաչանս մեր , և կեցո զմեղ :

Օ ՀԱՅՈՒՆ և ՀԱՅՈՒՆ 'ի ՔԵՐՆ ԱՂՈՐՄԵա ՀԱՆՈՒՅՆ
 ԻՊԵՒ ՚ 164 ԵՐԵՒՆ :





ՍԱՂՄՈՍ ՃԽԸ.

ԵԼԵՅՆԻՄ . ԵՆԴԵՄ և ՕՇՎԻՇԵՄ :

ՕՐՀՆԵցԷք զտէր յերկնից , օՐՀՆԵցԷք
զնա ՚ի բարձանց :

ՕՐՀՆԵցԷՔ զնա ամենայն հրեշտակք
նորա , օՐՀՆԵցԷՔ զնա ամենայն դօրու-
թիւնք նորա :

ՕՐՀՆԵցԷՔ զնա արեգակն և լուսին ,
օՐՀՆԵցԷՔ զնա ամենայն աստեղք և
լոյսք :

ՕՐՀՆԵցԷՔ զնա երկինք երկնից և ջուրք
որ ՚ի վերոյ քան զերկինս , օՐՀՆԵցԷՔ
զանուն տեառն :

Զի նա ասաց՝ և եղեն , հրամայեաց՝ և
հաստատեցան :

Կացոյց զնոսա յաւիտեանս յաւիտե-
նից , սահման եղ , և ոչ անցանեն :

ՕՐՀՆԵՑԷՔ զտէր յերկրէ վիշապք և
ամենայն խորք :

Ճուր և կարկուտ , ձիւն և սառն ,
հողմե մրրիկ , որք առնէք զբան նորա :
Երինք և ամենայն բարձունք , ծառք
պտղաբերք և ամենայն մայրք :

Դադանք և ամենայն անասունք, սոզունք և ամենայն թռչունք թեւաւորք:

Ծագաւորք երկրի և զօրք իւրեանց, իշխանք և ամենայն դատաւորք երկրի: Երիտասարդք և կուսանք, ծերք և ալղայք օրհնեցէք զանուն տեառն: Բարձրացաւ անուն նորա միայն. խոստովանութիւն նմա յերկինս և յերկրի: Բարձր առնէ տէր զեղջեւը ժողովը դեան իւրոյ. օրհնութիւն նմա յամենայն սրբոց նորա յորդւոցն իսրայէլի ժողովոյն՝ որ մերձ է առ տէր:

Տունք ԺԴ:

ՍԱՂՄՈՍ ՃԽԹ.

Աւելուկա. Անգելայ և Օւագրէայ:

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն 'ի նոր' օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց: Ուրախասցի իսրայէլ յարարիչ իւր. որդիք սիօնի ցնծասցեն 'ի թագաւորն իւրեանց:

Օրհնեսցեն զանուն նորա օրհնութեամք, սաղմոսիւք և օրհնութեամք սաղմոս երդեսցեն նմա:

Հաճի տէր ընդ ժողովուրդ իւր սուրբ,

և բարձր առնէ զհեզս ՚ի փրկութեան :
Պարծեսցին սուրբքն փառօք . և ցըն-
ծասցեն ՚ի հանդիստ իւրեանց , և բար-
ձրը արասցեն զաստուած բերանօք
իւրեանց :

Սուր երկսայրի ետ ՚ի ձեռանոցա . առ-
նուլ զհատուցումն ՚ի հեթանոսաց . ՚ի
յանդիմանութիւն ամենայն ժողովը-
դոց :

Տ կապել զթագաւորս նոցա կապա-
նօք , զզօրավարս նոցա ձեռնակապօք
երկաթեօք :

Եռնել նոցա դատաստանս ըստ զրոց .
և փառք այս են ամենայն սրբոց նորա :

ՏԱԿՆԱԳ Է.

ՍԱՂՄՈՍ Ճ'Ծ .

Եւկելուն . Ենքեայ և Օստարեայ :

Օրհնեցէք զաստուած ՚ի սրբութեան
նորա , օրհնեցէք զնա ՚ի հաստատու-
թեան ՚ի զօրութեան նորա :

Օրհնեցէք զնա ՚ի զօրութեան նորա ,
օրհնեցէք զնա ՚ի բազում մեծութեան
նորա :

Օրհնեցէք զնա ՚ի ձայն օրհնութեան ,

օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնու-
թեամբ:

Օրհնեցէք զնա ցնծութեամբ, գովե-
ցէք զնա ուրախութեամբ:

Օրհնեցէք զնա 'ի բանս քաղցր, գո-
վեցէք զնա 'ի բարբառ լսելի:

Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհութեան.
ամենայն հոգիք օրհնեցէք զտէր:

Տունք Զ: Գորդայս Իլ:

Կանոնս ՅԽԸ: Զորք Կանոնս Տունք ՈՅԽՍ:

Միահամուռ սաղմոսս Գորդայս ՇԶ: Սաղմոս ՃՇ:

Տունք 'ի սմա ԱՆԿՐ:



Այս Ասումս ինչնադիր Պատմի արդաւոյ նուոց : Ի ժամանակի՝ շէ ել նո նոհասուակ ընդդրեմ Պատմի Ասումս , առաջի Ասումս , և ամենայն զբացն իսրայէլէ :

Փոքր էի ես յեղեարս իմ , և կրտսեր ՚ի տան հօր իմոյ , արածէի զխաշինս հօր իմոյ :

Չեռք իմ արարին զսաղմնսարան , և մատունք իմ կազմեցին զգործի օր հնութեան :

Խակ արդ ո՞պատմեսցէ զայս տեառն իմում . ինքնին տէր ամենայնի լուիցէ զամենայն :


Եւ առաքեաց տէր զհրեշտակ իւր , և համբարձ զիս ՚ի հօտէ խաշանց հօր իմոյ , և էօծ զիս յօծումն իւղոյ իւրոյ : Եղեարք իմ մեծամեծք և գեղեցիկք , և ոչ հաճեցաւ ընդ նոսա տէր :

Ելի ես ընդդէմ այլազգւոյն , և նըզով վեցի զկուռս նորա :

Հանի զսուսերն ՚ի նմանէ , և հատի զգլուխ նորին , և բարձի զնախատինս յորդւոցն իսրայէլի :

Փառք հօր և որդւոյ և :





Օ Բ Հ Ա Ռ Ի Թ Ւ Ւ Ե

ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ

Դանիելի Դ:

Օրհնեալ ես տէր աստուած հարցն
մերոց, օրհնեալ փառաւորեալ անուն
քո յաւիտեան։

Յիրաւունս անցուցեր զայս ամենայն
ընդ մեզ. արդար ես դու տէր, և ա-
մենայն գործք քո ճշմարիտ են։
Ճանապարհք քո ուղիղ են, և ամե-
նայն դատաստանք քո արդար են։
Դատաստան արդարութեան ածեր՝ ի
վերայ մեր ըստ ամենայնի զոր ինչ
ածեր՝ ի վերայ մեր, և քաղաքի սրբոյ
հարցն մերոց երուսաղէմի։
Երդարութեամբ և յիրաւի ածերզայս
ամենայն՝ ի վերայ մեր վասն մեղաց
մերոց։

Ենօրինեցաք և յանցեաք ապստամբ
լինել՝ ի քէն. մեղաք յամենայնի, և
պատուիրանաց քոց մեք ոչ անսացաք։
Ոչ պահեցաք և ոչ արարաք որպէս
պատուիրեցեր դու մեզ, զի զբարիս
դացուք մեք՝ ի քէն։

Երդ զամենայն զոր արարեր և զոր ինչ
ածեր՝ ի վերայ մեր, արդար դատաս-
տանաւ արարեր :

Մատնեցեր զմեզ ՚ի ձեռս թշնամեաց
մերոց, անօրինաց, խստաց և ապլս-
տամբողաց :

Ե ձեռս թագաւորի անօրինի և չարի
քան զամենայն երկիր, մատնեցեր ըզ-
մեզ :

Եւ արդ ոչ դոյ մեզ ժամ բանալ ըզ
բերանս մեր, զի ամօթ և նախատինք
եղաք ծառայից քոց պաշտօնէից :
Եյլ մի՛ մատներ զմեզ իսպառ վասն
անուան քո, մի՛ ցրեր զուխտս քո,
և մի՛ ՚ի բացեայ առներ զողորմութիւ-
նըս քո ՚ի մէնջ :

Վ ասն աբրահամուսիրելոյ քո · իսա-
հակայ ծառայի քո, և խրայէլի սըր-
բոյ քոյ :

Խոստացար նոցա և ասացեր, բաղմա-
ցուցից զզաւակ ձեր որպէս զատեղս
երկնից բաղմութեամբ, և որպէս զա-
ւաղ առ եզր ծովու :

Եւ արդ տէր նուաղեցաք մեք քան
զամենայն աղղս, և եմք տառապեալ
յամենայն երկրի այսօր վասն մեղաց
մերոց :

Ոչ դոյ ՚ի ժամանակի յայսմիկ իշխան՝
մարգարէ և առաջնորդ . ոչ ողջակէզք
պատարագաց , ոչ խունկը օրինաց , և
ոչ տեղի պատարագս մատուցանելոյ
առաջի քո , և զողորմութիւն դտա-
նել ՚ի քէն :

Եյլ անձամբք խոնարհեալ և հոգւով
տառապանաց ընդունելի լիցուք մեք
որպէս զողջակէզս խոյոց և զուարա-
կաց . և որպէս բիւրաւորս դառանց
պարարտաց :

Եյնպէս ընդունելի լիցին պատարա-
գըք մեր այսօր առաջի քո , զի կա-
տարեալ դտցուք զկնի քո , և չիք
ամօթ յուսացելոցս ՚ի քէզ :

Եւ արդ գամք զհետ քո ամենայն
սրտիւք մերովք , երկնչեմք ՚ի քէն , և
խնդրեմք զերեսս քո . տէր մի յամօթ
առներ զմեզ :

Եյլ արա առ մեզ ըստ հեղութեան
քում և ըստ բազում ողորմութեան
քում . փրկեա զմեզ վասն սքանչելեաց
քոց տէր . և փառաւորեսցի անունքո
յաւիտեան :

Յամօթ լիցին ամենեքեան , որ չար-
չարեն զծառայս քո . ամաչեցեալ իւ-
29

ցին բոնութիւնք նոցա, և ամենայն
դօրութիւնք նոցա խորտակեսցին :
Եւ ծանիցեն զի դու ես տէր աստուած
միայն, որ փառաւորեալդ ես ՚ի վե-
րայ ամենայն տիեզերաց :

Օրհնեալ ես դու տէր աստուած
հարցն մերոց, դովեալ և առաւել
բարձրացեալ յաւիտեան :
Եւ օրհնեալ է անուն սուրբ փառաց
քոց · դովեալ և առաւել բարձրացեալ
յաւիտեան :

Օրհնեալ ես ՚իտաճարի փառաց սրբ-
բութեան քո · դովեալ և առա :

Օրհնեալ ես ՚ի վերայ աթոռոյ ար-
քայութեան քո · դովեալ և առա :

Օրհնեալ ես որ նստիս ՚ի քրովեէս և
հայիս յանդունդս · դովեալ և առա :

Օրհնեալ ես ՚ի վերայ հաստատու-
թեան երկնից · դովեալ և առա :

Օրհնեցէք ամենայն դորձք տեառն
զտէր · օրհնեցէք և բարձր արարէք
զնա յաւիտեան,

Օրհնեցէք երկինք զտէր · օրհնեցէք
և բարձր արարէք զնա յաւիտեան :

Օրհնեցէք հրեշտակը տեառն · և ջուրք
որ ՚ի վերոյ երկնից զտէր · օրհ :

Ὁρᾶςεցէք զօրութիւնք տեառն . ա-
 րեգակն և լուսին զտէր . օրհ :
 Ὁրհնեցէք աստեղք երկնից , անձրեւք
 և ցողք զտէր . օրհ :
 Ὁրհնեցէք ամենայն հողմք հուր և ջեր
 զտէր . օրհ :
 Ὁրհնեցէք ցուրտ և տօթ , ցող և ձիւ-
 նարեր զտէր . օրհ :
 Ὁրհնեցէք սառն և պարզ , եղեամն
 և ձիւն զտէր . օրհ :
 Ὁրհնեցէք տիւք և դիշերք , լոյս և
 խաւար զտէր . օրհ :
 Ὁրհնեցէք ամպք և փայլատակունք և
 երկիր զտէր . օրհ :
 Ὁրհնեցէք լերինք և բլուրք , և ամե-
 նայն բոյսք երկրի զտէր . օրհ :
 Ὁրհնեցէք աղբիւրք ծովք և գետք
 զտէր . օրհ :
 Ὁրհնեցէք կէտք և ամենայն կայտառք՝
 որ ՚ի ջուրս , և թռչունք երկնից ըղ-
 տէր . օրհ :
 Ὁրհնեցէք դաղանք և անասունք՝ և
 որդիք մարդկան զտէր . օրհ :
 Ὁրհնեսցէ խրայէլ զտէր . օրհնեսցէ
 և բարձր արասցէ զնա յաւիտեան :
 Ὁրհնեցէք քահանայք զտէր . օրհնե-

յէ.ք և բարձր արարէ.ք զնա յաւի-
տեան :

Օրհնեցէ.ք ծառայ.ք տեառն զտէր. օրհ :
Օրհնեցէ.ք անձինք, և շունչք արդա-
րոց զտէր. օրհ :

Օրհնեցէ.ք սուրբք և խոնարհ.ք սըլ-
տիւք զտէր. օրհ :

Օրհնեցէ.ք անանիա ազարիա և միաա-
յէլ զտէր. օրհ :





Օ Բ Հ Ա Ա Խ Թ Խ Խ Ե

ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

Պ ռ ւ կ . Ա :

Մեծացուսցէ անձն իմ զտէր , և ցըն-
ծացէ հողի իմ աստուծով փրկչաւ
իմով :

Եյց արար ՚ի վերայ խոնարհութեան
աղախնոյ խրոյ . այսուհետեւ երանիցեն
ինձ ամենայն աղդք :

Երար ընդ իս մեծամեծս հզօրն . և
սուրբ է անուն նորա :

Ողորմութիւն արար աղդաց յաղգս
երկխղածաց խրոյ . արար զօրութիւն
բազկաւ իւրով :

Յրուեաց զամբարտաւանս ՚ի մտաց սըր-
տից , և քակեաց զհզօրս յաթուոց :
Օխոնարհս բարձրացոյց , զկարօտաե-
լից բարութեամբ , և զմեծատունս ար-
ձակեաց ունայնս :

Պաշտպանեաց խրայէլի ծառայի իւ-
րոյ յիշելով զողորմութիւն իւր :
Որպէս խօսեցաւ առ հարսն մեր , ընդ
աբրահամու և զաւակի նորա յաւի-
տեան :



ՕՐՀԱՍՏԹԻՒՆ ԶԵՎԵՐԻԵՅԻ

ՀՕՐՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻ

Պ. ուկ. Ե.

Օրհնեալ տէր աստուած իսրայէլի ,
որ յայց ել , և արար փրկութիւն ժո-
ղովրդեան իւրոյ :

Յարոյց մեղ եղջիւր փրկութեան 'ի
տանէ դաւթի ծառայի իւրոյ . որպէս
խօսեցաւ բերանովք սրբոցն՝ որ յաւի-
տենից մարգարէքն էին :

Փրկութիւն 'ի թշնամեաց մերոց , և
'ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց :
Վոնել ողորմութիւն առ հարսն մեր ,
և յիշել զկտակարանս սրբութեան
իւրոյ :


Երդումն զոր երդուաւ աբրահամու
հօր մերոյ՝ տալ մեղ առանց երկիխղի
զփրկութիւն 'ի թշնամեաց մերոց :
Պաշտել զնա սրբութեամբ և արդա-
րութեամբ առաջի նորա զամենայն ա-
ւուրս կենաց մերոց :

Եւ դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյն
կոչեսչիր . զնասցես առաջի տեառն
պատրաստել զՃանապարհս նորա :

Տալ զգիտութիւն փրկութեան ժողովրդեան իւրոյ, 'ի թողութիւն ամենայն մեղաց մերոց :

Վասն զթոյ ողորմութեան տեառն աստուծոյ մերոյ, որով երեւեցաւ մեղարեգակն ՚ի բարձանց՝ լուսաւոր առնել զխաւար մեր :

Ծագել լոյս ՚ի վերայ այնոցիկ՝ որ նրատէաք ՚ի խաւարի և ՚ի ստուերս մահու, ուղղել զոտս մեր ՚ի ճանապարհս խաղաղութեան :



Ա Դ Օ Թ Ք

ՍԻՄԵՈՎՆԻ ԾԵՐՈՒՆՏՈՅՆ

Դակ. Բ:

Երդ արձակեազգառայս քո տէր ըստ ըսնի քում ՚ի խաղաղութիւն. զի տեսմին աչք իմ զփրկութիւն քո, զորպատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդոց :

Լոյս յայտնեցար հեթանոսաց, և վատք ժողովրդեան քում իսրայէլի :

ՅԵՐԱՅԻՆ ՅԵՐԱՅԻՆ ՅԵՐԱՅԻՆ ՅԵՐԱՅԻՆ ՅԵՐԱՅԻՆ

Ա Դ Օ Թ Ք Ա Պ Ա Շ Խ Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

ՄԱՆԱՍԻՒ ԹԱԳԱԽՈՐԻՒՆ

Տէր ամենակալ աստուած արրահամու , խահակայ , յակոբայ և զաւակի նոցա արդարոց . ամենակալ տէր՝ թող զմեղս իմ :

Որ արարեր զերկինս և զերկիր և զամենայն զարդ նոցա . ամենակալ տէր :
Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո . փակեցեր զխորս , կնքեցեր ահաւոր և փառաւորեալ անուամբ քով սրբով . ամենակալ :

Որ ամենայն ինչ սարսի և գողայ յերեսաց ահի զօրութեան քո . ամենա :
Ենթաւ է մեծվայելշութիւն փառաց սրբութեան քո . սաստիկ է բարկութիւն սպառնակաց քոց ՚ի վերայ մեղաւորաց . անչափ և անքննին են ողորմութիւնք աւետեաց քոց . ամե :

Դու տէր բարձրեալ , զթած , երկայնամստ , բազումողորմ . և զղչանաս ՚ի վերայ չարեաց մարդկան . ամենա :
Դու աստուած՝ ոչ եղեր ապաշխարութիւն վասն արդարոցն՝ արրահամու ,

խահակայ և յակոբայ, որք ոչ մեղան
քեզ. ամենա :

Եյլ եղեր ապաշխարութիւն վասն իմ
մեղաւորիս. զի մեղայ աւելի քան զա-
ւաղ ծովու, և բազմացան անօրէնու-
թիւնք իմ. ամե :

Չեմ արժանի հայիլ և տեսանել ըզ-
բարձրութիւնս երկնից՝ի բազմութենէ
անօրէնութեան իմոյ. ամենա :

Կորացեալ եմ ես՝ի բռնութենէ կա-
պանաց երկաթից, և ոչ զոյ ինձ հան-
գիստ. ամենա :

Բարկացոցի զարտմտութիւն, և չար
առաջի քո արարի. կանգնեցի պատ-
կեր և բազմացոցի զցասումն. ամե :
Եւ արդ տէր՝ խոնարհեցուցանեմ ըզ-
ծունր օրտի իմոյ. և հայցեմ՝ի քաղ-
ցրութենէ. քումնէ. ամենա :

Մեղայ տէր մեղայ, և զանօրէնու-
թիւնս իմ ես ինձէն զիտեմ. ամե :

Եղաչեմ և խնդրեմ՝ի քէն՝ թող ինձ
տէր, թող ինձ, և մի՛ կորուսաներ
զիս ըատ անօրէնութեան իմոյ. ամենա:

Մի՛ յախտեան բարկանար ինձ տէր,
և մի՛ յիշեր զչարիսն իմ, և մի՛ պար-
տաւորեր զիս ընդ իջեալսն՝ի ներքոյ

Երկրի չարեօք . ամենա :

Օ ի դու աստուած՝ աստուած ապաշ-
խարողաց ես , և յիս ցոյց զբարերա-
րութիւնդ քո , որ անարժան եմ . ա-
կեցուցես զիս ըստ բազում ողորմու-
թեան քում . և ես օրհնեցից զքեզ
զամենայն աւուրս կենաց իմոց . ամեն :

Օ քեզ տէր օրհնեն ամենայն զուար-
թունք երկնից . և քո են փառք յա-
ւիտեանս . ամեն :

Փառք հօր և որդւոյ և . Եյժմեմիշտ:
Եղաչեմ և խնդրեմ 'ի քէն տէր, թող
ինձ զմեղս իմ :

Բազումողորմ տէր , ողորմեա ինձ :
Եստուած , քաւեա զիս զմեղաւորս 'ի
մեղաց և կեցո :


Երարիչ իմ և յոյս աստուած , գլխա-
յիս 'ի մեղուցեալ ծառայս , և ողոր-
մեա ինձ բազմամեղիս :

Եմենօրհնեալ սրբուհի և միշտ կոյս
աստուածածին մարիամ , բարեխօսեա
առ տէր վասն իմ մեղաւորիս :
Եմենայն սուրբք աստուծոյ , բարեխօ-
սեցէք առ հայր 'ի յերկինս վասն մեր
մեղաւորացս :

Քրիստոս որդի աստուծոյ անոխական

Ընկալ զաղաչանս մեր, զի քեզ են
 ապաւինեալ անձինք մեր։
 Յաղթող զօրութեամբ՝ սուրբ և կեն-
 դանարար և պատուական խաչիւ քո
 տէր պահպանեա զմեզ։
 Եռաքեա տէր զհրեշտակ խաղաղու-
 թեան քո, որ եկեալ պահեսցէ զմեզ
 անխոռվս ՚ի տռւէ և ՚ի գիշերի։
 Եւ մարդասիրութեամբ քո յիշեա
 զմեզ տէր, յիշեա զմեզ յորժամդաս
 արքայութեամբ քով, և ողորմեա մեզ։





“Եւ աիսաբորն ընկան + ի բարտահան + յաղաճո աղօնիցն , զո՞ր արա-
քեալ է Տեսոն ‘Եւսէսի Եղբօրն Կարէնորէսի հայոց իս-
լամակիոսի :


Աղօթք հասարակաց քրիստոնէլց մեծաց և փո-
քունց , զո՞ր պարտին ուսանիլ ամենեքեան՝ և ու-
սուցանել զմիլեանս . քահանայք՝ զժողովուրդո .
Հարք՝ զորդիս , մարք՝ զդստերս , և ընկեր՝ զօնկերն
իւր : Եւ աղօթեսցն սովաւ յաւուրն հինգ ան-
դամ՝ երկոտասան ծնրադրութեամբ ’ի ժամուն .
այսինքն՝ յառաւօտուն , ’ի ճաշուն , ’ի հասարակ ա-
ւուրն , յիրեկոյին , և ’ի հանգստեան : Ապա թէ
պղերգ ոք լինիցի և ծուլանայ զչինգ ժամ ա-
ղօթս կատարել , աղօթեսցէ չորս անդամ , կամ
երեք անգամ , կամ երկու անդամ , կամ մի ան-
դամ յաւուրն . որ միտյն ճանաչի թէ քրիստո-
նեայ է , և զինքն ծանիցէ թէ արարած եմ աստու-
ծոյ և երկրպագու նորա : Եւ թէ զամենայն բանս
աղօթիցն հեղգայ ուսանիլ , (որք և զսատանայական
երգս բազում փութով ուսանին) , ուսցի զկէս սո-
րա , կամ այլ նուազ . զի թէ տունս երիս ուսանի-
ցին ’ի սմանէ , և աղօթեսցն երիս ծնրադրութեամբ
(’ի ժամուն , ընդունիլի է առաջի աստուծոյ : Ապա
թէ ոք ’ի քրիստոնէիցն անփոյթ առնէ զսա յուն-
սանելոյ և յաղօթելոյ , յանդիմանեսցի և ’ի մո-
լար ժողովոյն այլազգեաց , որք զաղօթսն զո՞ր ու-
սոյց նոցա , ’ի պատերազմունս անդամ ոչ լսափա-
նեն՝ թող թէ ’ի խաղաղութեան : Խոկ մեր ժողո-

վուրդք արտաքոյ աղօթից տեղւոյ բնաւ ոչ յի-
 շն զանունն ասառուծոյ զի ոչ ունին փոյթ 'ի կար-
 գըս աղօթից որպէս զասառածապաշտ , այլ սիրեն
 զդատարկաբանութիւն քան զաղօթս : Եւ թէ եր-
 բեմն գան ոմանք յաղօթել առ քահանայն , կամ
 փակեալ բերանով կանգնին , կամ զբուցատրու-
 թիւնս առնեն ընդ միմեանս . զի ոչ ինքեանք գե-
 տնեն բանս աղօթից , և ոչ քահանայից միտ զնեն
 սաղմոսաց և պաշտամանց : Ասան այսք պատճառի
 արարաք զաղօթս զայս պարզ և յստակ բառիւ
 վասն տխմարաց դիւրահաս լինելոյ . որ է սակաւ
 ըստ բանից տունս քսան և չորս , ըստ ժամուց տը-
 ւընջեան և գիշերոյ , և ըստ տառից սրբոց մար-
 դարեիցն , և զօրաւոր ըստ մտաց . զի զյոլովագոյն
 պէտս խնդրուածոց մերոց որ յաստուծոյ՝ ունի
 յինքեան . և տուաք ժողովրդեան մերում յուսումն .
 զի ամենայն անձն քրիստոնէի ուսցի զսա , և ուր
 հանդիպեսցին 'ի ժամ աղօթիցն' խոսեսցին սովաւ
 ընդ աստուծոյ , թէ յեկեղեցի 'թէ 'ի տան' թէ յան-
 դի' թէ 'ի գործ ինչ' թէ 'ի ճանապարհէ : Եւ որք
 ուսանին զսա և աղօթեսցեն մտադրութեամբ՝ զեր-
 մեռանդ սրտիւ և արտասուօք , ամենոյն խնդրուածք
 որ գրեալեն 'ի սմա' կատարեսցին 'ի կենդանութեան
 և յետ մահու : Իսկ որք արհամարհեն և ոչ ու-
 սանին և ոչ աղօթեսցեն , ինքեանք տեսցեն զվաս
 անձանց իւրեանց . մեք հատաք 'ի մենք զպատճառն
 առնելով զաղօթս զայս + զի մի այլ ևս պատճա-
 ռեսցեն թէ ոչ գիտեմք բանս աղօթից , վասն այնո-
 րիկ ոչ կամք յաղօթս : Բայց ծանիցեն այնպիսէքն ,

թէ սատանայ ոչ այն չափ չանոյ զայլ բարեգործու-
թիւնս մը իսափանիւ որչափ զաղօթս ։ զի զիտէ որ
յաղօթիցն միայն ինքն հալածի ՚ի մէ՛ջ, և աստուած
բնակէ ՚ի մեզ։ Երդ՝ մեք աղաչեսցուք զբարեցարն
աստուած բանալ զաշս մտաց ձերոց, յօժարու-
թեամբ ուսանիւ զսա և աղօթել, և աստուծոյ սի-
րելի լինել:

Եւ յաղօթելն զՊարիդորիս կաթուղիկոս հայոց, և
զեղբայրն նորին զԱկրսէս զաղօթիցս յօրինողն յի-
շեցէք ՚ի քրիստոս։ Եւ որք ընդօրինակէք ՚ի գիրս զա-
ղօթս, զրեցէք և զսրատական բանս զայսոսիկ ։ և
որք գրեն զսա՝ դրեսցին ՚ի դպրութիւն կենացն յա-
ւիտենից։ Եւ որք ուսանին և աղօթեսցեն, ողոր-
մութիւն ընկալցին ՚ի քրիստոսէ ։ և որք ուսուցա-
նիցեն զընկերս, վարձս առցենն յաստուծոյ։ Եւ որք
գրենն, մի՛ առաւել քան զօրինակս բան կամ գիր
խառնեսցեն, և մի՛ նուազ դրեսցեն, զի մի՛ այլ և
այլ լինիցին բանքն, այլ հաւասար լիցին ամենե-
պեան ուր և դրեսցին։ Եւ տիմարքն ՚ի գիրս՝ ու-
զիզ դրողացն տացեն գրել ։ և քրիստոսի փառք յա-
ւիտեանս, ամեն։





ԱՂՈԹՔ ԻՒՐԱԳԱՆՉԻՒՐ ԱՆՁԻՆ

ՀԱԿԱՏԱՑԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ

Օ՞որ արարեալ է ո՞բոյ ունաւո՞ն ։ Աերսէսէ հայոց կանոնակի իսուս։

Հաւատով խոստովանիմ և երկիր-
պագանեմ քեզ, հայր և որդի և սուրբ
հոգի, անեղ և անմահ ընութիւն, ա-
րարիչ հրեշտակաց և մարդկան և ա-
մենայն եղելոց ։ ողորմեա քո արարա-
ծոց, և ինձ բազմամեղիս։

Հաւատով խոստովանիմ, և երկիր-
պագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս,
միամնական սուրբ երրորդութիւն և
մի աստուածութիւն, արարիչ լու-
սոյ և հալածիչ խաւարի ։ Հալածեա
՚ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և ան-
դիտութեան։ և լուսաւորեա զմիտս
իմ ՚ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ
՚ի հաճոյս, և ընդունել ՚ի քէն ըզ-
ինդրուածս իմ ։ և ողորմեա քո ա-
րարածոց և ինձ բազմամեղիս։

Հայր երկնաւոր աստուած Ճշմարիտ,
որ առաքեցեր զորդիդ քո սիրելի ՚ի
ինսդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յեր-

կինս և առաջի քո . ընկալ զիս որպէս
զանառակ որդին , և զգեցո ինձ ըզ-
պատմուծանն զառաջին՝ զոր մերկա-

ցայ մեղօք . և ողորմեա քո արա :

Որդի աստուծոյ աստուած Ճշմարիտ ,
որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ՝
և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն մա-
րիամայ վասն մերոյ փրկութեան .
Խաչեցար թաղեցար և յարեար 'ի
մեռելոց և համբարձար վառօք առ
հայր . մեղայ յերկինս և առաջի քո .
յիշեա զիս որպէս զառազակն՝ յոր-
ժամ զաս արքայութեամբ քով . և
ողորմեա :

Հոգի աստուծոյ աստուած Ճշմարիտ ,
որ իջեր 'ի յորդանան և 'ի վերնա-
տունն , և լուսաւորեցեր զիս մկրտու-
թեամբ սուրբ աւաղանին , մեղայ յեր-
կինս և առաջի քո . մաքրեա զիս վե-
րբստին աստուածային հրով քով՝ որ-
պէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալ-
սրն . և ողորմեա :

Ենեղ ընութիւն , մեղայ քեղ մտօք
իմովք , հոգւով և մարմնով իմով . մի
յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վասն
անսուանդ քում սրբոյ . և ողորմեա :

Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհըրդով բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ՝ ՚ի դպրութեան կենաց. և
ողոր:

Քննող զաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, զիտութեամբ և անզիտութեամբ. թողութիւն շնորհեա մեղաւորիս, զի ՚ի ծննդենէ սուրբ աւազանին մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջ աստուածութեանդ քո զգայարանօր իմովք, և ամենայն անդամօք մարմնոյս. և ողորմեա:

Եմենախնամ տէր, զիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ և հայիլ յարատ, և ականչաց իմոց՝ ոչ ախորժել տել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զստութիւն, և սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութիւն, և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ոչ դնալ ՚ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զշարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և
ողորմեա:

Հուր կենդանի քրիստոս, զհուր սիրոյ

քո՛ զոր արկեր յերկիր, բորբոքեա
յանձն իմ, վե այրեսցէ զախտ հոգւոյ
իմոյ, և սրբեսցէ զիսիղձ մտաց իմոց, և
մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վա-
ռեսցէ զլոյս գիտութեան քո՛ ՚ի սրտի
իմում. և ողորմեա:

Եմաստութիւն հօր յիսուս, տուր ինձ
իմաստութիւն զբարիս խորհիլ և խօսիլ
և դործել առաջ քո յամենայն ժամ.
՚ի չար խորհրդոց ՚ի բանից և ՚ի դոր-
ծոց փրկեա զիս. և ողոր:

Կամեցող բարեաց տէր կամարար, մի՛
թողուր զիս ՚ի կամս անձին իմոյ գնալ.
այլ առաջնորդեա ինձ լինել միշտ բատ
կամաց քոց բարեսիրաց. և ողորմեա:
Երքայ երկնաւոր, տուր ինձ զարքա-
յութիւն քո՛ զոր խոստացար սիրե-
լեաց քոց. և զօրացո զսիրտ իմ ատել
զմեղս, և սիրել զքեղ միայն, և առ-
նել զկամս քո. և ողորմեա:

Խնամող արարածոց, պահեա նշանաւ
խաչ քո զհոգի և զմարմին իմ ՚ի պատ-
րանաց մեղաց, ՚ի փորձութեանց դի-
ւաց, և ՚ի մարդոց անիրաւաց, և յա-
մենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ.
և ողորմեա:

Պահապան ամենայնի քրիստոս, աջ քո
հովանի լիցի ՚ի վերայ իմ ՚ի տուէ և ՚ի
դիշերի, ՚ինստիլ ՚ի տան, ՚ի զնալ ՚ի
ճանապարհ, ՚ի ննջել և ՚ի յառնել, զի
մի՛ երբէք սասանեցաց . և ողորմեա:
Եստուած իմ, որ բանաս զձեռն քո,
և նուս զամենայն արարածս ողորմու-
թեամբ քով, քեզ յանձն առնեմ զան-
ձըն իմ, դու հոգա և պատրաստեա
զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայ-
սրմէւետէ մինչեւ յաւիտեան . և ողոր:
Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս ՚ի
չար սովորութեանց իմոց ՚ի բարի սո-
վորութիւն, և բեւեռեա ՚ի հոգի իմ
զառկալի օր մահուն, և զերկիւղ գե-
հենին, և զսէր արքայութեանն . զի
Պղծացաց ՚ի մեղաց՝ և գործեցից զար-
դարութիւն . և ողորմեա:

Եղբար անմահութեան, աղբերացո ՚ի
սրտէ իմմէ զարտասուս ապաշխարու-
թեան որպէս պոռնկին, զի լուացից ըզ-
մեզս անձին իմոյ յառաջ քան զելա-
նելն իմ յաշխարհէս . և ողորմեա:
Պարգեւիչ ողորմութեան, պարգեւեա
ինձ ուղղափառ հաւատով և բարի գոր-
ծով, և սուրբ մարմնոյ և արեան քո

Հաղորդութեամբ գալ առ քեզ. և ո :
Բարերար տէր , հրեշտակի բարոյ
յանձն արասցես զիս քաղցրութեամբ
աւանդել զհողի իմ , և անխոռով ան-
ցոցանել ընդ չարութիւն այսոցն՝ որ

են ՚իներքոյ երկնից . և ողոր :
Կոյս Ճշմարիտ քրիստոս , արժանա-
ւորեա զհողի իմ ուրախութեամբ
տեսանել զլոյս փառաց քոց ՚ի կոչման
աւուրն , և հանգչիլ յուսով բարեաց
յօթեանս արդարոց մինչև յօր մեծի
գալստեան քո . և ողորմեա :

Դաստաւոր արդար , յորժամ զաս իա-
ռօք հօր գատել զկենդանիս և զմե-
ռեալս , մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ
ծառայի քում , այլ փրկեա զիս ՚ի յա-
ւկունական հրոյն , և լսելի արտ ինձ
զերանսաւէտ կոշումն արդարոց յեր-
կնից արքայութիւնդ . և ողորմեա :

Եմենողորմ տէր , ողորմեա ամենայն
հաւատացելոց ՚ի քեզ , իմոց և օտա-
րաց , ծանօթից և անծանօթից , կեն-
դանեաց և մեռելոց . շնորհեա և թրշ-
նամեաց իմոց և ատելեաց զթողու-
թիւն՝ որ առիս յանցանաց . և դարձո
զնոսա ՚ի չարեացն զոր ունին վասն իմ ,

զի ողորմութեանդ քում արժանի եւ
դիցին . և ողորմեա :

Փառաւորեալ տէր , լնկալ զաղաչանս
ծառայիս քոյ , և կատարեա ՚ի բարի
զիսնդրուածս իմ բարեխօսութեամբ
սրբուհւոյ աստուածածնին և յովչան-
նու մկրտչին և սրբոյն ստեփաննոսի
նախավկային և սրբոյն գրիգորի մե-
րոյ լուսաւորչին , և սրբոց առաքելոց՝
մարգարեից՝ վարդապետաց՝ մարտիրո-
սաց՝ հայրապետաց՝ ճգնաւորաց՝ կու-
սանաց՝ և ամենայն սրբոց քոց երկնա-
ւորաց և երկրաւորաց : Եւ քեզփառք
և երկրագութիւն անբաժանելի սուրբ
երրորդութեանդ յաւիտեանս յաւի-
տենից . ամէն :



ԱՐԵՎԱՏՅԱՆ ՊՐԵՄԻԱ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ՎՐԱ

ՄԱՂԹԱՆՔ ԶՕՐԱԿՈՐՔ

ԱՐՃԱՄԱՑ ԳԻՇԵՐԱՑՆՈՑ

Արքոյն Գլուխորի հարեկացոյ ասացեալ:

Բան ԺԲ :

Ընկալ քաղցրութեամբ , տէր աստուած հզօր, զդառնացողիս զաղաչանս, մատիր դժութեամբ առ պատկառեալս դիմօք . վարատեա, ամենապարզե, զամօթական տիրութիւնս . բարձ յինէն, ողորմած , զանքերելի ծանրութիւնս . անջրակետեա, հնարաւոր , բզմահացու կրթութիւնս . աւարեա, միշտ յաղթող , զիսաբողին հաճութիւնս . բացադրեա, վերնային , զմոլելոյն մառախուղ . կնքեա, կեցուցիչ , զկորուչին ընթացմունս . ցրուեա, ծածկատես , զըմբռնողին չար զտմունս . խորտակեա, անքննին , զմարտողին դիմեցմունըս : Տեառնազրեա քո անուամբդ բզլուսանցոյց երդ յարկիս . պարփակեա քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս . գծադրեա քո արեամբդ զմուտ սեմոց

սենեկիս . կերպացո զքո նշանդ ՚ի հետըս ելից մաղթողիս . ամրացո քո անովդ զհանգստեանս խշորի . մաքրեցես ՚ի հաղբից զծածկարան անկողնոյս . պահեսցես քո կամօքդ զտառապեալ անձն ոգւոյս . անխարդախ արասցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս . կացուացես շրջափակ զպար զօրուդ երկնայնոյ . կարգեսցես ՚ի դիմի ընդդեմ դիւացն դասու : Տուր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման ՚ի խորութեան գիշերիս , բարեխօսութեամբ հայցուածոց սրբոյ աստուածածնիդ և ամենայն ընտրելոց : Եմփոփեալ սպարուրեա զպատուհան տեսութեանց դգայարանացս խմաստից անզարհուրելի զետեղմամբ ՚ի ծփական խովութեանց , կենցաղական զքաղմանց , անրջական երազոց , խոլականաց ցնորից , յիշատակաւ քո յուսոյդ անփսասելի պաշտպանեալ : Եւ սթափեալ վերստին ՚ի ննջմանէ ծանրութեան ամենազդաստ արթնութեամբ , հոգենորոգ զուարթութեամբ ՚ի քեզ արձանացեալ զայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց քեզ , ամենօր

Հսեալ թագաւոր փառաց անճառից ,
 փառաբանողաց երկնագումար խմբից
 երգակցեալ յերկինս առաքել : Օ Ե
 դու փառաւորեալ ես յամենայն արա-
 րածոց յաւիտեանս յաւիտենից . ա-
 մէն :



ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՑԵԱՆ

“Ե՞րբին սըբոյն Գրետուէ :

Բան ՀԴ :

Սատուած յաւխտենական , բարերար
և ամենակալ . ստեղծիչ լուսոյ , և յօ-
րինիչ գիշերոյ . կեանք ’ի մահու , և
ըստ ’ի խաւարի . յոյս ակն ունողաց և
երկայնմտութիւն տարակուսելոց : Ար
ամենարուեստ իմաստութեամբ քո
դարձուցանես յայդ զստուերս մահու,
աննուաղ ծագումն և անմուտ արե-
գակն . քանզի ոչ զօրէ ծածկել զփա-
ռքս տէրութեան քո խաւար գիշերոյ :
Որում կրկնի ծունր երկրպագութեան
ամենայն եղելոց՝ երկնաւորաց և եր-
կրաւորաց , և սանդարամետականաց ,
որ լսես զհեծութիւն կապելոց , և
հայիս յաղօթս խոնարհաց , և ընդու-
նիս զիմնդրուածս նոցա . աստուած
իմ և թագաւոր իմ . կեանք իմ և
ապաւէն իմ . յոյս իմ և վստահու-
թիւն իմ . յիսուս քրիստոս աստուա-
ծըդ ամենայնի . սուրբդ հանդուցեալ
'ի հոգիս սրբոց միմիթարութիւն վըշ-
տաց՝ և քաւարան մեղուցելոց , որ գի-

տես զամենայն յառաջ քան զլինել
 նոցա . առաքեա զպահպանողական
 զօրութիւն աջոյ քո, և փրկեա զիս
 յերկիւղէ զիշերի և 'ի դիւէ չարէ : Ար-
 պէս զի զյիշատակ սոսկալի և սուրբ
 քո անուանգ՝ միշտ համբուրեալ շըր-
 թամբը հոգւոյ՝ բղձութեան շնչոյ, կե-
 ցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ
 կարդան զքեղ 'ի բոլոր օրտէ : Եւ 'ի
 դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ, զոր աս-
 տուածային արեամբդ քո ներկեալ նո-
 րոգեցեր, և 'ի նոյն շնորհ որդեզրու-
 թեան զմեղ մլլրտեցեր, և 'ի վասս
 պատկերի քո նկարեալ՝ յօրինեցեր,
 այսու պարզեւօք աստուածականօք
 ամաչեսցէ սատանայ . քակտեացին մե-
 քենայ քն . բարձցին որոդայթքն . պար-
 տեսցին մարտուցեալքն . պակասես-
 ցին զէնքն սայրասուրք . մերժեսցի մէ-
 զքն . վարատեսցի խաւարն . մեկնես-
 ցի մառախուղն : Ծագուկ քո հովա-
 նասցի, և աջ քո կնքեսցէ . վասն զի
 զթած ես և ողորմած, և անուն քո
 կոչեցեալ է 'ի վերայ ծառայից քոց
 Եւ քեղ ընդ հօր՝ հոգւովդ սրբով
 վառք և իշխանութիւն յաւիտեանս
 յաւիտենից : ամեն :

ԱՅԼՈՒՐ ԱՅԼՈՒՐ ԱՅԼՈՒՐ ԱՅԼՈՒՐ ԱՅԼՈՒՐ

ԱՆՕԹԻ ԶՈՐԱԿՈՐ

ԵՐԵՒՆ ԱՐԵՎԱՆ ԳՐԻԴՐԵԼ

Բան ԽԱ :

Որդի աստուծոյ կենդանւոյ օրհնեալ
յամենայնի, հօրդ ահաւորի անքննին
ծնունդ, որ տկարանայ առ ՚ի քէն և
ոչ ինչ . որ ՚ի ծագել անստուեր նշու-
խց ողորմութեան քո փառաց, հալին
մեղք, հալածին դեւք, ջնջին յան-
ցանք, խզին կապանք, խորտակին շրդ-
թայք, կենդանածնին մահացեալք,
բժշկին հարուածք, ողջանան վերք,
բառնին ապականութիւնք, տեղետան
տիրութիւնք, նահանջին հեծու-
թիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն,
մերժի մառախուղն, փարատի մռայն,
սպառի աղջամուղջն, վերանայ մութն,
գնայ գիշերն, տարագրի տապնաալն,
չքանան չարիքն, հալածին յուսահա-
տութիւնքն, և թագաւորէ ձեռնքոա-
մենակար, քաւիչդ ամենայնի : Որ ոչ
եկիր կորուսանել զմարդկան ողիս, այլ
կեցուցանել . թողինձ զանթիւ չարիան
իմ բազում ողորմութեամբդ, զի դու

միայն ես յերկնի անծառ, և յերկրի
անզննին, 'ի տարր գոյի, և յեզրս ծա-
դաց աշխարհի, սկիզբն ամենայնի և
յամենայնի ամենայն լրմամք, օրհնեալ
'ի բարձունս . և քեղ ընդ հօր և հոգ-
ոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամեն:



ԶՂԶՈՒՄՆ

Մեղայ ամենասուրբ Երրորդութեա-
նըն՝ Հօր և Արդւոյ և Հոգւոյն սրբոյ։
Մեղուցեալ եմ Ըստուծոյ։ Խոստովա-
նիմ առաջի Ըստուծոյ՝ և սրբուհւոյ
Ըստուածածնին՝ և առաջի քո հայր
սուրբ՝ զամենայն մեղս զոր զործեալ
եմ։ Քանզի մեղայ խորհրդով բանիւ
և զործով։ կամայ և ակամայ, զիտու-
թեամբ և անզիտութեամբ, մեղայ
Ըստուծոյ։

Մեղայ հոգւովս և զօրութեամբ սո-
րա・մտօքս և շարժմամբ սորա・մար-
մնովս և զգայութեամբ սորա։

Մեղայ զօրութեամբ հոգւոյս・խո-
րամանկութեամբ, անզգամութեամբ,
յանդգնութեամբ և երկչոտութեամբ,
շռայրութեամբ և ժլատութեամբ, զեղ-
խութեամբ և անիրաւութեամբ, չա-
րահաւանութեամբ, յուսահատու-
թեամբ, և թերամտութեամբ, մեղայ
Ըստուծոյ։

Մեղայ չար խորհրդով մտացանեն-

դութեամբ, ատելութեամբ, իւեթիւ,
մախանօք, յաչաղանօք, թուլու-
թեամբ, պոռնկական խորհրդով,
արուական, իգական, անամնական,
զրաստական, գաղանական, 'ի զիշերի
և 'ի տուրնջեան. երաղական գիճու-
թեամբ, և անրջական գարշ աղտե-
ղութեամբ, մեղայ Ըստուծոյ:

Մեղայ ցանկութեամբ մարմնոյ.
Հեշտութեամբ, պղերդութեամբ, յօ-
րանչմամբ քնոյ, շարժութեամբ մար-
մնոյս, և զաղբագործութեամբ 'ի պէս
պէս ախտոս. հեշտալրութեամբ լե-
ւեցս, արատութեամբ աչացս, ցան-
կութեամբ սրտիս, իգութեամբ ոլն-
գացս, պագշոտութեամբ բերանոյս.
անժուժկալութեամբ, շուայտու-
թեամբ, և արքեցութեամբ, մեղայ
Ըստուծոյ:

Մեղայ չարարանութեամբ լեզուիս.
ստախօնութեամբ, սուան երդմամբ,
երդմնաղանցութեամբ, հակառակու-
թեամբ, վիճաբանութեամբ, բանար-
կութեամբ, շողմողութեամբ, քսու,
դատարկաբանութեամբ, և ծաղու, զը-
րախօսութեամբ, հերձախօսութեամբ,

և անիծարանութեամբ. տրտնչելով,
դժգոհելով, բամբասելով, և հայհո-
յելով, մեղայ Ըստուծոյ:

Մեղայ գողութեամբ ձեռացս . ա-
զահելով, զրկելով, հարկանելով, սպա-
նանելով, և ընդ գարշա ածելով, մեղայ
Ըստուծոյ:

Մեղայ ամենայն յօդուածովք շե-
նուածոյս և ամենայն անդամօք մար-
մնոյս . հնդեակ զգայարանօքս , և վե-
ցեկի շարժմամբս . վերամբարձ ոտնա-
հարութեամբ, և վայրաքարշ մեղկու-
թեամբ. յաջ և յահեակ խոտորելով,
զառաջնոցն մեղանչելով , և վերջնոցն
չար նշաւակ գոլով, մեղայ Ըստուծոյ:

Ելլ և մեղայ եօթնիցս յանցանօք՝
մահացու մեղօք . հպարտութեամբ՝
և մասամբքնորին. նախանձու՝ և մա-
սամբքնորին. բարկութեամբ՝ և մա-
սամբքնորին . ծուլութեամբ՝ և մա-
սամբքնորին. ազահութեամբ՝ և մա-
սամբքնորին . որկրամոլութեամբ՝ և
մասամբքնորին . բղջախոհութեամբ՝
և մասամբքնորին, մեղայ Ըստուծոյ:

Ելլ և մեղայ ամենայն պատուիրա-
նացն Ըստուծոյ. յանձնառելեացն և

Հրաժարելեացն . զի ոչ դյանձնառաւ կանսն կատարեցի , և ոչ ՚ի հրաժարելեացն հեռացայ : Օօրէնս առի՝ և յօրինացն հեղգացայ . ՚ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ՝ և գործովս անարժան գտայ . դիտելով զշարն՝ կամաւ կորացայ , և ՚ի բարեաց գործոց ես ինձէն հեռացայ . վայ ինձ , վայ ինձ , վայ ինձ :

Օ՞րն ասեմ , կամ զո՞րն խոստովանիմ . զի անթիւ են յանցանք իմ . անասելի են անօրէնութիւնք իմ . աններելի են ցաւք իմ , և անբժշկելի են վերք իմ , մեղայ Եստուծոյ :

Ճայր սուրբ՝ զքեղ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ միածին Որդին Եստուծոյ . զի իշխանութեամբդ որ տուեալ է քեղ , արձակեսցես զիս ՚ի կապից մեղաց իմոց , աղաչեմ զքեղ :

ԱՐՉԱԿՈՒՄՆ

Ողորմեսցի քեղ մարդասէրն Եստուած , և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանացքոց , խոստովանացելոցն և մոռացելոցն : Եւ ես

կարգաւու քահանայական իշխանութեան , և հրամանաւու Աստուածային՝ թէ , Օոր արձակիցէք յերկրի , եղիցի արձակեալ յերկինս : Նովին բանին արձակեմ զքեզ յամենայն մասնակցութենէ մեղաց քոց . ՚ի խորհըրդոց՝ ՚ի բանից՝ և ՚ի գործոց . յանուն չօր և Արդւոյ և Հոգւոյն սրբոյ : Եւ դարձեալ՝ տամ զքեզ ՚ի խորհուրդս սուրբ եկեղեցւոյ . զի զոր ինչ գործիցես բարիս , եղիցի քեզ ՚ի բարեգործութիւն և ՚ի փառս հանդերձեալ կենացն , ամէն :

Օքնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս , ամէն :

Հայր մեր որ յերկինս :



ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊՐԵՄԻԱՄԱՆ

ՀԱՆԳԱՆԱԿ ՆԻԿԻԱԿԱՆ

Հաւատամք ՚ի մի Ըստուած ՚ի
Հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի
և երկրի, երևելեաց և աներեւութից:
Եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս Ար-
դին Ըստուծոյ՝ ծնեան յԸստուծոյ
Հօրէ՝ միածին, այսինքն յէութենէ
Հօր: Ըստուած յԸստուծոյ, ըստ ՚ի
լուսոյ, Ըստուած Ճշմարիտ, յԸս-
տուծոյ Ճշմարտէ՝ ծնունդ և ոչ ա-
րարած: Նոյն ինքն ՚ի բնութենէ
Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս
և ՚ի վերայ երկրի, երևելիք և աներե-
ւոյթք: Ար յաղագս մեր մարդկան և
վասն մերոյ փրկութեան իջեալ ՚ի յեր-
կինից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ
կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ
կուսէն Հոգւովն Սրբով: Արով էառ
զմարմին զհոգի և զմիտ, և զամենայն
որ ինչ է ՚ի մարդ, Ճշմարտապէս և ոչ
կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թա-
ղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ե-
լեալ ՚ի յերկինս նովին մարմնովն՝ նրա-
տաւ բնդ աջմէ Հօր: Գալոց է նովին
մարմնովն և փառօք Հօր՝ ՚ի դատել

զկենդանիս և զմեռեալս , որոյ թա-
գաւորութեանն ոչ գոյ վախճան : Հա-
ւատամք և ՚ի Սուրբ Հոգին՝ յանեղն
և ՚ի կատարեալն , որ խօսեցաւ յօրէնս
և ՚ի մարգարէս և յաւետարանս : Որ
էջն ՚ի Յորդանան , քարոզեաց զա-
ռաքեալն , և բնակեցաւ ՚ի սուրբան :
Հաւատամք և ՚ի մի միայն ընդհան-
րական և յառաքելական եկեղեցի , ՚ի
մի մկրտութիւն , յապաշխարութիւն,
՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մե-
ղաց : Ի յարութիւնն մեռելոց , ՚ի դա-
տաստանն յափառենից հոգւոց և
մարմնոց , յաքքայութիւնն երկնից և
՚ի կեանսն յափառենական :

Մինչ ցասր Են հաւատորոյ բան+ :

Խոկ ոքք ասեն՝ էր երբեմն , յոր-
ժամոչէր Արդի . կամ էր երբեմն , յոր-
ժամոչ էր Սուրբ Հոգի . կամ թէ՝
յոչէից եղեն , կամ յայլմէ էութենէ
ասեն լինիլ զՄրդին Եստուծոյ և կամ
զՍուրբ Հոգին . եւ թէ՝ վոփոխե-
լիք են կամ այլայլելիք , զայնպիսիսն
նզովէ կաթուղիկէ եւ առաքելական
եկեղեցի :

ՀՅԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆ

ՓԵԱԾԲԸՆԱԹԹԻՒՆ

Փառք՝ ի բարձունա Եստուծոյ. և յերկիր. խաղաղութիւն՝ ի մարդիկ հաճութիւն. Եւ օրհնութիւն քեզ՝ ի բարձունս, օրհնեալ ես Տէր Եստուածմեր. օրհնեմք զքեզ և գովեմք ըզքեզ. Խոստովանիմք Տէր զքեզ եւ երկիր պաղանեմք քեզ. փառաւորեմք զքեզ. դոհանսամք Տէր զքէն վասն մեծի փառաց քոց. Տէր թագաւոր Սուրբ երկնային. Եստուած եւ Հայր ամենակալ. Տէր եւ Որդի Հօր միածին Յիսուս Քրիստոս եւ Սուրբ Որդի. Տէր Եստուած Գառն Եստուծոյ եւ Որդի Հօր. որ առեր զմերս՝ ի կուսէն: Ողորմեցար, բարձեր զմեղս աշխարհի. Եւ արդ ընկալ զաղաչանս մեր: Սուրբ որ նստիս ընդ աչմե՛ Հօր՝ ողորմեաց մեզ: Զի դու միայն սուրբ, դու միայն բարձրեալ ես՝ դու միայն Տէր մեր Յիսուս Քրիստոս: Տէր եւ Հոգիդ Սուրբ՝ որ՝ ի փառ Եստուած ընդ Հօր. ամէն:

Եւ յամենայն ժամ օրհնեմք ըզ-

քեզ, Տէր և գովեմք զանուն Սուրբ
 քո յաւիտեան եւ յաւիտեանս յա-
 ւիտենից : Երժանի արա Տէր զօրս
 զայս խաղաղութեամք, եւ առանց
 մեղաց պահեա զմեզ : Օրհնեալ
 ես Տէր Հստուած հարցն մերոց,
 զովեալ եւ փառաւորեալ է ա-
 նուն Սուրբ քո յաւիտեանս ամեն :
 Օրհնեալ Տէր ուսո ինձ զարդարու-
 թիւնս քո : Օրհնեալ Տէր ուսո ինձ
 զարդարութիւնս քո : Օրհնեալ Տէր
 ուսո ինձ զարդարութիւնս քո : Տէր
 ապաւէն եղեր մեր յազգէ յազգ : Ես
 աղաչեմ Տէր ողորմեա ինձ, եւ բժշ-
 կեա զանձն իմ, ես մեղայ քեզ : Ցոյց
 մեզ Տէր զողորմութիւնս քո, եւ ըզ-
 փրկութիւնս քո տուր մեզ : Տէր ո-
 ղորմութիւն քո յաւիտեան, զգործս
 ձեռաց քոց մի՛ անտես առներ : Տէր
 իմ զքեզ ապաւէն ինձ արարի, ուսո
 ինձ առնել զկամս քո, զի դու ես Հս-
 տուած իմ : Եքէնէ տէր աղքիւր կեն-
 դանութեան, և լուսով երեսաց քոց
 տեսանեմք զլոյս : Օագեա զողոր-
 մութիւնս քո՝ որք ճանաչեն զքեզ
 Տէր :

ՑԱՆԿ ՍԱՂՄՈՍՏԱՑ

Ըստ կարգի այլուբենից :

Ըղաղակեցէք	առ աստուած ամենայն երկիր	կե
Ըղաղակեցէք	առ տէր ամենայն երկիր	զթ
Ըպրեցո զիս տէր, զի նուաղ		ժա
Ըպրեցո զիս տէր 'ի մարդոյ չարէ		ճլթ
Ըռ գետս բարելացւոց, անդ նստէաք		ճլզ
Ըռ քեղ տէր կարդացի աստուած իմ, մի՛		իէ
Ըռ քեղ տէր համբարձի զանձն իմ		իդ
Ըռ քեղ տէր համբարձի զաշս իմ, որ		ճիբ
Ըսաց անզգամն 'ի սրտի իւրում, թէ ոչ		ժդ
Ըսաց անզգամն 'ի սրտի իւրում, թէ ոչ		ծը
Ըսաց տէր ցտէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ		ճթ
Ըսացի' թէ պահեցից զՃանապարհս իմ		լը
Ըսէ անօրէնն 'ի մեղանչել ընդ միտս		լե
Ըստուած՝ ականջօք մերովք լուաք զոր հարքն		խդ
Ըստուած աստուած իմ, ես առ քեղ առաւտ առնեմ՝ կը		կը
Ըստուած աստուած իմ՝ նայեաց առ իս. ընդէ՛ր		իա
Ըստուած աստուծոց տէր խօսեցաւ, և կոչեաց		խթ
Ըստուած եկաց 'ի ժողովս աստուծոց		ձա
Ըստուած զիրաւունս քո արքայի տուր		հա
Ըստուած մեր ապաւէն և զօրութիւն,		խե
Ըստուած մերժեցեր և աւերեցեր զմեղ		ծթ
Ըստուած մտին չեթանոսք 'ի ժառանգու		հը
Ըստուած յանուան քում կեցո զիս, և 'ի զօ		ծդ
Ըստուած յօդնել ինձ նայեաց, և տէր յըն		կթ
Ըստուած ողորմեա մեղ և օրհնեա զմեղ		կզ
Ըստուած ո՞ քեղ նմանիցի, մի՛ լոեր,		ծը
Ըստուած վրէժինդիր, տէր աստուած		լդ
Ըստուած օրհնութեան իմոյ մի լոեր, զի		զը
Ըստ օրհնեցէք ամենայն ծառայք տեառն		ճլդ

Հազում անգամ մարտեան ընդ իս	Ճիշ
Իսյդ միայն աստուծոյ հնազանդ լեր անձն	կա
Իանից իմոց ունկնդիր տէր, և 'ի միտ առ	ե
Իարի է խոստովան լինիլ տեառն, և սաղմոս	զա
Իարձր առնեմ զքեղ աստուած իմ և թա	ճիսդ
Իարձր առնեմ զքեղ տէր, զի ընկալար	իթ
Իզիսեսցէ սիրտ իմ զպատգամն քո բարի	լսդ
Գրհացայց զքէն տէր՝ բոլորով սրտիւ	թ
Գրովեա երուսաղէմ զտէր	ճիսե
Դատ արա ինձ աստուած, և իրաւ արա	խը
Դատ արա ինձ տէր՝ զի ես յամբծութեան	իե
Դատեա տէր զայնոսիկ ոյք դատեն	լդ
Եթէ ոչ տէր եր առ մեզ, ասամցէ	ճիգ
Եթէ ոչ տէր շինէ զտունն 'ի նանիր	ճիղ
Եկայք ցնծասցուք 'ի տէր, աղաղակեսցուք	զդ
Երանեալ են անբիծք 'ի ճանապարհի	ճժը
Երանեալ է այր՝ որ երկնչի 'ի տեառնէ	ճժա
Երանեալ է այր՝ որ ոչ գնաց 'ի խորհուրդս	ա
Երանի ամենեցուն՝ ոյք երկնչին 'ի տեառնէ	ճիէ
Երանի որ խորհի զադքատն և զանանկն	լս
Երանի, ում՝ ժաղութիւն եղև մեղաց	լս
Երկինք պատմեն զիառոս աստուծոյ, և զարա	ժը
Զի՞ բարի կամ զի՞ վայելոււ, զի բնակին	ճլը
Զի՞ պարծի 'ի չարութեան հզօր	ճա
Զողորմութիւնս քո տէր յաւիտեան օրհ	ճը
Էնդէ՞ր խորվեցան հեթանուք և ժողո	բ
Էնդէ՞ր մերժեցէր աստուած խապառ	հդ
Թնէ արդարե զարդարութիւն խօսէիք	ճէ
Խրե զի բարի է խրայէլի աստուած	հը
Խդարձուցանել տեառն զգերութիւն	ճիե
Խ խորոց կարդացի առ քեղ տէր տէր	ճիթ
Խ կարդալ իմում լուար ինձ աստուած	դ
Խնեղութեան իմաւմ ես առ քեղ տէր կարդացի ճժթ	ճժթ
Խ տէր յուսացայ, ո՞րպէս ասիցէք ցանձն	ժ

կ քեզ տէր յուսացայ , մի' ամաչեցից յաւի	Հ
կ քեզ տէր յուսացայ , մի' ամաչեցից յաւի	Հ
ուարուք զայս ամենայն ազգը , ունկնդիր	Խը
ուիցէ քեզ տէր յաւուր անձկութեան	ԺՇ
ուր աստուած աղօթից իմոց յաղաշել ինձ	ԿԴ
ուր աստուած աղօթից իմոց , և նայեա տէր	Կ
ուր տէր արդարութեան , և նայեա	ԺՂ
խոնարհեցո տէր զունկն քո՝ և լուր ինձ	ՃԵ
խոստովան եղերուք տեառն՝ և կարդացէք	ՃԴ
խոստովան եղերուք տեառն՝ զի բարի է զի	ՃԺԷ
խոստովան եղերուք տեառն , զի բարի է	ՃՄ
խոստովան եղերուք տեառն՝ զի քաղցր է	ՃԵ
խոստովան եղեց քեզ տէր՝ բոլորով սրտիւ	ՃԴ
խոստովան եղեց քեզ տէր՝ բոլորով սրտիւ	ՃԼ
խոստովան եղեցուք առ քեզ աստուած	ՀԴ
Ծափս հարէք ամենայն հեթանոսք	ԽՊ
կեցո զիս աստուած , զի հասին ջուրք	Կը
աճեցար տէր ընդ երկիր քո , և դարձու	ՃԴ
ամբարձի զաշս իմ 'ի լերինս , ուստի եկես	ՃՒ
ամբերելով համբերի տեառն , և նայեցաւ	ԱԺ
աւատացի զոր և խօսեցայ , և ես խո	ՃԺԵ
իմունք նորա 'ի լեառն սուրբ նորա	ՃՂ
Զայնիւ իմով ես առ տէր կարդացի	ՀՂ
Զայնիւ իմով ես առ տէր կարդացի	ՃԽԱ
Վատուցէք տեառն՝ որդիք աստուծոյ	ԻԸ
Վեծ է տէր , և օրհնեալ է յոյժ	Խէ
Ոի նախանձիր ընդ չարս , և մի' ընդ այնո	ԼՂ
Վինչե յերբ տէր՝ մոռանաս զիս	ԺԲ
Յայանի է 'ի հրէատանի աստուած , և	ՀԵ
Յարիցէ աստուած՝ և ցրուեսցին ամենայն	Կէ
Յելանելն իսրայէլի յեգիպտոսէ	ՃԺԴ
Յիշեա տէր զգաւիթ , և զամենայն հեղու	ՃԼՄ
Յողորմութիւն և յիրաւունս օրհնե	Ճ

Այեցարուք	ժողովուրդք	յօրէնսի իմ	հէ
Աղորմեա	ինձ աստուած	, զի կոխեաց	ծե
Աղորմեա	ինձ աստուած՝	ողորմեա ինձ	ծզ
Աղորմեա	ինձ աստուած	ըստ մեծի ողոր	ծ
Այուսայ	'ի տէր,	որպէս լեառն սիօն	ծիդ
Ար բնակեալն	է յօգնութիւն	բարձ	շ
Ար հովուեսդ	իսրայէլի	նայեաց,	հիթ
Արպէս սիրելի	են յարկք քո	տէր զօրու	ձգ
Արպէս փակաքի	եղջերու	յաղըերս	խա
Աւնկնդիր	աստուած	ազօթից իմոց,	ծդ
Աւրախ եղէ ես՝	ոյք ասէին ցիս		ծիս
Պահեա	զիս աստուած	իմ, զի ես 'ի քեզ	ժե
Պատրաստ	է սիրտ իմ	աստուած,	ձէ
Աիրեցի,	զի լուիցէ տէր զձայն		ձժդ
Աիրեցից զքեզ՝	տէր զօրութիւն իմ		ժէ
Տեառն	է երկիր լրիւ իւրով		իդ
Տէր ապաւէն	եղեր մեր ազգէ		ձիթ
Տէր աստուած	իմ 'ի քեզ յուսացայ,	փըր	է
Տէր աստուած փրկութեան	իմոյ,	'ի տուէ	ձէ
Տէր զի՞ բազում եղեն նեղիչը իմ			դ
Տէր թագաւորեաց,	բարկացան ժողո		լը
Տէր թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ			լը
Տէր թագաւորեաց՝ ցնծացէ երկիր			լլ
Տէր 'ի զօրութեան քում ուրախ եղիցի			ի
Տէր լոյս իմ և կեանք իմ,	ես յումմէ՝		իդ
Տէր լուր ազօթից իմոց,	ունկնդիր		ձիս
Տէր՝ լուր ազօթից իմոց,	աղաղակ		ձա
Տէր կարդացի առ քեզ՝	և լուր ինձ		ձիս
Տէր հովուեսցէ զիս,	և ինձ ինչ ոչ		իդ
Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս			շ
Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս			լէ
Տէր ոչ բարձրացաւ.	սիրտ իմ,	և ոչ	ձլ
Տէր ո՞վ կացցէ 'ի խորանի քում			ժգ
Տէր տէր մեր,	զի՞ սքանչելի է անուն		լ

Տէր փորձեցեր ղիս և ծանեալ	Ճլլ
Ծնծացէք առ աստուած, օդնական է	Ճ
Ծնծացէք արդարք 'ի տէր, ուղղոց	լլ
Փրկեա զիս 'ի թշնամուց իմոց աստուած	ճը
Վեղ վայելէ օրհնութիւն աստուած 'ի սիօն	կդ
Օրհնեա անձն իմ զտէր, տէր աստուած իմ մեծ	ճգ
Օրհնեա անձն իմ զտէր, և ամենայն	ճբ
Օրհնեա անձն իմ զտէր, օրհնեցից զտէր	ճխե
Օրհնեալ տէր աստուած իմ, որ ուսոյց	ճխգ
Օրհնեցէք ղանուն տեսոն, օրհնե	ճլդ
Օրհնեցէք ղաստուած 'ի սրբութեան նորա	ճծ
Օրհնեցէք զտէր ամենայն աղինք գովե	ճժզ
Օրհնեցէք զտէր, զի բարի է սաղ	ճխղ
Օրհնեցէք զտէր յերկնից . օրհնե	ճխը
Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր, զի սքանչելիս ղէ	
Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր, օրհ	ղե
Օրհնեցէք զտէր յօրհնութիւն 'ի նոր, օրհնու ճխժ	
Օրհնեցէք մանկունք զտէր՝ և	ճժբ
Օրհնեցից զտէր յամենայն ժամ, յամե	լդ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆՔ

Երդ արձակեա ղծառայս քո	343
Ես ասացի 'ի վերանալ յինէն	246
Օհ հուր բորբոքեցաւ 'ի բարկութենէ	119
Ի զիշերաց կանխէ հոդի իմ՝ առաւօտ առ.	208
Ի նեղութեան իմում ես առ տէր կարդացի	287
Աստատեցաւ սիրտ իմ 'ի տէր, և	161
Մեծացուսցէ անձն իմ զտէր . և	341
Եայեցարուք երկինք, և խօսեցայ	73
Տէր զուր քո լուայ և երկեայ	326
Տէր ամենակալ աստուած աբրահամու	344
Փոքր էի ես յեղբարս իմ, և կրտսեր	334

(Օրհնեալ ես տէր աստուած հարցն մերոց	335
(Օրհնեալ տէր աստուած իսրայէլի , որ	342
(Օրհնեսցուք զտէր , զի փառօք է	31
(Օրհնեցէր զաստուած յօրհնութիւն նոր	286

Եօթն սաղմոնք ապաշխարութեան :

Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդի	Դ
Երանի , ում թողութիւն եղեւ մեղաց	Լա
Տէր մի՛ սրտմտութեամբ քով յանդի	Լէ
Ողորմեա ինձ աստուած ըստ մեծի ողոր	ծ
Տէր լուր աղօթից իմոց , աղաղակ	ճա
Ի խորոց կարգացի առ քեզ տէր . տէր	ճիթ
Տէր՝ լուր աղօթից իմոց , ունկնդիր իլն	ճիր



